

ԱՐԴՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ռ

№ 5 1896

Մ Ա Յ Ի Ս

1896 № 5

ՊԻԹԵՐԻՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՒ


1 ԲԱՐԿՆՅՑ, Գ.	543	Նորեկի (վէպ):
2 ՀԱՅՆՅՑ: ԾԱՏՈՒՐԵԱՆ, Ա.	558	Կարգեր. Կախարդական վառ մակախն.
3 ԱԴԵԼԵԱՆ, Ա.	561	Հաստ ու շատ մարդիք... Նոքա ի-
4 ԳԵՎԻՐՃԵԱՆ, Գ.	586	րար սիրում էին..., Երբ լալիս եմ...
5 ԿԵՕԹԵՒՅՑ—ՄԱԺԻՆԵԱՆ	687	Աստեղազարդ վառ գիշերին:
6 ՌՈՒՄԹԱԵԼԻ, ՇՈԹԱ.	609	Տղմանաւորը (պոէմա):
7 ՎԱՆՑԵԱՆ, ԳՐ.	634	Ազգագրական հանդէսա:
8 ՌՈՒՄՌԱՆԵԱՆՑ ՅԱՐՈՒԹԻՒՆ.	642	«Մծիրի», թարգմ. Յ. Տէր. Գէորգ-
9 ԱՐԱԽԻԹԵԼԵՈՆՑ, Ա.	653	եանի և Յովի. Թումանեանի,
10 Ս-Մ.	661	Ժամանակակ. Տեսութ. — Զէլթունի
11 ԼՈՒՄԻՆԻ.	690	դրութիւնը և կառավարչի խնդիրը
12 ԽԱԶ-ՊԱՊԵԱՆ.	718	— Դրութիւնը վահում և կոտո-
13 ԽՄԲ.	724	րածները — Նպատաների գործը: —
		Գերբակալումները. Անգլիական ար-
		տակառաւթիւններ:
		Թաղադրութեան հանդէսները Մու-
		կւայում:
		Ցիշատակի համար:
		Նամակներ Կ. Պոլսից:
		Զանազան լուրեր:

ԹԻՖԼԻՍ

Տպարան Ա. Գ. ԱՕՏԵԿԵԱՆՑ

Տիպոգրաֆія М. Д. Ротиніана, Гол. пр., д. № 41.

1896



ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 5 1896

ՄԱՅԻՍ

1896 № 5

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

~~~~~

Թ. Ի. Ֆ. Լ. Բ. Ս.

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա-ՕՏԻԵՎԱՆՅԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1896

# САМІ

СУВОРОВСКАЯ СЕМЬЯ ВЪ ДЕНЬ ПОБЕДЫ

ЧАСТЬ ПЕРВАЯ

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Мая, 1896 г.

# Ն Ա Ր Ե Կ

Գ. ԲԱԲԻԵՆՅԻ

## Գ Ի Ր Ք Ը Թ Ա Զ Ի Ն

ԴԼ. Ա.

—Բրձնւ, Փինւ, Խլուղչի, Խլուղչի, մալատչի, ոէ գնան, կոչում  
էր սալլապանը ու մորակը օղում խաղացնում, և երեք քրտնած  
նժոյգները վուազ թռչուում էին Թուրքանիս տանող ճանապարհով:

Սալլապանը, որը բոլորովին խորասուզւած էր ձիանց քայլին  
նայելու մէջ, նոցա կաքաւելլը տեսնելով՝ ինքն իրեն հողարտանում  
էր ու բաղդաւոր զգում, նրա փաղաքշական խօսքերը ուրախաց-  
նում էին գրաստների սրտերը, անզգալի դարձնում բեռի ծանրու-  
թիւնը և ընթացքը արագացնում:

Սայլի վրայ նատած էր մի երիտասարդ: Նրա շէկ ու փոքր  
ընչացքներն ու միրուկը և դէմքի կաշին ցոյց էին տալիս նրա  
հազիւ քսանուհինգ ամեաց լինելլը: Նա, իր բոլոր արտաքինով, կար-  
ծես, մի նոր մարդ էր Թուրքանիսի մէջ: Մելամաղձուտ ու նիհար  
դէմքը, խորշոմած ու գունատ այտերը՝ կապ նրա վերին աստիճանի  
բարի աչքերի հետ, և ուսերի վրայ թափած շէկ ու երկար մազերը  
նրա ամբողջութեան մի անհուն բարութիւն և մարդասիրութիւն  
էին տալիս:

Բոլորովին անձնատուր եղած շրջակայ բնութեանը, նա զար-  
մանքով տարւած ու լիովին հիացած էր:

Ապրիլի սկզբներն էր և Թուրքանիս տանող ճանապարհը ծածկ-  
ւած էր արտերով, ծաղկած խողաններով և կանաչագարդ խոտանե-

զիներով։ Կանաչ ցորենը, դարին ու խոտերը, բազմաթիւ ճերմակ գեղին, կապոյտ և մանիշակազոյն ծաղիները, որոնցով հագնւած ու զարգարւած էին փոքր ու մեծ բլրակներ ու ձորակները, խաղում էին արեւի հետ և պապղեցնում իրենց վրայ նրա ճաճանչների լոյսը։

Հեռւից նայում էին Ծերանաձորի կէս ձիւնապատ և կէս անտառոտ լեռները։ Երկինքը պարզ էր և կապոյտ, անզտեղ միայն քուլայքուլայ ճերմակ ամպերը—փոքր ու մեծ—ճածկում էին նրա կապուտակը։ Աերեւում՝ ամբողջ բնութեան մէջ տարածւած էր մի անհունութիւն, մի զրաւիչ գեղեցկութիւն, ներքեւում՝ ամենայն բան վերականգնում էր, ծլում, ծաղկում, խայտում, իսկ ամբողջը միասին, կարծես, ապրում էր ու զգում և մի ինչ որ բան զգալ տալիս։ Օդը թարմ էր և մարդուս թոքերի մէջ, կարծես, մի առանձին համ էր տալիս։

Սացլի վրայ նստած երիտասարդը իրեն այս բնութեան մէջ զգում էր տարւած ու բազգաւոր և, կարծես, չէր նկատում իր երկու կողմում տարածւած գաշտի վերաց աշխատող հայ գեղջուկներին։

Սացլապանը ստէպ-ստէպ, շլւշլւացնելով՝ մորակը ձիանքի վերաց պտանցնում էր և զանազան մնուշախօսութիւններ ասում նրանց։ Յանկարծ նա շրջւեց դէպի երիտասարդը և սժափեցրեց նրան զմացլութեան քնից։

— Աղա, ասում ես, զու ամենայն բան հարցնում ես, կուզե՞նացիր Ազատին, տես՝ այստեղից երեւում է։

Սրդարե հեռու հորիզոնում նշմարւում էր ծերուկ Ազատ լեառը։ Հակառակ մշականին՝ այսօր նրա զլուխը ամպամած չէր և բաց ներկայանում էր նայողին։ Նրա մաքուր, ճերմակ զազաթը փացում էր արեւի ճառագայթներից, նրա կէս ձիւնաթափ լանջերը, քարաղոյն մեծ-մեծ ժայռերը զրաւում էին նացողի ուշադրութիւնը։ Նրա ամբողջութեան մէջ, կարծես, կար մի եզակի իմաստ-մտածողութիւն և խորհրդաւոր ախրութիւն։

Երիտասարդը, Ազատ լեռան անունը լսելուց՝ կարծես, ցնորսեց և սացլից իրեն վայր զցեց։ Մի քանի բոսէ նա աչքերը Ազատին յառած՝ կանգնած էր։ Աերջ ի վերջոյն՝ նա սժափեցը, ընկաւ հողի վրայ և սկսեց լալ և մազերը բոնած դէս ու դէն գնալ։ Նա վերլու

տին կանգնեց սայլի մօտ և արտասուք թափելով՝ հանդարտ կսկծա-  
նօք նայում էր տխուր Ազատի վրայ։ Վերջը նա ծունկ չոքեց և  
սկսեց լալով երդւել սարի առաջ։

—Թող քո ամբողջութիւնը իմ գլխին կպչի, գլուխս կոսրի,   
ուզեղս ցրիւ ցրիւ լինի, ուզեղիս կտորները ընկնեն այս քարերի և  
հողերի վրայ, թէ ես իմ խոստմունքից յետ զաւնամ Երդում  
եմ քո առաջ, որ ես միշտ նւիրւած ինքնազո՞ն կը հետևեմ մարդ-  
կութեան երջանկութիւն տող սուրբ գաղափարներին։ Այս արեւը  
իմ ու քո մէջ թող վկայ լինի։

Սայլապանը զարմացած ու ապշած նայում էր երիտասարդին։  
վերջապէս, նրա համբերութիւնը հատաւ։

—Աղա, բաւական է, վեր կաց, հեծի, գնանք, ձիանքը խեղճ են։  
Սայլապանը նորից մորակեց ձիանքին։

—Դէ գնամ, կապոյտ ջան, դէ սկիամ, կաքաւ ջան, ազիս հասցուր  
Վարդիվան։

Երիտասարդը գլխակոր և մտածողութեան մէջ խորասուզւած՝  
նստած սայլի վրայ՝ շարունակեց իր ճամբան։

### ԴԼ. Բ.

Մեզ ծանօթ երիտասարդը Թշւառոց գաւառի, Խնութ գիւղի  
բնակիչ, պողպորուչիկ Օվանէս աղայի որդին էր։ Օվանէս աղան երե-  
սուն թւականներից մերթ Լեհաստանի, մերթ Կովկասեան լեռների  
պատերազմներում երկար մասնակցելով՝ կարողացաւ — անդրագիտ  
մարդ — իր կուրծքը զարդարել Սր. Գէորգի ոռւսական շքանշանով  
և ստանալ զինւորական սպայի երկրորդ աստիճանը։

Նա իր որդի Սլէքսանդրին, երբ սա ուժ տարեկան դառաւ,  
տարաւ Մայրակ գետի ափը, որտեղ նա սահմանապահ կողակների  
մէջ սուրբալտերն օֆիցերի պաշտօն ունէր։ Ամսական 15 սուբլի  
ստանալով՝ Օվանէս աղէն յոյս չունէր իր որդուն քաղաք ուսման  
ուզարկել, նա միշտ նրան ուուսերէն լեզւով ասում էր։

—Սլէքսանդր, ուսումն ինչ, բանն ինչ, աղամարդի նման  
սրովդ առաջ գնամ. այ, գեներալ Լազրելը Այ, քաջ տղէս, յոյս ու-  
նիմ՝ մի օր Սլէքսանդր թագաւորը կ'ասի. այ, զօրասկետ Սլէքսանդր  
Օվաննիսով. Բէյրութով գեներալը մի օր, երբ պատերազմի դաշ-

առւմ էինք, քու հայրը սուրբ քաշած, Նարինջին քշել էր թուրքերի մէջ, ևս կողմը կոտորում, էն կողմը կոտորում, մօտեցաւ ինձ, —մալադէց Օվանէս, ասաւ, «Ազրապորչիկ քուղեց» (առաջին ստորին աստիճանի սպաց կը գառնաս)։

Օվանէս աղջն մի օր Ալէքսանդրին վեր առաւ և գնաց իրեն ծանօթ հարիւրապետի (ոռտնի կամանդիրի) տունը։ Սորա կիւլ, որ երեխաց չունէր, վազուց պահանջում էր, որ Օվանէս աղէն իր միակ որդի Ալէքսանդրին բերի նրա մօտ և նա կարգացնի։

Օվանէս աղի և Ալէքսանդրի Կոսիակինենց տունը մանելլ տանակող և տանտիկոնջը մեծ ուրախութիւն պատճառեց։

—Ե՛, բարձվ ես բերել քո տղէն, բարձվ ես եկել, սիրելիս—ասելով՝ տիկինը մօտեցաւ ութնամեաց երեխացին և դրկած՝ նրան համբուրում էր ու հետը հանաքներ անում։

—Օվանէս աղա, սա կարծես քո որդին չլինի, ակսեց կատականել Կոսիակինը. ինքը շէկ, աշքերը կապուագոյն, կարծես, ուսուի երեխաց լինի։

—Ավ է հասկանում, մեր հայկական առածն ասում է. գգիշերը մէկ, գողը՝ հազար,—կարելի է մայրը սալդաթների հետ...։

Այս խօսքերը երկու տղամարդկանց մէջ ծիծաղ բարձրացրին, իսկ տիկին Կոսիակինը հաւատացնում էր, որ փոքրիկ Ալէքսանդրը լիովին մօր պատկերն է։

—Ե՛ն, ասում էր նա, ձեզ նման կուտար դժի ձեռն այն պիսի հրեշտակ կին ընկնի, դուք էլ ի հարկէ նրա պատիւը չէք ճանաչի։

—Աւզիդ մօրն է նման. եթէ ինձ նման լինէր, հիմա պէտք է ձի հեծնէր, լոզ գնար, միշտ հրացանի հետ խաղար. բայց այդպէս բաների հետ ըսկի սէր չունի, զնում է եկեղեցի, տիրացուի ասածներիցն է սովորում և գալիս տանը պարելով երդում։

—Ե՛ն, Օվանէս աղա—ասում էր տիկին Կոսիակինը—հիմա ժամանակը փոխւել է, պէտք է ուսում, ուսում։

—Այց, եթէ ես ուսում ունենացի, այնքան ինձ Բէյրութով սիրում էր, միշտ տեսնելուց ինձ ասում էր—մալադէց, Օվանէս, ես հիմա, օ, ով է իմանում ինչ էի զառել, քանի քաջութիւններ եմ արել։ Մի Աստւած յաջողէր, մի անգամ էլ պատերազմ լինէր...։

Միւս օրը Ալէքսանդրի ձեռքը տիկին Կոսիակինը տւեց այբարենարանը (ազբուկան): Մի տարի չանցած՝ մենք նրան տեսնում ենք Թուրքանիսի գիմնազիոնում, ուր նա մտաւ իր դաստիարակչունու խնամառապրութեամբ: Ի՞նչ մեծ ու բախութիւն էր Օվանէս աղի համար, երբ տարւայ վերջում նրա Ալէքսանդրը ուսումնարանի ընծայով—գովասանական թերթով—տուն վերադարձաւ:

—Ե՛, Ալէքսանդր, «ըուղեց օֆիցեր զեներալնաւո շտաբա»: Վենզիլը կը կախես, իմ տղէն պատերազմի դաշտից չի փախչի, նաշալնիկ շտաբա, գեներալ Օվանէսով, սին Օվանէսով. օ՛, Բէյբութովն ինձ գովում էր, միշտ կ'ասէր՝ մալաղէց Օվանէս, ինչ ունիմ, չունիմ, այ կնիկ,—ասում էր իր կողակից Ծաղիկին Օվանէս աղէն, իը ծախեմ, 15 մանէթ ամսեկանս էլ կը տամ, թող Ալէքսանդրը ուսում առնի, ուսում առնի, ուսում առած օֆիցեր դառնայ, պատերազմ գնայ, ծ, դա...»

—Վայ, Ասուած ոչ անի, ի՞ր տղէն հօ քո նման չէ—ասում էր տիկին Ծաղիկը,—իմ տղէն թող ուսում առնի, լաւ ծառայութիւն մտնի քաղաքումը, յետոյ գաւառապետ դառնայ, թարգմանիչ դառնայ, պատկի, իր կնոջ ու երեխաների հետ ապրի Թուրքանիսում, ես էլ տեսնեմ ու յետոյ մեռնեմ:

—Ե՛, պասմիտրիմ... (կը տեսնենք):

Աղէքսանդրը ամեն տարի դասատունը փոխում էր և ընծաներով տուն գալիս: Նա ամառւայ երեք ամիսը ապրում էր Խնութ գիւղում՝ ծնողների մօտ: Նրա ամենասիրելի բարեկամն էր գիւղի տիրացու Վարդանը, որի հետ նա միշտ ման կը գար: Տիրացուն միշտ զբաղւած էր իր գրքերով և իր պատմածներովը շարժում էր երեխայի հետաքրքրութիւնը: Նա բերանացի գիտէր մեր բոլոր շարականները, Պովսէս Խորենացու պատմութեան մեծ մասը, մօտ ծանօթ էր Ներսէս Շնորհալու հետ և բոլոր գիտութիւնների հիմքն ու վերջը ընդունում էր միայն Գրիգոր Տաթևացու գրւածքները:

Թէ այլում աշխատեր՝ թէ կալում, թէ արտումը, թէ գիւղում, նա շինականների հետ ունեցած ամենայն մի խօսակցութեան մէջ տեղի և անտեղի կը մտցնէր Տաթևացու և Խորենացու խօսքերը. այս պատճառով գիւղացիները նրան «Ճուռ տիրացու» էին

ասում, բայց միևնոցն ժամանակ՝ ամբողջ զիւղը լնդում էր նրա խորը գիտութիւնը և համոզւած էր, որ ինչ առջից էլ, ինչ վարդապետ և տէրտիկ գար, էլի տիրացու Վարդանի չափ խորը չէր լինի: Իր հասակակիցներից Աղէքսանդրին մօտ էր նրա լնկեր Աւանը: Երկու երեխաները ամառը ամբողջ օրերով իրարից չէին հեռանաց. միասին այդի կը գնացին պողի, լիճ՝ լողանալու, սարը՝ կաքաւի: Մի անգամ, կարծեմ, նոքա մտադիր էին գիւղից սար փախչել և այնուեղ ճգնաւորութիւն անել, բայց տիրացու Վարդանի խօսքերը՝ «կայ յաշխարհի, չիք յանապատի» յետ գարձրին նրանց իրենց ճանապարհից:

Տարիներն անցնում էին և Աղէքսանդրը մեծանում էր: Նա երբ տուն գար, իր ծնողներին օգնական կը դառնար—այդին փորէր, ջուր անէր, բամբակին ու բոստանին աչքէր, առւոյտն ու խոտը քաղէր: Ամեն բանումը նա գիւղացի էր մինչեւ ուսումնական տարեշրջանի սկսւելը. գիւղացիներն էլ սիրում էին իրենց ուսում առած՝ համեստ ու բարի աշխատակցին և իրենց վէճերի մէջ դատարանների գործերի համար միշտ դիմում էին նրա խորհրդին: Գիւղի աղքատներն յուսով էին, որ երբ Ասուած աջողի՝ Աղէքսանդրը ուսումն աւարտի, պաշտօն ստանաց, իր գիւղացուն լաւ կը պահպանի:

— Ե՛ն, ասում էին նրանք, թող մի մարդ էլ մեզնից դատարաններում լինի, մեզ տիրութիւն անի:

Այս ցանկութիւնները գիւղացիները չէին ծածկում Աղէքսանդրից, որն իրեն միակ նպատակ էր լնտրել համալսարան աւարտել և իր գիւղացիներին օգնել:

Վերը մենք տեսանք՝ ինչպէս նա համալսարանից աւարտած տուն էր վերադառնում:

#### ԴԼ. Գ.

Արդէն մի քանի տարի էր, որ Օվանէս աղէն թողել էր իրա ծառայութիւնը և ապրում էր Խնութ գիւղում: Նա իր կենաթոշակը և այգու եկամուտը ուղարկում էր Աղէքսանդրին, իսկ ինքը ապրում էր իր հանդերի, տաւարի, ոչխարի եկամուտով: Տիկին Ծաղիկի ջանքով նրա տնտեսութիւնը շատ լաւ էր լնթանում: Բոլոր հաշիւները և տնտեսութեան կառավարելը նրա

ձեռքումն էր։ Օվանէս աղէն ճանաչում էր միայն իր երկու բարակ շներին ու հրացանը, և ամեն օր որսի էր զնումն ։ Նրա տունը լի էր վերի այծից, կաքաւից, ձկից, որը նա Մայրակ գետում երեք մատով սպանում կամ ուռկանով բռնում էր։ Նա շատ էր բերում մանաւանդ նատաստակներ. անպատճառ տարին մի հարիւր նապատակ կը սպանէր նաև Զի կարելի ասել, որ Օվանէս ազան աղքատ չէր. բայց նա իր գրութիւնից գոհ էր և վեհանձն։ Մէկ անգամ, երբ նա մի սարի այծ ուղարկեց գնդապետին, սա 15 ո. փող էր ուղարկել նրան։ Օվանէս աղէն բարկացած՝ փողը յետ դարձրեց։

—Ի՞նչ է, ես աղքամատ եմ, ասում էր նա, ես միայն Տէցբութովիցն եմ ընծայ փող վերցրել։ Ա' իս, քաշկայ (երանի) հիմի սաղ ըլնէր, կրինում էր նա յանձնի, կը դնայի մօտը, «Չերդ փայլութիւնը, Զեր Օվանէսը, և սա էլ Զեր խոնարհ ծառայ Աղէքսանդրը», և էն ժամանակը նա Աղէքսանդրին կ'անէր նաշալնիկ շտաբա։ Այ կնիկ, իմ խաթեր համար, քանի անդամ կ'ասէր «մալադէց Օվանէս»։

—Դու համա քո դլուխը գովի՞—պատասխանում էր տիկինն Սաղիկը, —իմ տղան խելօք է, կը գայ այսաեղ, ինձ մօտից չեմ թողնի հեռանայ, քանի ես ողջ եմ. ես որ մեռայ՝ նրանից յետոյ Աստած իր բանն աջողի։

Նւ ուղիղ, որ տիկինն Սաղիկի համար մահու հարւած կը լինէր, եթե նորա միակ որդին ուսումից յետոյ էլ հեռու լինէր նրանից։ Ի՞նչքան նեղութիւններ էր կրել տիկինն Սաղիկը, Քանի տարի Օվանէս աղան Վարշաւումն էր, քանի տարի Կովկասեան լեռներում, կարինում և Բայազէկում, և տիկինն Սաղիկը հանդարա կրում էր իր խաչը, իսկ երբ Օվանէս աղան տուն էր գալիս, խմաւմ էր, զինուրականների հետ հարբում, պատահում էր, որ նրան ծեծում էր։ Քանի անգամ նա սպանելուց էր աղատելի։ Բայց այս բոլորը ոչինչ, համեմատ նրան, թէ ինչքան գժբաղդ էր տիկինն Սաղիկը, որով հետև կորցրել էր իր հօր տունը և թաղել էր ութ երեխայ։

Մի օր, երբ հազիւ առաւօտեան ժամի տասը լինէր և Օվանէս աղան իրենց բակումը, թթի ծառի տակ նստած՝ իր ծխաքարչն էր սարքել, իսկ ո. Սաղիկը մի ինչ որ կարպետ էր գործել տալիս, դզիր Գասպարը լերդապատառ գուաց։

—Մուշտուլուզս տւէք, Աղեքսան աղան եկաւ։  
Այս խօսքերը ծերերին տուցին ելեքտրական արագութիւն և  
նոքա վազեցին ընդ առաջ։

Աղեքսանդրը իջաւ սազլից և վազեց մօր գիրկը։ Երկար ժա-  
մանակ մայր ու որդի զրկած իրար համբուրում էին։ Յետոյ նա  
դարձաւ դէպի հայրը և համբուրեց նրա ձեռքը։ Ծերը, սկզբում,  
կարծես, չէր ուզում մօտենալ և համբուրել իր որդուն, բայց  
Աղեքսանդրի համբուրը ոտնակիս արաւ նրա վեհանձնութիւնը։ ծերն  
իրեն պահել չկարողացաւ և թեթև համբուրեց որդու այտը։ Այս  
բանը կարծես նրան ամաչեցրեց։ նա յետ քաշւեց, ուզզեց կռացած  
մէջքը, ոլորեց սև, գեղդդրած, երկար բեղերը և բեղատակերը,  
սպոտեց նրանց ականջների վերեւ, գտակը վեր բարձրացեց, որ կոկառը  
աւելի լաւ երեայ, մի ձեռը կանթեց, երկու վայրկեան այս դրու-  
թեան մէջ մնաց և ապա մի անսպասելի արագ շարժում անելով  
ձեռը կողիւնուի տակ գնելով, կուրծքին անիւի ձեւ տւած, մօտե-  
ցաւ Աղեքսանդրին։

—Պատիւ ունիմ ներկայանալու, պարոն կանոնիուատ պլան,  
պլողպորուչիկ Օվանիսով, Վարշաւացում ու Լազգիների մէջ, Քիւ-  
րակ-Դարում տաճիկների դէմ պատերազմել եմ, Բէլգութովը միշտ  
ինձ «մալարէց Օվանէս» էր ասում։

—Դէ լաւ, լաւ, դու ու քո Բէլգութովը։

—Մայրիկ, թող ասի, պատասխանեց մօրը նրան զրկած որ-  
դին. և մի ձեռքն էլ պարզեց, որ հօրը զրկի, բացց Օվանէս աղան  
այսպիսի թոյը, կնկայ բաներ չկարողանալով սիրել, հեռացաւ և մի  
ձեռը կանթած, միւն էլ աջ ու ձախ շարժելով մօտեցաւ կնոջը։

—Ե՞ց ինիկ, ի՞նչ ես ասում, ահա ինչով եմ տուել, թրով,  
թրով, քո տղի նման նստի գրի, ճղի—ճղի—ճղի։

Այն ժամանակ սկսում էին կամաց յառաջ գալ մօտ հարե-  
ւանները, որոնք զրկախառնուում էին Աղեքսանդրի հետ, որը նրանց  
ամեն մէկից առանձնապէս հարցնում էր նրանց քէֆը-հալը, կնոջ,  
երեխանների մասին, այդիների, ցանքերի և անասունների մասին։  
Գիւղացիներն էլ իրենց կողմից նրան հարցմունքներ էին ատլիս։  
Մի քանի րոպէում կազմեց մօտ 25-30 մարդից բաղկացած մի  
շրջան, որ բոլորն էլ ծիծաղում և ուրախ էին։ Այդ 30 մարդը, կար-

ծես, ամբողջովին մի հոգի ունէին, և այդ հոգին էր Աղէքսանդրը։ Մօտ կէս ժամ նրանք իրենց մոռացած խօսում էին՝ երբ մօտեցաւ քրդուհի՝ Զէյնէն և յայտնելով, որ սենեակը պատրաստ է, կանգնածներին տուն հրաւիրեց։ Զէյնէին տեսնելը մի անասելի ուրախութիւն պատճառեց Աղէքսանդրին։ Նա մօտեցաւ պառաւ քրդուհուն, որը գրկած՝ մայրական սիրով համբուրում էր նրա երեսները։

Նորեկն ու գիւղացիները զնացին բակի ծառի տակը, որտեղ մաքրած էր, թաղիսը փռած, և հովը կարծես հրաւիրում էր նրանց։ Օվանէս աղի տունը բաղկանում էին երկու սենեակից՝ իրենց մէջ տեղի հաշոռվ, մի հացատնից՝ իր մառանովը։

Սոքա բոլորը շինւած էին մի գծի վերաց, որի առաջ տարածւմ էր ամբողջ բակը։ Բակը, մօտ 10 լիոր ցորնի տեղ, պատած էր բարձր և հաստ թթենիներով, որոնցից մի քանիսը շրջապատում էին պատշգամբը և ծածկում նրան իրենց խիտ տերեւներով։ բակում տնկած էին ծիրանի, խնձորենի, գեղձենի և նոնենիներ, իսկ կենդրոնում կանգնած էր մի բազմագրեաց մեծ թթենի։ Բոլոր հասարակութիւնը հաւաքւեց այս թթենու տակը։ Գիւղացիները հարցնում էին Աղէքսանդրից՝ ուր էր զնացել նա, ինչ էր սովորել, ինչ աստիճան ստացել, և Աղէքսանդրը նոցա ամեն մի հարցին տալիս էր բազմակողմանի և համեստ պատասխան։ Վերջումը ամբողջ գիւղն արդէն հաւաքւած էր Օվանէս աղի տունը։ Պառաւները և ծերերը դալիս նրան համբուրում էին և օրհնում, իսկ երեխաները բակի պատերի և թթենիների վրայից նրա վրաց աչքերը պլատացրած նայում։ Վերջը պառաւներից մէկը առաջարկեց բոլորին, որ ցըրմեն և խեղճիկ երեխային հանդսութիւն տան։ Գիւղացիները հետեւցին պառաւի առաջարկութեանը։ Աղէքսանդրը նրանց բոլորին ասում էր—բարնվ եկաք, վաղը ամեն բան կը խօսենք։

## ԴԼ. Դ.

Երեկոյիան դարձեալ գիւղացիները հաւաքւեցին։ Աղէքսանդրենց տունը և շատ ուշ ցրւեցին։ Նոցա մէջ էին և տիրացու Վարդանն ու Աւանը։

—Վարժապետ, հիմի քեզ հետ կ'ուսումնասիրէնք քո Տաթևացին, կարծեմ, քո Տաթևացու մէջ բաւականին սխալներ կան։

— Դէ, ասա, գնացել ֆարմասիօն ես դառել էլի, նոր փիլիսոփաների բաները կարդացել ես. ես քեզ գնալուցդ ասեցի, որ հին փիլիսոփաներից կարդաս:

— Նոր փիլիսոփաները որո՞նք են, հները որո՞նք:

— Նորերը — Փարմասիօն, սուտասան, Մահմատի լամուկ, հները՝ Դրիգոր Տաթևացի, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի, Դաւիթ Անյաղթ, այ ինչ կարդացիր:

— Դրանք բոլորն էլ անպէտք մարդիկ են, իսկ քո Մովսէս Խորենացու բոլոր գրւածները սուտ են:

— Եհէ, արի, արի վաղը քո վարժապետը քո ականջները քաշի. պասդ էլ հօ ուտում ես, հազորդութիւն էլ հօ չես առել ես գիտեմ, լաւ...

Այստեղ Աւանն իր ծիծաղը ձկարողացաւ պահել և բարձր փրթկաց. սորանից տիրացու Վարդանը հասկացաւ, որ Աղէքսանդրը նրա հետ հանաք էր անում:

— Իսկ դու, գնաս բարով ասելուց՝ ասաւ Աղէքսանդրը Աւանին, պատրաստւիր որ մեր իրար գրածները կատարենք:

Միւս օրը մի գիւղացի էլ չերեւաց մինչև ժամի 10-ը, երբ գզիր Գասպարը լուր բերեց, որ տանուտէրը բոլոր գիւղացիների հետ գալիս են «Աղէքսան աղին» տեսութիւն:

Տանուտէրը և ամեն ընտանիքից մի անդամ, որոնցից շատերը մի-մի շիշ օղիով ներկայացան Աղէքսանդրին, որը թթենու տակ նստած էր: Նոքա օղիները շարեցին ծառի միւս կողմը:

— Ե՛, ինչ նեղութիւն էք քաշել, եղբարք:

— Ըսկի նեղութիւն չկայ, պատասխանեց տանուտէր Աւետիսը: Դու մեր գեղի աղէն ես, աղի տղէն, գեղի որդին: Մենք էլ եկել ենք քեզ տեսութիւն. հարկաւոր է, որ ամեն մէկս ձեռներս մի բանով գանք. մի մեծ բան չէ, մի-մի շիշ օղի է:

— Եղբարք, օղին ի՞նչ եմ անում, ես խմողը չեմ:

— Եհ, դու չես խմի, մենք կը խմենք, ծիծաղելով դուեց գիւղացիներից մէկը, Լուսկի Գէւոն.

— Ե՛, գնանք սենեակ, գնանք, ասելով՝ առաջ գնաց Աղէքսանդրը: Նորան հետևեցին գիւղացիները, քարէ սանդուխքներով բարձրացան պատշգամբը, այնտեղից հաշոը և ապա մեծ սենեակը, որ չորս

սաժէն երկարութեամբ և երկու սաժէն լայնութեամբ զարդարւած էր երկու թախտով, որոնց վրայ փուած էին Վայոց ձորի հասարակ գորդեր և զրած հասարակ, թէ շինւածքով, թէ փայտով սեղան, որի մօտ զրած էին նոյնանման նատարաններ: Պատերի վրայ կախ տւած էին զանազան զէնքեր, հրացաններ, զաշոյններ, սրեր և հին զոյզ առաճանակներ և մի հատ նոր առաճանաւկ: Կովկասի վնրջին դարերու զինադարձութեան պատմութիւնը լիովին կարելի էր այստեղ ուսումնասիրել: Սենեակի զլսի պատին կախած էր Նիկողայոս Ա.-ի պատկերը, որի կողքերումը դրած էին գեներալ Իէլբութեանի և Ներսէս Աշտարակեցու պատկերները:

Գիւղացիները լցւ եցին սենեակը: Օվանէս ազան ու գեղի տոհմական մելիք Դաւիթը, (որի ընտանիեկան մականունն էր Մելիք Նէզօ), երկու քահանաները, վերեկ թախտի վերայ նստեցին, իսկ գիւղացիները կանդնած մնացին. Հնայելով Օվանէս աղի և Աղէքսանդրի բոլոր հրաւերներին, նոքա չէին կամենում նատել:

—Առաջ մէկ-մէկ թաս կը խմենք մեր նորեկ աղի կենացը, յետոյ կը նստենք, ասելով՝ տանուտէրը լցրեց իր բաժակը օղիով. Նրան հետեւցին գիւղացիները:

—Օվանէս աղա, դու մեզ հայրութիւն ես արել, դու մեր աղքատներին պաշտպանել ես, գիւանխանէքում օգնել ես, գիւղումը խելք ու կարգ ես սորւեցրել, (մինչ նա այս խօսքերը ասում էր, Խուսկի Գէւոն ետեից կամացուկ մրմնջաց—կարճ կորի, կեղծաւոր շնն, ջըհանամը՝ թէ էգուց էլ դա կը սատիի, մեր նապաստակների հողին կազատւի), վերջապէս, Օվանէս աղա, վերեւ Աստւած է եղել, ներքէ դու, Աստւած քո էս միակ որդին բաշխի, Աստւած նրան աջողութիւն տայ, մենք էլ միշտ նրան ծառայ ըլնենք. Աստւած վկայ, որ եկել է մենք գեղով ուզում ենք մեզ նրա ոսի տակը մատաղ անենք: Քու էդ միակ որդու կենացը:—Աղէքսանդրը սենեակի մէջ տեղը կանդնած էր, գիւղացիները մէկ-մէկ մօտենում էին նրան ու քո կենացը ասելով՝ խմում: շատերը նոցանից բռնում էին օձիքը և բաժակները ձեռքերում բռնած՝ բարեմաղթութիւններ անում: Վերջը բոլոր գիւղացիները նստեցին, մի քանի պատուաւորները և ծերերը տեղաւորւեցին թախտի վերայ, իսկ միւսները պատերի սահի թաղիսի վրայ, որը ծալասպատիկ, որը ծնկաչոք: Տանու-

տէր Աւետիսը, որը ուզում էր յարգեորի երևալ, չէր խօսում, իսկ միւս գիւղացիները Աղէքսանդրի և իրար հետ զրոյց անում, ծիծաղում էին: Յանկարծ վերկացաւ Լուսկի Գէւռն, երկար բիղ քոլոզով, երեսն ու գլուխը ածելած, ծիծաղելի, բայց պատկառելի դէմքով մի ծերունի և դարձաւ գիւղացիներին.

— Տօ, շան որդիք, գնամ կնոջս ասեմ, մեր մահլումը ինչքան աղք ու լւացքի ջուր կայ՝ թափի ձեր գլխին. խի չէք իմուն Խաթունն ինձ ճանփու զցելուց ասաւ.—Ալէքսանի եկած օրը եթէ չես հարբել, գլխիդ հազար փամփաչայ կը դամ:

— Ե՛ն, Ալէքսան, որդի, ես աղամաղա չեմ գիտի, դու երկի աղէն ես, բայց իմ որդին ես, ինձ ականջ զիր, բոշի աղէն—բոշ պէտք է լինի. թէ որ ուզում ես մեր գիւղացիներին մեծ դառնաս, պէտք է մեզ հետ արազ խմես:

— Հայ, քո արեին ցան փռեմ, բոռացին գիւղացիներից մի քանի սը, ասա՝ մեռած հալիւնը, տանդ նստի, էլ ինչ ես դալիս էս տեղարենք:

— Տօ, շան որդիք, էդ ինչ էք ասում, հալա մի մէկ էլ Ալէքսանի կենացը խմէք, ով որ չխմի, պառաւ մէրը իմն է:

Նա գիւղացիներին մէկ-մէկ բաժակ էլ օղի խմացրեց նոյն բարեմաղթութիւններով:

— Տօ, Օվանէս աղա, սրանք ինչ են ասում, ով է հալիւոր:

— Կակօյ (ինչ) հալիւոր, թող հէյբութովը հիմա սաղ ըլէր, հ'ըմ... արջից չեմ վախի, լնձուց չեմ փախչի:

— Ե՛յ, խրկնզ, կալնող, մի եկէք:

Այս ասելուն՝ Օվանէս աղի զոյգ բարակ շները մօտեցան և նրա մօտ թախտի վերաց նստեցին:

— Տւէք իմ հրացանը, տեսնեմ ով է ծեր:

— Քա՞, մարդ, էլի՞ գու քո թւանքն առար ձեռդ—միջամտեց տիկին Ծաղիկը—բաւական է—և մօտեցաւ շներին՝ խրկի ու հրացանը խլի:

— Ա՛յս տի', — մատը շարժելով դարձաւ նրան ամուսինը—ելլ տերէ զաւարիու (յ տեբե ցօօրօ, ասում եմ քեզ), կինը պէտք է տղամարդիբանին չխառնւի, էս էլ քու տղէն:

Գնա քո տղի մօտ ապրիր, այ տղայ, քո մօրդ պահիր, ես էլլ Վարշաւ. կոիւ եմ գնում:

— Սպասէք—միջամտեց ևուսի Գէւոն,—եաւաշ, որդի Ալէքսանդր, ես պէտք է քեզնից մի բան հարցնեմ, էղքան երկիր դուման ես եկել, ամեն տեղ են զինորականները գիծ։ Ես ասելուն՝ բոլոր գիւղացիները ծիծաղեցին։

— Այս տի, մաշենիկ (էյ դու սրիկաց) էդ ասում ես, թէ ես գիտ եմ, համ, թէ ես կը մեռնեմ՝ կը տեսնէք՝ թուրքերը ձեր պլուխը ի՞նչ օցին կը հանեն. ձեր Ալէքսանի նման ճիզի բիզի անողները թող թուրքին, տեսնեմ, կարնդ են...

— Ախաղեր, դրուստ է ասում Օվանէս աղէն, խմենք մէկ մէկ բաժակ էլ նրա կենացը, մեր գեղի քոթուկի կենացը, որ մեր ծերն է, մեր բոլորիս հայրն է։

Գիւղացիները խմում էին և ստիպում էին խմել Ալէքսանդրին Յոլորն արդէն տաքացել էին, խօսում էին պետութեան, հարկերի, դատաւորների և երկրի աղքատութեան վրաց։ Ալէքսանդրը նոցնուիս կարմրել էր, նա գիւղացիներից խօսք խնդրեց, թիկնւեց սեղանի վերաց, մատերով սանրեց իր երկար շէկ մազերը և այսպէս սկսեց։

— Միրելի համագիւղացիներ, ես յոյս ունեմ, որ դուք չեք մտածում, թէ ես ուսում առնելով՝ ձեզանից հեռացել եմ. ոչ, ես մնացել եմ միևնոցն ձեր Ալէքսանը. ձեզանից ծերերը իմ հօրեղբարբերն են, երիտասարդները՝ իմ եղբայրները և ընկերները. ես ձեզ հետ հանդում աշխատել եմ, միշտ բաժանել եմ ձեզ հետուալթիւն ու ախրութիւն, աղքատութիւն ու հարստութիւն, ցաւի ընկեր և կարեկից եղբայր եմ եղել։ Դուք ձեր կողմից միշտ ինձ սիրել էք և յարգել։ Հիմա ես ասում եմ, որ ես ձեզ սասափիկ սիրում եմ, գիւղացիներ, և իմ միակ նպատակն է, որ իմ ձեռքից եկածի չափ ձեզ օգնեմ. վերջապէս ես ինձ նւիրել եմ ձեզ։ Այժմ ես աւարտել եմ իմ ուսումը, պէտք է գործի մանեմ, ասէք խնդրեմ; որ զործը գիւղացուն աւելի օգտաւէտ է։ Ի՞նչ բանում ես ձեզ աւելի հարկաւոր եմ։ Դուք գիտէք, որ ես աղքատ-հարստի մէջ զանազանութիւն չեմ դնում, մինչև անզամ աղքատներին աւելի եմ սիրում, այս պատճառաւ, ով ի՞նչ գիտի՝ ասի, շամաշի։

— Ալղորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրու-

թիւնք նոցա»—սկսեց տիրացու Վարդանը,—թուրք ազգը հայ ազգի վրէն ոտը բարձրացրել է, հայ ազգը խողճացել է, հարկաւոր է որ դու հային պահես. մէկէլ, այց, էս տէրտէրների երեսին եմ ասում, որանց երկուսը մի կոսէկի բան չի հասկանում, սրանց, եթէ գըտնւեն, կարգին քահանաներով փոխարինես, ոգի լրիւ գիտութեամբ հովեսցեն զժողովուրդն Աս ու ուժոյ:

—Դէ, տիրացնւ, ծուռ. ծուռ. խօսալ մի՛, միջամտեց Լուսկի Գէւոն: —Ալէքսան աղա, խօսեց Աւանը, իրաւ է, ես երիտասարդ եմ, ինձ խօսք չի հասնի, բայց մի երկու բան էլ ես կ'ասեմ—տես, մեր ծերերը ոչինչ բան չեն հասկանում, հասարակութեան դործը առաջ տասնել չեն կարողանում, մեր զրացի բէկերը զրանց խաբեցին, մեր զիւղի հողերը սեփականացրին. մենք երիտասարդներս շատ լաւ ցանկութիւններ ունինք, բայց անկարող ենք իրագործել, որովհետև ուսում չունինք, բան չդիտենք: Թէ որ ուզում ես մեր գիւղին լաւութիւն անես, ուսումնարան շինի:

—Եղբայր, սկսեց գլուխը երերցնելով ծերուկ Գէւոն, ջահիլի դործ չէ ամենայն բան խօսալը, ջահիլլ պէտք է շատ լիի, և ոչ թէ ամեն մի անգամ թանի ճանճի նման մէջ ընկնի: Տես, որդի Ալէքսան, մինչև այժմ դու իմ որդին էիր, այժմ դու իմ աղին գարձիր. տես, աղա ջան, դրանց ոչ մէկն էլ բանի էութիւնը չի հասկանում, մեր գարդն ու ցաւը և նրանց դեղը ամենից լաւ գիտի Մելիքը: Ացգահս բաները հարկաւոր է, որ նա քեզ ասի:

Այս խօսքերից յետոյ բոլոր գիւղացիները յարգանքով լի նայւածք զցեցին ամենից վեր նատած Մելիք Դաւիթի վրայ, որը մինչև այժմ լուռ նատած էր: Խնքը Ալէքսանդրը հարցական գէմքով սկսեց նայել նրան, և կարծես ամաչեց, որ իր հարցով ամենից առաջ չէր գիմել այդ պատկառելի մարդուն:

Մելիքը իրեն երկար սղասնել չուեց և գարձաւ գէպի Ալէքսանդրը: —Ես համաձայն չեմ Գէտօի հետ, որ ջահելլ իրաւունք չունի խօսելու. խելքը հասակումը չէ, զլխումն է, ես անհրաժեշտ եմ համարում, որ ամենից առաջ մեր գիւղում ուսումնարան լինի, որտեղ աշակերտները սովորեն հայերէն ու թուրքերէն և ոսերէն Բայց ուսումնարանը փոքր բան է, դու կարող ես մեր գիւղին աւելի մեծ լաւութիւն անես:

Խորին լոռւթիւնը տիրել էր սենեակում։ Դիւզացիները՝ որը դրախը քաշ, որը աչքերը Մելիքին յառած, լսողութիւնն էին դառնել։ Գէւոն ծխաքաշից մուխը քուլա-քուլա վեր էր բարձրացնում, Աւտիսիսը լնկել էր մտատանջ մոռացութեան մէջ։ Աղէքսանդրը յափշտակւած նացում էր Մելիքին և հիանում նրա խօսելու ձեից։

—Եւ վաթսուն երեք տարւայ մարդ եմ, շարունակեց Մելիքը, շատ բաների վկայ եմ եղել և ամեն բանի վրայ էլ ուշք գարձրել և սկի մի օր այս երկրում մի արև չեմ տեսել և կարծես քանի անցնում, ցուրաը խտանում է և մեզ խեղդում չորացնում։ Հիմա էլ երկրում դատաստան չկայ, դատաւոր չկայ, ամեն մի գող միրաւ է դառնում, մի սրիկայ՝ գիւղին տանուտէր, մի արբեցող սատանայ՝ գաւառա՛մն պրիստաւ։ Ամենուրեք, սուտ վկայութիւն, մարդախարութիւն, արլարին մեղաւոր են անում, մեղաւորին արդար, որին ապրուստից են զցում, որի ծախսացը ետ դարձնում։ Բոլոր պաշտօնատէրերը կաշառք են առնում, բանինացին հեռացնում, իսկ տխմար խարեբացին պիտանացու համարում, ով ումից է ով է հարցնում, ով է ում զաբալէն կարգում։ Որդի, իհարկէ դու մեր բոլոր շաւերին օգնել անկարող ես, բայց եթէ մեր մէջ մի վարչական պաշտօն ունենաս, շատերի ցաւերին կարող ես, գոնեա, փոքրիկ սպեզանի դնես։

Մինչև այժմ հանդարտ լսող գիւղացիները համաձայնութեան պղաղկներ բարձրացրին։

—Եաւ լաւ, Մելիք բիձա, արդարացի են քո ասածները, բայց ես գնամ ծառացութեան մանեմ, որ ապագայում քննի, նահանդական դատարանի անդամ դառնամ։

—Ո՛չ, որդիս, նահանդական դատարանում զործ ունենում են քաղաքացիները, թուրքերը, որ օրը մի մարդ են սպանում։ Մեր հայ ազգը գիւղացին այդպէս չէ։ Նրա դործը պէտք է ըսկի դատաստանատուն չգցես, պէտք է գիւղի դատով վերջացնես։ Մեզ հարկաւոր է մի դատաւոր, որը միշտ մեր մէջ ապրի, մեր լաւին ու փառին ճանաչի, մեզ մի ժամ պատժի, մի ժամ խրատի, մեզ համ հայր դառնայ, համ եղբայր։ Թէոր կամենում ես, աշխատիր մեզ պրիստաւ դառ։ Այս պաշտօնը թէպէտ քեզ մեծ դիրք չի տայ, բայց շինականի համար մեծ բան է։

Այս խօսակցութիւններից մի քանի օր անցած՝ Աղէքսանդրը ուղևորւեց քաղաք՝ իր համար պաշտօն վնառելու։

## ԵՐԳԵՐ

ՀԱՅՆԵՑԻՑ՝ ԱԼՔՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԻ

### I

Կախարդական վառ Մայիսին  
Բացւում էին ծաղիկներ.  
Փայլում էին և' իմ սրտում  
Քնքոյշ սիրոյ ցընորքներ...

Կախարդական վառ Մայիսին  
Արարաշխարհ խնդում էր.  
Սոխակն անուշ տաղ էր ասում,  
Երբ պատմեցի քեզ իմ սէր...

### II

Դաստ ու շատ մարդիկ ինձ գիշեր-ցերեկ  
Տըւին շատ խրատներ ու շատ խորհուդներ.  
Ինձ ասում էին. «Դէպքին սպասէք»,  
Եւ ըսպասեցի ես երկար օրեր:

Բայց այդ խրատներին ականջ դընելով՝  
Քաղցածութիւնը հոգիս կը հանէր,  
Թէ բախտը մի օր ինձ չը խղճալով՝  
Չուղարկէր երգչիս կարեկից ընկեր:

Եւ նոր ընկերըս փրկարար ձեռքով  
ինձ կուշտ կերակրեց, ցրւեց իմ վշտերն.  
Կուզէի փարել ես նորա վըզով,  
Բայց, ախ, գլխւար է. . ես եմ ացդ ընկերն:

## III

Կոքա իրար սիրում էին ջերմ սիրով,  
Բայց երկուան էլ ծածկում էին ացդ սէրը.  
Նայում էին իրար անհաշտ աչքերով,  
Եւ զուր տեղը մաշում իրանց սրտերբ:  
Վերջը նոքա բաժանւեցան իրարից,  
Եւ մերթ միայն տեսնւում էին երազում.  
Իսկ երբ մեռան ու չւեցին այս կեանքից,  
Էլ մէկմէկու չը տեսան այն աշխարհում...

## IV

Երբ լալիս եմ—վարդ են սիրում իմ սիրատանջ արցունքներ。  
Վարդը փթթում, վարդը բուրնում անուշիկ.  
Երբ հառաչում—իմ հառաչքից դուրս են բղխում շատ երգեր  
Ու զիկ հնչում զիրթ սոխակի դացլացիկ:

Մաննեկ. սիրիր դու միայն ինձ, սիրիր—և վարդ, ծաղիկներ.  
Բուան սիրով քեզ կը բերեմ ջերմ սպարդե.  
Եւ քաղցրախօս բլբուլի պէս միշտ քեզ համար իմ տաղեր  
Ես կը երգեմ լուսամուտիկ առաջեւ:

## V

Ասաեղազարդ վաս. զիշերին  
Խոր քուն տիրած ծովի ափին,  
Վերև—լուսինն է շողշողում,  
Ներքեւ—ալիքն ուրախ խաղում,  
Ափին նայում ու ծիծազում.—  
« Ո՞վ է այնտեղ ափին կանգնած,  
« Սիրահամը է, թէ ցընորւած.

« Մերթ ժպառում է, մերթ արտասւում,  
 « Մերթ ինքն իրան երկար խօսում...»:  
 Լուսինն խսկոյն այդ լըսելով  
 Եւ ալիքին ձայնակցելով,  
 Նոյնպէս կուշտ-կուշտ ծիծաղում է,  
 Ափին նայում ու ասում է. —

« Այնաեղ լացողն  
 « Ու ծիծաղողն  
 « Սիրահար է,  
 « Խելագար է,  
 « Եւ, բացի դա,  
 « Պօէտ է նա....»

Մոսկուա:

# ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԶՈՒՅԵՐ

Վէպ գիւղական կեանքից

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

## ՄԱՍՆ ԱԹԱԶԻՆ

Քամու բերածը քամին կը տանի.

Ժողովրդական առաջնորդ:

Ա. Դլուին

—Ղ նչաղ կացեք, զնչաղ. տեսնում ես Համբարձումենց Ազատին, մի խորամանկն է, որ... համ իր սազ ընտանիքն է սպահում, համ էլ փող է յետ զցում: Խնչու, որովհետև շատ զոչաղ է. մէկ որ շատ աշխատող է, հենց հրէն զործի է, իսկի հանգստութիւն չոնի: Հողագործութիւնը շատ է օիրում, եռանդ ունի և առեն բան, ինչ որ ձեւաքով գալիս է, անում է: Քանի անգամ եմ լսել, թէ Համբարձումենց Ազատը վաճառականների համար բամբակ ու բոժոժ է առել մեր գիւղացիներից, խարել է, սովորական գնից պակաս գնով է առել և էդսիսով, ի հարկէ, բաւական փող է աշխատել: Պա դա զոչաղ մարդու բան չի: Որտեղ մի վիճելի, կամ դատարան ընկնելու զործ կայ, տեսար Ազատը իսկոյն մէջ մտաւ, մի բան կամ կը շինի կամ չէ, բայց միջումը անպատճառ կաշառք կը վերցնի: Հարեւաններից մի հարկաւոր բան կը խնդրի, կը ստանայ, բայց ամիսներ կ'անցնեն, փոխարէնը չի տալ: Քանի ուզես, կ'ասի կը տամ, կը տամ և վերջը ծիծաղելով ու երեսը միջացնելով կ'ուրանայ: Նախառինք, հայոցանք, բամբասանք կը լսի, բայց չի տալ:

<sup>1)</sup> Կեղծել և շողոքորթել:

Բանւորներ կը բանեցնի, առաջ սիրով կը վարւի հետները, խի վերջը սիլի-պիլի<sup>1)</sup> անելով վարձները կը կորիի: Բանւորները կը տրանջան, կ'աղաչեն, բայց իզուր. ինչ որ տւեց՝ տւեց: Պա զա դո-չաղութիւն չի: Տեսաք ինչպէս իր ընճանի յետեւում գտնող հողը զոռով տիրապետեց. չէ որ զա Սամոնինն էր: Տեսաք նա ինչպէս զոռ արեց, երեսը պնդացրեց, թուք ու մուր կերաւ և իր հօրեղ-բոր հետ կիսու բակը ել իր ձեռքը զցեց: Հիմա տեսնում էք ինչ տներ է շինել տալիս: Որդիք, դուք ել էդպէս զոչաղ կացէք: որ սոված չմնաք, առաջ գնաք, փող յետ զցէք:

Անձամբ ացդ ուղղութեանը հետեւող և համակրող մարդ լինե-լով՝ «սինոդ» Վուկասը յաճախ այդպիսի խրատներ էր տալիս իր երկու որդոցը՝ Համբարձումին և Գալուստին, երբ սրանք մի որ և է սիսալ քայլ էին կատարում: Եթէ պատահում էր, որ Համբար-ձումը կամ Գալուստը դիտակցաբար մի բանով օգնութիւն էին հասցնում մէկին, սինոդ Վուկասը լսելուն պէս սկսում էր իւր բա-րենպատակ խորհուրդները և խրատները:

— Հարեւանից բանից հեռու կացէք. դուք եղէք և միայն ձեր գլուխը: Վոչաղ կացէք, ուրիշին խարեցէք, ունեցածը լսեցէք, ինքներդ վայելեցէք, որ ասեմ տղայ էք:

Սինոդ Վուկասը ինքը աւելի ծոյլ էր, քան աշխատասէր, բայց գիտէր այդպիսի խրատներ կարդալ թէ իւր որդոցը և թէ ուրիշ ներին: Դրա պատճառով էլ գիւղացիք նրա անւանը կացրել էին «սինոդ» մականունը: Նա եռանդուն և անընդհատ աշխատանքի կպած գիւղացիներից չէր, բայց կեանքի մէջ հաւատարիմ էր ֆնում այն ամենին, ինչ որ ինքը զուազութիւն էր համարում:

— Սինոդ որ սինոդ, բացականչում էին գիւղացիք, երբ Վու-կասը սկսում էր իւր «բարենպատակ խրատները», տեսէք ինչպէս է մէկ ոուը առաջ դրել, ձեռքը կողքին, փափախը ծուռ և աչք ունքը ոլորելով խօսում: Ինքն էլ որ կարճահասակ չի ու հաստիի: ասես հէնց իսկական սինոդ լինի:

Հօր բարենպատակ խրատները Համբարձումն ու Գալուստը լսել էին դեռ մանկական հասակից և շարունակում էին լսել, չնայած որ նրանք արդէն հասունացած տղամարդիկ էին:

Սինոդի մէծ որդին հօր ուղած տղան էր. նրա մէջ «զօշաղու-

թեան» հետ միացած էր և աշխատասիրութիւնը։ Նա մեծ եռանդով կառարում էր ամեն տեսակ աշխատանք և որքան կարողանում էր, «դէպի տուն» էր քարշ տալիս։

Համբարձումը իւր ասսարէզը այսպէս սկսեց. քանակհինգ տարեկան ամուսնացաւ, պսակւելով մի օժիտաւոր աղջկաց վրա։ Թէև հայրը ցանկանում էր նրան աւելի շուտ ամուսնացնել, բայց խելօք որդին հօր իւրաքանչիւր առաջարկին պատասխանում էր.

—Այ հայր, ախր դու ես ասում, թէ զոչազ կացէք, ձեռքներիցդ բան մի բաց թողէք. պա էլ ինչպէս ամուսնանամ, որ իմ ուզած աղջիկը չկայ։ Խսկ է, աղջիկ կայ, գեղեցիկ էլ է, բայց մենակ գեղեցկութիւնը ինչիս է հարկաւոր. վրան բան էլ պիտի լինի. հող կամ փող։ Զէ որ քո որդին եմ, քեզանից պիտի օրինակ վերցնեմ, կը համբերեմ, համբերութիւնը կեանք է։

—Դիւզ ես ասում, որդի, ես էլ սպասեցի, որ վերջը էս տան վրա եկայ։ Բայց զէ հիմա, փառք Աստծոյ, ապրուսո ունենք, դու էլ խեղճ ես, հասած տղայ ես դառել։

—Ի՞նչ արած, լաւ, էս աղջիկ, որ վրան բան չկայ։

—Ի՞նչ ասեմ, որդի, կամքը քոնն է։

Եւ նրանք՝ հայր ու որդի սպասում էին, մինչև որ յայտնւեց ցանկալի հարսնացուն։ Աղջիկը որբ էր հօր կողմից և իւր ծնողաց միակ ժառանգն էր։ Նա ունիր բաւականաչափ հող և տունամշջ։ Սինոդ Ղուկասն ու իւր որդին «հոտն առնելուն պէս» գործի կացան։ Գնացին, եկան, ուրիշներին ևս միջնորդ ուղարկեցին աղջկասոիրոջ մօտ, արանքում մեծ կաշառք խաղաց և բանը թէև փոքր ինչ դժւարութեամբ բայց վերջապէս գլուխ եկաւ։ Նշանին ու պսակելը մէկ եղաւ, չնայած որ դրանից մի քանի շաբաթ առաջ վախճանւել էր սինոդ Սահակի կինը՝ Մարթան։ Խեղճը շարունակ կրկնում էր.

—Էնքան չմեռնեմ, որ աղիս հարսանիքն անեմ, հարս տեսնեմ, միիթարւեմ։

Բայց խեղճ կինը, որ հիւանդու էր, չկարողացաւ արժանանալ այդ օրին։

Լաւ էր յաջողւել հօրն ու աղին, էլ հարկաւոր չէր ուշացնել.

աղջկատիրոջ միտքը յանկարծ կարող էր չփոխել և այն ժամանակ ամեն ինչ կը փշանար:

Հարսնացուն մի աշխատասէր և ընդունակ աղջիկ էր: Նա միտ էր և բարեսիրու Հարեւանութեան մէջ Վառվառը օրինակելի էր: Ինչ օգնութիւն որ հարկաւոր էր հասցնել հարեւաններին, և այդ կատարում էր ըստ չափու կարողութեան: Մէկի խնդիրքին չ անիլ չգիտէր: Նա ամեն տեսակ ցաւ ունեցողներին կարեկցող էր, և հասկանում էր որ հարեւան հարեւանի հետ սիրով պիտի ապրի Նա գիտէր, որ առանց դրան պիտիքը կեանքի չի նմանւիլ: Վառվառի քննաւորութեան այդ կողմը դիւր չէր գալիս Մինողին և նրա որդուն, որի պատճառով Վառվառը յաճախ յանդիմանութիւն և նախառինք էր ստանում:

— Ինչ որ ուղեն, կը տան, անում էր Համբարձումը նորեկ հարսին. հարեւանը կը գայ, շատ բան կ'ուզի, խօմ չի կարելի ամեն անգամ ասել. «Համեցիր տար» չէ որ էդ ամենը մեզ վրա փող է նստել, զգիտեմ ախր, կը տանին կը փշացնեն: Պոչաղ ես, զունրանցից առ, երբ մեր տնացին գործերի համար մի բան հարիս: որ է լինում: Հիմա էնալիսի ժամանակներ են, որ որքան կարող ես զիսիքեզ քաշիր: Աղքատին էլ չեն շատ երես տալ. մի անգամ եկաւ, ողորմութիւն տւեցիր, էհ, էդ գեռ ոչինչ. ամա երկրորդ անգամ դուռը երեսին փակիր, երբ տեսնես որ չի հեռանում: Մի երկու ցուրտ խօսք ասա երեսին, կը հեռանայ:

Խեղճ Վառվառին ամեն անգամ մեծ ցաւ էին պատճառում դոցնանման խրատները, որ նա լսում էր թէ իւր ամուսնուց և թէ սկեսրացրից: Նա սկզբում աշխատում էր հերքել այդ ամենը, բայց լնելով հօր ու որդու գոռոցը, լուսմ, խոնարհում էր զլուխը, մոռ խոհ դէմքով ու հանդարտիկ քայլով մի կողմ էր քաշում և երկար, շատ երկար մտածում:

— Մի թէ խսկապէս էդպէս պիտի վարել հարեւանների հետ, պա էն ժամանակ լաւութիւնը որտեղ կը մնայ: Գուցէ մարդ ճը՞ մարիս է խօսում, էհ, մարդս է, ինձանից շատ կը հասկանա: զի նա տղամարդ է ախր, իսկ ես կնիկ. բայց ախր ինչ վաս բան կայ սրանում, երբ հարեւանս մի բան է ուղում, ես էլ տալիս եմ, պա էլ հարեւանութիւնը ինչպէս կը լինի:

Ամուսնու կոշտ ու կոպիտ յանդիմանութիւնները և զբանից առաջացած մաշող՝ մոտածմունքները մորմոքում էին Վառվառի քնքոյց սիրում։ Նա տանջւում էր, ան էր քաջում, հեկեկում էր և դառն արցունքներ թափում։ Նա զգում էր, որ ինքը անմեղ է, և վրդոված հոգու ու վիրաւորւած ինքնասիրութեան զգացմունքների տակ ինքն իրեն ասում էր։

—Ինչքան ուզում են, թող խօսան, նախատեն, բայց ես իմ գլուխցածն եմ անելու։ Այ հնդս դրանց գլխին։

Եւ Վառվառը կատարում էր այն, ինչ որ թելագրում էին նրա խիզճն ու միտքը, չնայած որ ամուսնուց անասելի հայոցանքներ և սովորանալիքներ էր լսում։

—Հնդս դրանց գլխին, ասում էր Վառվառը, համ հօրս ասրանքը ու տեն, համ էլ ամեն օր ինձ նախատինք ուտացնեն։ Ինչպէս իւելս կարի, էնպէս էլ անելու եմ։

Համբարձումի ամուսնանալուց ուղիղ մի տարի անցած, մեռաւ նրա զոքանչը Վառվառը բոլորովին որբ մնաց և այնուհետև Համբարձումի ովեզը բէկ ընկաւ։<sup>1)</sup> Իւր ամեւսնուն մնացած ամբողջ ժառանգութիւնը, թէ շարժական և թէ անշարժ կայքեր, ամբողջովին անցաւ նրա ձեռքը։ Ղոչաղ շարժւեց թէ սինոդ Ղուկասը և թէ իւր որդին։

—Ի՞սկ որ իմ ուզած տղան է, խօսում էր Սինոդը ես ասում էի, Համբարձումի, պսակւիր. բայց նա ինձ չլսեց և սպասեց ու վերջն էլ մի էլապիսի աղջկաց արժանի եղաւ։ Չաւթեց էլի, տմարդի նման զաւթեց։

Համբարձումի յաջող ամուսնութիւնը նրա գլխում մի շարք ծրագիրներ ծնեցրեց. ծախել կնոջ կայքերից, մի զումար փող ձեռք բերել, խանութ բանալ և առուտուր սկսել գիւղերում։ Ցետոյ փող դիղել, նոր ճաշակի ու զարդարանքի տուն շինել տալ և փող տալ տոկոսով։ Իւր հայրենի գիւղում կային մարդիկ, որոնք փող էին զիգում և փողի միջոցով աղքատ մարդկանց հողերը իրանց ձեռքը զցում. ինչու ինքը նրանցից յետ մնար։ Նայում էր շուրջը. ամենքն էլ թունդ աշխատանքի էին կապած, ամենքն էլ իրանց

<sup>1)</sup> Լիակատար իրաւունքներ ձեռք բերեց.

զլուխը վերցրած և ամեն լաւ բան, որ կայ, մոռացած, դովլաթի յետեից էին ընկել։ Համբարձումի զոչաղութիւնը պահ. որ օրւան համար է։ Նա ամենքից պիտի բարձրանայ. խօմ պահաս չէ։

Այդ միաքը շարունակ զբաղեցնում էր նրան. Գիւղում քանի գնում գիւղացոց պահանջները զարգանում էին և նրանց նիստն ու կացը համապատասխանում էր այդ պահանջներին. Խոնչու Համբարձումը նիստ ու կացով պիտի յետ մնար ուրիշներից։

Իւր մտածմունքների ու գիտաւորութիւնների մասին նա խոր հըրդակցում էր հօր հետ և հայրը նրան ամեն անգամ պատասխանում էր.

—Դու զոչաղ ես, գեռ փող յետ գցիր։ Խոկ է, կնկանդ վրան ապրանք կայ, բայց դէ ախր մի փոքր պարտք էլ կայ. աշխատիր, որ ուրիշները քեզ պարտ լինեն։ Աշխատանքդ կը շարունակեմ և դէնը կը տեսնենք, թէ ինչ կ'անենք։ Նոր տուն շինելը հարկաւոր չէ։ Հրէս, տուն է, ապրում ենք։ Ես որ էս տներումն եմ ապրել ողակամս մարդ եմ գառել։ Մեր գիւղում եթէ մի քանի պատաւոր մարդ կայ, մինն էլ ես եմ։ Առուտուրի մասին ես հարցնում. դրանից էլ լաւ բան ճմեղէն ու ուրիշ մանր. մունք ապրանքներ առ, էժանանոց, գիտես, և տար գիւղերում «ցրիւ տուր»։ Հաւատն, մէկին տասը կ'աշխատես։ Խոչ են հասկանում, էշ մարդիկ են։

Համբարձումը լսում էր ուշադրութեամբ հօրը և եռանդն ու ոգևորութիւնը ամեն անգամ պաշարում էր նրան։

—Լաւ ես ասում, հայր, էղպէս էլ կ'անենք։

—Այո, էղպէս արեցէք, պատասխանում էր Սինոդը մի առանձին հպարտութեամբ և աչքերն ու ունքերը ոլորելով. ինչ որ ասում եմ, ինձ լսեցէք։

—Այո, հայր, այո։

### Բ. Գլուխ

Համբարձումը սկսեց իւր դործը։ Աներոջ պարտքը վճարելու համար նա իւր եղբօրը՝ Քալուսախին, որը քաններկու տարեկան մի խոնարհ և սակաւախօս երիտասարդ էր, օտարութիւն ուղարկեց։

—Գնա, եղբայր, ես մեր հողերը մենակ էլ կարող եմ կառավարել։ Քաղաքի աշխատանքը ուրիշ բան է։ Դու գնա, վաճառ-

կանութիւն սովորիր և փող աշխատիր: Կը գաս, էն ժամանակ էս-տեղի մեր բոլոր առուտուրը կը տանք քո ձեռքը, իսկ տունը և հողերը մենակ ես կը կառավարեմ:

— Նատ խելօք է խօսում Համբարձումը, հաւանութիւն տւեց Սինոդը, էստեղ ի՞նչ կայ, ինչ որ ուզես քաղաքում կայ. միայն եթէ զոշաղ ես փող աշխատիր և փող պահիր: Որ փող չպահեցիր, էն ժամանակ էլ էս տունը չգտա:

Գալուստը առանց մի խօսք ասելու՝ ուզեռւեց դէպի օտարութիւն: Նա մի լսիկ տղայ էր, ինքնուրոյնութիւնից զուրկ և հօրն ու եղբօրը հնազանդ: Սոյա իւրաքանչիւր պառւէրից նա երբէք դուրս չէր գալ: Նրա մասին խօսք բացւելուց հայրը միշտ կ'ասէր.

— Աէյրաթի է, բայց խեղճ է, խեղճ, չգիտեմ ումն է ընկել զա:

Եւ Սինոդը սկսում էր իւր սովորական բարենպատակ խրատները:

Գալուստը օտարութիւն գնաց փող աշխատելու և եղբօր ծրագրած առևտրական գործի համար պատրաստելու, իսկ Համբարձումը շարունակում էր իր գիւղական պարապմունքը: Նատ էր աշխատում այդ մարդը. էլ հանգիստ չունէր. գիշեր-ցերեկ գտնուում էր իւր հողերի վրա: Աշխատում էր ուրիշի համար ես, եթէ իհարկէ պատ ժամանակ էր ունենում:

— Եղքան էլ աշխատել, դէս ու դէն ընկնել կը լինի, ասում էին գիւղացիք Սինոդին՝ Համբարձումի վերաբերեալ. Եղքան էլ ազանութիւն կը լինի, ալա խեղճ չի նրա ջանը:

Իսկ Սինոդը մի առանձին ինքնաբաւականութեամբ և ժպիտով պատախանում էր.

— Թող անի, ինչքան որ ջանումը կայ, կ'ալեռի ինձ նման, էն ժամանակ տանը կը նստի ու կ'ուտի:

— Ճշմարիտ ես ասում, մարդ չպիտի ծուլութիւն անի, բայց դէ Համբարձումի արածը ազանութիւն է: Խօմ կոյր չենք, տեսնում ենք պարզ. ասես էդ մարդը ուզում է ամեն բան, ինչ որ աչքը տեսնում է, իր ձեռքը գցի: Էդ լաւ չի, մարդ չի կարող առաջ գնալ. մին էլ տեսար վեր ընկաւ:

Սինոդը այլ ես ոչինչ չէր պատասխանում. Նա իւր երեսը ջնում էր մի կողմ և քթի տակ հայնոցում:

— Չեղ ի՞նչ, որ տղաս աչքածակ է, նախանձոտ շան որդիք:

Բացի դաշտային չափազանց ռաշխառանքից Համբարձումը գրաղւում էր և առեւտրական մանր գործերով. նա վաճառում էր տրեխացու կաշի, աղ, գարի, սապոն և այլ այսպիսի մթերքներ, որի մէջ հայրը մասամբ օդնում էր նրան:

Գալուստի օտարութիւն գնալուց երկու տարի անցած Համբարձումը կարողացաւ մի փոքրիկ գումար յետ գցել թէ տան և թէ իւր թեթև առուտուրի եկամուտներից: Այդ ժամանակ նա վճռեց լայնացնել իւր առեւտրական գործերի ծաւալը: Դրա համար հարուստ գիւղացիներից մէկից մի գումար էլ պարտք վերցնելով գնաց Թաւրիզ ապրանքի. այնտեղից նա պիտի բերէր թէց, շաքար, չթեղէն և մանր մթերքներ: Աշունը նոր էր մտել և դաշտային աշխատանքի թեթև ժամանակն էր: Սինոդը ինքը մենակ էլ կարող էր կառավարել տան գործերը:

Նաո ուրախ սրանով ճանապարհ ընկաւ Համբարձու մը դէպի Թաւրիզ: Ճանապարհին մեծ մասամբ նա մտածում էր այն բանի մասին, թէ ինչպէս պիտի վարէր առուտուրը, որ մեծ աշխատանք ձեռք բերէր և վճարէր իւր պարտքը: Մաքումը թւում էր ան գիւղերի անունները, որտեղ նրա գործը լաւ կը զնար: Երևակայում էր այն պայծառ օրերի մասին, երբ Գալուստը օտարութիւնից մեծ աշխատանքով վերադարձ և խելօք վաճառական եղած՝ առոտներ, կարգին առուտուր կը շարունակէր: Անուհատ նրանք երկու եղանք միասին սաղ մահալը<sup>1)</sup>՝ իրենց ձեռքը՝ կ'առնէին:

Այդ մաքերի ազդեցութեան տակ և լարւած երևակայութեան շնորհիւ նրա դէմքի վրա ժամանակն ցնցումներ էին երևում և Համբարձումը ինքն իրան ասում էր.

— Էն ժամանակ զուաղ տղայ ես, «վեր կուսիր և կեր»<sup>2)</sup>:

Գ. Գլուխ

Համբարձումի Թաւրիզ գնալուց մի քանի օր յետոյ Գալուստը օտարութիւնից վերադարձաւ տուն: Նա երկու տարի էր մնացել օտարութիւնում. նրա գալը բոլորովին անակնկալ էր. նա թէ հօրը և թէ եղբօրը ոչինչ չէր գրել դրա մասին:

<sup>1)</sup> Տապալիր ու կեր, <sup>2)</sup> Գաւառ.

Հարեւանները, ազգականները եկան Գալուստի տեսութեանը, սինոդ Ղուկասի աչքը լոյս արեցին, աեղեկութիւններ քաղեցին իրանց որդիներից և ազգականներից, որոնք նոյնպէս օտարութիւննեմն էին դանւում, և զնացին Առաջին երեկոյեան և հետեւալ առաւուեան շարունակում էին գիւղացոց այցելութիւնները։ Մի հեշաեառ շարունակ պատրաստ՝ կանգնած էր պատուհանում, և տանտիկինը իւրաքանչիւր այցելուին հիւրասիրում էր թէցով։

Բայց սինոդ Ղուկասի ուշքն ու միաքը բոլորովին ուրիշ բանով էր զբաղւած։ Նա մոքով խակի չէր մասնակցում եկող գնացողների խօսակցութիւններին կամ հարց ու փորձերին, այլ միայն ցոյց էր տալիս, թէ իրը լսում է, և զրա համար նա շարունակ մի ժպիս էր խաղացնում երեսին։

— Էսպէս բան չի լինել ախր, մասածում էր սինողը և նրա միաքը շարունակ դրա շուրջն էր պատուում։ Երեկոյեան որդու քննուց յետոյ ինքը ծածուկ զնացել և բաց էր արել Գալուստի թեուլ. և բնչ... հագուստից ու անկողինաշորից զատ ուրիշ ոչինչ չկար նրա մէջ։ Կար մի մեծ կապոց միայն. բայց դա էլ, ինչպէս Գալուստն էր ասել, Սահակենց ներսէն էր ուղարկել իւր ծնողաց և բոլոր տանեցոց համար։

— Աւրեմն բոլորովին դատարկ է տուն եկել, մասածում էր սինողը, ուրեմն էդ ոչեղածը, էդ փուչը մեզ խայտառակելու համար է եկել։ Ո՛չ գար դա, եթէ էղպէս դատարկ է։ Դրա նման տղան լաւն է մեռնի, քան թէ գայ ու ծնողին խայտառակի։ Երկու տարի... երկու տարին քի՞չ ժամանակ է։ Պա երկու տարի մնայ քաղաքում ու դատարկ տուն գտն։

Նեղ էր Սինոդի սիրտը։ Յոնքերը կիտած, դէմքը մեայլ, նա շարանում, կատաղում և տանջւում էր։ Միայն հիւրերի ներկացութեամբ նրա երեսին փայլում էր այն կեղծ ժպիտը, և այդ նրա համար, որ իւր դրութիւննը յայտնի չլինի ուրիշներին։

— Ի՞նչու սիրտդ նեղացնում ես, հայր, ասաց մի անգամ Վառվառը, եթէ ապրանք չի բերել, փող խոմ բերած կը լինի։ Առաջ մէկ ողիդ հետ խօսա, տես թէ էդ ինչպէս բան է, յետոյ անիծիր եթէ անիծելու է։ Ասենք բնչ անէծքի բան է ախր։ Սիրո նեղացնին էլ իղուր է։ Ինչ անենք, որ Գալուստ եղբայրը դատարկ է

եկել, խօմ աղքատ չենք։ Սաղ սալամաթ առանց փորձանքի տուն  
է հասել, փառք Աստծոյ, էդ՝ էլ հերիք է։ Դէ երևի Աստւած չի  
ուզում յաջողել. ով գիտէ, միայն թէ ջանը սաղ լինի։

—Քեզ ի՞նչ, քեզ համար ոչինչ։ Տղան որ աշխատանք չբերաւ  
տուն, բարձրացրեց իւր ձայնը սինոդը, էլ նա ինչ տղայ է, կամ  
տաւարը կամ նա։ Ասր բնուու չպիտի զոյալ լինի։ Նս էլ մի մարդ  
եմ, անուն ունիմ ամսր։ Զէ, էղակէս տղան լաւն էն է փչանաց։ Ես  
նրան կորած եմ համարում, էլ ինձ համար Գալուսա չկայ։

Հարսը ոչինչ չպատաժանեց այլ ես, նկատեց որ սկեսրացը  
սկսեց փոքր առ փոքր հանդարուել իւր յուսադրական խօսքերից։  
Խսկապէս ացդքան շուտ և շատ յուզելը իզուր էր։ Գուցէ խեղճ  
տղան փող է բերել. դա աւելի լաւ կը լինէր։ Զէ որ նա Սինոդի  
տղան է. նա կ'իմանայ անշուշու փողի արժէքն ու նշանակութիւնը,  
աւելորդ ծախսեր չի անիլ, աւելորդ իրեր չի գնիլ և այլպիսով  
փողերը չի փշացնիլ։ Զէ, հարկաւոր է նախ խօսեցնել Գալուսովին։

Եւ ահա Գալուսովի գալուց մի օր անցած ընթրիքի ժամանակ  
հայրը դարձաւ որդուն ու հարցրեց։

—Որդի, զէ ասա տեսնեմ ինչ ես բերել, պա իսկի մի բան  
չի աչքովս ընկնում։

—Ի՞նչ պիտի բերէի, հայր, ասաց Գալուսով ժպտալով։

—Պա եթէ բան չէիր բերելու, ուր էիր գնացել, քամի կու  
տալու էիր գնացել։ Պա ի՞նչ էիր անում քաղաքում, մի ասա տես-  
նեմ։

—Դէ ծառայութեան մէջ էի, բայց յաջողութիւն չունեցայ։

—Պու երևի ինձ խօսեցնում ես, ասաց Սինոդը քմ'ծիծաղ ու-  
լով. ուղիղն ասա։

—Անյաջողութեան պատահեցի, ինչ անէի...

—Անյաջողութեան պատահեցի, կարեց նրա խօսքը Սինոդը լի  
արհամարանկով և բարկացած, նա այժմ միայն հաւատաց իւր որ-  
դու խօսքերին։ Սաղ երկու տարի է յաջողութիւն չունեցար, հար-  
ցրեց նա իւր դէմքը որդու վրա յառելով։

—Հայր, ինչ կայ որ... Դէ կարող է պատահել էլի, մէջ մոտա-  
հարս Վառվառը, որ կանգնած սոլաստորում էր նրանց և ժպտա-  
գին դէմքով հետեւում էր հօրն ու որդու խօսակցութեանը։ Լսե-

թի հօր կոշտ ու կոսղիտ նախատինքը օտարութիւնից նոր վերաբարձած որդուն, Վառվառի սիրաը ցաւում էր և նա խղճում ու փրեկցում էր Գալուստին: — Հայր, շարունակեց նա, գէ երկու օր է տարութիւնից վերադարձել է Գալուստ եղբայրը. պա քո խիղճը թղպէս է տանում, նրա սիրաը էդպէս կոտրում եւս Զախորդութեան առաջ մարդ ինչ կարող է անել:

— Ասացիր, պրծաւ, գնաց, պատասխանեց Ղուկասը զայրացած և ծաղրագին. դու հարս ես, քո գործին գնաւ: Կանանց թեթե ինքն որ տղամարդիկ ականջ դնեն, հաւատա հացի կը տիրանան... Այս մարդ երկու տարի պա օտարութիւնում կը մնայ և դատարկ նկող տուն կը գնայ. Էլ լսւած բան է:

— Ինչու չէ, պատասխանեց Վառվառը Գալուստի տեղ, տէրտիրենց ներսէսը դատարկ չեկամւ, նա խօմ տասը տարի էր օտարութիւն քաշել: Անյաջողութիւն է, ի՞նչ արած:

— Զէմ, ներողութիւն կանես, ասա խեղճ է, բանի պէտք չէ, որիշ ոչինչ: Լաւ, դէ ասա տեսնեմ ախր ինչ ես արել էսքան ժամանակ քաղաքում:

— Էստեղից որ գնացի, սկսեց Գալուստը կէս վիրաւորւած և մղաւորի ձայնով, մոտաց մի հարուստի մօտ ծառայութեան: Առաջ պիտի տանը ծառայէի, յետոյ մի քանի ամիս անցած խանութ պիտի տանէին: Դէ մի սաղ տարի նրանց տանը մնացի, բայց խանութ չարան. ասացին մեր մաղազինի (խանութ) համար էլ մարդ չի հարկաւոր, ուզում ես տաններս ծառայիր: Խնձ էլ մի սաղ տարի հացից ու շորից ուրիշ ոչինչ չէին տեել, ասացին, կուղես շարունակիր մնալ, 8 մանէթ էլ ամսական քեզ փող կը տանք, չմնացի: Անխելք չի որ մնայի. դուրս եկայ:

— Պա որ անխելք չլինես, խեղճ չլինես, մի սաղ տարի էնպէս շան աղի տանը կը մնաս ու ձրի կը ծառայէաւ: Պա եթէ անխելք չլինես, դուրս չէիր գալ ժամանակին. տեսար մաղազին չեն տառում, ասէիր—կամ ինձ տարէք մաղազին, կամ թէ չէ ես դուրս եմ գալիս: Ենքան կացել ես, որ խազէյինդ է քեզ դուրս արել: Երեխ տեսել է, որ մի բանի պէտք չես, էդպէս է ասել, որ ինքու դուրս դաս:

Հօր կոշտ ու կոսղիտ խօսքերը, իհարկէ, վիրաւորում էին

Գալուստի սիրտը։ Նա իւր գլուխը քանի գնում խոնարհում էր և նրա դէմքը տխուր ու խղճալի կերպարանք էր ստանում։

Վառվառը լուռ կանդնած էր նրանց մօտ։ Նա ևս տխրել էր, տեսնելով Գալուստի անմիջիթար դրութիւնը։

—Լաւ, յետոյ։ Ենտեղից որ դուրս եկար, ուր գնացիր, մի տարի շարունակ ի՞նչ էիր անում։

—Ենտեղից գնացի մի ուրիշ մարդու մօտ. մտայ էլի նոյն պայմաններով։ Ենորհակալ եմ, մի քանի ամսից յետոյ ինձ մաղազին տարան, լաւ մարդիկ էին։ Բայց ի՞նչ արած, իմ բախտիցն էր, թէ ի՞նչ էր, վերջումը նրանք կոտր ընկան։<sup>1)</sup> և ես էլ նրանց հետ միասին մնացի առանց գործի։ Մի քանի մանէթ փող տւեցին, էլ էլ ես խնդրեցի, ասացի տուն եմ գնալու։

—Զէ, մէկ չխնդրէիր, խեղճ, անիրաւ, որ խեղճ ես... է, պաէդպէս մարդու մօտ ծառայութեան կը մտնեմ։ Դէ որ լաւ մարդիկ լինէին, էլ ուր էին կոտր ընկնում։ Զէ, լաւ մարդկանց ես գոած եղել, էլ ի՞նչ ասել կուզի... Ղոչազ չես, ղոչազ, աւելացրեց Սինողը քիչ լուռթիւնից յետոյ, ձեռքերը օգում շարժելով։ Էղ է ինձ էրում, խորովում։ Տեսար, որ խազէյինիդ բաները խարար են, իսկոյն մի բան էլ ի՞նքդ առակովը անէիր։<sup>2)</sup> Փողից կամ ապրանքից իչդ կը պահսէր։

—Պա ես ի՞նչ իմանացի, թէ խազէյինիս գործերը լաւ ժի գնում։

—Որ ասում եմ՝ խեղճ ես. իհարկէ, յիմար մարդը էղ բանը որտեղից կարող է իմանալ։ Տեսնում ես, Մնացականենց Մինասի տղերքը հիմա ի՞նչ օրում են. Էնքան հարստութիւն որտեղից է, սազ իր խազէյինից տակովն է արել քերել։ Փանի հազար հազար մանէթ էր վերցրել, ուրացել, ի՞նչ էին արել, ոչինչ։

—Հայր, պա ես գնամ գողութիւն անեմ։

—Ենպէս բաներ ես խօսում որ, ասաց Վառվառը, կարծես համբերութիւնը հատած։

—Զէէ, դէ որ էդպէս է, գնացէք սոված կոտորւեցէք։ Ասես թէ Համբարձումը կարողանալու է միշտ էսպէս աշխատի։ Մի որ

<sup>1)</sup> Մնանկացան։ <sup>2)</sup> Վարպետութեամբ գողանալ.

էլ տեսար կամ հիւանդացաւ և կամ, եզրայր է, ջոկւեց. ի՞նչ կ'անես, Գալուստ, պիտի գնաս Հակութիւն անես, ես քո օդախն եմ խոսւմ:

Սինոդ Ղուկասը երեսը շրջեց մի կողմ և լռեց: Վառվառը հետացաւ և քիչ յետոյ եկաւ անկողին պատրաստեց:

-Զգիտեմ. էս գեադին ու մն է լնկել էսպէս խեղճ, մտածում էր Սինոդը միայնակ, էսպէս յիմար: Համբարձումը որտեղ—սա որտեղ: Երևի լնկել է դէսի մայրենիքը, դրա մայրենիք պապն էլ ախր մի յիմար ու խեղճ մարդ էր... Մի խօսքով Գալուստը ինձ համար տղայ չի դառել, այլ ցաւ ու կրակ:

—Էսպէս էլ կոպիտ և անխիղճ ալւոր կը լինի, մտածում էր Վառվառը, սա էլ իրան հայր է համարում էլի, խեղճ տղին բոլորին սպանեց:

Խակ Գալուստը կուչ էր եկել վերմակի տակ և մոքով չէր կարդանում կենդրոնանալ մի բանի վրա. իւր անյաջողութիւնը, դըժ-բախով վիճակը և հօր նախատինքն ու յանդիմանութիւնը յաջորդար կամ խառն կերպով պատոյտ էին գործում նրա գլխում, մինչև որ քունը փակեց նրա աչքերը:

Դ. Գլուխ

Անցաւ մօտ ամիս ու կէս և Համբարձումը վերադարձաւ Թաւողից, բերելով հետը բաւականին աղրանք: Ճթեղէն էր զլսաւորապէս, մասամբ թէց, շաքար, սապոն և այլ մթերքներ: Կէս գիշեր էր, երբ նա տուն հասաւ: Ուրախ սրտով պատմեց հօրը, թէ յաջողութեամբ և բոլորովին անփորձ անցաւ Արաքսը և որ սահմանապահ կազակները ոչինչ չիմացան: Հօր տրամութեանը փոխարինեց անսահման ուրախութիւն. բայց որքան մեծ եղաւ նրա և որու զարմանքը, երբ Համբարձումի տեղ հասնելուց երկու օր յետոյ դիւղում լուր տարածւեց, թէ կազակները գալու են սինոդ Ղուկասի տունը խուզարկելու: Այդ լուրը կարող էր, ի հարկէ, և նիշտ լինել, նախ որ գիւղացոց մէջ չարախնդացներ շատ կային, կրանք կարող էին մատնել. բացի գրանից կային մի քանի անձնաւորութիւններ ևս, որոնց վեշակն էր կազակներին մաքսանենգ ապրանքի տեղ ցոյց տալը: Դրանք էլ կարող էին մատնել: Համբար-

ձումը իւր ապրանքի մի մասը բաց էր արել, երբ նրա ականջին հասաւ չարադրուշակ լուրը, նա բացարած իրեղէնները կրկին ժողովեց միասին, կապեց ու ֆնացած ապրանքների հետ թագցրեց մի քանի ասլահով տեղերում. զոմում, խոտանացում և հնձանում: Այդ ամենը նա զիշերով կատարեց, այնպէս որ զիւղացիներից ոչ ոք չիմացաւ: Եւ երբ հետեւեալ օրը նրա մօտ կանացք ու տղամարդիկ եկան իրենց համար կարեւոր պիտոցքներ գնելու, Համբարձումը պատասխանեց, թէ ապրանքը դեռ ճանապարհին է:

Սինոդ Դուկասը իւր ամբողջ ընտանիքով մի ծանր ու երկիողալի օր ևս անցկացրեց: Հետեւեալ առաւօտեան մի սպազ կազակների փոքրիկ խմբով զիւղ մտաւ: Սպան իւր ձին ուղղակի քշեց զէպի Համբարձումի տունը:

— Բարով էք եկել, ասաց Համբարձումը կէս ռսերէն, կէս թրքերէն և ուրախութեան կեղծ ժպիտը երեսին զիմաւորելով սպացին. համեցէք, համեցէք:

— Ասացէք, որ ձեր տանեցիք ամենքն էլ այս րոպէին դուրս գան տնից, Համբարձումի հրաւերին կոշտ կերպով պատասխանեց սպան. այսուղ կոնտրաբանդա կայ, պիտի խուզարկենք ձեր առնը:

Եւ սպան ու զինւորները իսկոյն ցած իջան ձիերից: Համբարձումն ու Գալուտոը շտապով մօտ վազեցին: Առաջինը բռնեց սպայի ձիու սանձից, իսկ միւսը ֆնացածների սանձերից: Քիչ մանածելոց յետոյ տարան մօտիկ չարդախի տակ կապեցին: Սինոդը խոտ բերաւ և ձգեց ձիերի առաջը:

Խուզարկութիւնը սկսւած էր:

— Աղա էդպէս բան չի լինի ախր, խօսում էր Համբարձումը ծիծաղելի լեզով, պա ևս անխելք եմ, որ էդպիսի ցիմարութիւն անեմ: Պա ևս թագաւորի հպատակը չեմ, ուր ևս նրան չպիտի հաւատարիւմ ֆրիսոս Աստուած, երկինք, գետինք վկայ են, ո՞ր իմ տանը կոնտրաբանդ<sup>1)</sup> չկայ:

— Ինչպէս չկայ, պատասխանում էր ամեն անգամ սպան, հրամացելով զինւորներին ամեն տեղ խուզարկել. կայ, եթէ չինէր, ինձ չէին յացոնիլ:

<sup>1)</sup> Կոնտրաբանդ կամ դաշաղ ապրանք — մաքս չվճարած ապրանք

—Աղա, զարմանում էք: Շատ էլ յայտնեցին. հա շատ թշնամի մարդիկ: Մեր գիւղում էնակս մարդիկ կան, որ մէկին անմեղ տեղից Ոիբիր կ'ուղարկեն Խճչ արած, էդպէս են: Ես գիտեմ դա ում բանն է: Վնաս չունի. ինքը զաշաղ ապրանք անցկացնի, ինքը կանորաբանդ պահի տանը և ինձ գործի մէջ դցի, իմ անոնը խայտառակի...

—Ո՞վ է, ո՞վ է դա, ասոր

—Մկրտումենց Մարգար են ասում. հետը կուիւ եմ՝ արել, ասել եմ քի (թէ) էդպիսի գործեր կատարիր, որքան շաքոր է անցկացնում, ասում եմ մեր գիւղացոց գլուխը մի փորձանք կը բերես և վախեցնելու համար ասել էի, տես քո զլուխը ինչ օչին եմ բերելու: Հիմա էդպէս զրպարտել է ինձ, որ իր վրա կասկած չանեն, համա անիծուի նառ:

—Եւ, այդ մարդը չի ասել, ես ուրիշին եմ՝ տեղեկացել, ուրիշն այդ պարոնն էլ կոնորաբանդիստ է, համա բարի: Այդ էլ կը տեսնենք:

Մի ամբողջ ժամ՝ կողակները խուզարկեցին Համբարձումի տան բլոր ծակ ու ծուկերը, բայց ոչինչ չգտան: Այնուհետ նրանք գնացին Մկրտումենց Մարգարի տունը խուզարկելու: Ազդուղ ևս ոչինչ չպահն կազակները, որովհետեւ Մարգարը իր զլիսի ճարր նոյնպէս նախօք տեսել էր՝ սպազի գալը տեսնելով:

Կազակները թողեցին գիւղը դաստարկ ձեռքով: Ճանառարհւելուց առաջ Համբարձումին իւր կողակներով ճաշի հրաւիրեց իւր մօտ, լաւ պատեց և, մի տիկ պատւակն զինի սպաշար դնելով նրանց հետ, ճանապարհեց դէսի պոստը: Սպան հեռացաւ բաւականին շնորհակալ կերպով և ներողութիւն իննդրեց Համբարձումից իւր խուզարկութեան համար:

—Ղոչաղ շարժւեց Համբարձումը, ասում էին գիւղացիք. տեսք ինչպէս փորձանքից ազատւեց. էդպէս էլ ուստա մարդ կը լինի:

—Ո՞վ գիտէ ինչքան կաշառք է տեղը, խօսում էին ոմանք, մի մէծ տիկ հէնց զինի էր բաշխել:

—Ըմ, չէ, դա ուրիշ հաշիւ է. հացի էլ էր կանչել, բարեկամանում է, որ յետոց իրան շատ չխօսացնեն:

—Ի՞նչ ասում էք ասացէք, բայց մարդը զուաղ շարժւեց:

— Հիմա տես ինչ առուտուր է սկսելու:

Կազակների հեռանալուց յետոյ սինոդ Առևկասը հանգիստ սրտով նստել էր իւր տանը և հայնոյանքներ էր, որ թափում էր զիւղացոց գլխին:

— Անպիտան ժողովուրդ, շան որդիք, էդքան էլ չկամութիւն, շան որդիք, տղիս պիտի Սիրիր տանէին, որ սիրտներդ հովանար: Աշքներդ վեր չի առնում: Դոչաղ էք, զուք էլ արէք: Նախանձի զաւակներ, ջնջւէք զուք միանդամից, էս զիւղը զինջանայ:

— Այ հայր, ուր ես սիրտի իզուր տեղից նեղացնում, խօսաց Համբարձումբ, թող անեն. մասնեցին, ինչ օգուտ աարան, իրանք կը մնան սկերես, բացց իմ գործը իրան-իրան, գիտեմ, որ առաջ է գնալու: Որ ես ուզեմ, ինձ թշնամութիւն անողին չեմ կարող վնաս տալ. տունը զլիսին կը քանդեմ, բացց չեմ ուզում:

— Ի՞նչու չես ուզում, էկ շան աղերանց պիտի հուպ տալ, տեսնում ես քեզ թշնամութիւն են անում, զու էլ իրանց արա:

— Տեղը կընկնի, ես գիտեմ ինչպէս կը վարեմ:

Վտանդաւոր գեպքը անցներուց յետոյ Համբարձումը մի երես կոյ ընթրիքի ժամանակ ապրանքների մասին խօսք բաց արեց:

— Էս ապրանքը էլ էստեղ չի կարելի պահել. որ սկսեցինք առուտուր անել, մասնելու են, տուններս կը քանդւի:

— Ապրիս որդի, շատ լաւ ես ասում:

— Մեզ, մեր բարեկամների և մի քանի մօտիկ մարդկանց համար, որը որ, իհարկէ, կ'ուզի, ինչ ապրանք որ հարկաւոր է, ու սպահենք, իսկ մնացածը կը տանենք գիւղերում կը ցըւենք: Եղ ամենը իմ գործն է լինելու: Գալուստն էլ տունը կը կառավարի: մինչեւ որ ես գիւղերից կը վարագառնամ: Նրանից յետոյ, եղբայր, քո էստեղ մնալը կ'լինի իզուր: Ես համ տիրւել եմ, համ բարեկամների որ էդ օրումն ես տուն եկել: Պա մեծ ազայ ես գառնել, էսօր էդուց քեզ պիտի նշանենք, իսկ զու գնացել ես, գնացել և դատարկ եկել: Ալսր մեզ համար դա ամօթանք է բերում: Ես քեզ հէնց էդուց կ'ուղարկէի օտարութիւն, գնան, էնտեղ ինչ որ աշխատես, մեզ համար մաքուր օգուտ է: Իայց գէ էս գործը ո՞ր մէջ տեղ է ընկել, մի առժամանակ պիտի մնաս գիւղում:

— Էլ մի ասիր, Համբարձում, զու չգիտես թէ Գալուստը ինչ:

քան է նեղացրել իմ սիրուը. քիչ էր մնացել վեր կենամ, թա-  
կիմ, տնից դուրս ամեմ և ամեն ինչից զրկեմ: Տղամարդն էլ էդ-  
քան խեղճ կը լինի, զոչազ կաց, զոչաղ:

Գալուստը լուսմ էր այդ ամենը լուռ ու մունջ, գլուխը քարշ  
զցած և լաւաշ հացի պատառուկները բերանը գնելով: Իւր զայրա-  
ցոցից լուսթեամբ նա կարծես ասում լինէր, «զէ ես ձեր ձեռքին  
մի խաղալիք եմ, ինչ կ'անէք, կ'անէք էլիս»:

### Ե. Գլուխ

Մի քանի օրից յետոյ Համբարձումը երկու ջորի ապրանք  
բեռնած, աւաւառեան շատ շուտ, երբ գեռ մութը նոր էր սկսել  
վերանալ, ճանապարհ ընկաւ զեպի մօտակաց Տ. գիւղը: Նա այդ  
տեղից էր սկսելու ցրւել իւր ապրանքը:

Հանելով Տ. գիւղը՝ Համբարձումը իջևանեց իւր ճանօթի  
տանը: Տան մեծը՝ Արթին ապերը ուրախ երեսով զիմաւորեց հիւ-  
րին: Եւ ինչու չպիտի ուրախանար Արթինը. Համբարձումը երկու  
գրաստ ապրանք էր բերել, այդ ապրանքը իր տանն էր զնելու, իր  
մօտ բաց անելու և այդտեղ էլ առետուր սկսելու: Միթէ քիչ  
բան է այն, երբ ամբողջ օրը նրա տան գանով մէկը մտնելու է,  
միւսը դուրս դայ: Իհարկէ, դրանից ապրանք ծախողի աչքը լոցս,  
բայց ախր Արթինի ձեռքն էլ խառն է լինելու առուտուրի մէջ,  
նա էլ մի կողմից օգնելու է Համբարձումին: Երեխաներն էլ կ'ուրա-  
խանան, տեսնելով իրանց տանը այդքան ապրանք թափած: Յետոյ  
երեխ Համբարձումը նրան մի-մի խալաթ կը տայ:

—Գալուստդ բարի, Համբարձում, զոչեց Արթին ապերը, որը  
ծերութեան շէմքին մօտեցած և համակրելի զէմքով մի անձն էր,  
ծանրաքայլ մօտ եկաւ և սեղմելով նրա ձեռքը, շարունակեց.—բա-  
րով ես եկել, համեցէք, դու առն զնա, մենք բեռը վեր կը բերենք:

Այգտեղ մօտեցաւ և Արթինի մեծ տղան:

—Դէ հէնց միասին վեր առնենք բեռը էլի, ինչ է, Արթին  
ապեր. կարծում ես որ ճանապարհ եմ եկել, էլ ոյժ չի մնացել  
իմ մէջ.

—Հա, հա, հա, ծիծաղեց Արթինը, մւմից պակաս տղայ ես,  
փառք Վասծոյ: Որ ոյժ չունենաս, հա...»

— Դէ բեռան մի հակը սղահիր:

Նրանք վերառան երկու բեռն էլ, հակերը ներս տարան ու նստեցին: Կարւըներին խմբւած երեխաները, աղջրկներն ու հարսները, որոնք Համբարձումին տեսնելուն պէս մօտ էին վազել և մեծ հետաքրքրութեամբ դիտում էին նրա բեռները, միայն այն ժամանակ սկսեցին ցրւել: Այնուամենայնիւ մի քանի տղաներ ու աղջիկներ մնացին, որոնք կտրի երդիկով և դուան ճեղքերով շարունակում էին նայել նորեկի ու անկիւնում զրած հակերի վրա:

— Է, գէ մի ասա տեսնեմ Դուկաս ապերը ոնց է, առնդշ է, հարցրեց Արթինը. տանեցիք լաւ են:

— Փառք Աստծոց, լաւ են, շատ բարե էին անում:

— Թաւրիզ էլ գնացիր, եկար, մեծ-մեծ շիհարներ<sup>1)</sup> տեսար, ասաց Արթինը զմայլմամբ և երանի տալով նրան:

— Գնացի, ինչ արած, պիտի դէս ու դէն ընկնենք, որ կարողանանք մի բան շինել, մի բան աշխատել: Մենակ մեր հողերի եկամուտը ի՞նչ է որ. տեսնում ես էդ հակերը. դրանց տւած եկամուտին ես եկամուտ կ'ասեմ:

— Ի հարկէ, ի հարկէ, կրկնում էր Արթինը հիացած և շարունակում էր մոքումը երանի տալ Համբարձումին, որ ացդքան դուշաղ էր և հարուստ նա լուս սպասում էր, որ Համբարձումը շարունակէ իւր հետաքրքիր և դիւրեկան զրոյցը, բայց նա դրա փոխարէն հարցրեց.

— Տանեցիք կմրող են չայ սպատրաստել, սամաւար ունեք:

— Կարող են, սամաւար չունենք, բայց մեր հարեւանիը ունի կը բերեն:

— Արթին ապեր, պա մի սամաւար էլ չունեք, նախառական ձայնով արտասանեց Համբարձումը, մի սամաւարը ի՞նչ բան է որ:

— Դէ էս անգամ գնացող տղերանցով գրել եմ որդուս, որ Բաքւից գալուց հետը մի սամաւար բերի:

— Էդ երկար է քաշելու. որ էդպէս է քեզ համար մի սամաւար բերել կը տամ:

— Թանգ կը լինի, Համբարձում:

<sup>1)</sup> Քաղաքներ:

—Քո ի՞նչ գործն է, քոնը էն է սամաւար ստանաս, ուրիշ  
աշխանչ:

—Ի՞նչ ասեմ, ամաչելով պատասխանեց Արթինը, այ կնիկ,  
զնա Սաքօենց սամաւարը տես, կը տան՝ բեր կրակ գցիր: Նաքար,  
չայ ունենք:

—Եղ հարկաւոր չի, էղ ես ունեմ:

—Լաւ, լաւ, զնա բեր սամաւարը: Ե՛ն, ապրանք շատ ես  
բերել, Համբարձում, հարցրեց Արթինը հետաքրքրութեամբ:

—Նմանո, ի՞նչ ուղես կայ:

—Դէ լաւ է էլի, ասա առաւօտից մինչև իրիկուն էլ գլուխդ  
չս կարողանալու բարձրացնել:

—Ասուած անի, մվ չի ուղում, միայն՝ թէ ձեր գիւղացիներից  
ամեն մէկի վզին մի բան կապեմ, ապրանքս նազլեմ: Յոգնելու մա-  
սին ով է մտածում: Թող ես օրերով առանց հացի մնամ, ժամա-  
նակ չունենամ գլուխս բարձրացնելու, միայն թէ միւշտարիս շատ  
լինի, առուտուրն էլ յաջող:

—Միւշտարին շատ կը լինի, Համբարձում, դրանից բոլորովին  
միամիտ կաց, ժամանակը մեղ մօտ էլ է փոխւել. էլ չեն նայում, թէ  
ախր դախողը (եկամուտ) պակասել է, ծախսն էլ դախողին համեմատ  
պիտի լինի: Փարթամացել են. մէկը չկայ, որ ոտը իր վերմակի հա-  
մամատ մեկնի: Մէկը միւսին նայելով, մէկը միւսից յետ չմնալու  
համար առնում է ամեն բան: Ես ինքս, տես, զրել եմ, որ սամա-  
ւար բերեն քաղաքից, ի՞նչու, որովհետեւ հարեւանս ունի:

—Ե՛ն, տնաշէն, ընդհատեց Համբարձումը, պա մինչև երբ  
պիտի խաւար մնաք, դուք էլ մեզնից պիտի օրինակ վերցնէք,  
քանի գնայ, պիտի լուսաւորւեք. սամաւարը ի՞նչ բան է որ:

—Զէ, մեծ բան է, ասենք սամաւարը եկաւ, զրա հետ չայ, շա-  
քար է հարկաւոր, չայնիկ, սատքան և ուրիշ բաներ էլ է հարկա-  
ւոր: Դէ դրանով մեծ ծախք է նստում ախր Հիմա որ սամաւար  
չկայ, չայ էլ չենք խմում: Մեզ օգուտ է: Եղակս շատ ծախքեր  
իրար նայելով անում ենք և չենք նայում տեսնենք քսակներումս  
բան կայ, թէ դատարկ է:

—Եղ ոչինչ, ինչքան որ ծախսներդ շատանայ, էնքան էլ ձեր  
աղերքը փող կաշխատեն:

—Պա ուր է, ունեցած չունեցածները սկսել են տալ էդպիսի դատարկ բաների, բոլորովին աւելորդ բաների։ Այս, գիւղացի էք, գիւղացու նսման նստէք, վեր կացէք։ Մի տեսնես կանաչք ինչեր են հագնում, կը մնաս զարմացած, իսկ տղամարդիկ մնացել են պարտքի տակ տնքում կամ օտարութիւնում կեանքները մաշում։

—Ե՞ն, Արթին ապեր, նրտեղ չի էդպէս, ամեն տեղ էլ էդպէս է. ես որ չաշխատէի, կեանքս չմաշէի, էդ հակերը պա էդտեղ կը լինէին։

—Դէ ի հարկէ ոչ, պիտի աշխատեն, ծոցլ մարդը բնչ բանի է պէտք. բայց դէ փարթամութիւն, աւելորդ, իզուր ծախսեր չանեն, իրանց ոտները իրանց վերմակի համեմատ մեկնեն։ Մի քանի տներում ստոլ, սկամի (սեղան, աթոռ) եմ տեսել, ախր ինչ հարկաւոր է։

—Դէ երևի ամեն մարդ ինքը իր արածը հասկանում է։

—Հասկանում է, որ վաս է է։ Համ անում են, համ էլ գանգատուում, թէ ախր էսպէս չի լինիլ, քանդուում ենք։ Ո՞վ է մեղաւոր։ Հիմա գալու են քեզանից առուտուր անելու, նեղութիւն են տալու. փող չկայ, ցորենն ու իւղն էլ պատրաստ չէ։

—Ով փող ունի, փող կը տաց։ ով էլ որ չունի՝ մի կերպ եօլ կը գնան։

—Ի հարկէ, պիտի եօլա գնան, իսկճ են, գիւղացի են, ամն մէկին մի ցաւ ունի, փող չկայ։

—Ես նիսիա ապրանք էլ բաց կը թողնեմ; ով ինչքան ուզում է, և բասպիսակա (ստորագրութիւն) զ'առնեմ։ Ի՞նչ կ'ասես։

—Ո՞ւղիղ մարդիկ են ձեր գիւղացիք, թէ չէ։

—Լաւ են, հաշւի կողմից շատ դիւզ (ուղիղ) մարդիկ են։

—Դէ առաւօտեան հէնց էդպէս էլ իմաց տուր գիւղացոյ, այսինքն թէ էդ պայմանով էլ եմ ապրանք ծախսում։

—Շատ լաւ, աչքիս վրա։

Հետևեալ առաւօտեան Արթինի տունը գիւղացիներով լիքն էր, թէ կին և թէ տղամարդ՝ ամենքն էլ ներս էին թափեւի։ Նոցանից ոմանք իրանց երեխաներին էլ բերել էին հետները, զրանց հետաքրքրութեանը լիութիւն տալու համար։ Ոմանք եկել էին ու թէ մի բան գնելու համար, այլ միայն տեսնելու նալաւակով։ Նայում էին գեղեցիկ և գոյնզգոյն կտորներին, շաքարի գլու իններին,

զարմանում, հիանում էին և մնում շլացած։ Սիրտները շատ բան էր ուզում, բոլորն էլ գրաւիչ իրեր էին, մանաւանդ կանանց հագուստեղինը. զլիսի պէսոպէս հալաւներ, շալ կապացուներ, զառէ ժապաւէններ, արքեշումի թաշկինակներ աղջիկների համար և այնու մըը առնել, որը պահել, ահա թէ ինչ միտք էր պատուում իւրաքանչիւրի զլիսում։ Նաա աղքատներ ապրանքներին երկար նայելուց և համարեա թէ կշտանալուց յետոց վերցնում էին աննշան արժեք ունեցող իրեր և հարցնում։

—Համբարձում եղքայր, էս եմ վերցնում, չի՞ կարելի, որ փողը յետոց տամ։

—Չէ, կտրակի պատասխանում է Համբարձումը, մի կոոր բանի համար ես նիսիանների հաշիւչեմ պահիլ։ Մի քանի մանէթի ապրանք վերցրու, էն ժամանակ կարելի է։

Աղքատ միւշատարին կամ կոտրւած սրաով վեր էր զնում ապրանքը ու հեռանում, մոքում տանելով գրաւիչ իրերի զմայեցուցիչ պատկերները և կամ չկարողանալով կռւել իւր մոքի հետ, գերի էր դառնում ցանկութիւններին։ Աչքը ինչ դրաւիչ բան որ տեսնում էր, գնում էր միւշատարին և կապոցը կռնատակին ուրախ սրաով վերադառնում տուն։ Եթէ ճանապարհին նրան պատահում էր գիւղացիններից կամ հարևաններից մէկը, առևտուրը վերջացրած միւշատարին ծիծաղերես և իբր թէ հոգսալիր եղանակով բացականցում էր։

—Դու էն ասա, թէ էսքան բաներ որ առնում ենք, փողը որտեղից ենք տալու։

Թէ ունեոր և թէ չունեոր՝ ամենքն էլ շտապում էին Համբարձումի մօտ և կապոցները կռնատակերին վերադառնում տունն երկու օրւաց ընթացքում շատերի տունը շատ բան մօտաւ։ Մեծամասնութիւնը ապառիկ թողեց վճարը և փոխարէնը տւեց մօւրհակներ, որ մեծաւ ուրախութեամբ ընդունում էր Համբարձումը։ Մնացածներից ով փող ունէր, փող տաեց, ով իւղ—իւղ կամ տաւար։

և եթէ. մէկը ս. Աստւածածնի տօնին մանէր 8. գիւղը և ուղղակի գնար եկեղեցու բակը, այն ժամանակ նա կը տեսնէր Համբարձումի թողած պարզ հետքերը. պճնասիրութիւնը այժմ աւելի լայն ծաւալով բուն էր գրել այդ գիւղում։ Ամենուրէք խօսակցու-

թիւնը շորի, հագուստի և զանազան տարազների մասին էր: Տղամարդիկ հիանում էին այդ ամենով, իսկ հասակաւորները խուլ բողքներ էին յայտնում:

—Նաքարն ու չայը լաւ չծախւեց, Արթին ապեր, ասաց Համբարձումը այն ժամանակ, երբ սկսել էր կապել իւր բեռները:

—Դէ ով սամաւար ունի, էն է անում, ով չունի, վեր առնի ինչ անի:

—Հաա, որ էդպէս է, եկող տարի ես սամաւարներ, չայնիկներ<sup>1)</sup> էլ եմ բերելու: Նատ էժան գնով կը ծախսեմ: Էն ժամանակ սամաւարը զրէք տանը և ցուրտ եղանակներին չայ խմեցէք, փորներդ տաքացրէք:

—Խարկէ, առնող շատ կը լինի, բայց, Համբարձում, մի քանի մարդ եկան հարցըին, թէ պա արծաթեղէններ չի՞ ծախում: մատանի, արծաթէ գոտի, էսպիսի բաներ, ախր հարկաւոր է գալիս:

—Եդ էլ կը բերեմ, միամիտ կացէք: Հիմա գանք քեզ, Արթին ապեր, պա դու ինձանից ոչինչ չես առնելու, ախր ապրանքը կապում եմ:

—Դէ ինչ որ տաս՝ վեր կ'առնեմ էլի, ինչ ասեմ, սա էլ քո տունն է:

Արթինը շատ բան էր ցանկանում ունենալ, բայց որ փող չկար, ինչ արած:

—Նատ լաւ, ասաց Համբարձումը, դէ էս երեք գրւանքայ շաքարն ու մի չեթւեռ<sup>2)</sup> չայը առ քեզ ընծայ, մնացածն էլ հեշտէ: Ես քեզ խորհուրդ եմ տալիս, որ հիմիկւանից ինչ որ հարկաւոր է վերցնես: Դէ քեզանից հիմա խոմ փող չեմ ուզում, երբ որ ունեաս՝ կը տաս:

—Կամքը քոնն է, Համբարձում, ես ինչ ասեմ, ժապիտը երեսին խօսում էր Արթինը:

—Տես, երկու հարսներիդ և կնոջդ համար մի-մի կապացու և մի-մի գլւսի շալ, ազջկերանցդ համար մի-մի զերիացու և մի-մի արբեշումի աղլուխ, երեխայոց համար էլ մի-մի բան կը կտրեմ: արխալուղացու և շալւարացու:

<sup>1)</sup> Թէս եփելու աման, <sup>2)</sup> Քառորդ փունդ:

—Այ Համբարձում, քեզ մատաղ, երեխերքը ի՞նչ են անում. տանը կտաւ են գործում. տանեցիք նրանց կը կարեն կը հազցնեն: Ի՞նչ հարկաւոր է ախր, —կարծես ամաչկոտ և անվստահ ձայնով ասաց Արթինը:

—Տնաշէնի մարդ, տարին տասն և երկու ամիս խօմ կտաւ ի՞ն հագնելու, Զատիկ կայ, Զրօրհնէք կայ, պա երեխաները մի չզարդարւեն: Թող էս գեղեցիկ կտորներից կտրեմ, Թաւրիզի ապրանքներ են, շատ պատւական ապրանք է: Քեզանից էլ փողը էսօր կամ վաղը խօմ չեմ ուզելու, երբ կ'ունենաս՝ կը տաս, զու էլ ինձ համար խօմ ուրիշ չես:

—Ի՞նչ ասեմ, Համբարձում, կտրիր, ինչ որ ուզում ես. դու մեզանից շատ ես հասկանում: Ենորհակալ եմ:

—Տանեցիք ամէնքն էլ ուրախ էին նոր զնած ապրանքների համար: Գոյնզգոյն կտորները ձեռքից ձեռք էին անցնում. ամեն մէկը հետաքրքրութեամբ և հրճւանքով դիտում էր ամեն մի կտոր, կշտանում նայելուց, այն դէն շպրտում և ազահութեամբ մի ուրիշ կտրի վրա յարձակում:

Համբարձումը այդ ընտանիքի վզին բաւականաչափ ապրանք կապից և ջորիները բարձելով ուղևորեց դէպի մօտակաց գիւղերը:

### Զ. Գլուխ

Համբարձումի վաճառականական ճանապարհորդութիւնը մօտ երեք շաբաթ տևեց, որի ընթացքում նա կարողացաւ ցրել համարեա իւր բոլոր ասլրանքը: Հետը տուն բերաւ փող, իւղ, մի քանի ոչխար և մի կով: Մեծ քանակութեամբ ապառիկ էր թողել գիւղերում, որի փոխարէն նա բերել էր իւր ձեռքով գրած մուրհակների մի մեծ փաթեթ:

Ցուն հասնելուց մի շաբաթ յետոյ նա դարձաւ եղբօրն ու ասաց.

—Գալուստ, էլ քո էստեղ մնալը զուր է. աշունք է գալիս, պարապ ի՞նչ պիտի անես զիւզում: Ես տանն եմ բաւական է: Դու կրին քաղաք գնա: Ես մեր առևտուրի գործերը մինակ էլ կարող եմ կառավարել: Սկզբում ասացի կը գնաս քաղաք, վաճառականութիւն կը սովորես, կը գաս լի աշխատանքով և էս բոլորը քո ձեռքը

կը յանձնեմ, բայց յոցսերս չկատարւեցան. դատարկ գնացիր, զատարկ էլ վերագարձար: Դու գնա, էլի սովորիր և աշխատանք թեր առնե:

—Ախր ընկերներ չունիմ, գնացող չկայ:

—Երեխայ ես, թնջ է, մենակ չես կարող գնալ: Պա ես ամ բողջ երեք շաբաթ ինչպէս էի պատում թուրքի գիւղերումն էլ: Վախենալու ոչինչ չկայ: Գնա, ես էլ ախր խեղճ եմ: Պա երբ պիտի կարողանաս ինձ ձեռք հասցնել:

Գալուսար ոչինչ չպատասխանեց: Զնայած որ նա այնքան ցանկութիւն չունէր երկրորդ անգամ օտարութեան գնալու, բայց նախ որ մեծ եղբօր խօսքը նա չէր կարող վայր գցել և երկրորդ ցանկանում էր ազատւել տանեցիների նախատինքներից:

Այդ խօսակցութիւնից երկու օր անցած Գալուստը ճանապարհեց դէպի Բաքու:

—Գնա, որդի. ասում էր սինոդ Առևկասը, դոչաղ կաց. եթէ էլի խեղճ մնացիր, հացի չես տիրանալ: Աշխատիր յարմար լնկած տեղը տակովն անել: Երկար մի մոտածիր, բայց իհարկ է ուստայութեամբ արա: Զարչենց Մանուկը էնքան աներ է շինել տալիս, դրա փողը մրտեղից է. ուտում են ուտում, չի պրծնում: Որտեղից է, խագէցինիցը (սեփականատէր):

Գալուստը հօր խօսքերին էլ ոչինչ չպատասխանեց: Կառարեալ սառնութեամբ և անտարերսութեամբ լսեց Սինոդի բարենպատակ խորհուրդները և գլխակոր, ախուր ու մոտամոլոր ճանապարհ ընկաւ դէպի օտարութիւն: «Ախր ես մոր եմ գնում, մոտծում էր Գալուստը ինքն իրան. ես զիտեմ, որ բան չեմ կարողանալու շինել: Զեմ կարողանում էլի, զօսի բան է: Բախտս քոն է քոռ: Եղբայր, մէկ էլ ուրիշների նման չեմ կարողանում սասանալութիւններ անել. համ վախենում եմ, համ էլ խիղճս չի տանում: Ախր իզուր տեղից ինձ մոր են ուզարկում»:

—Դէ, բարի ճանապարհ, ասաց Սինոդը, սեղմելով որպու ձեռքը, աես, ճակատդ չեմ համբուրում, սազութիւն լինի, որ լաւ աշխատանքով վերագարձար տուն, էն ժամանակ կը համբուրեմ: Համբարձումը շտապով նոցնպէս սեղմեց եղբօր ձեռքը և գնաց իւր գործին: Տանեցիներից միայն Վառվառն էր, որ երկար տեղ տարաւ:

ճանապարհ գրեց Գալուստին: Երիտասարդ կինը, որ Սինոդի ընտանիքի մէջ արտաքոյ կարգի մի բացառութիւն էր կազմում թէ իւր սրով և թէ հայեացքներով, խղճում էր ացդ դժբախտ երիտասարդին: Հօրից առաջ, եղբօրից ճնշւած և երկուսի կողմից էլ անփրչ նախատինքների ենթարկւած: Ըսեղճ տղայ, մոտածում էր Վառվառը վիշտ ու կարեկցութիւն արտայացող աչքերը գետին յառած, ո՛հ, որքան անբախտ ես դու, ճակատագիրը որբան անողորմ է վարւում քեզ հետ:

—Դէ բարի ճանապարհ, Գալուստ եղբայր, ասաց Վառվառը վերջապէս կանգ աւնելով և սեղմելով նրա ձեռքը, բարով գնաս, բարով էլ գաս. դատարկ գնում ես, լիքը վերադառնաս: Ուրախ կաց, շատ մի միտք անիր, ամեն ինչ կ'անցնի: Քեզ լաւ պահպանիր թէ ճանապարհին և թէ քաղաքում:

—Ենորհակալ եմ, հարս, ասզ լինես, ասաց Գալուստը և արտասւեց:

Արտասուքը մի րոպէ խեղղեց նրա ձայնը: Խեղճ տղայ. պատեղ էր նա իրան ազատ զգում, այստեղ, ճանապարհին, իւր եղբօր կնոշ առաջ: Հօր և եղբօր սառնութիւնը ճանապարհ գցելու բոպէին խոցել էին թշւառ երիտասարդի սիրով և նա աչսոեղ միայն կարող էր իւր կուտակւած ցաւերը լացով թեթեացնել:

—Եղբայր, երեխայ ես, որ լաց ես լինում, ասաց Վառվառը սրով ու լացակումնաց: Փառք Ասոծոյ, խօմ մի շատ օտար երկիր չես գնում: Էլի քո տեսած քաղաքներն են լինելու:

Գալուստը զսպեց իրան և սրբեց աչքերից արտասուքը: Յետոյ հեկեկանքը կոկորդում խեղղած վերջին անդամ մնաս բարով ասաց Վառվառին, շտաւպով շբջեց երեսը և շարունակեց ճանապարհը:

(Շարունակելի):

\* \* \*

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Կարծում ես որ ես երբէք չեմ տանջւում,  
Երբ ամեն անգամ կորցնում եմ սէրը.  
Ո՞յս մանուկ, այդ միայն ես ինքս եմ զգում,  
Ես ինքս գիտեմ իմ խոր վշտերը:

Եւ շատ ժամանակ լուռ գիշերներին  
Միայն տանջանքն է ինձ ընկեր եղել,  
Ի՞նչ արած, մանուկ, բախտի հաճոյքին  
Զոհւում են սիրոն էլ, հոգին էլ, սէրն էլ...

Ուզեցի սիրել հեռու թոյներից,  
Հեռու դաւերից, ազառ, անկապանք,—  
Հեց դրա համար զրկւեցի սէրից,  
Հեց դրա համար մնացի մենակ...:

Տունի պանդուխոն իր հայրենիքում,  
Աղքատը՝ սև հաց, որբը՝ ապաստան,—  
Բայց ոչինչ չկայ իմ խաւար հոգում  
Եւ յիշատակն էլ ճնշում է նրան...

# Է Գ Մ Ո Ն Տ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԻՆ ՀԻՆԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Վ. Ջ. ԳԵՂԹԵՒ

Դերմաներէնից Թարգմ. ՀՄԱՅԵԱԿ ՄԱԺԻՆԵԱՆ

(Վ. ԿՐՁ<sup>1)</sup>)

## ՀԻՆԴԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Փողոց. ՄԺՆՉԱԴ

Կլարա, Քրակենքուրդ, քաղաքացիներ

Բրակենքուրդ: Սիրելիս, ի սէր Աստուծոյ, ի՞նչ ես ուզում ասել:  
Կլարա: Արի հետս, Բրակենքուրդ: Դու պէտք է մարդոց չճա-  
նաչես. մենք նորան կ'ազատենք անկատկած. որովհետև դէպի նա  
տածած սէրն անսահման է: Երդումեմ որ իւրաքանչիւր ոք զգում է  
իւր մէջ ամենաջերմ տենչանք նորան ազատելու, այդպիսի  
թանկագին կեանքը վտանգից կորզելու և ամենաազատին ազատու-  
թիւնը վերադարձնելու: Արի. միմիայն մի ձայն է պակաս, որ նոցա  
համախմբէ: Նոցա հոգու մէջ գեռ բոլորովին թարմ կենդանի է այն,  
ինչոր որ նոքա պարտական են նորան: Եւ գիտեն որ նորա ամենակարող  
բազուկն է միայն նոցա կորսորդ հեռու պահում. գիտեն նոքա թէ

<sup>1)</sup>Տես «Մուրճ» 1896 թ. № 1, 2, 3—4:

նորա և թէ իրանց սիրոյն պէտք է ամեն ինչ վասանդի դնեն  
բայց ինչ ենք վասանգում: Նատ շատ մեր կեանքը, որը պահապ-  
նելու համար չարժէ չարչարւել:

Բրակենքուրզ: Դժբախտ, դու չես տեսնում այն ոյժը, որը  
մեզ երկաթէ շղթայով կապել է:

Կլարա: Այդ ոյժն ինձ անյաղթելի չէ երևում: Զուր տեղը  
թող խօսք չվատնենք: Ահա գալիս են հին, ազնիւ, քաջ տղամարդ-  
կանցից: Լսեցէք, բարեկամներ, հարեւաններ, ասացէք, ինչպէս է  
եզմոնտը:

Հիւսն: Ի՞նչ է ուզում այդ աղջիկը. լռեցրէք նորան:

Կլարա: Մօտեցէք, որ ցածր խօսենք, մինչև որ կը միանանք  
և կը զօրանանք. մի վայրկեան անգամ չպէտքէ դանդաղենք: Յան-  
դուգն բռնաբարութիւնը, որը համարձակում է նորան շղթայիլ  
արդէն սրում է դաշոցնը՝ նորան սպանելու: Ո՛հ... բարեկամներ,  
աղջամղջի ամեն մի քայլի հետ ես աւելի երկշոտ եմ դառնում:  
Ես վախենում եմ այս գիշերւանից: Եկէք բաժանւենք, արագ տունէ-  
տուն վազելով՝ քաղաքացիներին դուրս կանչենք: Ամեն ոք թող  
առնէ իւր հետ սուրը: Նուկայում մենք նորից միմեանց կը հան-  
դիպենք և մեր հոսանքը իւրաքանչիւրին իւր հետը կը մզէ: Թշնա-  
միները կը տեսնեն իրանց մեզնից շրջապատւած և ողողւած, ու  
կը ճնշւեն: Ի՞նչ կը կարողանան մի բուռն ստրուկներ մեզ ընդդի-  
մադրել: Եւ նա նորից կը վերաբառնայ մեր մէջ, կը տեսնէ իրան  
ազատւած և կարող է մեզ միանգամ շնորհակալ լինել. մեզ, որ  
նորան այնքան շատ և շատ պարտական ենք: Նա կը տեսնէ, գուցէ  
անկասկած նա նորից կը տեսնէ արշալոյնը ջինջ երկնքում:

Հիւսն: Ի՞նչ է պատահել քեզ, աղջիկ:

Կլարա: Միթէ դուք ինձ չէք հասկանում: Կամսի մասին եմ  
խօսում: Ես խօսում եմ եզմոնտի մասին:

Յետտէք: Այդ անունը մի՛ տալ. դա մահաբեր է:

Կլարա: Անունը տալ. ինչպէս. այդ անունը տալ: Ո՞վ չէ այդ  
անունը տալիս ամեն մի դէպքում: Որտեղ չէ նա գրւած: Այս  
ասաղերի մէջ ես յաճախ կարդացել եմ նորա անունը տառ առ  
տառ: Չանւանել: Այս ի՞նչ է նշանակում, բարեկամներ: Բարի, աղ-  
նիւ հարեւաններս, դուք երազում էք: Ուշքի եկէք. ինձ մի՛ մտիկ

արէք այդպէս ակնապիշ և երկչուու։ Դէս ու դէն միք նայիլ զարզան-դած։ Ես միայն այն եմ աղաղակում, ինչոր իւրաքանչիւրը ցան-կանում է։ միթէ իմ ձայնը ձեր սեպհական սրտի ձայնը չէ։ Այս սարսափելի գիշերին ճվ չէր ընկնիլ ծնկների վերայ և դեռ իւր խորվացոց անկողինը չմտած ջերմեռանդ չէր աղօթիլ որ նա եր-ինքից իջնի։ Մէկմէկու էք հարցնում դուք, թող ամէն մէկն իրան հարցնէ։ Եւ ճվ չի հետս աղաղակիլ՝ «Եգմոնտի ազատութիւնը, կամ մեր մահը»։

Յետուէր։ Աստւած ազատէ։ Այ դժբաղդութիւն։

Կլարա։ Մնացէք, մնացէք և գաղտուկ միք փախչիլ նորա անւան առաջ, որին դուք սովորաբար այնովէս ուրախ առաջն էիք վազում։ Եթէ ձայն էր լսում նորա մասին, եթէ ասւում էր «Եգ-մոնտը գալիս է», նա գալիս է Գէնտից—իրանց բախտաւոր էին համարում այն փողոցների բնակիչները, որոնց միջով նա պէտք է իւր ձին քշէր։ Իսկ երբ դուք նորա ձիերի դոփիւնը լսում էիք, ամէն ոք աշխատանքը դէն էր ձգում։ Նորա դէմքից ուրախութեան և յուսոց հայեացքը՝ արեգակի ճառագայթի նման, անցնում էր ձեր տրտմած դէմքերին, որ դուք պատուհաններից դուրս էիք հանում։ Դոների շէմքերում երեխաներին վեր էիք բարձրացնում և նոցա հասկացնում։ «Տես, այս էգմոնտն է, ամենամեծը նա է, որից դուք մի օր աւելի երջանիկ օրեր ունիք սպասելու, քան ձեր խելմ հայրերն են անցրելու Միք թողնիլ որ մի օր ձեր երեխաները ձեզ հարցնեն «Ո՞ւր է նա, ուր են այն ժամանակները, որ դուք խոստանում էիք»։ Եւ այսպիսի գատարկախօսութեամբ և անդործ-ութեամբ մենք նորան դաւաճանում ենք։

Զօէստ։ Ամաչեցէք, Բրակենբուրգ, միք թողնիլ նորան այդ-պէս իւր կամքին։ Աղէտի առաջն առէք։

Բրակէնբուրգ։ Սիրելի Կլարա, արի գնանք։ Խնչ կ'ասէ մայ-րը, դուցէ—

Կլարա։ Գուցէն որն է։ Ինձ երեխանց ես կարծում, թէ խելա-ցնոր։ Ել ոչ մի յուսով չես կարող խախտել իմ մէջ այս սարսա-փելի համոզումը։ Դուք պէտք է ինձ լսէք, և դուք կը լսէք, որով-հետեւ ես ձեզ այլայլած եմ տեսնում, իսկ ինքներդ չէք կարող ձեզ սիրու տալ։ Թողնէք, ներկայ վտանգի վրայով միայն մի հայեացք

ձգէի անցեսլի վրայ, մօտակայ անցեալի: Դարձրէք ձեր ուշքը դէպի ապագան: Միթէ կարող էք դուք ապրել. կ'ապրէք դոք, եթէ նա մեռնի: Նորա վերջին շնչի հետ ազատութիւնն էլ իւր վերջին շունչը կը փչէ: Խնչ էր նա ձեզ համար: Ում համար նա ենթարկեց. իրան վերահաս վտանգին: Նորա վէրքերն ստացւում ու առողջանում էին միմիայն ձեզ համոր: Այն մեծ հոգին, որը ձեզ բոլորիդ բովանդակում էր, փակւած է մի բանտում և նենգ սպանման սարսափը սաւառնում է նորա շուրջը: Նա մոտածում է դուցէ ձեր մասին. նա յոյս ունի ձեր վրայ, նա, որը միայն տալու, միայն կատարելու էր սովոր:

Հիւսն: Քաւոր, եկէք:

Կլարա: Թէւ ես ձեզ նման բազուկներ և ուղեղ չունիմ, բաց ունիմ այն, ինչոր հէնց ձեզ պակասում է—քաջութիւն և վտանգի արհամարհանք: Երանի իմ շունչը կարող սնար ձեզ վառել, երանի կարողանացի իմ կրծքիս սեղմելով ձեզ տաքացնել: Եկէք: Ես ձեր միջին եմ ուղում գնալ: Խնչպէս անզէն դրօշը ծածանելով առաջնորդում է մարդոց մի ազնիւ բանակ, ացդպէս էլ ալէտք է իմ հոգին ձեր գլխների վերայ շողջողայ: Իսկ սէրն ու քաջութիւնը տատամսկոտ, ցրւած ժողովրդին միացնէ ու սարսափելի զօրք կազմէ:

Յետտէր: Մի կողմը տար դորան, ավասսս գալիս է: (Քայլա քացիք ետ են քաշւում):

Բրակենքուրզ: Կլարա, չ՞ս տեսնում որտեղ ենք:

Կլարա: Որտեղ. երկնքի տակ, որը, կարծես, այնպէս յաճախ աւելի հիանալի էր կամար կապում, երբ ազնիւմ նորա տակ շընում էր: Այս պատուհաններից չորս-հինգ գլուխ մէկմէկու վերայ դուրս են ցցւած: Այս գոներում նոքա դոփում էին, գլուխ տալիս, երբ նա այդ վատերին էր մաիկ տալիս: Խնչպէս ես նոցա սիրում էի, երբ նոքա պատում էին նորան: Եթէ նա բռնակալ եղած լինէր: Թող նորա անկումից մի կողմը քաշւէին: Բայց նոքա սիրում էին նորան: Ո՞հ... դուք, ձեռներ, որոնք դէպի գլխարկներն էիք պարզ ւում, չք կարող հիմա պարզւել դէպի սուրը: Իսկ մե՞նք, բրակենքուրզ, նոցա հացհոյնում ենք: Այս բազուկները, որոնք նորան այնպէս սեղմում էին, նորա համար ինչ են անում: Խորամանկութիւնն աշխարհում այդքան բաներ արաւ: Դու ճանածում ես

ճանապարհներն ու արահետերը. ճանաչում ես հին ամրոցը: Անկարելի ոչինչ չկայ: Ինձ մի խորհուրդ տուր:

Բրակենքուրզ: Երբ մենք տուն գնանք:

Կլարա: Լաւ:

Բրակենքուրզ: Այնտեղ անկիւնում տեսնում եմ Ալբայի սրահնորդներին: Թող բաւականութեան ձայնը քո օրտի մէջ ներս թափանցէ: Դու ինձ վատասթիրո ես համարում: Զես հաւատում, որ ես կարող լինէի քո սիրոյն մեռնել: Արդ երկուս էլ զիժ ենք. ինչպէս դու, այնպէս էլ ես: Զես աեսնում անկարելին: Երանի ուշքի գայիր: Աւշքդ վրադ չէ:

Կլարա: Աւշքս վրաս չէ: Զգւելի է: Բրակենքուրզ, ձեր խելքը տեղումը չէ: Առաջները համարձակ հերոսին պատում էիք, նորան բարեկամ, սպաշտան և յոյս էիք անւանում: Նորան կեցցէ էիք աղաղակում, երբ գալիս էր: Առաջները կանգնում էիք անկիւնում, պատուհանը կիսառ բաց անում և ականջ կնում թագուն, իսկ իմ սիրոն աւելի թունդ էր զարկում, քան ձեր բոլորիդ: Դուք թագնում էք, երբ կարիք կայ. ուրանում էք նորան և չեք զգում, որ դոք կորած էք, եթէ նա կորչի:

Բրակենքուրզ: Արի գնանք տուն:

Կլարա: Տուն:

Բրակենքուրզ: Աւշքի եկ միայն, շուրջդ նայիր: Այս այն վորդիներն են, ուր դու միայն կիրակիներին էիր ոս կոխում, որոնցով դու ամօթխած եկեղեցի էիր գնում, ուր դու չափազանց լլրջորէն բարկանում էիր, երբ ես քաղցր, բարեկի խօսքերով քեզ ընկերանում էի: Դու կանգնում ես, խօսում, գործում ողջ աշխարհի աչքի առաջ: Մտածիր, սիրելիս, ինչ օգուտ մեզ նորանից:

Կլարա: Տուն. այն, ուշքի եմ գալիս: Գնանք տուն, Բրակենքուրզ: Դու ճանաչում ես մեր տունը: (Գնում են)

### ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Բանտը մի լապտերով լուսաւորած. խորքում մի բազմոց

Էզմինտ: (Միայնակ): Հին բարեկամ, անդաւածան քուն, դու էլ ես ինձնից վախչում, ինչպէս մնացեալ բարեկամներս: Ինչպէս յօժարաբար ցած էիր իջնում ազատ դլիսիս վրայ և ձիթենեաց

սպակի նման քունքերս զովացնում։ Պատերազմի մէջ, կեանքի ալիք-ներում, հանգստանում էի ազատ շնչելով քո գրկում։ նորափթիթիթ մանուկի նման։ Երբ փոթորիկները ոտոի տերեւների միջով վշվ-շում էին, ծիւղ ու կատար ճռուալով շարժում, ներսը միջուկի կո-րիզը հօ անշարժ էր մնում. հիմա ինչն է քեզ սարսեցնում։ Խնչն է հիմա զզորդում քո աննկուն և հաստատուն միտքը։ Ես զգում եմ. սպանելու կացնի ձայնն է այս, որն արմատներս երերում է։ Դիո. կանչնած եմ ուղիղ. բայց մի ներքին սառսուռ անց-նում է ամբողջ մարմնով։ Այն, յաղթում է նա, նա, այդ մատ-նիչ բռնութիւնը։ Նա փորում է այն ամուր, բարձր բնի տակը, և անխքան կեսպի չորանալը՝ ճոռալով ու ջարդուփշուր լինելով կընկնի նորա կատարը։ Բայց դու ինչն հիմա, որ աջնքան ան-գամ ծանր հոգսերը սապօնի պղողջակների նման գլխիցդ դէն ես զցել, ինչն ոյժ չունիս փախցնելու այն նախազգացմունքը, որոնք քո մէջ հազար տեսակ վեր ու վայր են անում։ Երբւանից է քեզ երկիւզալի թւում մահը, որի փոփոխող ուրւակաների հետ, ինչ-պէս երկրային միւս սպատիերների հետ, դու խաղաղ ապրում էիր։ Էլի նոյնը չէ, նոյն վազահաս թշնամին, որին կարօտով ախոյանա-բար ասողջ կուրծքդ դէմ էիր գնումն նանար, այդ գերեզմանի նախապատկերը, հերոսին, ինչպէս և վատին, հակակրելի է։ Երբ իշխանները մեծահանդէս ժողովներում։ հեշտ վճռելու բանը հա-զար անգամ ծամելով ու ծամեծմելով կշռադատում էին, արդէն այն ժամանակ անտառնելի էր ինձ բրդեաց աթոռիս վրայ նատելը, և գահինձի աղօս պատնըի մէջ առաստազի գերաններն ինձ ճնշում էին։ Ուստի շատապում էի հեռանալ, հէնց որ հնար էր լինում, և շուտով ձի հեծնում։ Խոր շունչ քաշելով։ Եւ շուտով դուրս, այն-տեղ, ուր մենք սկսոք է լինեինք, դէպի զաշտը, ուր մեզ շրջա-պատում են երկրից գոլորշիացող բնութեան ամեն բարիքը և երկնքի միջով շնչող աստղերի բոլոր օրհնութիւնները. ուր մենք երկրածին տիտանի նման մեր մայր-հողի հետ շիւելովը աւելի ուժով ենք վեր սաւառնում. որտեղ մենք զգում ենք մեր բոլոր երանի-րում ամբողջ մարդկաթիւնն ու մարդկային ձգտումները. որտեղ առաջ նետելու, յաղթելու, ստանալու, իւր բազուկները գործա-ծելու, տիրելու, նւաճելու ցանկութիւնը բորբոքում է երիտա-

սարդ որսորդի հոգում։ որտեղ զինւորն արագ քայլերով ողջ երկրին տիրելն իւր բնատուր իրաւունքն է համարում և սարսափելի ազատութեամբ, ինչպէս կարկտախառն մրրիկը՝ մարգագետին, դաշտու անտառ փճացներով, ջարդում է և մարդացին ձեռքով քաշած ոչ մի սահման չի ճանաչում։ Դու միայն ուրական ես. երազական լիշողութիւն այն բախտի, որն ես այնպէս երկար վայելում էի. ուր է տուածնորդել քեզ ճակատագիրը նենգօրէն։ Մերժում էր քեզ երեւք չվախեցնող մահը շուտով օր ցերեկով պարզեւել, որպէս զի քեզ համար գերեզմանի նախաճաշը զզւելի մդլահոտութեան մէջ պատրաստէ։ Խ'նչպիսի զզւանք է շնչում այս քարերից. արդէն կեանքս սառչում է, և մահճակալից, ինչպէս գերեզմանից, ոսս խորշում է։ Ահ, հոգս, հողս, դու, որ ժամանակից առաջ սկսում ես սպանութիւնը, դադար տուր։ Բայց երբւանից է եզմնուը միայնակ, այսպէս մէն մէնակ այս աշխարհում։ Քեզ կասկածն է անզգայացնում, ոչ բախտը։ Միթէ թագաւորի իրաւ աղատութիւնը, որին դու ցմահ վստահ էիր, և իշխանուհու բարեկամութիւնը, որը համարեա (այդ կարող ես ինքդ քեզ խոստովանել) սէր էր, — զիշերւայ փայլուն հրապատկերի պէս միանգամից անհետացաւ և քեզ յտ են թողնում մենակ՝ ազօտ շաւզում։ Օրանացին՝ բո բարեկամներին գլուխ կանգնած, յանդուգն մոքեր չի յզանալ։ Ճողովուրդը չի հաւաքւիլ և հետզհետէ աճող ուժով հին բարեկամին չի ազատիլ։

Ահ... զուք որմեր, որ ինձ պատում էք, այնքան ողիների բարեհաճ բազմութիւնը ինձնից միք հեռու տանիլ, և ինչ արխութիւն որ իմ աչքերը սովորաբար նոցա էին ներշնչում, թող այն հիմա նորից վերադառնայ նոցա սրտերից իմի մէջ։ Ահ... այս, նոքա կը շարժւեն հազարներով, նոքա կը գան, կը կանգնեն կշախունցաւ բարեպաշտ աղօթքը կը շտապի թափանցել երկինքը և կը ինդրէ մի հրաշք։ Եթէ իմ աղատութեան համար երկնքից հրեշտակ չիջնի, ապա գէթ նոցա կը տեմնեմ տէզ ու սրեր ձեռքն առնելիս։ Դարպասները կը ձեղքւեն, վանդակապատերը ցրիւ կը գան, նոցա ձեռքերի առաջ սպարիսպները կը գլորւեն և ծագող օրւայ պատութեանը եզմնուը կը դիմաւորէ ուրախութեամբ։ Նաև ծանօթ դէմքեր ինչպէս կընդունեն ինձ հուռուայով։ Ս'իս, Կլարա,

Եթէ զու ազամարդ լինէիր, կը տեսնէի քեզ անկասկած այստեղ էլ առաջինը, և շնորհակալ կը լինէի քեզնից այն բանից, ինչի համար մի թագաւորից շնորհակալ լինելը ծանր է—ազատութեանս համար:

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ԿՀԱՐԱՅԻ ՄՊՈՂԱՐ

Կլարան դուրս է դալիս սենեակից մի լատուրով եւ մի բաժակ ջրով. բաժակը դնում է սեղանին, եւ պատուհանին է մօտենում.

ԿՀԱՐԱՅԻ ԲՐԱՋԵՆՔՈՒՐԳ. այս դուք էք: Խ՞նչ լսեցի հապա: Դեռ ոչ ճք. ոչ ոք չը կմք: Ես լամազը պատուհանին կը դնեմ, որ նա տեսնէ, թէ ես դեռ արթուն եմ. և դեռ սպասում եմ իրան: Նա խոստացել է ինձ լուր բերել: Լուր. սարսափելի հաւաստիութիւն. Եղմննալ գատապարտանձ. Ծ'նչ գատարան կը համարձակի նորան դատել. իսկ նոքա գատապարտմամ են նորան: Թագս ւհրն է նորան դատում, թէ դուքսը: Իսկ իշխանուհին խոյս է տալիս: Այս է աշխարհը: —Ով կը լինէր այնքան չար՝ —թանկագին չարիք բաղձալու: Միթէ շարութիւնն այնքան զօրեզ կը լինէր շուտով գլորելու բոլորից ճանաչւածին: Այնինչ այլպէս է, այն, այլպէս է: Ո՛հ... Եղմննա, քեզ ապահով էի կարծում Աստուծոյ և մարդկանց առաջ ինչպէս իմ գրկում: Դու ինձ քոնն ես անւանել. իմ ամբողջ կեանքը ես նւիրել էի քո կեանքին: Խ՞նչ էի ես քեզ համար և ինչ եմ այժմ; ի զուր եմ ձեռքս պարզում դէպի այն թոկը, որը քեզ բըս: Նած է: Դու անօգնական, իսկ ես ազմու: Ահա տանս բանալին. իմ ազատ կամքիցն է կախւած: զնալս ու գալս, բայց քեզ համար ոչինչ չեմ անում: Ո՛հ, կապեցէք ինձ, ես յուսահատում եմ, և ձգեցէք ինձ ամենախոր բանաը, որ ես գլուխս այն խոնաւ պատերին խփեմ, ազատութիւնը ողբամ, երազեմ, թէ ես ինչպէս պէտք է նորան ազատէի. Եթէ շղթաներն ինձ չարգելին, ինչպէս նորան կազատէի: Ահա ես ազատ եմ և ազատութեանս մէջ է անկարութեան երկիւղը: Գիտեմ, բայց անընդունակ եմ նորան օգնելու համար մէկ անդամն շարժելու: Ա'լս, ափսնս. քո էութեան փոքրի մասնիկը, քո ԿՀԱՐԱՅԻ էլ քեզ նման բռնւած է և՝ հոգեվարքի մէջ, երբեմնակի շարժում է վերջին ուժերը. ես լում եմ շփոց, հազոր, —Քրակենքուրգ—այս նա է: Թշւառ, բարի մարդ. քո բախտը

մնում է միշտ միւնոյնը։ Գիշերը սիրուհիդ բաց է անում քեզ դուռը, բայց, ամ, որպիսի աղետալի տեսակցութեան համար։ (Քրակենքուրզը ներս է մտնում)։ Ի՞նչ գունատ և զարգանդած ես գալիս, Քրակենքուրզ, ի՞նչ է եղել։

Քրակենքուրզ։ Ոլոր մնոր ճանապարհներով և վտանգների միջով որոնում եմ քեզ։ Մեծ փողոցները բռնւած են։ Կողմնակի ճանապարհներով և վտանգի միջով եմ քեզ մօտ սկսել։

Կլարա։ Պատմի՛ր, ի՞նչպէս է բանը։

Քրակենքուրզ։ Ախ, Կլարա, թող ինձ որ լաց լինեմ։ Ես չէի սիրում նորան։ Նա այն հարուատ մարդն էր, և գրաւց աղքատի միակ գառը դէպի աւելի պարարտ մարդագետինը։ Բայց նորան երբէք չեմ անիծած։ Ասուած ինձ անխարդախ է առեղծել և փափկասիրու։ Յաւերի մէջ կեանքս հալւում էր և ամեն օր մնում էի հալւելուն։

Կլարա։ Մոռացիր այս, Քրակենքուրզ, մոռացիր ինքդ քեզ։ Խօսիր հետո նորա մասին։ Ճշմարիտ է։ Դատապարտւած է նա։

Քրակենքուրզ։ Նա դատապարտւած է։ Այդ ես բոլորովին հաստատ գիտեմ։

Կլարա։ Բայց դեռ ապրում է։

Քրակենքուրզ։ Այս, դեռ ապրում է։

Կլարա։ Ինչպէս ես ուզում հաստատել այդ։ Այս գիշեր բըռնակալու թիւնը կը մորթէ սքանչելուն։ Ամենքի աչքերից ծածկւած կը հոսի նորա արիւնը։ Երկչոտ, քնի մէջ ընկած է անզգայացած ժողովուրդը և երազում՝ է ազատութեան մասին։ մինչ նորա հոգին՝ մեզնից դժգոհ, թողնում է այս աշխարհը։ Նա թողեց։—մի՛ խարիլ ինձ, մի՛ խարիլ քեզ։

Քրակենքուրզ։ Անկասկած—ոչ։ Նա ապրում է։ Բայց աւաղ, Խսպանացին պատրաստում է ժողովրդի համար, որին նա ուզում է տնաստակ տալ, մի սարսափելի տեսարան, ազատութեան համար բարխող ամեն մի սիրո բռնութեամբ առ միշտ փշրելու համար։

Կլարա։ Նարունակիր և խաղաղ արտասանիր իմ մահւան վիխն էլ։ Ես՝ քանի գնում՝ մօտենում եմ արդէն այն երջանիկ դաշտերին։ Արդէն ինձ է հասնում այն խախազութեան աշխարհց միմիթարութիւնը։ Դէ ասա։

Բրակենքուրգ: Ես կարողացայ նկատել թէ պահնորդների վրայ և թէ երբեմն այստեղ, երբեմն այնտեղ լսող խօսակցութիւններից, որ հրապարակում գաղտուկ մի զարհուրանք է պատրաստում: Ես շեղուղիներով, ծանօթ անցքերով քեռուս տունը սպրիցայ և մի յետին պատուհանից նայում էի հրապարակին: Խապանական զինւորների մի մեծ շրջանի մէջ դէս ու դէն ջահեր էին ծածանում: Ես սրեցի անսովոր աչքս. և մթութեան միջից աչքին ընկաւ մի սև կախաղարան, ընդարձակ, բարձր. ես սառսւացի տեքից: Չորս կողմն զբաղւած՝ շատերը աշխատում էին, որ ինչ որ դեռ սպիտակ և տեսանելի տեղ կար մնացած՝ սև կտաւում փաթաթելով ծածկեն: Սանդուխիքներն էլ վերջը սևով ծածկեցին. ես լաւ տեսնում էի: Երեի մի սարսափելի զոհի նւիրագործութիւն էին նախապատրաստում, Մի սպիտակ խաչելութիւն, որը մթութեան մէջ արծաթի պէս շողշողում էր, մի կողմում բարձր ցցեցին: Փանի նայում էի, այնքան աւելի ու աւելի էր ստուգում սոսկալի հաւաստիութիւնը: Նուրջը տեղտեղ գեռ երերում էին ջահերը, փոքր առ փոքր ծուեցան նոքա և հանդան: Միանդամից գիշերւաց հրէշացին ծնունդը իւր մօր գոգն էր վերագարձել:

Կլարա: Հերիք է, բրակենքուրգ, էլ հերիք է: Թող այս քողլ հոգուս վրայ խաղաղանայ: Անհետացած են ուրւականները, իսկ դու, չքնաղ գիշեր, վերարկուդ շնորհիր երկրին, որը եռում է: Նա էլ երկար չի կրիլ այս զզւելի բեռը. սոսկալի կերպով կը պատառի իւր խոր ճեղքերը և կը փշրի ու կը լափի սպանութեան շէնքսը: Եւ Աստւած կուղարկէ մի որ և է հրեշտակ, որին նոքա իբր իրանց կատաղութեան վկայի՝ կարատաւորնն: Հրեշտակի սուրբ հապումով կը լուծեն նեգերն ու կապերը, և նա բարեկամի վրայ կը թափէ խաղաղ լոյս: Նա կառաջնորդէ նորան մթութեան միջով դէպի ազատութիւն՝ մեղմօրէն և խաղաղութեամբ: Եւ իմ՝ ճանապարհն էլ է գնում գաղտուկ այս մթութեան միջով՝ նորան հանդիպելու:

Բրակենքուրգ: (Նորան բռնելով). Որդիս, մւր: Ի՞նչ ես խիզա, խում:

Կլարա: Յածր, սիրելիս, որ ոչոք չզարթնի, որ ինքներս մեզ չսթափեցնենք: Ճանաչնում ես դու այս սրւակը, բրակենքուրգ:

քեզ համար այս վերցրի կատակով, երբ դու յաճախ անհամբեր սպառնում էիր վաղահաս մահով: Եւ այժմ, բարեկամու:

Բրակենքուրգ: Ի սէր ամենոցն սրբոց:

Կլարա: Դու ոչինչ չես կարող արգելել: Ես մահւանն եմ. և ցանկացիր ինձ խաղաղ, արագահաս մահ, որն ինքով քեզ էիր պատրաստում: Տնը ինձ ձեռքի: Այս վայրկեանիս, երբ բաց եմ անում մութը դուռը, որտեղից էլ դարձուղի չկայ, երանի թէ կարողանայի այս աջը սեղմելով քեզ ասել, թէ որքան եմ քեզ ողբացել: Եղբայրս մատաղահաս մեռաւ, քեզ ընտրեցի ես նորան փոխարինելու: Բայց քո սիրտը հակառակեց. տանջեց թէ ինձ, թէ քեզ: Պահանջում էիր ջերմ, միշտ ջերմագին այն, ինչ որ քեզ չէր վիճակած: Ներիր ինձ և մնաս բարեաւ: Թո՞ղ քեզ եղբայրս անւանեմ: Այս մէկ անուն է, որն իւր մէջ շատ անուններ է պարունակում: Անկեղծ սրտով վերցրու բաժանւողների վերջին գեղեցիկ ծաղիկը— վերցրու այս համբոյը: Մահը միացնում է բոլորին, բրակենքուրգ, ուրեմն նոյնպէս և մեզ:

Բրակենքուրգ: Թող ինձ ուրեմն, որ քեզ հետ մեռնեմ: Կիսիր, կիսիր. դա բաւական է երկու կեանք հանգնելու համար:

Կլարա: Մնացիր: Դու պէտք է ապրես. դու կարող ես ապրել: Նեցուկ եղիր մօրս, որը առանց քեզ, աղքատութեան մէջ կը մաշէր: Նորա համար եղիր այն, ինչպէս ես այլ ևս չեմ կարող լինել: Ապրեցէք միասին և ողբացէք ինձ: Ողբացէք հայրենիքը և նորան, որը միայն այն պահպանել կարող էր: Ներկայ սերունդն այս թշւառութիւնից չի ազատւիլ: Վրէժխնդրութեան կառագութիւնն անդամ չի զօրիլ նորան ջնջել: Անցկացրէք դուք, խեղճեր, օրեր, որոնք օրեր չեն: Այսօր աշխարհս միանդամից կանգ է առնում. կանգ է առնում նորա շրջանը: Խսկ իմ՝ երակը հազիւ զեռմի քանի բոպէ կը խփէ: Մնաս բարով:

Բրակենքուրգ: Ո՞հ... Ապրիր մեզ համար, ինչպէս և մենք միայն քեզ համար: Դու քեզնով մեզ իս սպանում: Ո՞հ, ապրիր և համբերիր: Մենք անբաժան քո երկու կողքին կը կանգնենք և միշտ մտադիր սէրն իւր կենդանարար բազուկներում կը պատրաստէ ամենասիրուն միսիթարութիւնը: Եղիր մերը, մերը: Ես չեմ համարակւում ասել իմը:

Կլարա: Հանդարտ, Բրակենքուրգ. դու չգիտես, ինչին ես զիպչում: Ուր քեզ յոյս է երեսում, այնուեղ ինձ համար յուսահատութիւն է:

Բրակենքուրգ: Կենդանիների յոյսին մասնակից եղիր: Մնացիր անդնդի ափին, նայիր ցածր և կրկին մեզ վեր նայիր:

Կլարա: Ես յաղթել եմ. նորից ինձ կռւի մի կանչիլ:

Բրակենքուրգ: Դու անզգայացած ես: Մթութեան մէջ խարիսխած, որոնում ես խորքը: Դեռ աշխարհիս վերջը չէ: Կը գանօրե՞ր...

Կլարա: Վայ քեզ, վայ: Անգթօրէն պատառում ես դու աչքիս առաջի վարագոյրը: Այն, կը ծագի մի օր, զուր են բողոքուշները կուտակւում և ակամացից ցրւում: Երկիւղով նայում է քաղաքացին պատուհանից, գիշերը թողնում է յետեկից մի սև ըիծ: Նա նայում է և լոյսի մէջ. սարսափելի կերպով բարձրանում է կախաղարանը: Նոր խաչելութիւնը իւր անարգւած աստածացին պատկերը դարձնում է վերը դէպի Հայրը: Սրեգակը չի համարձակւում ծագել, նա չի ուզում նշանակել այն ժամը, երբ եգմոնտը պէտք է մեռնի: Յամը գնում են սլաքները իրանց ժանապարհը և ժամը խփում է մէկը միւսի յետեկից: Մնացիր, կանգնիր, հիմաժամանակն է: Առաւօտևայ նախազգացումն ինձ դէպի գերեզման է քաշում: (Նա մօտենում է պատուհանին՝ իրեւ թէ չորս կողմն է նայում և ծածուկ խմում է):

Բրակենքուրգ: Կլարա, Կլարա:

Կլարա: (Մօտենում է սեղանին եւ ջուր խմում): Ահա մնացորդը: Ես քեզ յետեկիցս չեմ՝ գրաւում: Արա, ինչ որ պիտի անես: Մնաբարեւ: Հանդցրու այս լամպը հանդիսաւ և առանց դանդաղելու: Ես գնում եմ հանգստանալու: Հանդարտ դուրս սլկւիր. զուռն յետեւիցդ փակիր: Կամաց, չզարթեցնես մօրս: Գնա, ազատիր քեզ, ազատիր, եթէ չես ուզում իմ սպանիչի տեղ ընդունելի: (Գնում է):

Բրակենքուրգ: Նա թողնում է ինձ վերջին անզամ, ինչպէս միշտ: Ո՛հ, կարող է մի մարդկացին սիրտ զգալ, թէ ինչպէս է նա կարողանում մի սիրող սիրտ պատուտել: Նա ինձ կանգնած է թողնում՝ ինքս ինձ սպառինած: Թէ մահը, թէ կեանքը հաւասարապիս ատելի են ինձ: Միայնակ մեւնել: Լացէք, դուք սիրողներ: Ի՛մ

ճակատագրից աւելի խիստը չկայ: Նա բաժանում է ինձ հետ մահապեղի զաթիլը և իրանից դուրս քշում: Նա քաշում է ինձ հետ իւր յետևից և կրկին հրում դէպի կեանքը: Ո՛հ, եգմոնտ, ինչ թանկագին վիճակ է քեզ բաժին ընկնում: Նա քեզ առաջնորդում է: Նորա ձեռքի յաղթական պսակը քոնն է: Նա ողջ երկինքը առաջդ է բերում: Հետևեմ ես. էլի՞ մի կողմն քաշւեմ. անհանգչելի նախանձը դէպի այն բնակարանները տանեմ: Էլ աշխարհիս երեսին ինձ համար մնալ չկայ, թէ դժոխքը, թէ դրախտը ներկայացնում են հաւասար տանջանք: Կործանման սարսափելի ձեռքը ինչպէս հաճելի կը լինէր թշւառականին: (Բրակենբուրգը մի փողմն է զնում. բեմը առ ժամանակ անփոփոխ է մնում. Կլարայի մահը ցոյց տւող մի երաժշտութիւն է հնչում. Համար, որը Բրակենբուրգը մնուացել էր հանգցնել, մի քանի անգամ պլայլում է եւ վերջապէս հանգչում. բեմը բանտի է փոխւում):

## Զ Ա Ր Ր Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

## Բ Ա Ն Տ

(Եզմինտն անկողնում պառկած քնած է: Կողպէքը ծննդում է, զուռը բացւում, ծառաները ջահերով ներս են մտնում. Նոցա հետեւում է Ֆէրդինանդը եւ Սիլւան զինեալներով. Եզմինտը զարթնում է):

Էզմինտ: Ո՞վքեր էք դուք, որ անսիրալիր կերպով քունը աչքերից փախցնում էք: Ի՞նչ են ուզում յայտնել ինձ ձեր բիրտ, անվտան դէմքերը: Ինչի՞ է այս սարսափելի գնացքը: Ի՞նչ սարսափելի երազ էք գալիս ստութեամբ պատմելու իմ կիսարթուն հոգուն:

Սիլւա: Մեզ դուքն է ուղարկել քեզ յայտնելու դատավճիռ: Էզմինտ: Դահիճներ էլ ես բերում հետդ՝ վճիռը կատարելու համար:

Սիլւա: Լսիր և կ'իմանաս, թէ քեզ ինչ է սպասում:

Էզմինտ: Այս է վայել ձեզ և ձեր ամօթալի ձեռնարկութեանը: Պիշերով յզացած և գիշերով իրադորձած: Այսպէս է կարող ծածկվել անիրաւութեան այդ յանդուգն գործը: Համարձակ առաջ արի, դու, որ սուրդ կրում ես վերարկուիդ տակ փաթաթած: Ահա զլուխս, ամենատաղառը, որն երբ և է բռնակալութիւնը խլել է մարմնից:

**Սիլլա:** Դու սխալում ես: Խնչ որ արդար դատաւորները վըձռում են՝ արեգակի լուսնից չեն ծածկում:

**Էզմոնտ:** Այսպիսով լրբութիւնն ամեն հասկացողութիւնից ու երևակայութիւնից անցնում է:

**Սիլլա:** (Աւնում է մօտք կանգնողից վճիռը, յետ է ոլորում եւ կարդում): « Յանուն թագաւորի և զօրութեամբ այն իշխանութեան, որը « Նորին Մեծութիւնը մեզ տւել է գատելու նորա բոլոր հպատակ- « ներին, ինչ դասակարգի և լինեն, նմանապէս Ոսկեգեղմի ասպետ « ներին—ճանաչում ենք մենք... »

**Էզմոնտ:** Միթէ թագաւորը կարող է այն ուրիշն տալ:

**Սիլլա:** «Ճանաչում ենք մենք՝ կանխօրէն, օրինական քննութիւնից յետոց, քեզ Հէյնրիխ կոմս Եգմոնտին, Գաւ րի իշխանին, դաւադրութեան մէջ յանցաւոր և յայտնում վճիռը: Որ դու վազը լուսածագին ակտոք է բանտից հրապարակ տանւես և այնտեղ՝ ժողովրդի աշքի առաջ, ի զգուշութիւն բոլոր դաւաճաններին, կեանքից սրով մահւան գիրին ուղարկես: Տւած է Բրիւսսէլում: յամի... (Թիւն տարին տնօրոշ է կարդացում, այնպէս որ լսողը չի հասկանում): Ֆերդինանդ դուքս Ալբայի նախագահ խորհրդիս երկոտասանից: »

Դու դիտես հիմա ճակատագիրդ: Քեզ քիչ ժամանակ է մնում պատրաստելու, տանդ մասին կարգադրելու և քոյններին հրաժեշտ տալու: (Սիլլան հետեւրդներով հեռանաւմ է: մնում են Ֆերգինանդուն երկու ջահակիր: թեմը միջակ լուսաւորւած է: Էզմոնտը, մի քանի ժամանակ խորսութեած, լուր կանգնած է: Սիլլան աննկատելի հեռանաւմ է: Էզմոնտն իրան միայնակ է կարծում: երբ աչքերը վեր է բարձրացնում, նկատում է Ֆերգինանդին):

**Էզմոնտ:** Դու մնում ես կանգնած: Ուզում ես զարմանքու սարսափս քո ներկայութեամբ աւելի՛ ես մեծացնել: Զլինի՛ ուզում ես այն բազմալի լուրն էլ հօրդ տանել, թէ ես այստեղ տղամարդուն անվայել կերպով յուսահատում եմ: Գնա ասն նորան: Ասենորան, որ ոչ ինձ կը խարէ, ոչ աշխարհին: Նորան—փառասիրի՛ դեռ ետեիցը թեթև կը շշնջան, ապա բարձր ու աւելի բարձր կը խօսեն, և, երբ մէկ օր նա այդ գահից իջնի, հազարաւոր ձախներ նորան երեսն ի վեր կ'աղաղակեն՝ նորան ացնուեղ են բերել ոչ պետութեան շահը, ոչ թագաւորի արժանիքը, ոչ նահանգների խաղաղութիւնը: Եւր իսկ անձի համար է կուրի խորհուրդ տւել, ո՞-

պէս զի իրը զինւոր կռւում աչքի ընկնի։ Նա այս հրէշաւոր խառնակութիւնը նորա համար է յարուցել, որպէս զի ի ա կարօտն զգան։ Եւ ես ընկնում եմ իրեւ զոհ նորա ստորաքարշ ատելութեան, նորա սև նախանձի։ Ես զիտեմ, այն, և ես իրաւունք ունիմ տաելու, մահացու վիրաւորածը կարող է ասել. — ինձ նախանձում էր այն ինքնադովը, ինձ ջնջելը նորա վազուցւան մտածածն ու խորհածն է եղած։ Սրդէն այն ժամանակ, երբ մենք՝ դեռ երիտասարդ, քէւախաղ էինք խաղում և փողի կոյտերը մէկը միւսի յետեից նորա կողմից դէպ ինձ էին վազում, կանգնում էր նա մոացլած. կեղծելով՝ խաղաղ էր ձեւանում, այն ինչ ներքուստ հալումաշ էր լինում, բարկանարով աւելի իմ բախտի, քան իւր կորուսի վրայ։ Դեռ յիշում եմ նորա կայծացայտ հայեացքը, մատնիչ դալուկը, երբ մենք՝ հասարակական տօնին, շատ հազարաւոր մարդկանց առաջ մրցում էինք նետելում։ Նա ինձ դուրս հրաւիրեց, և երկու ազգերը կանգնած էին. Խսպանացիք ու Նիդէրլանդցիք գրաւ էին գալիս և բարեմաղթում։ Ես յաղթեցի նորան. նորա գնդակը, վրիպեց, իսկ իմը դիպաւ։ Իմ ազգակիցների բարձրաձայնքքի ջով օդը թնդաց։ Հիմա ինձ է դիպչում նորա հարւածը։ Ասա նորան, որ ես հասկանում եմ, ես նորան ճանաչում եմ, որ աշխարհս արհամարհում է ամեն մի յաղթանակ, որը՝ շողոքորթութեալք ձեռք բերելով, կանգնեցնում է իւր համար մի ստոր հոդի։ Իսկ դու, եթէ մի մարդու հնարաւոր է իւր հօր շաւզից շեղւել, ժամանակին սովորիր ամօթի, մինչ դու ամաչում ես նորա համար, որին սիրով կուզէիր յարգել ամբողջ սրտով։

Փերդինանդ։ Ես քեզ լսում եմ՝ առանց ընդհատելու. քոյնդիմանութիւնները ծանրանում են վրաս՝ ինչպէս մահակի հարւածները վահանի վրայ։ Ես զգում եմ դղորդ, բայց զինւած եմ։ Դու դիպցնում ես ինձ, բայց չես վիրաւորում. զգալի է ինձ միայն այն ցաւը, որը կուրծքս է կրծում։ Վայ ինձ, վայ։ Միթէ ես մի պյալիսի տեսարանի համար եմ մեծացել, մի այդպիսի դրամացի համար եմ ուղարկւած։

Էզմինդ։ Դու դանգատունում ես։ Ի՞նչ է քեզ յուղում, քեզ վշտացնում։ Այս մի ուշացած զզջումն է, որ դու ամօթալի դաւալրութեանը նւիրեցիր ծառացութիւնդ։ Դու դեռ երիտասարդ

ես և բարետես: Դու այնպէս վատահելի և սիրալիր էիր դէպի ինձ: Քանի ես քեզ տեսնում էի, հաշտում էի հօրդ հետ: Եւ նոյն կերպ կեղծելով՝ նորանից աւելի կեղծելով գրաւում ես դու ինձ դէպի ցանցը: Դու զզւելին ես: Ով նորան է հաւատում, իւր գլուխն է ու գում վտանգել, բայց ով էր վտանգ սպասում քեզ հաւատալու: Գնա՞ գնա՞: Մի յափշտակիլ ինձնից այն քիչ վայրկեանները: Գնա՞ որ ես ինձ ժողովեմ, թողնեմ աշխարհս, իսկ քեզ՝ ամենից առաջ:

**Փերդինանդ:** Ես ինչ ասեմ քեզ: Ես կանգնած քեզ եմ նայում, բայց քիզ չեմ տեսնում, և ինձ չեմ զգում: Արդարացնեմ անձս: Համոզեմ քեզ, որ ես բոլորովին ուշ, բոլորովին վերջն իմացայ հօրս դիտաւորութիւնները, որ ես նորա ձեռքին ինչպէս մի կամազուրկ, անկենդան գործիք էի գործում: Ի՞նչ օգուտ, թէ դու իմ մասին ինչ կարծիք կարող ես ունենալ: Դու կորած ես, իսկ ես—թշւառս—այստեղ կանգնած եմ միայն այդ քեզ հաւատացնելու և քեզ ողբալու համար:

**Էզմինտ:** Ի՞նչ սքանչելի ձայն, ինչ անսպասելի մխիթարութիւն է հանդիսում ինձ գերեզմանիս ճանապարհին: Դու, իմ առաջին և, համարեամ, միակ թշնամուս որդին, դու ափսոսնեմ ես ինձ, դու իմ սպանիչների թւում չես: Խօսիր, ասա, ինչ կարծիք կազմեմ քո մասին:

**Փերդինանդ:** Անագործն հայր: Այս, ես քո այս հրամանով ճանաչում եմ քեզ: Դու ճանաչում էիր իմ սիրտը, իմ մոտածմնելքները, որոնց յաճախ նախատուս էիր՝ իբրև քնքոյշ մօրից ժառանգութիւն: Ինձ քեզ նման դարձնելու համար այսոեղ ուղարկեցիր: Այս մարդուն կլանող գերեզմանի ափին՝ մի կամաչական մահւան իշխանութեան տակ տեսնելու համար ստիպում ես ինձ, որ ամենախոր ցաւն զգամ, որ բոլոր սպատահարների առաջ՝ խուլ, որ ես անզգայ դառնամ, ինչ էլ որ ինձ պատահելու լինի:

**Էզմինտ:** Զարմանում եմ: ուշքի եկ, կանգնիր. խօսիր տղամարդու պէս:

**Փերդինանդ:** Երանի կինարմատ լինէի, որ ինձ կարողանային ասել: «Ի՞նչ է պատահել քեզ, ինչն է քեզ անհանգստացնում»: Ասան ինձ մի մեծագոյն, աւելի հրէշաւոր չարիք. ինձ աւելի սար-

սակելի գործի վկաց արա, ևս շնորհակալ կը լինեմ քեզնից, ևս  
թափմ. «Այդ դատարկ բան է»:

Էզմոնտ: Դու քեզ կորցնում ես: Ո՞ւր ևս դու:

Փերդինանդ: Թող կատաղի այս կիրքը, թող որ ես ինձ ազատ  
որբամ: Ես չեմ ուզում տոկուն երեալ, երբ մէջս ամեն ինչ ջարդ  
ու փշուր է լինում: Քեզ պէտք է այստեղ տեսնեմ: Քեզ: Զգւելի  
է: Դու ինձ չես հասկանում, միթէ կարող ես Հասկանալ: Էզմոնտ,  
եզմոնտ: (Նորու պարանոցովն ընկնելով):

Էզմոնտ: Բաց արա ինձ այս հանելուկը:

Փերդինանդ: Աչ մի հանելուկ:

Էզմոնտ: Խոնչպէս է քեզ այդպէս խորը շարժում մի օտար  
մարդու վիճակը:

Փերդինանդ: Աչ օտար. դու ինձ օտար չես: Քո անունն էր,  
որ մանկութեանս օրերում երկնային աստղի նման առաջս փայլեց:  
Ոքան անդամ լսած ու հարցրած եմ քո մասին, երեխայի յոյսն  
երիտասարդն է, երիտասարդինը—այրի հասակը: Այսպէս դու միշտ  
առաջս ես եղած. միշտ առաջս. իսկ ես առանց նախանձի տեսնում  
էի քեզ առաջիս և գալիս էի յետելցդ, միշտ յառաջ: Արդ, յոյս  
ունեի վերջապէս քեզ տեսնել, և տեսայ քեզ ու սիրտս քո առաջը  
նետեց: Քեզ նշան էի արել ինձ համար և քեզ ընտրեցի նորից,  
երբ քեզ աեսաց: Հիմա նոր ուզում էի քեզ հետ լինել, քեզ հետ  
ապրել, քեզ դրկել, քեզ—այս բոլորը ցնդեցան և ես քեզ տեսնում  
եմ այստեղ:

Էզմոնտ: Բարեկամ, եթէ դորանից մի շահ ունիս, համոզւիր,  
որ հենց առաջին վայրեանից սիրտս քեզ յարեց, և լսիր ինձ—  
թող մեկմէկու մի քանի խաղաղ խօսք ասենք: Ասա ինձ,—սա հօրդ  
մերջնական և լուրջ հրամանն է՝ ինձ սպանել:

Փերդինանդ: Այն:

Էզմոնտ: Այս վճիռն արդեօք մի լոկ խրուիլակ չէ ինձ վս-  
խեցնելու, երկիւղով և սպառնալիքով պատժելու, ինձ ստորացնելու  
և ապա կայսերական շնորհումով ինձ նորից բարձրացնելու համար:

Փերդինանդ: Աչ, ախ, գժբախտաբար ոչ: Սկզբում ես էլ էի  
ինձ խաբում սնուտի յուսով. բայց արդէն այն ժամանակ զգացի  
երկիւղ և վիշտ՝ քեզ այս դրութեան մէջ տեսնելու: Արդ, բայց

այժմ դա իսկական սոոցգ է: Ո՞չ. ես էլ ինձ չեմ իշխում: Ո՞վ կը կ'տաց ինձ օգնութիւն, ով խորհուրդ՝ անխուսափելիից խուսափելու:

Էզմինստ: Դէ լսիր ինձ: Եթէ քո հոգին այդպիս բուռն կերպով ձըբ տումէ ազատել ինձ, եթէ դու գարշում ես աչդ անսանձ բանութիւնից, որն ինձ շղթայած պահում է, ապա ազատիր ինձ: Վայրկեանները թանկ են: Դու ամենակատարողի որդին ես, ինքո՛ էլ կարող Թող փախչենք: Ես գիտեմ ճանապարհները: միջոցները չեն կարող քեզ անյայտ լինել: Միմիկայն այս պարիսպները, միայն մի քանի մզոններ են բաժանում ինձ իմ բարեկամներից: Բաց արա այս կապերը, տար ինձ նոցա մօտ, և եղիր մերը: Անկասկած թագաւորը մի օր չորհակալ կը լինի քեզնից իմ ազատութեան համար: Հիմա նա յանկարծի է բռնւած և գուցէ նորան ամենն անյայտ է: Քո հայրը բաղդ է փորձում, և նորին Մեծութիւնը սահմատած է կատարւած իրողութեանը հաւանութիւն տալ, թէս նրանից սարսափելիս էլ լինի: Դու մտածմունքի մէջ ես... Ո՞հ, զտիր ինձ ազատութեան ճանապարհը, խօսիր և վառ պահիր կենդանի հոգու յոյսը:

Փերդինանդ: Լսիր, ո՞հ, լոիր: Խւրաքանչիւր խօսքով աւելացնում ես յուսահատութիւնս: Այսուղ չկայ ոչ մի ելք, ոչ մի խորհուրդ, ոչ մի փախուստ: Այս է ինձ տանջում, այս է բռնում ու ճնշում կուրծքս՝ ինչպէս ճիրաններում: Ես ինքս եմ ձգել ցանցը, ես գիտեմ նորա խիստ ու ամուր հանգոյցները. ես գիտեմ, ինչպէս ամեն մի յանդգնութեան, ամեն խորամանկութեան ճանապարհները փակւած են: Ես զգում եմ ինձ քեզ ու միւսների հետ շղթայած: Հապա կը գանգատէի ես, եթէ ամեն ինչ փորձած չլինէի: Նորա ոտներն եմ ընկել, աղաչել, պաղատել: Նա ինձ այսուղ ուղարկեց: որ իմ մէջ ամեն կենդանական ու խնդական բան՝ ինձ հետ այս վայրկեանին խորտակէ:

Էզմոնտ: Եւ ոչ մի ազատութիւն:

Փերդինանդ: Ո՞չ մի:

Էզմոնտ: (Ոտք դոփելով): Ոչ մի ազատութիւն... Քաղցր կեանք, գոյութեան և գործունէութեան միրուն, քաղցր սովորութիւն, քեզնից պէտք է բաժանւթմ. աշապէս խաղաղ բաժանւթմ: Կռւի փոթոր կում, զէնքերի շառաչիւնի տակ, խորվութեան ճապաղիքում չես տալիս ինձ մի թռուցիկ մնաս բարով. դու չես շտապում հրաժեշտ տալու:

Քաժանման վայրկեանը չիս կարճացնում ևս պէտք է ձեռդ բռնեմ, աչքերիդ մէկ էլ նայեմ, գեղեցկութիւնդ, արժէքդ լաւ կենդանի զգամ, և ասկա վճռականապէս պուկ զամ և ասեմ, — զէ գնա:

Փերդինանդ: Իսկ ես պէտք է կշտիդ կանգնեմ, մոխկ տամ. ֆարողանամ քեզ պահպանել, քեզ արգելել: Ահ... Բնչ ձայն կը բաւեր ողբալու, բնչ սիրո պատառ պատառ չի լինիլ այս աղէտից: Էզմոնտ: Հանդարտւիր:

Փերդինանդ: Դու կարող ես հանդարտւել, դու կարող ես հրաժարւել, և քանի որ անհրաժեշտ է ծանր քայլ անել: Ե՞ս ինչ եմ կարող. Բնչ անեմ: Դու կը յաղթես քեզ և մեզ: Դու կը դիմանաս: Ես քեզնից և նոյն իսկ ինձնից աւելի կապրեմ: Ճաշի ուրախութեան ժամանակ լոյսս եմ կորցրել, պատերազմի խոռվութեան մէջ՝ գրօշա: Անախորժ, շփոթ ու պղտոր է երեւոմ ինձ ապագան:

Էզմոնտ: Նրիտասարդ բարեկամ, որին ես տարօրինակ բախտի բերմամբ միաժամանակ վաստակում եմ և կորցնում, որն ինձ համար մահու չափ ցաւում է, ինձ համար տանջւում է, նայիր ինձ այս վայրկեանիս. չես կորցնում դու ինձ: Եթէ իմ կեանքը քեզ համար մի հայելի էր, որի մէջ դու հաճութեամբ քեզ գիտում էր, ապա թող լինի այդ և իմ մահը: Մարդիկ միայն այն ժամանակ չեն միասին, երբ միատեղ են, այլ և հեռաւորը, մեռեալը մեզ համար կենդանի է: Ես կապրեմ քեզ համար, և ինձ համար էլ բաւականին ապրել եմ: Ամեն օր ես ուրախ եմ եղել, ամեն օր արագլնթաց գործունէութեամբ կատարել եմ պարտքս, ինչու ցաց է տւել խիղճա: Արդ վերջանում է կեանքս, ինչու նա երանի թէ աւելի վաղ, աւելի վաղ՝ արդէն Գրաւելինդենի աւազների վրա վերջացած լինէր: Ես գաղարում եմ ապրել, բացց ես ապրել եմ. այդպէս ապրիր և դու, բարեկամ, հաճութեամբ և սիրով, և մի՛ վախենալ մահից:

Փերդինանդ: Դու կարող էր քեզ պահել մեզ համար, դու պէտք է պահէիր: Դու ինքդ ես քեզ սպանել: Յաճախ լսում էի, երբ խելօք մարդիկ քո մասին խօսում էին. բարեմիտներ, չարամիտներ—նոքա երկար վիճում էին քո արժանիքի մասին, սակայն վիրջը բոլորին միաբանում էին. ոչ ոք չէր զօրում ուրանալ, սմեն ոք խոստովանում էր. «այս, նա վասնգաւոր ճանապարհով է

գնում։ Քանի քանի անգամ ցանկացել եմ, որ կարող լինէի քեզ զդուշացնել։ Միթէ դու ոչ մի բարեկամ չունէիր։

Հզմոնտ։ Ինձ զդուշացը էլ էին։

Փերդինանդ։ Բայց ինչպէս կէտ առ կէտ բոլոր այս մեզադրանքները դուայ ևս նորից գանգատի մէջ, նոյնպէս քո պատասխանները—բաւականին լաւ՝ քեզ արդարացնելու, բայց ոչ բաւականին զօրեղ՝ քեզ մեղադրանքից ազատելու համար։

Հզմոնտ։ Այդ մի կողմը մնայ։ Մարդս կարծում է, թէ ինքն իւր կեանքը կառավարում է, ինքն իրան սոաջնորդում, բայց նորաներքինն անդիմադրելի կերպով նորա ճակատագրի ցետեցն է քաշում։ Թող դորա վրայ չմտածենք։ Այս մոտքերից հեշտ կ'ազատուեմ։—բայց դորա համար էլ կը հոգացւի։ Եթէ կարող լինի իմ արիւնը շատերի համար հոսել, ազգիս խաղաղութիւն բերել, առա կը հոսի յօժարաբար։ Ափսոս, որ այզպէս չի լինիլ։ Բայց մարդուն վայել չէ այն ևս խուզարկել, ուր նա այլ ևս չպիտի գործէ։ Կարող ես դու հօրդ վճացնող ոյժը կասեցնել, ուղղել—արմա։ Այդ ով կարող կը լինի։ Գնաս բարով։

Փերդինանդ։ Չեմ կարող գնալ։

Հզմոնտ։ Իմ մարդոցը ամենայն սիրով քեզ եմ յանձնում։ Իմ ծառաները բարի մարդիկ են։ Թող նոքա չցրւեն, չանբախուանան։ Ինչպէս է Ռիխարդը, իմ գրագիրը։

Փերդինանդ։ Նա քեզնից առաջ է գնացել։ Նորան՝ ինչպէս դաւադրութեան մեղակցի, զլխատել են։

Հզմոնտ։ Խեղճ մարդ։ Ելի մի բան, և այնուհետև մնաս բարով, էլ առնել չեմ կարող։ Ինչ էլ որ մեր միտքը սաստիկ զբաղեցնելու լինի, բայց էլի վերջը բնութիւնն անդիմադրելի կերպով պահանջում է իւր իրաւունքները, և ինչպէս օճով փաթաթւած մանուկը զովայուցի։ քունն է ճաշակում, այնպէս էլ դաստալարտեալն է մէկ անգամ էլի նստում մահւան դուան առաջ և լաւ հանգստանում, ինչպէս թէ հեռու ճանապարհ զնալու լինէր։ Ելի մի բան, ևս ճանացում եմ մի աղջիկ։ դու նորան չես արհամարհիլ, որովհետեւ նա իմն էր։ Արդ նորան քեզ եմ յանձնում, մեռնում եմ խաղաղ։ Դու մի ազնիւ մարդ ես։ մի կին, որը նորան գտնէ, ապահով է։ Ապրում է իմ ծեր Ազոլֆը, նա աղմատ է։

Փերդինանդ: Այն առոյգ ծերունին, որ միշտ ձեզ ձիով ու ղեցնում էր:

Էզմինտ: Նա ի՞նքը:

Փերդինանդ: Նա ապրում է. նա ազատ է:

Էզմինտ: Նա գիտէ այն աղջկաց բնակարանը: Թող նա քեզ առաջնորդէ. և դու վարձատրիր նորան մինչև նորա կեանքի վերջը, որ նա քեզ ցոյց է տալիս ճանապարհը դէպի այդ գանձրւ ֆան բարով:

Փերդինանդ: Ես չեմ գնում:

Էզմինտ: (Նորան դէպի դուռը հրելով): Գնան բարով:

Փերդինանդ: Ո՛չ... թող էլի մեամ:

Էզմինտ: Բարեկամ, ոչ մի հրաժեշտ: (Ուղեկցում է մինչեւ զուրը, նորանից պոկում է, Ֆերդինանդն անդգայ՝ շտա պով հեռանում է. Էզմինտը մխայ-նով): Զարահոգի մարդու Դու չեիր կարծում ինձ այս բարութիւնն անել որդուդ միջոցով: Նորա միջոցով ազատ եմ ևս հոգսերից, ցաւերից, ամեն երկիւզալի զգացմունքից: Մեզմ ու առիսրով պահան-ջում է բնութիւնն իւր վերջին տուրքը: Անցաւ. վճռւած է: Եւ այն, ինչ որ վերջին գիշերը կասկածով ինձ մահմիս մէջ անկուն էր սրահում, հիմա քննեցնում է մոքերս անշաղթահարելի ստուգու-թեամբ: (Նստամ է մահմակալի վրայ. նւագ): Քաղցր քուն, դու դալիս ես ինչպէս մի կատարեալ բախտաւորութիւն՝ առանց որ խնդրեմ, առանց որ ազաշեմ, ամենայօժարաբար: Դու լուծում ես խիստ մոքերի հանգույները, խասնում ես ուրախութեան և արտնու-թեան բոլոր պատկերները. անխափան սահում է ներքին ներդաշ-նակութեան շըջանը և հաճոյական խելազարութեան մէջ փա-թաթւած՝ ընկղմում ենք և դադարում լինելուց: (Նա բնում է. նախ ուղեկցում է նորա նինջը. նորա անկողնի յետար կարծես պարխապները բաց-ւում են. մի հիմանալի տեսարան է ներկայանում: Աղատութիւնն երկնային հան-փերմում, մի լուսով պատած, հանգստանում է մի ամպի վրայ. Կլարայի զծագրու-թիւնն ունի, եւ խօնարհում է դէպի քնող ներսով: Մի ափսոսացող զգացմունք է պատպայտում. նա կարծես նորան ողբում է: Ծուտով սեղափում է եւ մի ոգեսորիչ շարժողութեամբ ցոյց է տալիս նորան սլաքների մի կապոց, ապա եւ մի գաւազան, պիսարկով: Նա ասում է նորան, որ ուրախ վնի եւ, հասկացնելով, որ նորա մահը նահանգներին ազատութիւն պիտի պարզեւէ, նանաչում է նորան իրքեւ յաղ-նոյ եւ տալիս է յաղթութեան սսակ: Երբ նա պատկով մօտենում է Էղ նանտի զըլ-

իսին, վերջինս մի շարժումն է; անում՝ ինչպէս մէկը քնած շարժում է, այնպէս որ բերանն ի վեր՝ դէմքով դէպի նա է պառկած։ Պատկը պահում է նորա գլխին ծածանելով։ Հեռւից լսեի է պատերազմական երգի ծայն, աղմուկ եւ սուլում։ Ամենամեծմ ծայնի հետ անհետանում է երևոյթը։ Զայն ուժեղանում է։ Եգմանալ զարթնում է։ Բանտը մէկից չսփառը լսուարուած է։ Առաջին շարժումով նո ծեռը զլուին է տանում։ Նա կանոնաւմ է եւ չուրչը նայում, ծեռքը գլխին պահած։

Անհետացել է պասկը։ Դու, գեղեցիկ ուրւական, օրւաց լոյսը քեզ  
խուճապեց։ Այն, նոքա էին, նոքա միացրել էին իմ սրոտի ամենա-  
քաղցը ուրախութիւնները։ Ասուածայն ազատութիւնն իմ սիրեկա-  
նից էր փոխ առել իւր կերպարանքը։ Դիւթիչ աղջիկը բարեկամուհու-  
երկնաշին հանդերձ էր հագել։ Նոքա միացած են երևում մի լուրջ  
վացրինում։ աւելի լուրջ, քան սիրելի։ Արիւնաբիծ կրունկներով  
նա առաջս գուրս եկաւ։ Նորա հանդերձի ծածանող ծալքերն  
արիւնաներկ էին։ Այն իմ արիւնն էր և շատ աղնիւների արիւնը։  
Ո՛չ, այն ի գուր չէր թափւած։ Ճեղքում անցնում է, քաջ ժողո-  
վուրդ։ Յաղթութեան ասուածն է քեզ առաջնորդում։ Եւ ինչպէս  
ծովը ճեղքում է նոյս ամբարտակները, այնպէս փշրեցէք, խոր-  
տակիցէք բանակալութեան արատնէշները, և խեղքելով՝ ի բաց ողո-  
ղեցէք նորան իւր տեղից, որը նա յաւակնել է իրան գրաւել։  
(Թարուկն աւելի մօսնում է)։ Կամիր, լսիր։ Քանի քանի անդամ կանչել  
է ինձ այս ձայնը՝ ազատ քայլելու դէպի կուտի և յաղթութեան  
դաշտը։ Ինչպէս աշխուժով քայլում էին ընկերներս այս վտանգա-  
ւոր բացց վասուաւոր ասպարիզում։ Խո մեռնում եմ ազատութեան  
համար, որի համար Խո ապրում էի և պատերազմում, և որին հի-  
մա զրհում եմ ինձ տանջւելով։ (Բեմի յետեւը բռնում են իսպանական զննոր-  
ները զինուած զեղարդներով)։ Այն, հաւաքւեցէք միասին, վակեցէք ձեր շար-  
քերը, գուք ինձ չէք վախեցնիլ։ Խո սովոր եմ տէգերի առաջ՝ տէ-  
գերի դէմ կանգնել և, չորս կողմից շրջապատւած սպառնալի մա-  
հով, սրտոտ կեանքը կրկնակի արագութեամք զգալ։ (Թարկահարում է)։  
Քեզ շրջասպատում է թշնամին ամեն կողմից։ Շողշողում են սրերը։  
Բարեկամներ, քաջացէք։ Հետներդ ծնողներ, կանացք, երեխաներ  
ունիք։ (Ցոյց տալով պահապաններին)։ Եւ սոցա շարժում է իշխողի լոկ։  
Խօսքը, ոչ իրանց սիրութ։ Պաշտպանեցէք ձեր սոտացւածքը։ Եւ ձեր  
ամենասիրելին ազատելու համար ընկէք ուրախութեամք՝ ինչպէս  
ես ձեզ օրինակ եմ տալիս։

(Թարկահարութիւն։ Երբ նա զնում է դէպի պահապանը և յանելի  
գոտոր, վարադոյրն իշխում է։ Նւազը խառնում է եւ դրաման վերջանում է  
մի յաղթական երդով)։

# ԸՆՁԵՆԱԿՈՐԾ

(Պ Օ Հ Մ Ա)

ՇՈԹԱ ՐՈՒՍԹԱԿԻԵԼԻՒ

Համառոս պատմածք

Յարութիւն Միրիմանեանցի

Ա.

ԱՐԱԲԻԱՑԻ ՐՈՍՏԵՒԱՆ ԹԱԳԱԽՈՐԻ ՄԱՍԻՆ

Արաբիայում երբեմն ապրում էր Ռոստեւան անունով մի բարի  
և ողորմած թագաւոր. նա ունէր մի անտեսաննման աղջիկ՝ Թի-  
նաթին անունով:

Թագաւորը իր կեանքի վերջին օրերում կանչեց իր բոլոր  
նախարարներին և յայտնեց՝ թէ թագաւորութիւնը իր ծերու-  
թեան պատճառով յանձնում է Թինաթինին: Նախարարները շատ  
այրեցին, երբ իմացան իրենց սիրելի տիրոջ մոտագրութիւնը. նրանք  
ասում էին Ռոստեւանին. «Տէր արքան, քո տւած վատ խորհուրդը  
լու է ուրիշի լաւիցը»:

Բայց Ռոստեւանը յետ չկանգնեց իր մաքից և Թինաթինին  
յայտարարեց գահակալ:

Այդ հրամանը ամենից շատ ուրախացրեց ամիր սպասալարի  
որդի Աւթանդիլին, որովհետեւ առ սիրահարւած լինելով Թինաթինի  
վրայ՝ առիթ կ'ունենար նրանից յետոց առէալ առէալ տեսնելու իր  
հոգեհասոր գահակալ սիրուհուն: Աւթանդիլը Ռոստեւան թագաւորի

որդեզիրն էր և սիրւած էր նրանից, ինչպէս հարազատ որդին Արաբիայում նրա նման գեղեցիկ և քաջ տղամարդ հազիւ թէ գտնւէր. նա զօրքի լնդհանուր-հրամանատար էր նշանակւած; Թագաւորի հրամանից յետոյ արաբական բոլոր իշխանները, դօրավետները և զօրքը եկան չնորհաւորելու Թինաթինի գահակալութիւնը; Ռուտեան թագաւորը նրանց ներկայութեամբ իր թագը դրեց Թինաթինի պլիսին և հռչակեց նրան թագուհին:

Թինաթինը իրան արժանի չէ համարում հօր գահը նստելու, ուստի լրիկ լալիս էր: Հայրը նկատելով իր աղջկայ արտասուքը՝ խրախուսեց նրան և ասաց. «Կառավարիր ժողովուրդդ ազնւութեամբ, կերուխումի ետուից մի լնինիլ, նրանից օգուտ չկայ. ինչ որ ողորմութիւն տալու լինես, իմացիր, որ միայն այդ տւածն է քոնը. մնացած բարիքդ կորած է. և, ինչպէս արել միակերպ տաքաց նում է թէ վարդը և թէ աղբը, զու էլ այնպէս, դսորիկս, հաւա ասրապէս դատիր և խղճակ մեծ ու փոքրին»:

Այդ խրատից սիրտ առած, Թինաթինը բացեց գանձարանը և առատութեամբ սկսեց փող բաժանել հպատակներին, իսկ յետոյ սարքեց մի արքայավայել լինձոյք: Խնձոյքի ժամանակ ամենքն էլ նկատեցին, որ Ռուտեան թագաւորը սաստիկ տիսուր է: Աւթանդիլը և աւաղ-վեղիր Սոկրատը կամենում էին իմանալ այդ տիսուր թեան պատճառը և մի կերպ ուրախացնել թագաւորին: Սրանք լոյնելով հազար լինչէները, մօտեցան թագաւորին, չոգեցին նրա առաջ և հեգնօրէն ասացին.

— Ինչու ես տիրել, տէր, երեխ թագուհու առատաձեռնութիւնն է ձեր տիսուր թեան պատճառը. տէր արքայ, մի՞թէ նա քու լնորածը չէ, մի՞թէ քո խորհրդով չի կառավարում: Վերջը Աւթանդիլն առանձնապէս աւելացրեց. «Տէր, թոյլ տուր ծառայիդ մի երկու խօսք ասելու, — լինձոյքից յետոյ արի մրցենք նետաձդութեան մէջ բոլոր զօրքերի ներկայութեամբ»:

Թագաւորը լսելով այդ՝ ժապաց և ուրախ-ուրախ հրամայեց պատրաստել անտառում նետաձդութեան տեղն և նետաղեղները: Փառաւոր հանդիսով ամենքը դուրս գնացին անտառը մրցման ներկայ լինելու ու զւարճանալու: Մըցումից յետոյ բոլոր զօրքերը վկայեցին, որ Աւթանդիլի նետերից ոչ մէկն էլ չվրիպեց և նրա սպա-

նած որսերի թիւը աւելի շատ է, քան թագաւորինը։ Թագաւորը յաղթւած էր։

Պոստևանի երեսից թափիծն անցաւ։ Նրա տխրութեան պատճառը նետաձութեան, գնդակի և այլ խաղերի մէջ իր նմանը չունենալն էր. իսկ այժմ թագաւորը ուրախացաւ, որովհետեւ Աւթանգիլը խաղերի մէջ բռնեց նրա տեղը։

Բ.

### ԲՈՍՏԵՒԱՆԸ ՏԵՍՆՈՒՄ Է ԸՆՉԵՆԱԿՈՐԻՆ

**Այդ** խաղից յետոյ Պոստևանն և Աւթանգիլը տեսան ջրի ափին նստած մի երիտասարդ, որ հագած ունէր ընձու<sup>1)</sup> մորթուց վերարկու և գլխարկ, ձեռին բռնած բազուկի հաստութեամբ մի մորակ։ Նա լալիս էր աղիողորմ ձայնով։ Թագաւորը իսկոյն ուղարկց իր ծառաներից մի քանիսին իմանսալու այդ երիտասարդի ով լինելը և լալու պատճառը։ Ընձենաւորը նրանց վրայ իսկի ուշագրութիւն էլ չըտրածեց. Նա շարունակում էր աղի արցունքներ թափել։ Ծառաները վերադարձան թագաւորի մօտ և յայտնեցին, որ լնձենաւորը նրանց ոչ մի հարցին չպատասխանեց և իրանց վրայ էլ չնայեց։ Պոստևանն աւելի հետաքրքրւեց և այս անգամ տաներկու սպառազինւած ծառայ ուղարկեց՝ պատւիրելով հանդերձ հակառակ դէպքում բռնել նրան և բերել իր մօտ։

Ընձենաւորը տեսնելով նրանց, արտասուքը սրբեց և վայ կանչելով սուրը հանեց, յարձակւեց նրանց վրայ ու բոլորին կոտորեց մի հարւածով։ Պոստևանն և Աւթանգիլը այդ նկատելով, շուտափոյթ առաջ գնացին. բայց մինչև սրանց հասնելը, ընձենաւորը հեծաւ իր սև ձին և անհետացաւ։ Թագաւորը չիմանալով՝ թէ ով էր այն մարդը, ինչու էր լալիս կամ ինչ էր ուզում, սաստիկ տիրեց։ Նա առանձնացաւ բոլորովին և ընկաւ խոր մոտածմունքի մէջ։ Նա ոչ ոքին չէր լնդունում իր մօտ, բացի թագուհուց և Աւթանգիլից։ Մի անգամ Թինաթինը հարցրեց հօրը նրա տիրութեան պատճառը։ Պոստևանը համբուրելով իր աղջկան պատմեց պատճառը։ Թինաթինն ասաց.

<sup>1)</sup> Լնձը—վագրին ցեղակից մի կենգանի է։

— Հալրիկ, եթէ ընձենաւորը մարդ էր՝ ուրեմն հնարք կայ գտնելու նրան, հարկաւոր է միայն մարդիկ ուղարկել որոնելու։ Իսկ եթէ նա մի երեսչ էր կամ սատանաց, չարժէ ացդքան տիրել, որովհետեւ նա, երեխ, կամեցել է քո ուրախութիւնը խանգարել։

Ռոստեանն ընդունելով գտներ խորհուրդը, ամեն կողմ խնդրականեր ուղարկեց գտնելու ընձենաւորին, բայց ոչ մի տեղից նոյն իսկ լուր էլ չկարողացան բերել նրա մասին։ Ծեր թագաւորը դրանով բաւականացաւ և մոռացութեան տեց։

Քիչ ժամանակից յետոյ թագուհին կանչեց Աւթանդիլին իր մօտ և ասաց.

— Քաջ գիտեմ, որ զու ինձ սիրում ես. իմացիր ուրեմն, որ ես էլ նոյնչափ սիրում եմ քեզ. իսկ եթէ զու գտնես այն անյալու մարդուն և իմանաս նրա պատութիւնը՝ ազնիւ խօսք, որ ես ընդմիշտ քոնը կը լինեմ. գնա, քեզ երեք տարի ժամանակ. Ասու ածքարի ճանապարհ տաչ...

Աւթանդիլը, լսելով այդ բոլորը, ուրախութիւնից ոտի վրայ չէր կարողանում կանգնել, ուստի շուտով մնաս բարեւ ասելով գուրս փախաւ և ուղղակի զնաց իր հաւատարիմ ծառայ Շերմադինի մօտ նա նրան յանձնեց ամբողջ զօրքը և մի նամակ էլ թողեց իր սոսրադրեալների անունով, որով նրանց հրամայում էր հաւատարիութեամբ ծառայել Շերմադինին, թէ տանը և թէ պատերազմում. իսկ Ռոստեանին յայտնեց, որ իբր թէ զնում է թշնամիներին իմաց տալու Թինաթինի գահակալութեան մասին։ Թագաւորը համբուրելով արձակեց նրան։

Դ.

### ՍԻԹԱՆԴԻԼ ՈՐՈՇՈՒՄ Ե ԸՆՉԵՆԱԽՈՐԻՆ

Աւթանդիլը ընձենաւորին գտնելու համար, էլ սար ու ձորդ գիւղ ու քաղաք ու տեղ չթողեց երկնքի տակին, որ չորսներ. բայց նա կարծես թէ չքացել էր աշխարհի երեսից։ Ընձենաւորը չկարու չար; Անցել էր երկու տարի և իննը ամիս Աւթանդիլը խոցւած և վը տաքեկ սրտով մոռածում էր. և երեխ մերոնք ինձ արդէն մեռեալների կարգն են դասել և սուգ կատարել ինձ վրաց. ինչ երեսով այժմ տուն դառնամ և ինչ պատասխան տամ սիրուհուտն Այս տեսակ

մտածմունքների մէջ ընկղմւած՝ նա կանգնեց և զգաց, որ ինքը վաղուց անօթի է։ Նա խկոյն սպանեց նետով մի երե, հրահան ու կաշճքարով կրակ արեց և նստեց ճաշելու։ Նժոյգն էլ մօտը կապեց կանաչ խոտում։ Այն ձորում, ուր Աւթանդիլը ճաշում էր, երկեցան երկու միրուքաւոր մարդ. դրանք ձեռքերի վրաց բերում էին մի վիրաւորւած պատանի։ Երբ սրանք մօտեցան, Աւթանդիլը հարցրեց. «Ո՞վ էք» և պատրաստուեց կուելու նրանց հետ, կարծելով թէ նրանք աւաղակներ են։ Նրանք պատասխանեցին. «Օգնիր, թէ կարող ես. մենք երեքս էլ եղբայրներ ենք. այսօր դուրս եկանք դաշնու ու անտուռը որսի և մի փոքր գւարձանալու։ Որսը վերջացնելուց յետոյ մենք զինւորներին ճանապարհ գցեցինք ու սկսեցինք մրցել իրար հետ զանազան խաղերում. այդ միջոցին մենք տեսանք ընձու մորթի հագած մի ձիաւոր։ Գրաւելով նրա գեղեցկութիւնից, մենք փորձեցինք բռնել նրան. իսկ նա, հարւածելով, զետնովը տւեց այս փոքրին և իր լայնապինդ մորակով ճեղքեց սրա զլուխը այնպէս, որ խեղճի գլխակաշին մաշկւեց, և ապա սլացաւ, ահա դէպի այն կողմ։ Այդ ասելով նրանք մատնացուց արին ընձեռաւորի արշաւած ճանապարհը։

Աւթանդիլը, որդեկորոյս մօր նման, ուրախութիւնից արցունքներ թափելով, ասաց.

— Ինչպէս Ասուած ինձ հասցրեց իմ նպատակին, այնպէս էլ թող նա ձեր եղբօր առողջութիւն պարգևել։

Այս ասելով նա խկոյն մորակեց ձիուն և սլացաւ դէպի այն կողմը, ուր անյայտացել էր ընձեռաւորը։ Աւթանդիլը վերջ ի վերծոյ հասաւ մի քարայր, այդտեղ իջաւ իր ձիուց, բարձրացաւ. ծառի վրայ և թաք կացաւ նրա ճիւղերի մէջ։ Ահա երեաց և լնձենաւորը։ Լսելով նրա ձիու դոփիւնը, քարայրից դուրս եկաւ մի աղջիկ, առաւ ձին ու տարաւ ախոռատուն։ Միւս օրը լուսանալուն պէս ընձեռաւորը հեծաւ ձին ու անհետացաւ։ Աւթանդիլը, որ ամբողջ գիշերը ծառի վրաց մնաց, նկատելով նրա հեռանալը մտածեց.

— Այժմ ժամանակ է մանելու այս աղջկայ մօտ և իմանալու ան զարմանալի մարդու պատմութիւնը։

Այս ասելով՝ իջաւ ծառից։ Աղջիկը նրան տեսնելուն պէտ վախեցաւ։ Աւթանդիլն ասաց.

—Մի վախենալ, ես մի հասարակ հողեղէն եմ, խնդրում եմ, իսկըն Սատուծոյ, ասա՞ ինձ՝ ո՞վ է այն ձիաւորը, որ այս բոպէիս հեռացաւ այստեղից։ Աղջիկը պատասխանեց։

—Եթէ քաջք ես, հեռացիր, իսկ եթէ մարդ ես՝ հարիւր անգամ էլ, որ խնդրես այն մարդու պատմութիւնը, ես «ոչ» պիտի պատասխանեմ։

Աւթանդիլը՝ տեսնելով, որ խնդրելով ոչինչ չի լինում և իր յօյսերը ջախչախւում են, մահ սպառնաց աղջկան։ Աղջիկը սառնարտութեամբ նկատեց։

—Սպանիր, եղբայր, բարութիւն արած կը լինես. վաղուց է տանջւում եմ և սպառում մահւանս հրեշտակին, բայց տարաբարդար նա չկաց։

Յուսակտուր Աւթանդիլը այդ խօսքերից սկսեց երեխի նման հեկեկալ և ասել՝ թէ թնջն է ստիպում իրան այլպէս անելու, ով է իրան ուղարկել, և թնջու համար է այսպան թափառում ու զեղերում։ Աղջկայ գութը շարժեց լսելով նրա պատմութիւնը, որովհետեւ համանման դէպքերը կաշկանդել էին և ընձենաւորին նա Աւթանդիլին խոստացաւ բանը այնպէս յարմարեցնել, որ ինքը ընձենաւորը անձամբ պատմի իր զլախ անցածը և ով լինելը

—Սիրահարին գաղանն էլ խղճում է, վերջացրեց Ասմաթը (այսպէս էր այն աղջկայ անունը)։ Ասմաթը, Աւթանդիլին կուշտ իւրակրելուց յետոյ, թաքկացրեց նրան քարայրում։

Դեռ նա տուն չէր մտել, ահա լսւեց ընձենաւորի ձիու պահունակ տեսնելը ցաւ պատճառեց ինձ և դրա համար էլ վերադաշտուածութիւնը անձամառը։ Տարիէլը (այսպէս էր կոչւում ընձենաւորը) պատասխանեց։

—Պատահեցի մի թագաւորի որս անելիս, մարդկանց կերպարանք տեսնելը ցաւ պատճառեց ինձ և դրա համար էլ վերադաշտուածութիւնը անձամառը։

—Զարմանալի բան է, վայրենիների հետ մանգալը քեզ դուր է դալիս, իսկ մարդկանց կերպարանքից խորշում ես և օրըսորի մաշւում ու հիւծւում։ չեմ կարող ծածկել քեզնից, մեզ մօտ մողեղէն կայ, յուռով եմ, որ վեաս չես տալ նրան և սիրով կ'ըլունես, պատասխանեց Ասմաթը։

—Ցոյց տե՛ր, ուր է, ոչինչ չեմ անի, կը պատմեմ անցածս

և պատմել կ'տամ իր մասին, կարելի է դրանով մի կերպ թեթեւանան վշտերս։ Ասմաթը դուրս բերելով քարայրից Աւթանդրլին՝ բերեց նրան Տարիելի մօտ։ Տարիելին և Աւթանդրլը գրկախառնեցան հարազատ եղբայրների նման և սկսեցին լալ։ Աւթանդրլը մի առ մի պատմեց իր մվ լինելը, թափառելու նպատակն և ացն։ Տարիելը լսելով այդ բոլորը, ասաց։

—Դու նախ կառարել ես աիրոջդ կամքը սրբութեամբ և ինչ զաել. և երկրորդ, քանի որ դու ինքդ էլ նոյն բովի մէջն ես խորվլում ինչպէս և ես, ուստի լսիր պատմութիւնս։ Խակ դու, Ասմաթ, բեր մի ամանով ջուր և քիչ քիչ ածա եռացող սրոիս վրայ. և հոգոց հանելով ընձենաւորը (Տարիել) սկսեց պատմել հետեւալը։

Դ.

### ԸՆՉԵՆԱԽՈՐԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

«Հնդկաստանը բազկացած էր եօթ թագաւորութիւնից, որոնցից վեցը Փարսադան հզօր թագաւորին էր պատկանում, իսկ եօթնիրորդը իմ հօր՝ Սարիդոնին։ Հայրս ծերութեան պատճառով չէր կարողանում կառավարել մեր երկիրը. ուստի գեսպաններ ուղարկեց Փարսադանի մօտ և իր թագաւորութիւնն յանձնեց նրան։ Նա շատ սիրով ընդունեց մեղ և հօրս նշանակեց ամիր-բար, այսինքն՝ իրանից յետոյ երկրորդը և Հնդկաստանի զօրքերի ընդհանուր հրամանաւոր, այն է՝ ամիր-սպասալար։ Փարսադանը ժառանգ չունէր, ուստի երբ ես ծնւում եմ, շատ է ուրախանում և ինձ որդեգրում է։ Դեռ հինգ տարիս ըլլացած իմ խնամակալս ունենում է մի աննման գեղեցկատեսիլ դուստր։ Խնչպէս լոյսը խաւարից գեղեցիկ է ու սիրուն, այնպէս էլ նեստան-Դարեջանը (այսպէս էր կոչում նորածինը) ամենից չքնաղն ու գեղեցիկն էր. սրան կարող է վկայել նաև Ասմաթը։ Երկար ուրախութիւններից և խրախնակըներից յետոյ ժողովրդին բաժանեցին ահազին քանակութեամբ ոսկի և արծաթ։

Ինձ և նրան, քրոջ և եղբօր պէս միասին էին կրթում։ Երբ լուսնանման արքայալուստորը եօթ տարեկան դարձաւ, Փարսադան թագաւորը նրա համար կառուցել աւեց մի գեղեցիկ աշտարակ իր բուրաստաններով և մինարէթներով ու մեղ անջատեց միմեանցից։

Նեստան-Դարեջանի կրթութեան զեկը անցաւ նրա հօրաքոյր այրէ Դաւարի ձեռքը: Սրան մարդու էին տւել Քաջաստանում, որտեղ և այրիացել էր: տասնհինգ տարին լրանալուն պէս վախճանւեց հայր: Նրա մահը ինձ ամբողջ կ տարի սաստիկ վիշտ պատճառեց. օր ու գիշեր լալիս էի: Դաւարը բաւականին զարգացած և իմաստուն կի՞ էր: Այս Ասմաթին էլ նշանակեցին անտես-անման Դարեջանի համար նաժիշտ: Տասներկու տարեկանից սկսած ես նետաձգութեան և գնդա կահարութեան մէջ մրցող չունէի:

Երբ լրացաւ սգիս տարին, Փարսադան թագաւորը մարդ ուղարկեց մօտս յայտնելու. Շնաւական է որդի, որքան ողբացիր, ել և ստանձնիր հօրդ պաշտօնը: Ես համաձայնւեցի:

Մի անգամ ինձ Փարսադան թագաւորը որսի հրաւիրեց: Վերադարձին թագաւորն ասաց. «Դնանք աղջկաս տեսնենք և երէ տանենք նրա համար: Ես սրահում սպասեցի: Այդ սրահը կառարեալ գրախտի նման էր: Ծառերի միջին երգում, ճախրում էին սիրուն թռչունները Պարտէզը պատած էր արմաւենիներով, նրա միջին շինած էր մի հիանալի վարդաշրի բաղնիս: Երբ Ասմաթը թագաւորի հրամանով եկաւ, երէն ներս տարաւ, վարագոյրը յետքաշելիս ես տեսայ Նեստանին և ուշաթափւեցի: Ուշքի գալով ինձ գոռայ ննջարանում: զլիսիս մօտ նստած էին թագաւորն ու թագուհին: Երբ մի քիչ կազզուրեցի, ծառաները յայտնեցին թագաւորին իմ առողջութեանս մասին: Նա ուրախութիւնից զլսարաց վազեց մօտս և ինձ տարաւ զբօսանքի. աղա սարքեց իրախճան ու առատութեամբ գանձ բաժանեց որբերին և այրիներին:

Նեստան-Դարեջանը ուշաթափւելս նկատել էր և, որովհետի առաջուց էլ սիրահարւած է եղել վրաս, ուստի աւելի ևս բորբուժում է նրա սէրը. Նա բաց առ բաց չէր կարող իր սէրը յայտնել, ուստի խոստովանում է Ասմաթի մօտ և ահա իննոցքին ծառան յայտնում է ինձ, որ մի ինչ որ աղախին կանչում է ինձ: Ես իսկոյն դուրս գնացի և տեսայ, որ Ասմաթն էր, նա ինձ մի նամակ յանձնեց. այդ նամակում աննմանս գրում էր.

Արիացիր, մի վհատւիր, ես քոնն եմ, եթէ չմեռայ. գէպի ինձ տածած սէրդ այն ժամանակ կտրող ես ցոյց տալ ի գիտութիւն ամենքի, երբ մեր հարկատու Խատաւցիներին, որոնք նորերս ապ-

տամբւել են, կը ճնշես: Գիտցիր, որ վազուց սիրում եմքեզ. ու սի աշխատիր պարզերես զուրս գալ Խատաւցիներից:

Ես գրած պատասխանովս հնազանդութիւնս ու համաձայնութիւնս յայտնեցի, շարունակեց լնձենաւորը և նամակը Ասմաթի ձեռքով ուղարկեցի սիրուհուս:

Խատաւցիների թագաւորին նամակ ուղարկեցի, յայտնելով, որ նամակս ստանալուն պէս գայ և հնազանդութիւնս ու պատերազմ ենք մզելու: Առաջուց էլ զգուշացրի պատերազմի համար, որ յետոյ տմարդի տեղ չդնէր մեզ և չասէր թէ՝ գաղանագողի յարձակւեցանք իր վրայ:

Նամակիս պատասխանին էի սպասում, երբ մի անգամ Ասմաթից ուղարկած ծառան ինձ մի նամակ տւեց: Ասմաթը զրում էր. Թրափդ վարդը քեզ կանչում էս: Ես իսկոյն քայլերս ուղղեցի դէպի սրահը և երբ Ասմաթը վարագոյրը յետ քաշեց՝ իմ ու սիրուհուս հայեացքները հանդիպեցին իրար: Երկուս էլ ամաչեցինք և կարմրեցինք: Նկատելով այդ, Ասմաթն ասաց. «Ետ դարձիր, այժմ առ էլ է. ամաչումն»: Դրանից յետոյ ես Ասմաթին խնդրեցի, որ ինձ շարունակ նամակ գրի աննմանիս մասին: Քիչ ժամանակիդ յետոյ Խատաստանի թագաւորից պատասխան ստացաց. նա գրում էր. «Ենք, ձեզ սպասում են մեր պատրաստի զօրքը և ամուր բերդերը. ով էք դուք, մենք ճանաչել անգամ չենք կամենում ձեզ և միս անգամ զգուշացէք այդպիսի յանդուգն նամակ զրելուց»:

Կարգալով այդ, ես իսկոյն պատերազմի պատրաստութիւն տեսայի: Գնալու ժամանակ Նեստան-Դարեշանը ինձ իր մօտ կանչեց և ասաց. «Արիացիր, Աստւած տայ, որ յաղթես Խատաւցիներին, ես չեմ դաւաճանիլքեզ. հակառակ դէպքում Արարիչն ինձ հող դարձնիս»:

Առաջ խաղալով երեք օրից յետոյ հասանք պատերազմի դաշտը. Խատաւցիների Շամազ թագաւորը զեսպան էր ուղարկել մեծաքանակ լնծաներով ինձ յայտնելու, որ ինքը դալիս է հալատակութիւն ցոյց տալու. բայց մի բարի մարդ նրանց կողմից գորքը առաջ բերել և վրաս յարձակւել: Այդպիսով այն բարի մարդը հատուցեց ինձ այն երախտիքը, որ հայրս ունեցել էր նրա վրայ, ինչպէս ինքն էր ասում:

Այդ լսելով, ևս հրամացեցի թմբուկներ զարկել և առաջ խաղալ։ Միմեանց յետեւից քաղաքներ վերցնելով, վերջ և վերջոց Բամագին սահմագեցի յանձնել ինձ նշանաւոր քաղաքների և բերդերի բանալիները ահագին հարստութեան հետ միասին։ 10,000 ջորի և ուղու ուղարկեցի Փարսադանին գանձով բարձած։ Բամագից մըշտական հպատակութեան պայման վերցնելով՝ ևս դարձայ տուն։ Փարսադանը մեծ պատւով ու շուքով ընդունեց ինձ և ի արատի։ ինձ սարքեց մեծ խնճոցք և որս։ Խնճուքին ներկայ էր և նեստանը Մենք, ինչպէս ասում են, այդ խնճուքին կշտացանք իրար նայելոց։

Խրախճանքից յեւոյ սիրուհիս ինձնից նամակով ուղեց այն թանկագին քօղը, որ ես ձեռք էի բերել պատերազմում, և որպէս սիրոյ գրաւական՝ ինքն էլ ինձ մի վահան է։ ուղարկել։ Ես, բայի քօղից, ոսկեկար քուլաջան էլ ուղարկեցի նրան։

Չանցաւ մի քանի օր, բարերար խնամականերս կանչեցին ինձ և ասացին. «Ենքդ լաւ գիտես, որդի, որ մենք արու թագաժառանգ չունինք, ուստի կամենում ենք նեստանին մարդու տալ և գահն էլ փեսացուին յանձնել. դու ինչ խորհուրդ կը տաս։

Թանկագին ընկեր, ասաց Ընձենաւորը Աւթանդիլին, որ լսում էր խորին ուշադրութեամբ, այդ խօսքերից յետով, դրզն ընկալ ջանս ու թռուացայ. բայց նկատելով, որ նրանք զրական կերպով վճռել են, ևս էլ չընդդիմացայ ու հաւանութիւն տւի։ Իբրև ամենից յարմար փեսացու խնամականերս Խւարազմստանի արքայակնին էին ընտրել ու արդէն միջնորդ էլ ուղարկել։ Կայծակնահար դարձայ տուն և օրէցօր սկսեցի հալւել մաշւել, ինչպէս մտշւում է կրակից ամենայն ինչ։ Խոյն երեկոյեան Ասմաթից նամակ ստացայ, անտեսաննամանը ինձ կանչում էր։ Գնամ տեսնեմ ինչ. Նեստանը կատաղած վագրի նման ընծայած քօղս երեսին գցած ու թեկն ընկած հեկեկսում էր։ Ինձ տեսնելով ուղղեց և վշտացած ձայնով ասաց։

—Զարմաննում եմ թէ ինչ երեսով մտար այստեղ, այդ դաւաճան և ուխադրուժ. բայց քաջ յայտնի լինի քեզ, սուախօս, որ փուարէնը Աստւածանից պիտի ստանաս։

Ես, չհասկանալով բանի էութիւնը, ասացի.

—Յանցանքս ինչ է։

—Միթէ դաւաճանն ու խարդախը արժանի է բացատրութեան. զու ինձ կրակ տւիր ու հեռացար. մի՞թէ չգիտես, ո՞յ ինձ կամենում են սուալ Խւարազմառանի թագաժառանդին, զու ուր էիր հաւանութիւն տալիս ծնողացս ազդ բանին:

Դրանից յետոյ նա ինձ ցիշեցրեց թէ ինչպէս ևս ուշաթափւեցաց նրան առաջին անգամ տեսնելիս. ապա աւելացրեց. «Որովհետև զու ինձ դաւաճանեցիր, ուստի ես էլ ոչ քեզ եմ ուզում, ոչ էլ նրան. միայն իմացած կաց, որ զու կենդանի չես մնալ Հնդկաստանում»:

Եթէ լսեցի, որ նա ուրիշին էլ չի ուզում, ես մի քիչ ուրախացաց, պատճառ, որ ինձ ուրիշի հետ չէր փոխում. Դրաւունք ինդրելով նրանից բացադրութիւն տայնու, ես յայտնեցի, որ ոչ մի կիրակ չէի կարող ընդդիմանալ, որովհետև նրա ծնողները դրականապէս վճռել էին արդէն:

Ես, ասացի չքնազեղին, ոչ մի ժամանակ չեմ դաւաճանել և ոչ էլ կը դաւաճանեմ մինչեւ որ շունչս բերանիս է. զու ես իմ կեանքս ու սրտիս վարդը: Նա այդ խօսքերի վրայ մի քիչ ժպտաց և առաջարկեց խորհուրդ անել թէ ինչպէս առաջն առնել մեզ երկուսիս սպանացող վոտանդի դէմ: Մի քիչ խորհուրդ անելուց յետոյ վըճացինք, որ ես սպանեմ արքայազնին նախքան ոլսակւելը:

Այդպէս էլ արեցի: Փեսացուն հարսանիքի գիշերը բանակ էր դրել մեր քաղաքի դռների մօտ. ես դիշերով հարիւր կտրիմով անցաց բանակի միջով և, արքայազնի վրանը մտնելով, նրան այնքան աւի պատերովը, որ ինչպէս հոգին աւանդեց:

Պահապաններն աղմուկ բարձրացրին. բայց ես քաջերիս հետ դուրս պրծաց և ուղղակի փախաց բերդը: Իմ բարերար Փարամանը երկրորդ օրը մարդ ուղարկեց. ինձ ասելու.

—Այս ինչ բան բերիր դլիսիս, ինչու ուրախութիւնս սգի փոխեցիր, որդիի. եթէ աղջկաս սիրում էիր, ինչու առաջուց ոչինչ չանցիր և ինչու Խւարազմների մեջքը զգիս բարձեցիր:

Ես պատասխան ուղարկեցի ասելով.

—Արու ժառանգ չունենալուդ պատճառով Հնդկաստանը ինքնըսպինքեան իմն էր, ուստի ինչպէս կարող էի թողնել, որ մի ուրիշ տիրապետէր, քանի սուրս մէջքիս էր. և երկրորդ, մի՞թէ ես կը թողնէի որ իմ սիրաս (Նեստան) ուրիշը տանէր:

Ե.

## ՆԵՍՏԱՆ-ԴԱՐԵԶԱՆԻՆ ՓԱԽՑՆԵԼԸ

Ամդ անցքից յետոյ ես զրկւեցի սիրուհուս տեսութիւնից:  
 Մի անգամ տիտոր-տրտում դուրս գնացի դաշտը և ահասա,  
 մատնացոյց անելով մօտը նստած Ասմաթի վրայ, արագաքայլ հա-  
 սաւ ինձ և ասաց. «Թագաւորը վճռեց քեզ սպանել, արքայ-  
 ազնին սպանելու պատճառով, սաստիկ էլ զայրացաւ, որ կանչելուն  
 պէս դու չներկայացար. խստիւ յանդիմանեց նաև իր քրոջ  
 Դաւարին, որ իր թուլութեամբ ձեր սիրահարութեանը նպաստոց:  
 Փարսպան թագաւորը վճռել է նրան էլ սպանել: Դաւարն էլ,  
 ոխը հանելու համար, հրամայեց երկու ստրկին, մի նաւակ պատրաս-  
 տել. մինչ նրանց սպարաստելը նեստանին ծեծով կապտացրեց և  
 յանձնեց նաւավարներին: Նաւում նստացնելու ժամանակ նեստանը  
 փորձեց զանակով վերջ տալ իրան, բայց չչաջողւեց. վերջը ինձ  
 խնդրեց, որ սպանեմ իրան, բայց ես ոչ թէ սպանեցի, այլ երդեցի  
 մինչ կեանքիս վերջը փնտրել նրան և գտնել: Մինչ նրան կը փախ-  
 ցնէին՝ Դաւարը անձնասպանութիւն զործեց:

Այդ բոլորը լսելուն պէս ես սպառազննեցի և վաթսուն կորիմով  
 ճանապարհ ընկայ:

Ամբողջ սասներկու ամիս որոնեցինք, բայց լուր էլ չառանք նրա  
 մասին: Ամենքը թողին ինձ բացի Ասմաթից և երկու ծառացից:  
 Քսան ամիս ծովի վրայ շրջագայելուց յոգնելով, դուրս եկայ ափ ու  
 մի ծառի տակ քնեցի: Յանկարծակի աղաղակը զարթեցրեց ինձ  
 խսկոցն, վեր թռայ և տեսայ ու ձիու վրայ նստած մի վիրաւոր  
 մարդ, ձեսին սրի կտոր բռնած: Մօտեցայ և հարցրի թէ ովէն նա:

Վիրաւորը ինձ պատմեց, որ ինքը Մուլզազանզարի նուրեղին-  
 Փրիդոն թագաւորն է. նրա պապը այն երկիրը բաժանել էր իր  
 երկու որդոց մէջ, այն կղզին իր լաւ որսավացրով ընկել է Փրի-  
 դոնի հօրը, բայց հօրեղբօր որդիք թշնամնօք վիճելի են համա-  
 րել այդ կղզին. ուսաի որսից ետ դալիս հօրեղբօր որդիքը կը...  
 րում են Փրիդոնի առաջ: Վերջինս թողնում է նաւը և նստում  
 ձիու վրայ ու լողալով դուրս գնում, այնուամենայնիւ նրանք հաս-  
 նում են, վիրաւորում Փրիդոնին և սուրն էլ կոտրում:

— Իսկ դուք հվերք, հարցրեց ինձ վիրաւորը:

Ես յայտնեցի, որ իմ գլխիս անցածը պատմելու համար հարկաւոր է բաւական երկար ժամանակ: Նրա հետաքրքրութիւնը շարժեց ու ինձ սարաւ իրանց փոքրիկ, բայց սիրուն քաղաքը և մեծ հիրասիրութիւն ցոյց տւաւ: Մանրամասութեամբ պատմեցի անցեալս:

Մենք այնքան բարեկամացանք իրար հետ, որ մի կարծ ժամանակից յետոյ ահազին պատրաստութեամբ գնացինք Փրիդոնի հօրեղբօր որդոց դէմ կոււելու: Ես և իմ նոր բարեկամը կարծես թէ մըր ցում էինք իրար հետ քաջութեան մէջ: Յաղթելուց յետոյ հօրեղբօր որդոց կապած բերինք Մուլզազանզար քաղաքը: Ամենքը զարմացան և սկսեցին գովել մեր քաջութիւնը: Սկսեց մի աննման խրախճանք, ուր, սակայն, ես վշտացած լուռ էի բոլորովին, որով հետեւ իմ մտածմունքը միայն նա էր:

Մի օր գնացինք որսի, հասանք մի ծովափի. նայելով ծովին Փրիդոնն ասաց «Յիշում եմ, այստեղ էր, որ մի անգամ տեսայ մի ինչ որ սե բան. մօսինալով, նկատեցի մի նաւակ երկու արաբով: Այդ արաբները նաւակից դուրս հանեցին մի գեղանի լուսնանման աղջիկ, բայց նկատելով, որ ես նայում եմ իրանց և հետևում, առաջ կորեցին և անհետացան»:

— Սիրելի Աւթանդիլ, ասաց հառաչելով Ծնձենաւորը, ծնկներս թռւցան, երբ այդ լսեցի. իսկ խեղճ Փրիդոնը գլխին վայ էր սալիս և տում: Վայ ինձ, ինչու արտմեցրի քեզ:

Փրիդոնը նկատելով իմ ախուվախը սկսեց հանգստացնել ինձ ասելով.

— Այս քաղաքը ամեն տեսակ լուրերի կենտրոն է և աշխարհի չորս կողմից այստեղ նաւեր են գալիս, հանգստացիր, անպատճառ մի բան կ'իմանանք սիրուհուդ մասին:

Երկրորդ օր Փրիդոնը նաւավարներ ուղարկեց ամեն կողմ Նեստանի հետքը գանելու, բայց զուր, աննմանս ինձ համար անդառնալի կը կովզ կորած էր: Յոյս կարեց, ուսաի իննդրեցի Փրիդոնին, որ ինձ արձակի: Մեծ դժւարութեամբ և լաց ու կոծով բաժանւեցինք միմեսնցից: Ես նորից որոնել սկսայ նրան, սակայն ոչ մի հետևանքի չհասայ:

Վերջապէս հասայ այս ազըք, այստեղ ապրում էին հականեր. նրանցից մի քանիսին սղանելով, մի քանիսին էլ փախցնելով մնացի մենակ Ասմաթիս հետ թէ սրան և թէ երկու մնացած ծառաներիս շատ խնդրեցի՝ վերադառնալ հայրենիք. բայց ծառաներս յանձն չառան և հակաների հետ կւեկիս երկուսն էլ սպանւեցան:

Ահա նրանից յետոյ խորշում եմ մարդկացին կերպարանքից, սիրում եմ վայրենի տեղեր և գաղաններ:

Ակրուհուս երեսը ընձու նման գեղեցիկ լինելու պատճառը հազար եմ ընծու միջթիւ:

Տարիէլը, վերջացնելով իր ողատմութիւնը, էլ չգիմացաւ. արցունքների կազմիներ էին, որ թափւում էին նրա աչքերից Ասմաթը նրան յոյս էր տալիս և մխիթարում:

Սրբելով արտասունքները նա ասաց Աւթանդիլին. —

— Դարձիր, եղբայր, արևիդ մօտ. որովհետև մօտ է տեսութեանդ ժամը:

Աւթանդիլը ողատասխանեց.

— Ես չեմ կարող բաժանել քեզնից. եթէ բաժանեմ նոյն իսկ, աչքերս չեն ցամաքիլ. մի՞թէ չես լսել, որ երբ զովելի բժիշկը հիւանդանում է՝ նրա զարկերակը ուրիշն է տեսնում:

Այդ գիշեր, քնելու ժամանակ, երկուսն էլ երդմամբ եղբայրացան: Լուսաբացին Աւթանդիլը բաժանեց նրանից Հեռանալիս նա Ասմաթին ասաց. «Քոյցիկ, երկու ամսից յետոյ կը զամ ձեզ տեսութեան. իսկ եթէ չեկայ, իմացէք, որ փորձանքի եմ հանդիպել»:

Զ.

### ԱՒԹԱՆԴԻԼԻ ԴԱՐՁԸ ԱՐԱԲԻՍ

Աւթանդիլը հապճէպ հասաւ Արարիս: Ամենից առաջ գնաց իր կալւածքը՝ ուր լնդասած էր եկել նրա զօրքը: Աւթանդիլն և Երմանդինը (զօրքի հրամանատար, Աւթանդիլից նշանակւած) չերմաջերմ համբուրւեցան: Ազգուղից ձիաւորներ սրընթաց հասաւթագաւորին և թագուհի թիւնաթիւնին Աւթանդիլի դարձը աւետելու: Ի պատիւ Աւթանդիլի դարձի նոսուան թագաւորը տեղ մեծ խնձոյք. այդուղ Աւթանդիլը սրատեց միառմի Ընձենաւորի

մասին իր տեսածն ու լսածը: Ամենքը մեծ հետաքրքրութեամբ լուսմ էին նրան, նամանաւանդ Թինաթինը, որ մարմնացեալ ու շաղրութիւն էր գարձել:

Թինաթինը բաւականին գւարճանալուց յետոյ առանձնացաւ իր սենեակը և կանչել տւեց Աւթանդիլին: Նրանց խօսակցութեան նիւթը իրենց սէրն էր և այն չարչարանքներն, որոնց նրանք ենթարկեցան միմեանց բացակայութեան ժամանակ: Թինաթինն առում էր.

—Ներիր, սիրելիս, կրած չարչարանքներիդ համար:

—Ոչինչ, հոգեակս, կրած տանջանքներս, մեր բոլորի հետաքրքրութիւն շարժող Ընձենաւորին գտնելուց յետոյ, ինձ քաղցր են թուոմ: բացց ցաւօք սրտի պիտի յայտնեմ, որ մենք նորից բաժանելու ենք. և Տարիէլին, այն է Ծնձենաւորին, ազնիւ խօսք եմ տւել յետ դառնալ:

Թէև Թինաթինի համար մահու չափ ծանր էր նորից բաժանել իր սրտի հասուրից, բայց որովհետեւ երդմնազանցութիւնը սաստիկ առում էր, սիրով յօժարւեց:

Տուն դառնալով Աւթանդիլը մտածում էր.

—Պիտի հանգստանալ և համբերել. եթէ բարին ու զում եմ՝ չարին էլ պիտի զիմադրեմ ու զիմոնամ: պիտի բացի զբանից աշխատել, որ մեր սիրոյ կայծերը առայժմ հեռու մնան իրարից, ապա թէ ոչ կարող են բռնկւել:

Միւս օրը լուսանալուն պէս Աւթանդիլը թամքեց ձին և զնաց վեզիրին խնդրեց, որ թագաւորին յայտնէ իր զնալու մասին Տարիէլի մօտ:

—Նա կինդանի մեռեալ է, աւելցրեց Աւթանդիլը. պիտի զնել նրան և սփոփել:

Վեզիրը պատասխանեց. «Թէև յանձնարարութիւնդ կատարելով դլատամամբ պիտի վարձարարեմ, բայց տեսնելով գեպի լնկերդ տածած ացդչափ սէրդ, քեզնից օրինակ վերցնելով գնում եմ յայտնելու. դուն էլ գիտես, որ շատ անգամ ասելը լու է չասելուց, թէև երբեմն ասելն էլ է վեսայ: Ազդ ասելով վեզիրը գնաց յայտնեց թագաւորին Աւթանդիլի մտադրութեան մասին, աւելացնելով, որ եթէ թուլառութիւն չարւի, նա կը փախչի, քանի որ, առանց Տարիէլի նրան ցերեկը գիշեր է թւում:»

Ըստաւանը սաստիկ բարկացաւ, վերցրեց աթոռը, խփեց, վեցիրի ճակատը պատռեց ու ասաց.

— Ինչպէս համարձակւեցար թօյլ, անշնորհք արարած, ինձ այդ յայտնելու, հեռացիր իսկոյն այսուեղից. դու բոլորովին անյարմար ես վեզիրութեան համար:

Խեղճ վեզիրը արիւնոտ երեսով գուրս փախաւ՝ մնչ որ մարդս իրան կ'անի թշնամին թշնամուն չի անի» փնթփնթալով։ Գալով Աւթանդիլի մօտ պատմեց նրան բոլորը։ Աւթանդիլը առանց մի բոպէ կորցնելու, ուղղակի դնաց Ներմաղինի մօտ յանձնելու նրան թէ ընտանիքը, թէ զօրքը և թէ երկիրը։ Յանձնելու ժամանակ պատիրում էր Ներմաղինին։ «Իարին խրախուսիր, շարը սաստիր, հաւասարիմների համար ոչինչ մի՛ խնացիր. դուն էլ պատրաստ կաց թագաւորի երկրորդը դառնալու և պաշտոնս ստանձնելու. իսկ այս կտակս, որ Բոստեան թագաւորին է ուղղած, կը յանձնես իրան։ Կտակում նա գրում էր. «Գիտնական Պլատոնն ասել է, ստորութիւնն և երկերեսութիւնը վեասում են թէ մարմուն և թէ հոգուն. ես չեմ ուզում զանազան պատճառաբանութիւններով քեզնից բաժանեել, բացց, կարծեմ բարեկամին մռացութեան շտալը մեր պարտքն է և վեասակար չէ. որ անւանի մահ գերադասելի է սպարսաւելի կեանքից, այդ էլ յալոնի է քեզ. սիրում եմ Տարիելին անչափ սիրով և առանց նրան մութ է շրջում ինձ համար արեգը. ունեցած զանձիցս ու հարստութիւնիցը ինչ որ հաւանես՝ ի միշտակ քեզ համար վերցրու, իսկ ինչ որ չէ, ինդրեմ բաժանես աղքատներին, որբերին և այրիներին։ Նրանք կը յիշեն ինձ իրանց աղօթքներում և կ'օրհնեն. վերջացնելով կտակս, իմ պաշտելի և թանկագին բարերարս, բաժանեում եմ քեզնից առողջութիւն և յաջողութիւն մաղթելով քեզ»։

Աւթանդիլը Ներմագինի հետ համբուրւելուց և լաց լինելոց յետոց, խնդրեց Աստծուց բարի ճանապարհ, և յաջողութիւն, հեծաւ ձին և անհետացաւ։

Միւս օրը թագաւորը կանչեց վեզիրին և ասաց քաղցրութեամբ։

— Երէկ ինչ էիր ասում, չեմ յիշում, մի քիչ վրդովւած է՛:  
Վեզիրը նախկին օրւայ ասածը կրկնելով դուրս եկաւ Աւթան-

դիլին գտնելու, բայց երբ ծառաները յայտնեցին նրան Աւթանդիլի փախուսողը, նա վախից չհամարձակւեց մտնել և յայտնել թագաւորին այդ բոթը, միշելով երեկուայ դէպքը Թագաւորը տեսնելով, որ վեզիրն ուշացաւ, մարդ ուղարկեց նրա յետելից. բայց երբ այդ մարդն էլ չերեաց, այն ժամանակ թագաւորն ընկաւ կասկածանքի մէջ. «Չլինի թէ փախել է, որ այլևս ոչոք չի մտնում սենեակս մոածում էր նա. ուղիղն իմանալու համար նա հրամացեց ծառային կանչել վեզիրին։ Վեզիրը վախվիելով մտաւ և յանձնեց թագաւորին Եերմաղինից ստացած Աւթանդիլի կոտակը։ Կը-տակը կարդալուն աէս ամենքն սկսան լաւ, իսկ թագաւորը մի-րոքը վետում էր ու ասում։

—Տէր, մենք ի՞նչ արինք նրան, որ նա մեզ այս օրը ձգեց. ախ որդի, ի՞նչու մեր արեւը խաւարեցրիր և առերդ չքացրիր. ամ-բողջ զօրախումբը սպաների հետ թող սև հազնեն, նրա ամրողջ հարսութիւնը բաժանեցէք որբերին և չքաւորներին, որոնց ազօթքն ու օրհնութիւնը խաղաղութեամբ կը հասցնեն նրան իր նպատակին։

## Հ.

## ԱԻԹԱՆԴԻԼԻ ՎԵՐՍԴԱՐՁԸ ՏԱՐԻԵԼԻ ՄՕՏ

Աւթանդիլը ինքն իրեն հետ խօսելով արագաքայլ առաջ էր գնում շարունակ. միաեղ այծեամ էր սպանում-մորթում, խորովում ու տում, միւս տեղ քնում և ապա կրկին ճանապարհ լնկնում։ Վերջապէս հասաւ քարայրը, տեսաւ Ասմաթին, փաթաթւեց, ու ապա հարցրեց։

—Ո՞ւր է տէրդ և եղբայրս։

—Դու հեռացար թէ չէ նա էլ հեռացաւ ինձնից և մինչեւ այժմ չգիտեմ։ կենդանի է թէ մեռած, պատասխանեց Ասմաթը։

Աւթանդիլը, շանթահար եղած այդ լուրից, վշտաբեկ սրով ասաց։

—Ի՞նչու չհամբերեց ու ինձ խարեց, մի՞թէ ևս խոստմնապանց եղայ. Աստւած իմ, այս ինչ անբախտ մարդ եմ, ես այնտեղ թագն

Ասմաթը պատասխանեց. «Չինական քարի վրայ գրած առածը

ուղիղ է ասում՝ ով որ չի ուզում բարեկամ գտնել՝ նա իր գլուխ թշնամի է:

Ասմաթը խնդրեց նրան վնարել ընձենաւորին և գտնել գտնեան րա զիակը: Աւթանդիլը, որ առանց Ասմաթի ասելու էլ վճռել էր գտնել Տարիելին, ճանապարհ ընկաւ և ամբողջ երեք օր ու գիշեր փնտրելուց յետոց, վերջապէս նկատեց շամբուտների մէջ մի ինչ որ բան: Յած իջնելով, տեսաւ, որ Տարիելն է. նա դառնագին արտասում էր: Աւթանդիլը համբուրեց նրան. բայց նա ոչինչ չգտաց: Տարիելի աջ կողմը ընկած էր մի առիւծ, իսկ ձախ կողմը՝ մի ինձ: Աւթանդիլի կոկորդը քիչ էր մնում պատուէր շատ աղաղակելուց, բայց Տարիելը այնպէս էր ընկզմել դառն մտածմունքների մէջ, որ ոչինչ չէր լսում: Վերջապէս նա հաղիւ հազ ուշքի գալով ճանաչեց Աւթանդիլին, համբուրեց նրան և ասաց.

—Ես իմ ուխտա, այն է՝ քեզ տեսնելս՝ կատարեցի. այժմ թոյլ տուր հանդիսաւ մեռնեմ. միայն խնդրում եմ մարմինս դազանների կերակուր չգարձնես, այլ յանձնիր հողին:

—Ինչեր ես ասում, եղբայր, այդ ի՞նչ սատանայ է մտել ուղեղդ. ոչ ոք սիրահարւած չէ եղել ի՞նչ է, ով է այդպէս արել ամօթ չէ մարդուն անձնասպանութիւն գործել. մի՞թէ չգիտես, որ վարդ քաղելիս փշերը կը ծակծկեն. լսիր ինձ, հեծիր ձիղ, գնանք, յանկութեանդ մի հետեւիր:

Ծնձենաւորը ոչ մի կերպ չէր ուզում յետ դառնալ: Ճարը կարած՝ Աւթանդիլը դիմեց հետեւեալ միջոցի:

—Ես տեսնում եմ, ասաց Աւթանդիլը, որ ինձ այլ ևս չես սիրում, գոնեա կատարիր վերջին խնդիրս, մի անգամ էլ հեծիր ձիղ, որ տեսնեմ և կշտանամ:

Աւթանդիլը շատ լաւ գիտէր, որ, եթէ Տարիելը հեծնի, մի կերպ նրա թախիծը կը փարասուի և կ'աղատւի մահաբեր մտածմունքներից: Նա չսխալւեց. Տարիելը համաձայնւեց. վերջինիս մի քիչ առաջ տանելուց յետոց Աւթանդիլն ասաց.

—Ինչու ես մոռացել Ասմաթիդ, սիրուհուդ առաջին անգամ տեսնողին, նրա դաստիարակողին և քոյրացուիդ. չէ որ նա քեզ վրայ էլ մեծ խնամք ունի. ապա ուրեմն ինչու ես խեղճին գցել անտէր, անպաշտապան և անուշադիր:

— Ուղիղ է ասածդ. գնանք տեսնենք, պատասխանեց Տարիէլլու: Արեմն սուտ չի ասած թէ՝ քաղցր լեզուն օձին էլ կը հանի իր բնիցը, ինչպէս և Աւթանդիլը քաղցրութեամբ հանեց Տարիէլին մահւան գութից: Նրանք ճանապարհ ընկան դէպի քարայրը: Ճանապարհին Աւթանդիլը հարցրեց Տարիէլին նրա լալու պատճառը:

Տարիէլն էլ պատմեց. «Երբ ես կանգնած էի շամբուաներում՝ (եղեգներ)՝ տեսայ մի ինձ և առիւծ միմեանց յետեից վազելիս և խաղալիս. նրանք կարծես երկու սիրահարներ լինէին. վերջը սկսեցին կուել. առիւծը իր ուժեղ թաթերով լնձուն յաղթելուց յետոյ սկսեց հետեւել նրան՝ սպանելու համար: Տեսնելով, որ նա ուզում է իր սիրուհուն սպանել, բարկութիւնս եկաւ և սպանեցի նրան: Առիւծին սպանելուց յետոյ բռնեցի լնձուն՝ համբուրելու ինձ այրող համբուրով. բայց նա չժողեց և սկսեց չանկրուել ինձ. ես չկարողացայ համբերել և, ոտնահար անելով նրան, սպանեցի:

Դրանք իրանց վարմունքով յիշեցրին ինձ սիրուհուս հետ իմ ունիցած կապը: Ես վաղուց է կեանքից ձեռք եմ վերցրել, իսկ նա դեռ անլում է. ինձ մահն էլ չի մօտենում. իսկ նա զեռ հրձւում է լոյսով. այս բոլորից յետոյ մի՞թէ իրաւունք չունէի լալու»:

— Սիրահարներին, մսիթարելով ասում էր Աւթանդիլը, միշտ զանազան փորձանքներ է հանդիպում. բայց չպիտի վհատւին. եթէ Աստուած չկամենար՝ ձեզ երկուսիդ առաջուց չեր միացնիլ. ուստի կարծում եմ, որ վերջ ի վերջոյ դուք միմեանց կը գտնէք և կը միանաք սուրբ սիրով:

Այսպէս զրուցելով նրանք հասան քարայրը: Ասմաթը դուրս եկաւ գրկեց երկուսին էլ և չնորհակալութիւն առաքեց Աստծուն, որ նրանց յետ դարձրեց: Մտնելով քարայրը նրանք լաւ ճաշ արին: Ճաշին Տարիէլն ասաց Աւթանդիլին:

— Դարձիր Արաբիա, գոնեա դու ապրիր արևովդ և սիրոյ քաղցրութեամբ:

— Միր, սիրելիս, ինչպէս յետ դառնամ, քանի որ նրա խնդիրքով եմ եկել մօտդ. եթէ ես կարողացայ օգնել քեզ, նրան մեծ ծառայութիւն մատուցած կը լինեմ. նա էր որ ասում էր ինձ շարունակ. Եթւար գործ կատարողն է նշանսւոր մարդ. ուստի աւելի լաւ է գնամ փնտրեմ անտեսաննմանիդ, կարելի է մի կերպ

գտնեմ նրան, և, եթէ մի տարուց յետոյ յետ չդառնամ այս քարայրը, իմացիր, որ փորձանքի մէջ եմ ընկելը։ Տարիէլը չհակառակեց։

Միւս առաւօտեան երկու ընկերներ միասին զուրս գնացին ծովափակը։ Ազդտեղ որս արին, կերան, քնեցին և առաւօտեան լուսադիմին Աւթանդիլը ճանապարհ ընկաւ Փրիդոն թագաւորի կողմը, արտասուքի հեղեղներ թափելով։ Յաժանւելով Տարիէլից նա ասաց. «Ո՞հ դու, աշխարհ, ինչու մն ես կայանում. ի՞նչ է միտքդ, ի՞նչ ես շուռ տալիս մեզ, այդ ի՞նչ բնաւորութիւն ունիս, որ ինձնման իւրաքանչիւր քեզ ցանկացողը ինձ նման լալիս է. որտեղացուն որտեղ ես մեռցնում և որտեղ նրա համար գերեզման փորում։ բայց Աստւած չի կորցնում քեզնից հալածւածին»։

## Հ.

## ՍԻԹԱՆԴԻԼ ԵՒ ՓՐԻԴՈՆ ԹԱԳԱԽՈՐԸ

Աւթանդիլը ասողերի հետ զրուցելով և մինչև իսկ իր քաղցր երգերով թռչուններին գրաւելով՝ շրջեց ամբողջ եօթանասուն օր և վերջը մի ծովափին մի քանի նաւավարների հանդիպելով՝ հարցրեց նրանց։ —

—Ո՞վ էք դուք, և ո՞վ է այս աշխարհի տէրը։ Նրանք պատասխանեցին։

—Մենք քաջ և գեղեցիկ նուրագին. Փրիդոն թագաւորի հպատակներ ենք։

—Նորհակալութիւն, հէնց նրան եմ փնտրում, բայց որ կողմէ է կենում՝ ինդրեմ, ինձ ճանապարհ ցոյց տաք։

Նաւատիները սիրով կատարեցին Աւթանդիլի խնդիրը և ցոյց տւին Մուլզազանզար քաղաքի ճանապարհը. դեռ քաղաքին չհասած Աւթանդիլը տեսաւ մի խումբ զինւորներ, որոնք որսով էին զբաղւած։ Աւթանդիլը զինւորներից մինին հարցրեց։

—Ո՞վ է այն, որ ամենքին հրամայում է։

—Նուրագին-Փրիդոնն է, եղաւ զինւորի պատասխանը։ Անա այդ միջոցին, մի կործ (թռչուն, եօնձօրք) թռաւ դօրքի զլիով և ոչ ոք չկարողացաւ իր ժամանակին նետահար անել նրան։ Աւթանդիլի նետ արձակելն ու կործի թափիթափ ընկնել մին եղաւ։

Զինւորները նկատելով այդպիսի մի ճարպիկութիւն՝ զինաթափ եղան և զմազլում էին Աւթանդիլի զեղանի տեսքով։ Թագաւորը տեսնելով, որ կարգը խանգարւեց և շրջանն էլ քանդւեց, մարդուզարկեց բանի էութիւնն իմանալու համար։ Աւթանդիլը նկատեց որ մարդը զէպի իրան է դալիս և ասաց. «Դնա յայտնիր թագաւորիկ, որ ես մի օտարական և Տարիէլի երդմեղբայրն եմ ու եկել եմ զործով իր մօտ»։

Այն մարդը Աւթանդիլի խնդիրը կատարեց։ Փրիդոնը «Տարիէլ» բառը լսեց թէ չէ լաց եղաւ և, կանչելով Աւթանդիլին, համբուրեց նրան։

—Գիտեմ, ասաց Աւթանդիլը, հետաքրքրւում ես Տարիէլով։ Ես իսկոյն յագուրդ կը տամ հետաքրքրութեանդ՝ պատմելով իմ եղբօր (թէե ես նրա ծառայ կոչւելու էլ արժանի չեմ) և իմ դալուս մասին։

Աւթանդիլը մանրամասնօրէն պատմեց, որ ինքը Արարիայի Բոստեան թագաւորի սպարապետն է և որ մի անգամ, որսին, ծովի ափին սեսան մի ընձննաւոր. այդ ընձննաւորը իրանց մարդոց կոտորեց և անհետացաւ։ Բոստեան թագաւորի հետպրերութիւնը շարժւեց թէ նվազ էր նա. ուստի ինքը (Աւթանդիլը) ստիպւեց երկար վնարել ընձննաւորին, վերջապէս գտառ նրան, այն է Տարիէլին. Տարիէլը նրան պատմեց իր զիսով անցած պատմութիւնը։ Այդ բոլորը Բոստեանին պատմելուց յետոյ կրկին ացցելեց Տարիէլին։ Աւթանդիլը աւարտելով իր պատմութիւնը աւելացրեց. «Տարիէլը քո մասին ասում էր, որ զու տեսել ես ծովի ափին նրա լուսաշաղ արև նեստանին. ահա այժմ եկել եմ խնդրելու՝ ցոյց տալ ինձ նրան տեսած տեղը և նետանին փախցնող արաբների ճանապարհ։ Փրիդոնը ուշադրութեամբ լսեց Աւթանդիլի պատմութիւնը, տարաւ նրան քաղաք, սարքեց մի մեծ հանդէս և խնձոյք։ Որովհետև Աւթանդիլը շուպում էր, ուստի յաճախ ասում էր Փրիդոնին. —

—Տէր աբքայ, ամեն մի բոպէ թանկ է ինձ և նամանաւանդ Տարիէլի համար. արձակիր ինձ, ոբքան կարելի է շուտ, և ցոյց տուր խնդրածս տեղը։

—Ասուած օրհնի ճանապարհ, բայց համարձակւում եմ ասելու, որ մենակ դժւար է քեզ այդ զործը յաջողեցնել. այդ

պատճառով քո տրամադրութեան ներքոյ եմ թողնում ծառաներս և ուզտերս. պատասխանեց Փրիդոնը:

Աւթանդիլը վերցրեց չորս ծառայ և պաշար ու Փրիդոնի հետ ձանապարհ ընկաւ. Փրիդոնը, ցոյց տալով տեղը, բաժանեց նրանից:

Թ.

### ԱԻԹԱՆԴԻԼԸ ՈՐՈՇՈՒՄ Է ՆԵՍՏԱՆ-ԴԱՐԵԶԱՆԻՆ

Այդ տեղից սկսած Աւթանդիլը էլ անց ու գարձ անող թողեց, որ Տարիէլի սիրուհու մասին չհարցնէր. բայց զուր ժամավառ էր լինում: Մի անգամ նո ծովի ափին տեսաւ մի քարւան և նրա հարցին, թէ ովքեր են նրանք, քարւանատէրերը պատասխանեցին.

—Մենք Բաղդադի մահմեդական՝ գինի շիմող՝ վաճառական. ներ ենք, տարակուսած մնացել ենք այսոեղ, որովհետև ծովահնեն ների պատճառով ծով չենք կարողանում մտնել. ահա այս նոր ուշքի բերած վիրաւորւածը կենդանի վկայ կարող է լինել նրանց բարբարոսութեան. ձեզ էլ խորհուրդ չենք տալ մտնել ծովը:

—Միք վախենալ, ես ձեզ հետ եմ, իմ սուրս կտրուկ է, զալիքը կը գայ, գնանք:

Վաճառականները այդ լսելով՝ սաստիկ ուրախացան, որովհետև չէին կարողանում շարժել ոչ առաջ և ոչ յետ: Ամենքը տեղաւորւեցան նաւերում: Քիչ առաջ զնացին թէ չէ նրանց վրայ յարձակեցին ծովահնեներ իրանց նաւերով: Աւթանդիլը նաւերի գլխին կանգնած իր երկաթէ գաւազանով մի՛ քաշելում իննը-տասը հոգի էր պառկեցնում: Ծովահնեները նկատելով այդ՝ ցրւեցան և մինչեւ անդամ մի քանիսը անձնատուր եղան վախից: Այդ յաղթութիւնից բաւական աւարհաւաքեցին. վաճառականների ուրախութեանը չափ չկար. նրանք չէին իմանում թէ ինչով հաստուցանեն Աւթանդիլին այդ բոլորի համար: Նրանք առաջարկեցին Աւթանդիլին ամբողջ աւարը, իրեւ ամենաքաջին, բայց Աւթանդիլն ասաց. «Յաղթութիւնը ոչ թէ իմ շնորհիւ տարանք, այլ Աստուծոյ. ուստի շնորհակալ լինենք նրանից, որովհետև եթէ նա չուզենար, մենք չէինք յաղթիլ. մի բան միայն կը իմնդրեմ և յուսով եմ, որ ինդիրս չէք մերժի. և չեմ ուզում ձեր ոչ մի հարստութիւնը, ինձ ընտրէք ձեր գլխոս որ

և ոչոքին չասէք թէ մվ եմ ես, որովհետեւ դործս, որի համար եկել եմ ես այս քաղաք, այդպէս է պահանջում: Վաճառականները սիրով լնդունեցին նրա առաջարկութիւնը: Թիավարելով դէպի առաջ՝ նրանց պատահեց մի սիրուն քաղաք իր գեղեցիկ այգիներով:

Հասնելով ծովափը, նրանք իրանց նուակները կապեցին մի այգու մօտ: Գոտան և այգեպանին ու սկսեցին հարց ու փորձ անել քաղաքի անւան, նրա թագաւորի և այլոց մասին: Այգեպանը պատասխանեց: —

—Քաղաքիս անունն է Գուլանշար. իսկ թագաւորի՝ Մելիք-Սուխան. մեր քաղաքը բաւականին ուրախ քաղաք է. այսուեղ շարունակ հրճանք է տիրում, ամառ-ձմեռ ծաղիկների մէջ ենք ապրում, որով շարժում ենք օտարների նախանձը: Ես վաճառականապես Ռւսենի այգեպանն եմ: Տէրս միւնոյն ժամանակ կարգադրի: է քաղաքս եկող բոլոր քարւանների, որոնք պարտաւոր են իրանց բերած ապրանքից ընծաներ մատուցանել նրան: Դրանից յետոց միայն իրաւունք է տրւում նրանց ծախել բերած ապրանքը. այժմ նա այսուեղ չէ. նրա պաշտօնը կատարում է նրա հիւրասէր կին—Ֆաթման-Խանումը. զնամ յայտնեմ ձեր գալուստը:

—Գնա՞մ, արա ցանկացածիդ պէս. պատասխանեց Աւթանդիլը:

Այգեպանը գնաց Ֆաթմանին յայտնեց ամեն ինչ, չմոռացաւ յայտնել նաև, որ վաճառականների գլխաւորը շատ սիրուն տղամարդ է: Ֆաթմանը իսկոցն տասը մարդ ուղարկեց, նրանց համար քարւանսարայ պատրաստել տեց և Աւթանդիլին սիրով ընդունեց: Այլը Ֆաթմանը շատ էլ գեղեցիկ չէր. նա մի կ սրճահասակ, գեր ու գւարձասէր կին էր, Աւթանդիլը ներկայանալիս մատուցեց նրան. Բանկագին ընծաներ, բայց շուռ չկարողացաւ ազատւել Ֆաթմանից:

—Գնացէք, վաճառէք ձեր ապրանքը, միայն չմոռանաք ինչ որ ես ձեզ ասացի. ասաց միւս օրը Աւթանդիլը վաճառականներին Աւթանդիլը հագին ունէր վաճառականի հանդերձ: Ֆաթմանը առաջին տեսնելուց իսկ սիրահարւեց Աւթանդիլի վրայ և չէր իմանում ինչ կերպ խեղտէր այդ սէրը իր մէջ: Եթէ սիրահարական նամակ գրէր՝ քաշւում էր, որովհետեւ մատածում էր՝ չլինի թէ Աւթանդիլը խոռվէի և ազգայիտով նրա տեսնելուց էլ զրկւի. բայց նրա սէրը հետզհետէ բորբոքւում էր ընթանալով բնական ճանապարհով: Այդ

բորբոքման հետևանքն այն եղաւ, որ ֆաթմանը չդիմացաւ և նամակ գրեց, մտածելով, որ եթէ մէկը ցանկանում է բժշկել, սիրոի իր ցաւը բժշկին յայտնի անպատճառ։ Նամակում նա գովում էր Աւթանդիլին և խնդրում շուտափոյթ պատասխան։

Աւթանդիլը կարդալով նամակը՝ քմծիծաղ տւեց և ասաց.

«Այդ ողորմելին դեռ չի իմանում թէ սիրոս ուժն է պառաւմ և ում համար այսքան տանջնում։»

Աւթանդիլը պատասխանեց թէ համաձայն է գալ, միայն այն պայմանով, որ մօտը մարդ չլինի։ Ֆաթմանի ուզածն, էլ հէնց այդ էր. բայց այն ժամանակ, երբ Աւթանթիլը պատրաստում էր գնալ ֆաթմանի մօտ, մի նամակ ստացաւ նրանից, թէ այժմ անյարմար է գալ։ Աւթանդիլն իրան անպատճառ համարելով՝ ուշք չդարձրեց և գնաց։

Ֆաթմանը տեսնելով նրան՝ փաթաթւեց և համբուրեց։ Հէնց այդ րոպէին ներս մտաւ մի մարդ ծառայի հետ և, նկատելով դրանց փաթաթւիլը, ասաց.

—Չեմ արդելում, լիրբ, միայն լուսանալուն պէս կը տուժես այդ բոլորի համար. որդոցդ ատամներովս կը գզգզեմ, անառակ, դուինձ խաչտառակեցիր։

Այս ասելով նա զուրս գնաց։ Ֆաթմանը լալով ու մղկտալով գլխակոր ասում էր. «Կորան, զուր կորան որդիկըս։»

—Ի՞նչ կաց, ի՞նչի ես լալիս, հարցրեց Աւթանդիլը։

—Ել ոչինչ մի հարցնիլ. եթէ ուզում ես փրկել ինձ, սպանիր մեզ նկատող մարդուն և նրա մատիցը հանիր մատանին, որովհետեւ եթէ նա հասնի արքունիք և պատմի իրան յայտնած գաղտնիքա, թագաւորը ինձ որդոցս հետ կը կորցնի դաւաճանութեանս համար Աւթանդիլն ատաց. «Ճէկք ինձ մի մարդ, որ ցոյց տայ նրա տունը։ Ֆաթմանի ծառաներից մինը ցոյց տւեց այն մարդու տեղը։ Դռան մօտ կանգնած երկու սպահապանին սպանելով, Աւթանդիլը ներս մտաւ և, ժամանակ չտալով նրան օգնութեան կանչել, վզից բռնց և սրով խողխողեց նրան անկողնում։ Ապա մատանին հանելով նրա մատիցը, դիակը նետեց ծովը։ Աւթանդիլը վերադառնալով ասաց ֆաթմանին.

—Հանգստացիր, սպանւած է նա. ահա ստացիր նրա մատա-

նին և պատմիր թէ ո՞վ էր նա, ինչու էր սպառնում քեզ և ինչու էր լալիս:

Ֆաթմանը, նրա ոտներն ընկնելով, ասաց.

—Ես ոտքերիդ հողին էլ արժանի չեմ, որովհետև դու փրկեցիր թէ ինձ և թէ որդոցս. այժմ հանգիստ սրտով կարող եմ ամեն ինչ պատմել քեզ:

(Վերջը բաջորդ համարում)

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵԼ: Կիսամեաց պատկերազարդ. առաջին տարի.  
Ա. գիրք. 1896 նուշի. քառածալ.

Թէն ազգագրութիւնը նորաբողոքոջ և դեռ ևս չկազմւած մի գիտութիւն է, բայց հաջնրա ալդ մասին բաւականին հում նիւթեր ունինք. Սրուանձտեանի դասական երկերից և մի շար ալ անհատների հարուատ հաւաքածուներից լիտով՝ ահա երևան է գալիս մինչև անգամ առանձին «Ազգագրական Հանդիսական» մի հաստ հատոր՝ և խոստանում է պարբերական հրատարակութիւն լինել:

Մի փոքրիկ ներածութիւնից լիտով հրատարակիչ պ. Լալակեանը տալիս է «Հայ ազգագրութեան համառօտ տեսութիւնը». —Ան աստիճան թուլ, սառն և ողորմելի մի կոմմիւնցիա է զա, ու նորա վերաէ կանդ առնելը ժամանակի կորուստ կ'նշանակէ. չպարունակելով ոչ մի նոր միտք, նա ներկալացնում է օտար ընտիր ուսումնասիրութիւնների մի կարիկատուրան—ծաղրանկարը: Ֆըրանսիացոց համար զա կարող էր գուցէ նորութիւնների շարը զասկիլ. երազացու ներողամտութիւնը և

բռնազբօսիկ համբերութիւնը երեմ. աելի դառն է քան ամենասաստիկ կրիտիկան:

Միանգաման թարմ, հետաքրքիր և մեր երկրի անցեալը լուսաբանող չօգւածներ են պ. Բաբակեանի «Մանիացոց տերութիւնը» կոմպիլացիան, «Խոջալլուուի գերեզմանները»—ինքնուրուն և «Կովկասի տեղը քաղաքակրթութեան պատմութեան մէջ»—թարգմանական չողւածները՝ Վերջինին կցած է հինգ ընտիր նկարուն տախտակներ, որոնցից պարզ երեւում է, թէ մեր նախորդները Կովկասում (Հաւանօրէն խալկեր) որ աստիճանի բարձր կուլտուրան ունեցել: Դժբաղդաբար չօգւածի մէջ չիշած թւահամարները չն իշխած տախտակների վրաէ, անպէս որ չես իմանում թէ խօսքը որ տակի և որ պատկերի մասին է: Թարգմանականների թւին են պատկանում նաև Պետրէի «Մարդաբանութեան պատմական զարգացումն» և Շ. Աշուրնօ-իւԱմուսնութեան զարգացումն: Երկու խնդիրներն էլ միան-

դամանն նոր և հարցասիրական մեր հասարակութեան համար. Մեր գրականութիւնը աչնքան աղքատ է, որ դոյնանման որպիսի թարգմանութիւն էլ առնք ընթերցողին, ուրախալի է, բայց թարգմանիչը պիտի աշխատի ընտիրը և գիտութեան վերջին խօսքը տալ թարգմանօրէն. այդ չենք կարող ասել Լէտուրնօ-ի աշխատութեան մասին, ուր ամուսնութեան վերաբերեալ հարուսա և բազմակողմանի տեղեկութիւններ կան, բայց ոչ նորա զարգացման պատմութիւնը. նա միայն թւում, նկարազրում է, իտու էլ աշխատում է մի որոշ եղակացութեան բերել իւր ֆակտերը, բայց աչնպիսի մի մած էպօխալի մասին, որպիսին է մայրական իրաւունքը, նա ոչինչ չի վիշում. թւումէ թէ Լետուրնօ-ին ծանօթ չեն եղել նախօֆէնի և Մօրգէնի աշխատութիւնները. մանաւանդ վեջինի կը սփրական զործը Հիւտիսավին Ամերիկայի վագրենիների մասին, որոնց նորիւ միայն ամուսնութեան զարգացումը իւր խսկական լուսաբանութիւնն առաւ Լետուրնօն—առասպարակ կարծես չի ուզում ընդունել ամուսնութեան զարգացումը մայրա. կան իրաւունքից զէսի հայրականը և էնդոգամիալից զէպի էկզոդամիան. նա ծանաչում է միայն խառնակեցութիւն և միակնութիւն.—Դա հընացած գործ է և ուրեմն թարգմանութեան ընտրութիւնը սիսալ.

Անքնուրոջն լողւածներ են պ. Ուանեանի Արակը» և Արպէի «Խըծկոնք»-ը. Սակայն, Հանդէսի ծուծն ու էութիւնն է «Զաւախք» ինքնուրոջն մողովդապրական հաւաքա-

ծուն, որը իւր առաս և բազմակողմանի նիւթերով մի ահազին դանձ է հաչ աղքադրութեան համար. Աղքադրութիւնը մի շատ դժւար և ապերախս գործ է. նա պահանջում է լուսանկարչի ճշտութիւն մեղուի ժրաշանութեան հետ, բայց և աճնպէս շատ անզամ նորա տւած արգիւնքը չի արդարացնում աչն ահազին ջանքը, որ թափել է նորա վրաչ եթէ մանաւանդ բանահաւաքը հմտութիւն ու նըրամտութիւն չունի իւր գիտողութիւնը մի քիչ խորն ուղղելու. Զանասիրութեան կողմից պ. Լալակւանը արժանի է խորին չնորհակալութեան, և զովասանքի, նորա օրինակը ցուց է տալիս, որ ամեն մի կրթւած մարդ՝ եթէ մի քիչ իրան նեղութիւն տաչ, կարող է մարենի զրականութեանը և գիտութեանը իւրուսանն ծառակել. երանի թէ մեր պոռոտախօս ինտելիգէնսանները օրինակ առնէնի պ. Լալակւանից, որը մի տարի շարունակ ուսուցչութիւնը թողած անցել է ամերող Զաւախքը և մեղուի ժրաշանութեամբ ուսումնամիրել հաչ ժողովրդի կիանքը— Ծաղիկներ չեն եղել. նորա հաւաքածները և ոչ կանաչազարդ դաշտեր ու ձորեր նորա ալցելած տեղերը, ազ Զաւախեցու խրճիթը, զոմը, օղան, Ով մէկ օր միայն գիշերելու առիթ է ունցել այդ օդաներում, նա կարող է հիանալ ու զարմանալ պ. Լալակւանի տոկունութեան և կամքի վրաչ. Թէ որքան հարուստ և բազմակողմանի են նորա հաւաքած նիւթերը՝ ազ լաւ երեսմ է նոցա զլուխներից, որ կարենու ենք համարում ակսեղ դնել.

ա) Պատմական համառօտ տեսութիւն. բ) Զաւախքի տեղագրութիւնը. ց) Հնութիւններ. դ) Բնակիչներ. ե) Վիճակագրական տեղեկութիւններ. զ) Ազգաբնակութեան շարժումն. է) Ծնաեսական դրութիւն. ը) Ժողովրդի լուսաւորութիւն. թ) Հայ գիւղացիների բնակարանները. ժ) Զգեստ և զարդ. ժա) Ընտանեկան բարք. 1) Ա.մուսնութիւն. 2) Տղաբերք և կնունք. 3) Մանկանց դաստիարակութիւն. 4) Ընտանեկան կեանք. 5) Գերդաստանի անդամների իրաւաբանական լարաբերութիւնները. 6) Հիւանդութիւն և բժշկութիւն. 7) Ժողովրդական դեղեր. 8) Մահ և թաղումն. ժբ) Հաւատք. 1) Աստածութիւն, որբեր և կրօնական դրւածներ. 2) Հրեշտակներ և ոգիներ. 3) Աշխարհածնութիւն. 4) Կերպարանափոխութիւն, կախարդներ և կախարդութիւն. 5) Սնուախապաշտոթիւններ. 6) Բաղդ և ճակատագիր. 7) Պաս, ոչխտ և ուխտագնացութիւն.

Նաև երկու ժողովրդական եղանակներ եւրոպական ձախաղրութեամբ պ. Կարա-Մուրզալի:

Ազդ գլուխներից վիճակագրական տեղեկութիւնները, ազգաբնակութեան շարժումը և տնտեսական դրւութիւնը պ. Լալաչեանը քաղել է ուրիշ ազբիւրներից, որոնք արդէն բաւական հին հն (1886). մնացեալը ինքնուրովն գործ է՝ և որոշ տեսակէտից նաևլով բաւական լաւ գործ.

Ազդ հաւաքածուի մէջ առաջին անգամ պ. Լալաչեանը բաց է անում մեր վիպագիրների և գրադէտների գոված «Նահապետական հայ ընտա-

նիքի» ներքին մռալ պատկերը, նորա մութ և անհամակրելի կողմերը. մի ընտանիք, որի տան անգամները «արնեղնի» հաշւով պիտի հոգան իրանց երեխանների հագուստը (291 եր.), մի ընտանիք, որը կանգնած է լուծման և քաջքայման աստիճանի վրայ, որի բարքը ու վարքը ապականւած, ամուսնական սրբութիւնը պղծւած (283—4 եր.), որի անդամների մէջ շահերը անքան բաժան. բաժան և օտարացած են, որ «գողովթիւն» ու խաբեբալութիւն է տիրում (281 եր.).

Ազդ բոլորը շատ դառն նորութիւններ, շատ ճշմարիտ, շատ իրական են դժբաղդաբար, բայց և շատ սխալ շատ միակողմանի և անորոշ չնորիւ բանահաւաքի թեթե և ծանծաղ ուսումնասիրութեանը. Գերդաստանի անդամների իրաւաբանական լարաբերութիւնը կարդալիս մարդ ան եղբակացութեանն է գալիս, որ մեր ժողովուրդը դէպի քայլալուն է դիմում. աղաքս է զունաւորել պ. Լալաչեանը իր աշխատութիւնը և աղպէս է ծանշում նա իւր ֆակտուրը, չկարողանալով հայի ընտանեկան կազմի էռութիւնը հասկանալ և ըստ անմ դատել. Ազդակ ահա հարկաւոր էր ֆակտուրը մի քիչ խորը տեսնել չշլանալ երեսովիներով, այլ ճանակի նոցա արմատը. չբաւականանալ հետեանքով, այլ մատնանիշ լինել նորա պատճառի վրայ, ազգակ բանահաւաքի ուժերը իրան դաւաճանում են:

Հայ գերդաստանը, մասնաւոր պէս քաղմանդամ գերդաստանը, որ

լլացրել է թէ օտարին և թէ հալին՝ զեռ մի չճանաչւած երեղիթ է, նա գրաել է օտարի զարմանքն ու հիացմունքը, հայի գովասանութիւնն ու պարծանքը. նա իրբե մի աւելի աչքի բնկնող աւելի բարդ երեղիթ՝ ծածկել, վարագուրել և իւտ է մղել խկական ընտանիքը. Այժմ քաշքաւում է աչդ գերդաստանը և ի հարկ է ժողովրդին սիրող մարդը, ազգի ապագաւ պայծառութիւնը երազողը չի կարող չցաւել, չափոս սալ—Սակամն, դա մի բացարձակ սխալ է: Պարզեմ միտքո, ես ժամանակակից հայ ընտանիքի երկու տիստ եմ ճանաչում Զաւախքում, և կարծեմ զա ընդհանուր է համայն հայ զաւաներին. —իսկական ընտանիք և գերդաստան. առաջինը մասնաւոր է, երկրորդը ընդհանուր, առաջինը բաժանարար (զամանակ) է, երկրորդը միութիւն, կապակցութիւն, որ կարելի է բաժանել, որպէս ամեն մի հաւաքական մարմին: Մարդու, կնոջ և երեխաների միութիւնը, քանի որ վերջինները չեն ամուսնացած, ես անուանում եմ ընտանիք. աչդ ընտանիքը զայութիւն ունի Զաւախքում իւր բոլոր որբութեամբ, ամենալայն կոմմոնական զարաքերութիւններով իւր անդամների մէջ. նորանում չկաց միմ ու քուկո, որպէս ասում է ժողովուրդը, չկազ և չի կարող լինել նաև աղողութիւնն, ամրնեղինն, կամ դոցա նման ալլանդակ երեղիթներ, խոկական ընտանիքը զա է:

Մոււաք դործեց աչդ ընտանիքի մէջ մի օտար անդամ՝ մի հարս, ո՞րը ընտանիքի ծառան է, մարդու սորութել, կեսուրի հլու հպատակը, կեսուրի հլու հպատակը,

որը մինչն անդամ խօսելու իրաւունք չունի տան անդամների հետ, բայց իւր աչդ կրաւորական գերի բոլոր կատարելութեամբ նա չեղափոխում, կերպարանազործում է ընտանիքի պատկերը. աչդ իրաւազուրկ արարածը կազմում է մի նոր ընտանիք նախկինի մէջ. և ինչովի բնչ է նորա իրաւունքը. նա որ իւր սիրասուն զաւակին «առանց հրամանի իրաւունք չունի ծիծ տալու», ունի մի քանի անձեռնմիսելի ոսկիներ և մի երկու կտոր լամբելէն իրբե սեփականութիւն, ամիակ բանը, որի վրաէ չի տարածում տան մեծի (իմա գերգաստանի) իշխանութիւնը, դա հարուրի փողն է» (291) ասում է պ. Լալայիսանը, բայց չի լրացնում, չի հասկանում աչդ արմատական երեղիթի ծանրակշիռ. նշանակութիւնը. աչդ հարսը աշնուհետե մի տէրութիւն է տէրութեան մէջ. ջնկ է նորա սընդուկը, որ կողպէք է ունենում սովորաբար, ջնկ են նորա շահերը, ընտանիքից ջոկում, կտրում և հեռացնում է նա նաև իւր մարդուն, նա հիմք է զառնում մի նոր ընտանիքի: Աչդ հարսի մուտ գործած օրից նախկին մէկ ընտանիքը զառնում է երկուս, նորա ամբողջութիւնը այժմ կերպատանն է, աչսինքն ընտանիք. նիրի ժամանակաւոր միութիւնը՝ հիմնած մեծ մասամբ տնտեսական և ֆիզիկական մեծ ուժ ունենալու համար հասարակութեան մէջ, որ անաջող պայմաններում կարող է լուծւել կաղմելով մի քանի խոկական ընտանիքներ ևս դիսեմ զերդաստաններ ըստ բաղկացած երկուսից մինչ տասը ընտանիքներից. գերդաստանը աչդ

պիսի ընտանիքների միութիւնն է. նորա կազմութիւնը շատ բարդ է և անդամների չարաբերութիւնը շատ տիպավին և բնորոշ դոցանից, ալ սինքն գերգաստանի անդամների չարաբերութիւններից, շատերը զիտել և նկարագրել է ալ. Լալակեանը, բայց նոցա էութիւնը շատ վատ է հասկացել, և այդ է պատճառը, որ արդաքս ափառանքով է նկարագրում նորա քաջքաբումը, որ ժամանակի անհրաժեշտ պահանջն է, Գերգաստանը ճնշում, հերքում ու սահմանափակում է անհատի իրաւունքները. Նա խեղում է իսկական ընտանիքի զարգացումը. Նա զօրեղ է համայնքի և հասարակութեան մէջ իրեն մի խոչոր ուժ, բայց թաղլ և անբաւարար ինքն իւր մէջ, իւր անդամների համար, անհատական պահանջը, զորա նաև նաև բուն ընտանիքները, ալժմ անհամեմատ աւելի մեծ և զարգացած է քան սորանից մի 30—40 տարի առաջ. անհատը և ընտանիքը ալժմ թոթափել են ուզում իրանցից գերգաստանի ճնշումն ու կտապնիքը և նա կամաշ-ակամակ պիտի ընկնի. գերգաստանը ժամանակիս համար ետ մնացած, անորմալ երեսնի է. Նա ընկնում է տեղի տալով ընտանիքն, ուր անհատի շահերը աւելի են աւանդում, ուր նա աւելի քիչ է ճնշում, ուր չկան գերգաստանական ալանդակութիւնները... Հայ ընտանիքը լետ չի գնում, ալ աւաճ... նա զարգանում է... Յետ գնացողը գերգաստանն է:

Մենք համառօտակի պարզեցինք մեր հակեցակէտը. աջառեղ տեղը չէ այդ մասին երկարելու,

որի լրիւ լուսաբանութեան համար մի ահազին ուստամասիրութիւն էր պէտք. ով հայի ընտանիքն ու գերգաստանն է ուսումնասիրում, այդ տեսակէտով պիտի առաջնորդւի, կինը աղդանդ հրակական գեր է կատարում, իսկ պ. Լ.-ի աշխատութեան մէջ զա համարեալ չի երեսում, կնոջ իրաւունքի զարգացումը երբ նա հարսէ, ապա երեխակ ունի, ապա ալրի է և կամ ոկեսուր՝ բոլորովին չեն պարզաբանած հետեօրէն, — Քնորոշ կողմեր ունի մանաւանդ ալրի կնոջ իրաւունքը և չարաբերութիւնը գէպի այն գերգաստանը, որից հեռանում է և ան՝ ուր մանում է նորա իրաւունքը գէպի իւր իսկական զաւակները և խորթերը, և այն և ավել... Հայ ընտանիքի և գերգաստանի մէջ ալրի կինը ամենալայն անհատական իրաւունքներն է վաելում իւր համասեռ կանանց մէջ... Հայի գերգաստանը քիչ թէ շատ ճանաչում է պ. Լ.-ի հնոց նորա փաստերը գերգաստանին են վերաբերում. բայց բուն, խկական ընտանիքը, նա ոչ միայն չի ճանաչում ալլ և նորա մասին բոլորին իւր իշտակութիւն էլ չկաչ հաւաքածուի մէջ:

Որ հայի գերգաստանն էլ չաւ չի ճանաչում պ. Լալակեանը, ալդ ցոց է տալիս նորա սխալ կարծիքը աւագութեան մասին: Նորա ասելով աւագութեան հիմքը երեցութիւնն է, ալսինքն տան երեցն է նաև աւազը «իշխանը». — Սական, Ղատօ գիւղում Քոչունց գերգաստանը, որ բազկացած է 60 հոգուց և որը հինգ ալսօր անհապետական ընտանիքին

տիպալին ներկաչացուն կարող է համարել, որի պատճառով էլ նա վախում է ամբողջ գաւառի զարմանքն ու չարգաճարը, տան աւագ ունի ոչ թէ երեց, այլ երրորդ եղբայր Մաթոս քէհալին: Երկու միւս եղբայրները թէն առողիք ու խելահատ, կառավարութիւնը չանձնել են Մաթոսին (կրտսերին) իբրև աւելի ճարտարին: Ճանձզա գիւղում հօր և մեծ եղբօր ներկալութեամբ Վանցոնց տունը կառավարում է երկրորդ եղբայր Խարաչը, նոյն էին մի քանի տարի առաջ Ալեքսանենց, Խուզափրդինց և այսոց բազմամարդ գեր զատանները: Պատահում է, որ տան վասուքը մինչին է պատկանում, իսկ տնտեսական կառավարութիւնը մի ուրիշն: պատահում է, որ երկու եղբայրները միասին են կառավարում: Մի խօսքով, տղտեղ գեր ունի երեցութեան: Հետ նաև ճարտարութիւնը, փորձառութիւնը, խելացիութիւնը, հասարակութեան մէջ ել ու մուտ տնենալու, «ճակաս պարզ անելու» ընդունակութիւնը: Անպէս որ եթէ փոքր եղբայրը, կամ հօր կինդանութեանը որդին աւելի ճարտար է հօրիցն ու գործունեաց ապա երեցութիւնը խոնարհում է խելքի առաջ և աւագութիւնը անցնում է փոքրին: Երեցութիւնը պրինցիպ չէ աւագութեան՝ այլ պայման (Չ Խմք.): ոլ լաւ և պիտանի կարող է ճառաւէլ փերդաստանին, նա ել աւագն է կամ ամենը:

«Նախնի բարովականութիւնը դժբաղդաբար ակմմ անհնետացել է և անբարովականութիւնը հետզհետէ առաջանում է» (282 եր.) ասում է

պ. Լ. Ն: Դեռ շատ ապահուսական և հիմնավուրկ մի հարց է նախնի բարովականութեան թուլանալ կամ ամրանալը, որտեղից զիտէ պ. Լ. Ն նախնի բարովականութեան մասին, և առհաստրակ թնչ մի ստովդ բան զիտէնք մենք մեր նախնիների մասին, որոնք հէնց սորանից 50-60 տարի առաջ էին ապրում. մեղ անչափ է թէ հաչ ժողովուրդը առաջ սրբան բարովական էր ներկազի համեմատութեամբ, այդ մասին մենք ոչ մի փաստ չունինք և դա միայն պառաւների ու ծերերի միսիթարութիւնն է անցեալը միայն վարդի գոյներով աւանել, զիտութիւնը փաստ է ուզում, իսկ գուք փաստ չունիք:

Եւ թնչ է ան բարովականութիւնը, որ զուք զատապարտել եք աշխատում: Պուք չեք որոշում երկու տարրական երևովներ — անտակութիւնը, որ մարմինը ծախում է զրամին, և բուրժուաների լեզով ասենք՝ «ընտանեկան անհաւատարմութիւնը», այն որ ժողովուրդը անւանում է «սիրող անելու»: Պոքա տարբեր են միմեանցից որպէս երկինք ու երկիր Պ. Լ ալակեան, չի լիշտակում անառակութեան ոչ մի դէմք, որոնք աչո, պատահում են թէն շատ հազիւ: բայց «սիրող անելը» — անւանում է նա անբարովականութիւն: — Յաւտնի պիտի լինի, որ ամուսնութիւնը ջաւախքում կատարում է ծնողների կամքով, որ ամուսինները շատ անգամ մի զո՞ն են ծնողական բռնակալութեան, այն ել պիտի չալտնի լինի, որ մարդիկ շատ անգամ բնական արտաներ են ունենում, անընդունակ են լի-

նում ամուսնական պարտքը կատարելու այն էլ գիտէք, որ մարդու և կնոջ շարաբերութիւնը մեծ մասամբ տիրապետի և ստրկի շարաբերութիւններ են, ուր ընտանեկան սէր չի կարող գուանալ. նկատեցէք, որ անդաւակ լինելը մի արատ է կնոջ համար, որի պատճառով նա ստիպւած է լինում «բարձը փոխելու», ինչպէս ժողովուրդն է ասում. և այն ժամանակ հատկանալի կը լինի, որ ալդպիսի պաշման ներում չատ բնական է, որ կինը զաւաճանէ իւր անընդունակ ամուսնուն կամ ամուսինը իւր աստած կը նոշը... Եւ եթէ ալդ երեսիթը մի քիչ խորը դիտելու լինէք, կը տեսնէք, որ «սիրող են անում» մեծ մասամբ ընտանեկան դժբաղդները ժողովուրդը դա չի անւանում անառակութիւն, ալլ «սիրող անելը». — սէրը անդաստապարտելի է, նա և սերնդի ազնւանալու հիմքը:

Ժողովը բարուականութեան, կամ ալելի ևս լոււ ասել, նորա կուլտուրափի աստիճանը շատ պարզ կ'երեար, եթէ պ. Լ. Նը չմուանար լանցանք ների և նորա տեսակների վիճակագրութիւնը տալ. զարմանալի է, որ ալդ կարենը կիւտը բոլորովին չի լիշտում ալդքան բազմակողմանի աշխատութեան մէջ:

Սական ալդ աշխատութիւնը բազմակողմանի և հարուստ է ոչ թէ որակով, ու լ. քանակով. սատանաներին վերաբերեալ անցողական սնուախապաշտութիւններին ահազդին տեղ է նւիրւած, իսկ մի այնպիսի էական կողմ, որպիսին է լանցանքների վիճակագրութիւնը կամ ժողովրդի կուլ-

տուրական քարաքտէրը բոլորովին բաց է թողնւած. ի դէպ է նկատելու Զաւախքը Կովկասի ամենահանդ գարս գաւառներից մէկն է. երեք տարի որանից առաջ մի ամիս շարունակ Արևալքալաքի բանտում լանցաւոր, իսկ քննիչի մօտ գործեր չկախին քննելու. — մի երեսով, որ Եւրոպակումն էլ հազիւ կը պատահի. Ազգ բաւական չէ, պ. Լ.-նը մուացութեան է տւել նաև համայնքը մարդը հասարակացին էակ է, ասել է Արիստոտելը, առանց հասարակութեան համայնքի, առանց համական միջավագրի չին կարող առաջ գալ բանահաւաքի նկարագրած երեսիթներից և ոչ մինը... Սական պ. Լ.-ի ոոը քարի է դէմ առնում այնահետ, ուր լոռում է պ. Խալաթիսի ծրագիրը, որով նա առաջ նորդւել է իւր նիւթերը հաւաքելիս:

Առաս նիւթեր կան գրքի մէջ ժողովրդի հաւատալիքի, հարսանիքի, աղաբերքի, կնուճքի և ալպոց մասին... Որպէս նաև տեղի բարբառով զրոցներ զանազան պարունակութեանար:

Իացց ինչ որ մենք ասել ենք 1892 թ. «Մուրճ»ի 7—8 № ում «Զաւախքի բուրմունք»-ի մասին, նոնն էլ կրկնում ենք և այժմ որ բառբառի նրբութիւնները, մանաւանդ հնչեւաբանութիւնը ալլանգակւած է. Օրինակներ ամելորդ ենք համարում բերել մասնանիշ լինելով մեր անցեալ քննադատականի վրայ որից պ. Լ.-ն չկարողացաւ օպտել. Պր. Լալայեանը բարբառ չփակ և աղանդակում է նորա հելիւնաբանութիւնը, ինչպէս որ ալանդակի է թիւնը.

նաև բոշակերէն երգերինը<sup>1)</sup>). «Զաւախքի բուրմունք»-ի սխալները պ. Լ. ճ իւր պատասխանի մէջ<sup>2)</sup> փաթաթում էր Հրատարակչ. ընկ. գգին. իսկ աղմու ինչ կ'ասէ:

Հաւաքածուի լրջութեանը վեասում են նորա մի քանի լեզւաբանական բացատրութիւնները, որոնք առ սակաւը հաւաքողի բորիկութիւնն են ցուց տալիս այդ զիտութեան մէջ. Խըրթըզը—նա հանում է վրացերէն էրթւիս բառից. զա վրաց ազգասիրական բացատրութիւնն է. Աբով սարի իբր թէ նշանակում է քրմապեա. ո՞ր լեզուվ.

Կուրիօզների թէին է պատկանում և 134-րդ երեսի ակս նկարագիրը. ձինի և բքի պատճառով պիտիզացիք ամբողջ շաբաթով բանարկւած են մնում և կերակրում են այն հացով, որ բարեկամները հերթիւը բանում և վայր են կախում. հապա այդ բարեկամները բնչպէս են դուրս գալիս տանից. կամ եթէ զուրսն են մնացել՝ բնչպէս չեն սառչում ցրտից. ո՞ւ կարի է առասպեկտ.

Ընդհանրապէս վերցրած զիրքը իւր ահազին ծաւալով պատկառելի տպաւորութիւն է թողնում և եթէ աչքի առաջ ունենանք նորա Ե-պատկերները, հինգ ահազին նկարների

տախտակները տպագրութեան և թղթի մաքրութիւնը, ապա նա չափաղնց էժան է. 2 րուբլի:

Ե զէպ՝ պատկերների մասին. ինչ կարիք կար ազգական Վիրխովի և Լէ-Տուրնօ-ի պատկերներին, ես չեմ հասկանում. առաջին՝ Վիրխովի պատկերը աջող չի կարելի համարել. և երկրորդ՝ նա մեծ էտնոգրաֆ կամ էտնոլոգ չե. նա մեծ է այլ ասպարիգում. Այդ երկու պատկերը այս հանդիսին շատ քիչ են լարմարում. Գորա էութիւնն ու ծուծը Զաւախքն է, և նորա ժողովրդի կեանքից ոչ մի պատկեր չկաչ. ոչ հաչ զիւզացին, ոչ հաչ զեղչկուչին, ոչ արհեստաւորը և ոչ մի ընդհանուր տիպացին պատկեր. Մի բուրժուա ուկէ պածուճ օրիորդի պատկերը զաղափար չի կարող տալ Զաւախքի ժողովրդի մասին. Փոխանակ Վիրխովի, Լէ-Տուրնօ-ի՝ կարելի էր Զաւախքու պատկերներ տալ. Դա թէ ցուցամոլութիւն չէր լինի, թէ նորութիւն կը լիներ և թէ հանդիսի նպատակին լարմար ու պատշաճ կը լինէր. Հաւ գիւղացու տունը, զործէք ները, տեղական կենդանիները, գութանը, սազը, կարող էին աւելի կարեսը լինել. նոքա ժողովրդի կուլտուրացի շոշափելի, իրական արտաւագահներն են... Նոքա փոխուած են ու կորչում. պէտք է նոցմ փըրկել կորուստից. Վիրխովների պատկերները երբէք չեն կորչի.

Գր. Վ. Պահյեան.

<sup>1)</sup> «Զաւախք»-ում բրշաների մասին գրածը թող ընթերցողը համեմատի «Մուրճ» 1892 թ. № 7, 8 և 9. «Հաչ բոշակներ»—լողւածի հետ.

<sup>2)</sup> Տպւած «Մուրճ» 1892. № 10.

ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ Յակոբ Տէր-Դէռդզեան. — Մցիրի. — Մուրճ» 1895թ.

№ № 5, 6:

ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ Յովհաննէս Թուլմանեանց. — Մծիրի. Հրատ. Փ. Վարդաղարեանի, Թիվլիզ, տպարան Յ. Մարտիրոսեանի 1896թ. գինն է 15 կոսէկ:

Զնակելով իր կարճատե գրականական գործունէութեան, Լերմոնտովը ուսւաց գրողների մէջ խոչոր տեղ է բռնում: Նա լայտնի է մանաւանդ իր տաղաչափական բանաստեղծութիւններուի: Նորա անմահ պօէմաները ոչ թէ լոկ օքեկտիւ ռատմածքներ են, աչ նոյցա մէջ արտացոլում են պօէտի անձնաւորութիւնը, ձղտումները, ցանկութիւնները, մարդկանց ու կեանքի վերաց նորա ունեցած հակացքները և հեղինակի բոլոր հոգեկան աշխարհը: Այդ քնարական պօէմաներից առաջնակարգ տեղ են բռնում «Դեւը» և «Մծիրին», որոնք, թէ դեղարւես տականութեան կողմից և թէ լեզվի ճոխութեան կողմից, դասական գըրւածքներ են ճանաչւած: Պատւառոր տեղ է բռնում Լերմոնտովինան «Հաջի Արրեկը»: Դեւը սկսեց գրւել 1821թւն, իսկ ժամանակը նորան մի քանի և նգամ փափոխութեան ենթարկեց: Իսկ «Մծիրին» գրւել է Լերմոնտովի գրականական գործունէութեան այն բեղմնաւոր պերիոդում, երբ հեղինակը հասաւ իր փառքի ապոգէին:

Մեր աղքատիկ բանաստեղծական գրականութիւնը համարեա սկսւեց Լերմոնտովով: Առաջին անգամ լսու տեսաւ հանգուցեալ Մատաթեանի

թարգմանած «Դեւը» 60-ական թւականներին, երբ դեռ նոր էր ծնունդ առնում հայոց աշխարհիկ գրականութիւնը և երբ մեր գրական լեզուն գեռ նոր էր մանում իր առաջին ֆազիսի մէջ: Սատաթեանի թարգմանութեան մէջ թէպէտե կան բնագրից շնորհմներ, անհարթ տեղեր և համառօտութիւններ, բայց նա ընդհանրապէս ճանաչեց իրեն չաջող գործ: Բայց և աճնպէս «Դեւը» կարօտ է երկրորդ, աւելի չաջող և լիակատար թարգմանութեան: Բացի «Դեւից» թարգմանւել են «Հիւսիսափակում» և աչ հանդէններում Լերմոնտովի ստանաւորներից մի քանիսը: Եւ ինչպէս որ Հիւսիսափակուց դէս ամբողջ քառորդ գար հաչ բանաստեղծութիւնը նոր սերունդ չունեցաւ մեզ մօտ, աճնպէս էլ Լերմոնտովի մնացած զործերի թարգմանութիւնը լիտաճգւեց մինչեւ հաչ բանաստեղծութեան մէջ նոր սերունդի առաջ գալը, որ և երեան կիւտ զիմաւրապէս «Մուրճ»-ի մէջ: Եւ իրօք, «Մուրճում» սկսեցին տպագրւել մի շարք թարգմանութիւններ, որոնք, թէ իրանց կենդանի ու սահուն լեզուվ և թէ բնագրին հաւատարիմ լինելով, գրաւցին բոլորի ուշադրութիւնը Դրանց թարգմանիչն է պ. Յակոբ Տէր-Գէ-

որդեանը, որը տւեց «Մուրձի» ընթերցողներին Լերմոնտովի «Մծիրիխ», «Հաջի Աբրեկի» և «Փախստականի» թարգմանութիւնները. Բացի՝ որպահից «Մուրձում» լուս է տեսել նաև Պուշկինի «Ժլատ Առաքետը», նույն թարգմանչի ձեռքով թարգմանւած: Այդ թարգմանութիւններից մանաւանդ աւելի լաջողւած է «Մծիրիխ», որը կրկին թարգմանել է պ. Յովհաննէս Թումանեանցը և լուս ընծանել առանձին զրքով: Պէտք էր սպասել որ այս վերջին թարգմանութիւնը աւելի ու աւելի լաջողւած լինէր, քան առաջինը: Իսկ թէ որքան է աջողւել պ. Յովհաննէս ԹումանեանցինաՄծիրիխ թարգմանութիւնը, մենք այժմ ցուց կը տանք, համեմատելով նրա զրքովիը բնադրի և պ. Տէր Դէորդեանի միենոն թարգմանթեան հետ:

Ակսենք այն բանից, որ պ. Յովհ. Թումանեանցը շատ տեղ չի ըմբռնել բնադրի միտքը և շեղւել է իսկականից:

Однажды русский генералъ  
Изъ горъ къ Тифлису проѣз-  
жалъ.

Տ.-Դ. Մի անգամ մի ռուս զօրապետ  
Սարերից դէպի Թիֆլիզ էր  
գնում:

Թում. Մի ռուս զեներալ կոլիկաս լեռ-  
ներից

Մի անգամ դէպի Թիֆլիզ էր  
գալիս (Եր. 4 տ. 19):

Խնջու համար գալիս և ոչ զնում? որովհետեւ Թումանեանցը այժմ Թիֆլիսումն է գտնւում? իսկ եթէ նա լինէր Մոսկվայում, գուցէ զնում թարգմանէր: Ակսենդ Թումանեանցը

գործողութիւնը յարմարեցնում է իր պատահական բնակատեղիին:

..Зналъ ли ты

Разгульной юности мечты?

Или не зналъ, или забылъ,

Какъ ненавиделъ и любилъ.

Տ.-Դ. ...Զգացնել ես արդեօք

Ուրախ եւ անհոգ

Պատանեկութեան վառվառն

ցնորդների

Թէ չես զգացնել և կամ չես լիշում,

Թէ ինչպէս սիրում և ատում էիր:

Թում. ...Ունեցնել ես դու

Ցնորմունքները անհոգ պատա-

նու:

Կամ չես ունեցնել կամ մոռնց

ես արել,

Թէ ինչպէս ես դու նախանձնը,

սիրել (Եր. 9, տ. 8):

Разгульный նշանակում է զրուտ-

սէր, ոչ թէ անհոգ, ինչպէս թարգմա-  
նել է Յովհ. Թում. Բնագրին աւելի

մօտ է Տէր-Գէորգեանինը՝ ուրախ եւ  
անհոգ: Նեանձնելու նշ. ատել, իսկ

Թումը թարգմանել է նախանձնը: Որ-

քան տարբերութիւն ատել ենախանձնել  
խոռքնի մէջ! Ակսենդ լիշոր

սիալի համար Թումը մինչեւ անգամ  
արժանի է առանձին լանդիմանու-  
թեան:

Съ важностию лица.

Տ.-Դ. Լուրջ հայեացքներով.

Թում. Խոժոռապէմ. (Եր. 12, տ. 3)

Ակսենդ երկուսն էլ անդաշող են

թարգմանել, Խոժոռապէմ իսկապէս

նշանակում է սրբազն, գրույն:

Բնագրին աւելի մօտ է Տէր-Գէոր-

գեանինը:

И блескъ оправленныхъ по-

жонъ

Кинжаловъ длинныхъ.

§. 4. Фаустъ вънѣ бѣ рѣ фиалы.

Фпм. Фындыкъ ашадъ ашадъ вънѣ бѣ рѣ  
фиалы. (Бр. 12 т. 4)

Фындыкъ фѣтъ ф. др. оправленный  
խօսքը ինչու պղնձապատած է հասկա  
ցել: Սիթէ խանչալի պատեանը միշտ  
պղնձով է լինում պատած? Ընդհա-  
կառակը խանչալները ըստ մեծի մա-  
սին արծաթապատ ևն լինում:

¶. 8. оվճанъ въ թումանъ аնցը գա-  
զափար չունի ոռւսաց լիգի անցեալ  
անկատար և կատարեալ ժամանակ  
ների մասին: Դորա համար էլ այն  
նկարադրութիւնների մէջ, ուր, ըստ  
հեղինակի, պէտք է լինէր մի որեիցէ  
գործողութեան շարունակութիւն  
կամ տեսողութիւն, ըստ Թ.-ցի դուրս  
է գալիս գործողութեան վերջանացը  
կամ կարճատեսութիւնը: Օրինակ,  
բնադրի ոմակար, что я дѣлаль,  
жиль, бѣжалъ, различалъ, сливалось  
խօսքերը անկատար ժամանակվ ևն  
գործ ածւած, իսկ Թ.-ցը թարդմա-  
նել է կատարեալով՝ միտս եկա (Бр.  
12, т. 10), ինչ արի (Бр. 13, т. 3),  
ապրից (Бр. 13, т. 4), վագեցի (Бр.  
14, т. 3), որոշեցի (Бр. 14, т. 15),  
մրացած էին (գերակատար!). իսկ ընդ-  
հակառակը ճարужилось, որ պէտք է  
լինէր պտուեց (կատարեալ), թարդ-  
մանած է պտոյտ էր գալիս (Бр. 31,  
т. 6): Ժամանակների ախպիսի խառ-  
նակութիւնից մտքի փոփոխութիւն-  
ներ են առաջացնում և բանաստեղ-  
ծականութիւնն էլ վնասում է: Ու-  
րիշ բան է, երբ պատանին, երանի  
տալով իր անցկացրած ազատ երեք  
օրերին, հրճւանքով ասում է: «Ես  
ապրում էի!», ուրիշ է, երբ նա

ասում է: «ապրեցիու: Այս ամէն զէպ-  
քերում Տ.-Գէորգեանը ուզիդ է  
թարգմանել:

Гроза յтихъ.

§. 4. Մըրիկն հանդարտաւց:

Թում. Որոտմունքն ընկառ (Бр. 14,  
տ. 12):

Անհասկանալի է մեզ համար թէ  
ինչու վերջինս грозա խօսքը որոտ-  
մունքն է հասկացել, քանի որ պօչար  
մեզ փոթորիկ է ներկարացնում և  
ոչ թէ չատկապիս որոտմունքը, որը  
կարող է լինել և առանց փոթորիկի:  
Շնորհիւ դորան ըստ Թ.-ցի՝ որոտ-  
մունքը պոէմակի մի այլ տեղում ծա-  
ռից անրս էլ է պոկում!

Хотя безъ словъ

Миъ внятепъ быль тотъ раз-  
говоръ,

Немолчный րօռուն, վեчный  
споръ

Съ упрямой շрудою камней.

§.. 9. Հասկանալի էր առանց խօս-  
քերի:

Նոցա զրոցը վաղուց ինձ հա-  
մար,

Եւ նոցա զանգատը անլուելի:

Եւ քարերի հետ կուրւ չամար  
Թում. Պարզորոշ էր միտքն ան խօ-  
սակցութեան

Անլուռ աղմուկը, վէճն հաւեր-  
ժաւան:

Հարւածը չամար ժայռերի կրծ-  
քին (Бр. 15 т. 8):

Այս հատւածի մէջ Թ.-ցը երկու  
խօչոր սիսալ է արել՝ րօռու-աղմուկի:  
գրудա-կուրծք (կարծել է թէ գրуд-  
չի): Պօէտի խօսքը այսակ հեղեղի  
(ՊՈՏՈՅՑ, ըստ Թ.-ցի-վակի!) անլուռ  
տրտունջի կամ զանգատի մասին է և

ոչ թէ նորա աղմուկի, Աղմուկը կարող է լինել և ուրախութեան և անքաւականութեան, իսկ զանգտար լինում է միայն իբրև անքաւականութեան արտավայտութիւն։ Ուրեմն հարկ չկար թ.-ցին աչսանդ մի որոշեալ հասկացողութեան տեղ գործ ածել անորոշ։

И, какъ они, на встречу даю  
Я поднялъ голову мою...  
Я осмотрѣлся.

Տ.-Գ. ... и нынѣ նման  
Գլուխու բարձրացրի օրւակ լան-  
դիման.

Նայեցի շուրջաւ,

Թում, նրանց պէս օրին դիմաւորելու  
Ես էլ զլուխս բարձրացրի վերն.  
Մտիկ արեցի. (Եր. 15, տ. 20)

Բոլորովին սխալ է թարգմանել  
թ.-ցը օսмотрեալ խօսքը։ Պօէմակի  
հերոսը ոչ թէ մտիկ արեց միայն մի  
կտի վրաէ, այլ նա իր շուրջը նայեց  
(կամ շրջանայեց) և սկսեց նկարագրել  
իր շուրջը եղած տեսարանները։

Мне стало страшно; на краю  
Грозящей бездны я лежалъ.

Տ. Գ. Ես սարսափեցի սպառնող անդնդի։

Մոտն էի պառկած։

Թում, Սարսափն ինձ պատեց, անգա-  
տակ ու սև  
Անդունդի եղին էի պառկած.  
(Եր. 15, տ. 22)

Ակսուղ թ.-ցը грозящей խօսքը,  
համարելով աւելորդ, գուրս է գցել  
իր գրքից, Երեխ, նա կարծել է, որ  
եթէ պատանին պառկած է, եղել  
սարսափելի անդունդի եղին, ուրեմն  
առանց այն էլ անդունդը նրան մահ  
կը սպառնար։ Բայց անդունդը կա-  
րող է լինել սարսափելի, սակայն ոչ

սպառնացով, իսկ պօէտի խօսքը այս-  
տեղ սպառնացով անդունդի մասին է։

Смѣась неловкости своеи.

Տ.-Գ. Անճարպիկութեան վերակ ժպտա.

լով։

Թում, Ծիծաղելով իրան վրայ (Եր. 19  
տ. 5)

Զքնազ վրացուհին, սալթքելով  
քարերի միջին, իր անճարպիկութեան  
վրակ էր ծիծաղում և ոչ թէ իրա  
վրայ, ինչպէս կարծում է թ.-ցը,

И тада она легко, назадъ

Изгибы длинные чадра

Откинувъ.

Տ.-Գ. Թեթև գեռում էր նա, էստ գցելով

Զադրայի երկար ծալւած քները։

Թում, Եղարշի ծալքերն ետե ձրգած,  
Ժեթեաքակ գընում էր նա.

(Եր. 19, տ. 7)

Թ.-ցը чадра-ն թարգմանել է  
շլորչ, բայց չաղրա արաբերէն նշա-  
նակում է ծածկութ (չարս ս.), որով  
ծածկում են արենեան կանաչը  
իրանց երեսը։ Պօէտի խօ-  
քն էլ աչսանդ այդ ծածկոյթի մա-  
սին է, որը ոչ թէ շատրից է լինում,  
այլ աւելի հաստ կտորից,

Лишь серебристой бахрамой  
Вершины цѣпи синѣговыѣ

Вдали сверкали предо мной,

Տ.-Գ. Հեռու շղթակի ծիւնու գագաթ-  
ներն

Փալլիլում էին իմ առաջ պակ-  
ծառ,

Կարծես արծաթեակ գեղեցիկ  
ծոպեր։

Թում, Միան գագաթները ծիւնու  
սարերի,

ինչպէս արծաթեակ ծոպեր ահ-  
ոելի՝

Պոպղում էին առաջիս հեռուում.  
(Եր. 21, տ. 8)

Զգիտենք թէ ինչու է Թ.-ցը  
արծաթեալ ծոպերից անպէս վախե-  
նում է, որ նրանց կպցրել է անոելի  
ածականը: Ազդ խօսքը միանդաման  
աւելորդ է և անտեղի:

Все лѣсъ былъ, вѣчный лѣсъ  
кругомъ.

Տ.-Գ. Եռուրջս ամեն տեղ անտառ ու  
անտառ.

Թում. Եռուրջս անտառ էր, կուսական  
անտառ: (Եր. 22, տ. 4).

Какой-то звѣрь однимъ прыж-  
комъ

Изъ чащи выскочилъ и легъ,  
Играя, навзничъ ва песокъ.

Տ.-Գ. Յետու մի գաղան թեթե ու-  
տիւնով

Յատկեց անտառից և թռչո-  
տելով

Պառկեց աւազում երեսի վերալ:  
Թում. ...ինչ որ գաղան

Մի ուստինով թռաւ, պառկեց,  
Աւազի հետ խաղալ սկսեց (Եր.

23, տ. 15)

Բնագրում բոլորովին չի ասած  
թէ՝ գաղանը սկսեց աւազի հետ խա-  
ղալ. իսկ Թ.-ցը, գաղանին փոքրիկ  
երեխայի նման խաղացնել է տալիս  
աւազի հետ, մի բան, որ ազդ գա-  
ղանի մտքովն էլ չէր անցնիլ աղ-  
րոպէին...

Надежный сукъ мой, какъ  
топоръ,

Широкій лобъ его разстѣкъ...

Онъ застоналъ, какъ человѣкъ,

И опрокинулся. Но вновь—

Хотя лила изъ раны кровь

Густой, широкою волной—

Бой закиаъль, смертельный  
бои!

Տ.-Գ. Հաւատարիմ ճիւզը, ինչպէս  
ոուր կացին,

Նորա լան ու հաստ ճակատը  
ձեղքեց,

Եւ հառաչելով՝ նա մարդու նման  
կամաց շուռ եկաւ և գետին  
փուցց:

Եւ թէն սաստիկ արիւն էր հո-  
սում նորա խոր վերթից,

Մահացու կոփւը կրկնակի ու-  
ժով բորբոքւեց նորից:

Թում. Ծանր ճիւզս ինչպէս կացին՝  
ձեղքեց նորա ճակատը լան...

Նա հառաչեց մարդու նման  
Եւ շուռ եկաւ: Սական նորից

թէն նորա խոր վերթից  
Հոսում էր չորդ արիւնն ան-

քանի—  
Վասւեց կոփւն օրհասական:

(Եր. 24, տ. 16)

Պօէտի ասելով, պատանին կան-  
խեց և իր լուսալի ճիւզով ձեղքեց

լովազի ճակատը, որի բացւած վերից  
արիւնը սկսեց հոսել: Ակստեղ խօսուու

է ան վերքի մասին, որը գոյացել էր  
միայն մի հարւածից. իսկ Թ.-ցը

գրել է վերբերից, կարծելով թէ՝ պա-  
տանին իր ճիւզով մի քանի անգամ

է գարկել գաղանին և նորա մարմինը  
լցրել վերբերով. Ազդ սխալով Թ.-ցը

բոլորովին կորցրել է եղելութեան  
իմաստը?

Таковъ цвѣтокъ  
Темнichnii.

Տ. Գ. Ալղակս է մութ ծաղիկը բանտի.  
Թում.

Անլուս խաւարում բուսած ծա-  
ղիկը (Եր. 29, տ. 3)

Ակստեղ երկու թարգմանութիւն.  
Ներն էլ սխալ են. խորհուրդ ենք  
տալիս Տէր Գէորգեանին իր թարգ-  
մանութիւնը արտատպելու ժամա-  
նակ՝ մութ խօսքը զնի ծաղիկ խօսքից  
ինչոր. Բայց ծիծաղելի է Թ.-ցինը:  
Տեսնայ վեճույք նշանակում է  
բանտային ծաղիկ և ոչ թէ անլոյս խա-  
սրում բառած ծաղիկ: Աս բուսաբա-  
նական մի խոշոր սխալ է: Միթէ  
խաւարում (այն էլ անլոյս) ծաղիկը  
կարող է բուսնել? բոլոր աճելու հա-  
մար անհրաժեշտ պահմաններից մէկն  
է և լոյսը, զէթ որքան լուս կարող է  
լինել բանտում:

Потомъ

Играя, нѣжася на немъ,  
Тройнымъ свидалася кольцомъ

Տ. Գ. Ապա քնքարար խաղում էր  
վերան

Եւ գալարում էր օղեր կազմելով:  
Թում. Զգուշ սողում էր, քնքարով  
խաղում,

Եռակի ոլորում, օղ շինում սպին:  
(Եր. 30, տ. 13.)

Պօէտի աւելով, օձը ինքն էր  
եռակի ոլորում և իրանից օղեր  
կազմում: Ալղակս է հասկացել և Տէր-  
Գէորգեանը, իսկ Թ.-ցի ըմբռնողու-  
թեամբ՝ օձը ոչ թէ ինքը, ազ նա  
իր ագին էր եռակի ոլորում և օղ  
շինում: (Ալղակս երկար ագի!!) Ակս  
նոյն հասուածի մէջ Թ. ը չի թարգ-  
մանել բնագրի հետեւալ խօսքերը.

Надписью златой  
Покрытый до низу клинокъ.

Մեզ անհասկանալի է, թէ ինչու  
թարգմանիչը, աւելորդ համարելով  
այս համեմատութիւնը, նսեմացրել է  
հեղինակի նկարագրած պատկերը:  
Ակստեղ Տ.-Գ. ը թարգմանել է.

Ծածկւած ողջ երկարութեամբ  
Միերախակալ ուկեաց մակագրով:

Казалось мнѣ,

Что я лежу на влажномъ днѣ  
Глубокой рѣчки.

Տ. Գ. Թւում էր կարծես,  
Խոր գետի տակը պառկած էի ես:

Թում. Անղակս էր թւում,  
Թէ խոր գետի նամ չատակում  
պառկած էի. (Եր. 31, տ. 11)

Влажный չի նշանակում նամ (խո-  
նաւ), ալ թաց: Բացի գորանից գետի  
չատակը նամ (խոնաւ) կը լինէր ալ-  
ժամանակ, եթէ ջուրը մի փոքր ա-  
ռաջ ցամաքած լինէր: Իսկ ակստեղ  
խօսւում էնոսող գետի չատակի մասին:

Меня печалить лишь одно:  
Мой трупъ холодный и нѣмой  
Не будетъ тлѣть въ землѣ  
родной.

Տ. Գ. Բայց վշտացնում է ինձ միայն  
մի բան,

Այն է՝ անմունչ, սառած դիակս  
Հարազատ երկրում չպէտք է  
նեխւի.

Թում. Մի բան է միայն ինձ տիրա-  
ցնում,

Որ իմ դիակն ալստեղ—հեռու,  
իմ մալր հողում չի փթելու.  
(Եր. 33, տ. 17)

Թ.-ցը աւելորդ է համարել պո-  
չտի холодный и нѣмой խօսքերը:  
И повѣсть горькихъ мукъ моихъ

Не призоветъ межъ стѣвъ  
глухихъ

## Вниманіе скорбное ничье На имя темное мое.

§.-Գ. Եւ պատմութիւնը իմ տաճ-  
ջանքների

Այս խուլ պատերում, չը

իմ անւան վերակ և ոչ մի մարդու  
Ուշադրութիւն. նը տիխուր, վշտալիւ,  
Թում. Եւ ցաւերիս վէպքը տրտում  
Զեն պատմելու խուլ խրծիթում,  
Որ մէկն ուշգով լսի ու լայ .  
իմ տիխրալի անւան վրակ

Վերջինիս թարգմանութեան մէջ  
աւելցրած է լայ խօսքը, մինչդեռ  
պօէտը լալու մասին ոչինչ չի ասում.  
Պատահին ուզում է ասել, որ նորա  
դառն տանջանքների պատմութիւնը  
չպիտի դարձնի ոչ մէկի վշտալի ու-  
շադրութիւնը նորա մութ անունի  
վրայ:

.. Онъ съ своихъ высотъ  
Привѣтъ прощальный мнѣ  
пришлеть.

Տ. Գ. իւր կատարներից  
Հրամեցտի ողջուն կ'ուզարկէ նա  
ինձ.  
Թում. Ուզարկի նա ինձ վերջին հրա-  
մեցտ

իր բարձունքներից հզօր ան-  
նւած (Եր. 35, տ. 12)

Да, заслужиль-я жребій мой!  
§.-Ф. А. үш, үйлдешін арғашынің էң,  
өтпел. Հա, арғашынің եմ үйлдешін,  
հասқын, (б. 28, ш. 15)

Ազատեղ էլ թոցը երկու վանկ  
աշխատելու համար աւելացրել է  
հայրիկ խօսքը. իսկ եթէ հարկաւոր

Այսէր հինգ վանկ գուցէ գրէր հայ-  
ոիկ, օ՛ հայրիկ.

Տէր-Գէորգեանը ընտրել է իր համար տասնվանկեան տաղաջափութիւն։ Ալդաքս սկսում է նա իր թարգմանութիւնը, ալդաքս էլ վերջացնում է իսկ Յովկաննէս թուռմանեանցի թարգմանութեան մէջ մենք երբեմն զըսնում ենք տասնվանկեան, երբեմն էլ ութվանկեան տեղեր, Ազդ խառնակ տաղաջափութիւնը գուցէ ամսործելի լինէր, եթէ անէքը ամբողջ զլուխներով, իսկ եթէ միննոյն զուկը սկսել է 10 վանկով, չանկարծ շարունակում է 8-ով և կտուզ դարձեալ 10-ով, կորցնում է իր ներդաշնակութիւնը։ Օրինակի համար վերցնենք նորա **ХVIII** դլուխը։ Այս զլիսի առաջին 11 (այն էլ կէնդի) տողերը 8-վանկանի են, հետեւալ 11

տողերը—10 վանկանի, յաջորդ 4  
տողերը—դարձեալ 8 վանկանի, իսկ  
վերջին 3 տողը (դարձեալ կենք!)  
դարձեալ 10 վանկանի: Բացի դորա-  
նից Յոթհաննէս Բուռմանեանցի յան-  
գերը բռնազրօնիկ են և մընսան-  
իսկ շատ անգամ շանգ կազմելու հա-  
մար նա բաւականանում է միայն  
տողերի վերջին մի տառով:

Նեղութիւննելը հեռաւոր ճամ—ըի  
\* \* \* \* \* վայրենից  
(Եռ. 5, տ. 3—5)

...ծերու-նի  
Որ մնաստանում ես խորթանակ-ի  
(Եր. 8, ա. 9—10)

Երբ ուշքի եկալ կը ը-կին <sup>(Եր. 19:  
ա. 20-21)</sup>

իւ ետ քաշւեց սրտիս ար—իւնն (որու տեղ է լանգը?)

Այն օրից Աստուծու չնորհքը իջաւ

և Վրաստանը ծաղկեց, ուռնացաւ  
(եր. 4, տ. 14—15)

...ապա թէ—այն

Մութ թաւուտից ինչ որ դա—դան  
(եր. 23, տ. 12—13)

Ալ շաւիզով էր ինձ բաղզը տան—ում  
Բայց համոզւած եմ այժմը նրան—ում

Որ մեր աշխարք—ում  
Խս էլ կը լնէի քաջերի շարք—ում  
(եր. 24, տ. 3—6)

Չորս ում վերջացած տողերը իի-  
շեցնում են մնաց մոնուսն պարկա-  
պղումը:

Ական դեռևս կասկածներով լի  
Դարձում էի թէ՝ երազում էի (եր. 27  
տ. 21—22)

Անլաց, ուժասպառ ևս սպասում էի  
Սրտից էր այն ձաշն, ասես, զուրս  
գա—լի (եր. 28, տ. 8—9)

Սեին էին աւալիս: Մէկի ետև—լից  
Ֆեր մնաստանը ժանիքները ցոյց  
Խփ պարիսպներով երեսում էր ինձ  
(եր. 30, տ. 19—21)

Աստեղ էլ կատարեալ պարկա-  
պղում:

Տէր-Գևորգեանի լեզւի ստհունու-  
թիւնը և ներզանակութիւնը չունի  
Թումաննեանցը: Սորա լեզւի մէջ կան  
անպիսի անհարթ տեղեր, որ դժւա-  
րութեամբ են կարդացւում: Երբեմն  
պատահում են միասեսակ հնչիւն-  
ների կուտակումն կամ այնպիսի ան-  
ախորժ և դժւարահնչիւն խօսքեր,  
որոնք կոպտացնում ու վիշացնում են  
բանասեղծութիւնը:

Անախորժ Ծ և Ղ հնչիւններից  
չետով չանկարժ անախորժ ուռնացաւ  
խօսքը: Տէսեք ինչ գեղեցիկ է  
Տէր-Գեորգեանի ալս միենողն հատ-  
ւածը.

Եւ աստւածային օրհնութիւնն իջաւ  
Վրաստանի վըրաց  
Նա ճոխանում էր ան ժամանակից  
Խւր ազինների հով ստւերներում:

Թումաննեանցը թարգմաննել է.  
Երբեմն երբեմն չանկարժ կիրճում  
Երեխի նման լալիս էր ճշում: (եր.  
14, տ. 18—19)

Ալս տողերը այնքան անախորժ  
են, որ կարդալիս մարդու ջղեր են  
լարսում:

Չանկալ խօսքը Տէր-Գեորգեանը  
չակալ է փոխել: Մենք հաւանում ենք  
Տ. Գ. ի ալդ խօսքը, որը հեշտ հաս-  
կացւում է և չունի մոնղոլական այն  
անախորժ հնչիւնը, ինչպիսին է չախ-  
կալ: Նմանապէս հաւանում ենք Տէր-  
Գեորգեանի հաշէա խօսքը ալս հատ-  
ւածի մէջ:

Խաւար եկնքի և երկրի մէջը  
Դժգուն լուսի ձիգ շերաը տարածւեց.

Եւ նորա վերաց  
Խնչպէս հաշէա  
Հեռու լիունների կեռ ատամնները  
Աչքս որոշեց:

Թում, Անքան լատակ էր, որ հրեշտակի  
Թուիչքը սուր աչքը բռնել կա-  
րող էր (եր. 17, տ. 9—10)

Ալս հատւածը զարձեալ դժւարու-  
թեամբ է կարդացւում, չնորհիւ մի-

անման հնչիւնների կուտակման։ Այս  
տողերը աւելի շուտասելովի են նման,  
քան թէ բանաստեղծութեան։  
Գտնում է ուզիղ և կրծաս ուզի (Եր.  
28, տ. 19)

Կամ թէ ճպուռի ճըռուցը լուէր (Եր.  
30, տ. 6)

Դարձնալ անախորժ հնչիւնների  
կուտակումն։  
Նորա վառվուռն շողերն արքեցին  
Խաւարչտին բանտում սովորած ծաղ-  
կին։ (Եր. 29, տ. 14)

Այս կտորը հաւերէն չէ, Շողերն  
աչրեցին ոչ թէ ծաղկին, այլ ծաղկը.  
անշունչ առարկաների հայցական հո-  
լովը նման է ուզդականին։ Իսկ թ.-ցը  
լանդ կազմելու համար խեղաթիւրե-  
լով քերականական մի տարրական  
կանոն, մեղ միայն ծիծաղեցնում է։

Չի հասկացւում թ. ցի հետեւալ  
ոչ հաւերէն տողերը։

Շուրջը սարերով  
Զգւում էր անծալր անտառը մթին.  
(Եր. 6, տ. 5)

Ես տեսնում էի, որ ուրիշներին  
Հալրենիք, տուն, ընկեր, ծնող ունեին,  
Մինչդեռ չունէի ես նրանց նման  
Ոչ թէ սիրելիք—այլ և գերեզման։  
(Եր. 8, տ. 12)

Ճիշտ է, անուս մարդիկ երբեմն  
և նթական տրական հոլովով են զործ  
ածում (օր. ինձ ունիմ հալր), բայց  
զրագէտին ալդ աններելի է։ Եթէ  
թ.-ցը կարծում է, որ հնթական  
տրականով պիտի լինի, ուրեմն ին-  
չու նա հետեւալ երրորդ տողի եսը,  
որ ըստ կանոնի ուզդական հոլով է,  
ինձ չէ լինել? Գրագէտը պէտք է  
լեզուն մաքրի անկանոնութիւններից,

տաշի, կոկի նորան և ոչ թէ ինքը  
նորան ծրմուի՝ թէ ինչ է—լանդ իմ  
ուզում զուրս բերել։

Լսեցի րիտան ծէն ու ծուները

Դէպի տուն վազող երամակների (Եր.  
11, տ. 19)

Սա ինչ հաւերէն է? Նախ մենք  
բիգւան խօսք չունինք. իսկ թէ թ.-ցը  
վանկի համար ուզում է իրիկան բա-  
ռը կրծտակը, թող զոնէ ասի ըիկւան։  
Այստեղ և բառն է խնդաթիւրած և  
նորա ուզդագրութիւնը։ Ինչ վիրա-  
բերում է ծէնուծուներին, ացանեղ դոքա-  
միանդաման անտեղի խօսքեր են,  
որովհեան բնագրի ցյան (խուլ հըն-  
չւն) խօսքը ալդ չէ նշանակում։  
Ձենուծուներ ժողովուրդը զործ է ա-  
ծում խառնիճաղանձ ձալների հա-  
մար։

Նամ տերենները շարժեց ու գնաց  
Եւ ծաղկենները չնչեցին քնչուծ։ (Եր.  
15, տ. 16)

Գաւառական նար թուրքերէն  
խօսքից լետու լանկարծ գրաբա-  
րնէած։ Իսկ զորանից մի քանի տող  
առաջ զարձեալ գրաբառ խօսքի՝  
աղջամուղ և հաւը, Աւշալրութեան  
արժանի է ալս հաւը խօսքը, թէ  
թ. ցը քանի տեղ է կրկնում։ Այս  
տեղերում, ուր պէտք է լինէր նոցնե-  
ներ, նա հաւը է զործ ածում։ Մեր  
կարծիքով ալդ խօսքի գործ ածեց  
աշխարհաբար լեզում աւելորդ է։  
Աւելորդ է նմանապէս պատրութեան  
տեղ վէպք զործ ածելը (Եր. 33, տ. 19)

Յովհաննէս Թումանեանցը շատ է  
սիրում նոցնանման բառերը երկու-  
տակներ օր. հում հում, խոր խոր,  
հով հով, մերթ մերթ, թեք թեք, իսկ  
մի քանի տեղերում անտառ խօսքից

անբաժան է Թաւուտ ածականը:

Ասի վեր կենամ—բաց թէ առաջիս  
Ամեն բան արագ պատու էր դալիս.  
Ասի թէ կանչեմ—լեզուս ցամաքած  
Առանց հնչիւն էր, անշարժ կար-  
կամած...

Ասի վերկենամի պէս դարձւածքն՝ ըլլ  
վեղարւեստական բանաստեղծութեան  
մի տեսակ հեքեաթի ձև են տալիս.

Բայս մեր ասածներից, Թ.-ցի  
թարգմանութեան մէջ շատ աչքի է  
բնիւում չատկացուցիչների և չատ-  
կացեալների անկանոն դասաւորու-  
թիւնը. Յալտնի է, որ հայոց աշխար-  
հարար լեզում չատկացուցիչը չատ-  
կացեալից առաջ է դասում. միան  
ոտանաւորների մէջ կարելի է այս կա-  
նոնից չեղւել, այն էլ երբեմն, եթէ  
որիշ հնար չկատ: Խոկ Յովհաննէս  
Թ.-ցի չատկացուցիչները ըստ մեծի  
մասին չատկացեալից չետու են դաս-  
ուլ, օր ծուխը բուրափի, փաշին շիր-  
մաքարերի, ցաւը տանջալի, կողմն արե-  
նիրի, ժամին վաղորդեան, փալն հրա-  
ֆանի, մարդիկ վաղեմի, մըրթիկն հողմա-  
գայր, միտքը խօսակցութեան և ալլն:

Աչ ինչ Տէր-Գէորգեանը հարկ չէ  
դպցել ալսովիսի միջոցների դիմելու:  
Զնակով այս պակասութիւններին,  
Թ.-ցը ունի և երկու հատ չաջողած  
խօսքեր՝ ծառս լինել և հեծուր (ըստ  
Տ.-Գ.-ի հեծնող):

Բաց և այնպէս Տէր-Գէորգեանցի  
թարգմանութեան մէջ էլ պատահում  
են մի քանի պակասութիւնները: Սա-  
կան աչդ պակասութիւնները ալն.քան  
քիշ են և հեշտ ուղղելի, որ բնաւ չեն  
նուեմայնում նորա ամբողջ աշխա-  
տանքի արժեքը:

Но въ всемъ мучительный недугъ  
Развилъ тогда могучій духъ  
Его отцовъ.

Տ.-Գ. Բաց տանջող ցաւը նրա հո-  
գում նորից  
Զարթեցրեց նախնեաց անվեհեր  
ոգին:

Տանջող ցաւը ոչ թէ պատահու-  
մէջ նորից զարթեցրեց նորա հալրերի  
կարող ողին, այլ միմիացն զարգացրեց:  
Ալսուղ եթէ չինէր նորից խօսքը,  
բնագրին աւելի կը մօտենար թարգ-  
մանիւը: Թ.-ցը ալսուղ ճիշտ է  
թարգմանել.

Его (тоску) предъ небомъ и  
земли

Я видѣ громко признаю.

Տ.-Գ. Ալժմ երկրի առաջ եւ երկնքի տակ  
Խօստովանում եմ նորան բաց-  
արձակ:

Պատահին վկաէ է բերում եր-  
կինքն ու երկիրը և նրանց առաջ  
բացարձակ խօստովանում իր կիրքը:  
Խոկ ըստ Տ.-Գ.-ի ալդ Խօստովանու-  
թիւնը կատարում է միան երկրի  
առաջ (այսինքն՝ մարդկանց առաջ),  
առանց երկնքի (Աստուծոյ) ներկա-  
ւութեան:

Въ тѣни разсыпаныи ауло.

Տ.-Գ. Նաև հովում շրջակաէ ցրաւ  
առւներ

Ալսուղ պօէտը խօսում է, այն  
միանկ առուի մասին, ուր ծնմել էր  
պատահին Թ.-ցը թարգմանել է  
տնտկ' եր, որը աւել ի ճիշտ է:

И мракъ очей бывъ такъ  
глубокъ.

Տ.-Գ. Ալն.քան թափանցող նորա աչ-  
քիրը:

Ալսուղ խօսքը ոչ թէ աչքերի

Թափանցողութեան վերաէ է, այլ  
նրանց մթութեան խորունկ լինե-  
լուն վերաէ:

Когда же я очнулся вновь.

Տ.-Գ. Երբ ես զարթնեցի իմ քնից խա  
զագ:

Պատանին ոչ թէ քնած էր, այլ  
նա ինքնամոռացութեան մէջ էր և  
ուշքի եկաւ:

Կարծեմ, աչսքանն էլ բաւական է  
ընթերցողին իր եղբակացութիւնն  
անելու ալդ երկու թարգմանութիւն-  
ների մասին, ձիշտ է, Տէր-Գէորգ-  
եանը, ինչպէս տեսանոք, ունի մի  
քանի անլաջող տեղեր, բայց ալդ  
բոլորը լոկ մի թեթև սրբագրութեան  
դործ է, որ կարելի է անել առան-  
ձին գրքով հրատարակելու ժամանակ.  
բայց մինենին ժամանակ Տէր-Գէոր-  
գեանի «Մցիլին» կարդացում է մեծ

ախորժանքով և կարելի է համարել հա-  
րազատ թարգմանութիւն թէ մտքի  
և թէ ոճի կողմից. և որ զլխաւո՞ն է  
կարդալով Տէր-Գէորգեանին՝ դուք  
զգում էք որ Լերմոնտովն էք կար-  
դում. Դրա հակառակն է Թուման-  
եանցի «Մծիրին», որը բայցի շատ  
բազմաթիւ սխալներից, չունի Լեր-  
մոնտովի զերազանց պոէմայի ոգին,  
աչնպէս որ ոչ մի որբագրութեամբ  
չի կարելի ուզողել. Յով. Թուման-  
եանցին ձանաշում էինք իրը հեղի-  
նակ լաջողակ ինքնուրուն ոտանա-  
ւորների՝ մանաւանդ գիւղական կեան.  
քից, բայց նա իւր Մծիրի-ով ու  
Նիլինի կալանաւոր-ով ապացուց  
ներ է տալիս որ Լերմոնտովներն ու  
Բայրոնները նրան մատչելի չեն:

Յարութիւն Թումանէան:

## ԺԱՄԱԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԵՅԹՈՂԻ ՈՐՈՎԾԻՄՆԸ Եւ Կառավարչի խնդիրը

Անդլիսկան հիւպատոսի հրաւերով ԶԵՅԹՈՂԻ գնացած մի անձ, մարտի 27-ին գրած մի նամակում հետևեալն էր հազորդում այնտեղի կարօտեալների մասին: «Կարօտեալների թիւն է մօտ 10.000, որից 7.000-ը փախստականներ են 17 գիւղերից. մնացած 3.000-ը գէյթունցիներ են: (ԶԵՅԹՈՂԻ քաղաքի բնակչիների թիւն է 7.000): Հիւանդներ ԶԵՅԹՈՒՆՈՒՄ՝ 3—4000 հոգի, մեծ մասամբ տիֆով և գեղենատերիացով. օրական մեռնում են 15-20 մարդ: Բժիշկ կայ մի հոգի՝ բժ. Նեպար, որ եկել էր Աջնթապից 10 օր առաջ. օրական 200 հիւանդի է այցելում: Առողջ համարւածներն էլ կմախքներ են ներկայացնում: Վերջին 5 ամսւայ ընթացքում կոտորածներից, խիւներից, քաղցից և հիւանդութիւնից ացանեղ մեռել են 4.000 մարդ: Փախստականները ամեն բանից զուրկ են. խկ տեղացիները թէե ունին տուն, տեղ, հագուստ, բայց բոլորովին աղքատացել են, որովհետեւ ամիսներ շարունակ պարապ են մնացել ու կերակրել ու խնամել են փախստականներին: ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԸ իրենք նպաստ չեն ստանում, միայն մի 100 մարդ օգնութիւն ստացել են բբիտանական: Հիւպատոսից և ինձնից բոլոր նպաստները գնում են փախստականների վրայ. 1500 մարդ կանոնաւոր կերպով նպաստ են ստանում աշխմ: Բայց նոցա կարիքները շատ մեծ են, նոցա պէտք է ամբողջ տան սարք ու կարգ տալ, տնացին անասուններ բաժանել, որպէս զի կարողանան կանոնաւոր տնտեսութիւն սկսել: Հիւանդանոցի համար ծառացում է լուսաւորչական հայերի ընդարձակ դպրոցական շենքը, որի մէջ զետեղւած են 40 մահճակալք:

Անձների գործակալութիւնը հեռագրում էր (մայիսի կեսին). ԶԵՅԹՈՒՆԻՑ ստացւած տեղեկութիւնները ցոյց են տալիս որ այն-

աեղ թիւրք պաշտօնեաները պահանջում են հարկերի ապառիկ-ները, չնայելով որ թիւրքիան պաշտոնապէս խոստացել է վեց պետութիւններին՝ չպահանջել այդ տուրքերը։ Երկիւդ կայ որ զէյթուն-ցիք կարող են այդ պատճառով նորից յուղել։

Զէյթունի կառավարչի խնդիրը, «Մուրճ-ի անցեալ համարում տպւած տեղեկութիւններից գէս, հետևեալ ընթացքնունեցաւ։

Ապրիլի 24-ին գեսպանների խորհրդակցութիւն եղաւ Զէյթունում քրիստոնեաց կառավարիչ նշանակելու մասին։

Մայիսի 16-ին գեսպանները հաւաքւեցին խորհրդակցութեան Զէյթունի գործերի դրութիւնն ըննելու համար։ Դեսպանները համաձայնութիւն կայացրին առանձին-առանձին առաջադրութիւններ անել ։ Դրանը՝ Զէյթունում քրիստոնեաց գայմագամ նշանակելու վերաբերմամբ։

Մայիսի 29-ին գեսպանների խորհրդակցական նիստում որոշ ւեց մի անդամ ևս յիշեցնել ։ Դրանը Զէյթունում քրիստոնեաց կառավարիչ նշանակելու մասին։

Յունիսի 10-ին հեռագիրը տեղեկացրեց թէ սուլթանը որոշ շել է քրիստոնեաց կառավարիչ նշանակել Զէյթունում։

Վերջապէս յունիսի 15-ին հեռագիրը հաղորդեց որ նշանակւած քրիստոնեաց գայմագամը Զէյթունում՝ մի յոցն է—Նատնակի էֆէնդի։

### Դրութիւնը Վանում եւ կոտորածներ

Վանից ապրիլի կէսին հաղորդում էին թէ չնայած Շաքիր փաշայի հանգստացնող յորդորներին, վանեցիք դեռ զգոյշ զիբե են բռնած։ շուկան գեռ փակ էր և գործերը դաղարած։ Զզացւում էր որ այդ սպասողական վիճակը աւելի երկար չէ կարող տևել ուստի և մօտալուտ էին համարւում կարևոր դէպքեր այդ քաղաքում։ ուր այդ ժամանակ մօտ 100 հազար հոգի էին ապաստանած։

Եւ իրօք, շուառվ Պոլսից տեղեկութիւն եկաւ, որ Վանում տեղի է ունեցած ջարդ, որի մասին ստոյգ տեղեկութիւն պահանջում էր։ Սակայն դա պէտք է որ այն լինի, որ կատարւեց յունիսի 5-ին։

Դեռ ևս մայիսի 2-ից Աէյտերի գործակալութիւնը հաղորդեց

թէ Վանի կողմերսւմ քրդերը ասպատակեցին Հայերի և նեստորականների գլուղեր:

Բայց այն, ինչ սպասւում էր, իրօք կատարւեց. ահա թէ Ռուսաց գործակալութեան հեռազիրները ինչ հաղորդեցին անցքերի մասին:

«Յունիսի 5-ին, Վանի վալիից Բ. Դուռը հեռազիր ստացաւ՝ անցեալ օրը Վանում տեղի ունեցած անցքերի մասին: Այդ հեռագրի համաձայն, մի հայ աղջկայ կալանաւորումը, որը յեղափոխական բովանդակութիւն ունեցող թերթեր ունէր իւր մօտ, յուղումն առաջ բերեց Հայերի մէջ, և վերջինները իրենց տներից սկսեցին հրացաններ պարպել թուրքաց զինւորների վրայ: Տները և խանութները փակւեցին: Հայերի և մահմեդականների մէջ տեղի էին ունենում կոխուներ: Հայերի մօտ գտնւել են շատ զէնքեր և նիկելած գործիքներ»:

Վիճնայից նոյն գործակալութիւնը հեռագուում էր. «Վանում կատարւած զէպքերը աւելի լուրջ բնաւորութիւն ունին, քան պաշտօնապէս հաղորդւածը, և յուզում առաջ բերին: Կոտորւածների թիւը 50-ից շատ անցնում է: Հայերի մօտ գտնւած զէնքերը — պարսկական ծագում ունին:

Նոյն գործակալութիւնը ապա հեռագրեց. «Վանում նոր անկարգութիւններ եղան, որի ժամանակ բազմաթիւ Հայեր սպանւեցին: Հայերից շատերը ապաստանւեցին անգլիական հիւպառոսութեան մէջ: Կարգը վերականգնած է: Սպանւածների ընդհանուր թիւը հաշւում են 400 հոգի»:

Եւ ապա՝

«Վանի անկարգութիւնների միջոցին թիւրք իշխանութիւնները դիմեցին անգլիական և ռուս հիւպառոսներին՝ ինդրելով միջամտել, որ և կատարւեց: 500 հոգի, որոնք դիշերը դէպի 9-ն լունիսի թողել էին Վանը, և նմարկւեցին յարձակումի քրդերի կողմից և ցրւեցին: Թողքատում և նիջսարում՝ նոյնպէս անկարգութիւններ եղան, բայց յաջողւեց իսկոցն դադարեցնել»:

### Նպաստների գործը

Դէմի Նիւսի հաղորդելով՝ Հայկական նպաստող քոնդը սկզբից մինչև այժմ (մինչ մայիսի կէսը) ժողովել է աւելի քան

400.000 ռուբլի: Նպաստները ուղարկւում են Փոքր-Ասիա տեղական մասնաժողովներին, որոնք պարբերաբար զեկուցանում են գումարների գործադրութեան մասին:

Ուշատմինստրի դուքսը շարունակում է նպաստների ֆոնդի համար աշխատել, որի նախագահն է նա: Յոյս ունի թէ Ռուսիան, Աւստրիան և Գերմանիան ևս կը հետեւն միւս ազգերի օրինակին, նպաստներ տալով:

Ուեստմինստրի գուքսը ստացել է Երզրումի նպաստող մասնաժողովից հետեւալ տեղեկութիւնները: Երզրումի նահանգապետը տեղեկացել է, որ Բայցուրդի համար նշանակւած է 600 լիրա, որով պէտք է բաժանեալ սերմացու 12.000 կարուեալ հայերին: Տեղական մասնաժողովը նոյնպէս բաժանել է 1.300 լիրա գաւառում: Մոտ 200 լիրայի արժողութեան սերմ ուղարկւած է Խընխո: Ինքը կառավարութիւնը ոչինչ ձեռք չէ առել այդ նպատակով: Սակայն Երզրումի նահանգապետը հրամայել է քիւրդերին յետ խլել հայերի անասունները: Երզրումի մասնաժողովը մինչև այժմ ունեցել է 8.000 ֆունտ (60.000 ռուբլի), որով օգնել է 12.000 անձի:

Անգլիական «Daily News» լրագրում հրատարակւած էր Երզրումից, գեռ մարտ ամսին գրած, մի նամակ, որ նկարագրում է իրերի վիճակը հետեւալ կերպով. «Մենք ամենայն օր այսուել 4,000 մարդու հաց ենք տալիս, և ապրուստ ենք մատակարարում յօտ 40 գիւղի, իւրաքանչիւր մարդու տալով օրը  $\frac{1}{2}$  պեկ հաց: Վիլայեթի մեծ քաղաքները և զիւղախումբերի կենտրոնատեղիները նշանակւած են իբրև նպաստ բաժանելու կէտեր, շրջակայքի համար: Այդ բոլոր կէտերում կազմւած են առանձին մասնաժողովներ՝ որոնց վրայ հսկում է Երզրումի կենտրոնական մասնաժողովը և տալիս է գործելու հրահանգներ: Դրամ տրւում է միայն բացառիկ գէսլքերում, որովհետեւ թիւրքեր, քիւրդեր և նոյն իսկ կառավարութիւնը հետամուտ են, թէ որտեղ փող կայ, որ վերցնն: Իսկ առհասարակ բաժանելու համար գործ են ածւում հաց, ցորեն, զգեստներ և անկողիններ: Երզրումից գուրս տեղերում կատարւում է նոյն գործողութիւնը: Մենք ուղարկում ենք տեղական մասնաժողովներին զրամ, իսկ նոքա ձեռք են բերում մթերք և բաժանում կարօտեալներին:

Երզրումից գրում էին Լոնդոնի լրագիրներին. «Դեռ շարունակում է այն կարօտ և թշւառ վիճակը, որին մասնւեց ամբողջ վիլայէթը և հայ ազգաբնակութեան երկու երրորդականը։ Առնւազը 50,000 հոգի քաղցած, զրկւած տղամարդ, կին և երեխաներ օգնութիւն են աղերսում։ Հազարաւոր այլիներ և որբեր իրենց աղիողորմ պատմութիւններով սարսափեցնում են մարդու։ Նոքա չեն կարողանում մոռանալ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների դժոխացին տեսարանները և ոչ մի ցոյս չունին ապագացի մասին։ Ֆողովուրդը վախենում է, որ մի գուցէ սարսափերը կրկնւեն, որովհետև թիւրքերի և քիւրդերի սպառնալիքները չեն վերջանում և այժմ։»

Տիկին Մերի Հիքսոն յայտնեց պաշտօնապէս Դէյլի Նիւս լրագրում, որ Կանանց ընկերութեան կողմից ուղարկւած փողերը հասնում են Վան և գործադրւում են նպատակայարմար կերպով, օրու Կիմրլի միջոցով։ Կարիքը զեռ լրացած չէ և օգնութեան պահանջը շատ մեծ է։

### Չ Ե Ր Ա Կ Ա Լ Ո Ւ Մ Ն Ե Ր

Երկու երիտասարդ ուսանողին 10 տարով տաժանակիր աշխատանքի գատապարտեցին միայն այն պատճառով, որ նոցա մօտ գտել էին մի ստորագրութեան թերթ զէյթունցիների օգտին։ Վերջին ժամանակները այդպիսի ստորագրութեան թերթերին նոյն տեսակ նշանակութիւն են տալիս, ինչպէս յեղափոխական գործին։

Մայիսի 22-ին Պերայում (Կ. Պոլիս) ձերբակալւեցին հայ աղքութեան պատկանող բոլոր հեռագրական պաշտօնեաները։

Կ. Պոլսում նոր կալանաւորւեցին (ապրիլի վերջերը) 1.200 հայ, մատնութեան վրայ հիմնւած. բայց հարցաքննութիւնից յետոյ արձակւեցին. 73 թիւրք ուսանողներ ևս Պոլսի զինւ. դպրունեցին։

Նատ հայեր ձերբակալւեցին Պոլսի Եէտի-գուլէի շրջակաները, լոկ այն պատճառով որ սահմանադրութեան տարեդարձի օրը (որ չկատարւեց) շատերը անդիտակցաբար գտնւում էին Ազգացին հիւանդանոցի առջև. կառավարութիւնը այդ օրը վախենում էր ցոյցերից և այդ պատճառով Պոլսի զօրաբանակը զէնքի տակ էր պահել։

Ելտըզի պալատից մայիս շուրջ 20-ին անհետացրած են 30—40 պալատականներ։ Այդ գէպքը մեծ գրգռում պատճառեց Պոլսի թիւրքերի մէջ։

Հայ ձերբակալւածներից մի որոշ թիւ Հալէպում արձակւեցին անդիական կառավարութեան առաջադրութեամբ։

Ըսդհանրապէս ձերբակալումները վերջին ժամանակներս նոր սաստկութիւն են ստացել. ոչ ոք այլ ևս ապահով չէ։

### Անգլիական արտայայութիւններ

Անգլիական նշանաւոր ազատամիտ գործող Ռեելեամ Հարկուրտ խօսեց մի նոր ազգեցիկ ճառ, որի մէջ անցողակի կերպով շօշափեց հայոց խնդիրը։ «Ես հաւատացած եմ, ասաց Հարկուրտ, որ իմ ունկնդիրներից շատերի սիրտը ողողւած է արիւնով հայկական կոտորածների առիթով։ Ես մի քանի անդամ խօսեցել եմ այս առարկացի մասին, բաց պէտք է շեշտեմ, որ ամենից ծանրը այն է անգլիական սրտի համար, որ լորդ Սալիւրբիւրի առանձին ջանքով կապած Կիպրոսի դաշնագրով, որի մէջ մասնակից չեն եւրոպական միւս պետութիւնները, Անգլիան վեցըրեց Կիպրոս կղզին և սլայմանական որւեց Թիւրքիայի հետ պաշտպանելու նրան Փոքր-Ասիայում հանկ Թիւրքիան խոստացաւ մոցնել ոէֆորմներ և պաշտպանել հանկին։ Այդ դաշնագրի հեղինակը այժմ բացասում է Անգլիայի պատասխանատութիւնը։ Խոկ մենք մոռացած թէ այդ և թէ մեր սեփական տան հոգսերը, պատերազմ ենք սկսում եղիպտոսում։

Անգլիայի ազատամիտ կուսակցութեան պարագլուխ լորդ Ռոգ-քէրին նորերս մի մեծ քաղաքական ճառ արտասանեց Նիւտօն-Արքուում, որի մէջ խօսեց և անդիական այժմեան արտաքին քաղաքանութեանու հայոց հարցի մասին։

«18 տարի սրանից առաջ Անգլիան ողջունեց լորդ Բիկոնսֆիլդի և մարքիզ Սալիւրբիւրիի վերադարձը ներնիլից. նրանք աշխատել էին այնպիսի պաշմանագիր կնքել, որով կարելի լինի Թիւրքիայի քրիստոնեաց ազգաբնակութիւնը ապահովեցնել թիւրքական կամացականութեան դէմ։ Բայց այժմ յացտնում է, որ Բ. Դրան հետ նրանց կնքած Կիպրոսի դաշնագիրը, որ բրիտանական կառա-

վարութեան իրաւունք է տալիս միջամտել թիւրքաց գործերի մէջ, ոչ մի իրական նշանակութիւն չունի: Ինչի՞ համար: Որովհետեւ դուք չէք կարող ուղարկել ձեր նաւասորմը Փօքր-Ասիայի կենարոնը: Բայց չէ որ Կիպրոսի դաշնագիրը կնքելու ժամանակ այդ անկարեցիւթիւնը գոյութիւն ունէր: Դաշնագիրը կնքւած է, ուստի և Անգլիան պարտաւոր է զբաղւել հայերի վիճակով: Անգլիայում կայ քրիստոնէական հասարակական կարծիք, որը չէ կարող անտարբեր մնալ գէպի այն անդժութիւնները, որոնց ենթակայ են հայերը վերջին երկու տարիների ընթացքում: Լորդ Սալսբիւրին մոածում էր օգնել նրանց սպառնալիքներ անելով սուլթանին: Մենք շատ լաւ զիտէինք, որ սուլթանը պէտք է հերքի հայերի գէմ գործոծ դազանութիւնների Փակտը, պնդեցինք խիստ քննութիւն կատարելու մասին: Սուլթանը երկար վէճերից յետոց համաձայնեց քննութիւն բանալ և նա սկսեց ճիշդ այն միջոցին, երբ ազատամիտ մինհստրութիւնը զիշեց իր տեղը պահպանողականին: Խոչ արեց լորդ Սալսբիւրին այդ քննութեան հետ: Նαι դուրս եկաւ անբաւարար: Մենք նոյնպէս առաջարկեցինք Հայաստանի համար իրական բէֆորմների ծրագիրը: Խոչ արեց լորդ Սալսբիւրին այդ ծրագրի հետո:

Այդ բոլորի հիման վրա, լորդ Ռողբէրին ամբաստանում է լորդ Սալսբիւրին իսկական ֆակտերը կեղծելու մէջ, ինչպէս նա այդ թոյլատրել է իրան Primrose ընկերութեան ժողովում:

«Դէյլի նիւս» հազորդում էր, որ Լոնդոնի Թաղաղութեան ընկերութիւնը իր տարեկան ժողովում, որ կայացաւ մայիսի 7/19-ին, Հերեֆորդի եպիսկոպոսը մի երկար ճառ խօսեց, որի մի մասը նւիրած էր հայոց հարցին: Նա ասաց, որ թէ Բերլինի դաշնագրով և թէ Կիպրոսի պայմանագրով՝ Անգլիան պարտաւորւել էր երբէք չփառել աշխատելուց՝ մինչև որ այդ ազգի տանջանքներին վերջ չլրւի: «Մենք պարտաւոր ենք, ասեց նա, գործ դնել բարոյական մնշում, և եթէ հարկաւոր լինի, գիմել և այլ միջոցների: Մենք բոլորս էլ յուսով ենք և աղօթենք, որ չնորհիւ քրիստոնեայ պետութիւնների՝ վերջ դրւի այդ ֆանատիկոսութեան սատուրնալիային (Ճափահարութիւն): Իմ գլխաւոր յոյսը ես գնում եմ ազատ և կրթւած անգլիական ազգի զօրութեան վրա»:

National Liberal Club-ի ժողովում ապրիլի վերջերքին լորդ Կարրինգտոնի նախագահութեամբ, ընդունւեց այս որոշումը։ «Ներկայ ժողովը կամենում է յայտնել իւր խորին համակրութիւնը իրենց քրիստոնեայ եղբայրներին Հայաստանում» և սրա հետ միացնում է իւր զայրոյթը թիւրքաց կառավարութեան շարունակող խսութիւնների և սարսափների առիթով, այլ և խորին ցաւ, որ ոչ եւրոպական կոնցերտը և ոչ էլ Անգլիայի միջամտութիւնը կարող եղան ապահովել դաշնագիրներով խոսացւած ռեֆորմների գործադրութիւնը, որ եւրոպական պետութիւնները և յատկապէս Անգլիան երաշխաւորել էին։

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

## ԱՆ ԿԿ. ՄՄ. ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Կայսր Նիկոլայ II-ի եւ կայսրուհի Ալեքսանդրա Փէօդորովնայի  
Մ. Թագաղըռութեան հանդէսները Մոսկվայում:

ՆՈՅԻՆ, ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՄՈՒՏՔԸ  
ՄՈՍԿՎԱ

Մակիսի 6-ին Թագաւոր Կայսրը հրամակեց, որ հանդիսաւոր-  
մուտքը Մոսկվա տեղի ունենալ հինգշաբթի, մայիսի 9-ին, կէսօրից չե-  
տու 2<sup>1/2</sup> ժամին:

Ամբողջ Մոսկվակի ժողովուրդը, չնայելով անձրեներին, լցւել էր փո-  
ղոցները և ամբողջ ժամեր կանցնած էր սպասելով միաբերան, ոգերուած-  
առաւալով՝ ողջունելու սիրեցեալ Միապետին, Ամբողջ ճանապարհը Սմո-  
լյնիկի կաչարանից մինչև Պետրովսկի պարկը լցւած էր ժողովրդով. տրի-  
բունները, ծառերը, մինչև անգամ տների կտուրները լիքն էին ժողո-  
վովով. Կաչարանը որին պէտք է մօտենար կաչարական գնացքը, շին-  
ած է ռուսական ճաշակով և մի կողմը ծածկւած է ապակեակ գալերէվով։  
Մեծ քանակութեամբ կանաչ զափնեալ ծառեր, ծաղիկներ, թաւշեալ զոր-  
գեր, շքեղ ոսկեջրած կարասիք Լուդովիկոս ԽVI-րդ ոճով, զարդարում էին  
կաչարանը։ Նոցին մեծութիւններին զիմաւորելու համար կաչարանի ճախ  
մասում կանգնեց Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնայի ուլան-  
ների գնդի պատւաւոր պահնակախումբը՝ զրօշակով և երաժիշտների խմբով։  
Պահնակախմբի աջ թեևի վրաց գտնւում էր էսկադրոնի Օգոստավիառ. հրա-  
մանատար Մեծ իշխան Գէորգի Միխայլովիչ։ Թագաւորին և Թագուհուն  
դիմաւորողների մէջ զտնւում էին ոչ միայն Պետերբուրգի և Մոսկվայի,  
ալև ամբողջ Ռուսիայի բոլոր բարձրաստիճան պաշտոնեաները, մինիս-  
տրները պետական խորհրդի անդամները, Թագաւորի շքախումբը, գենե-  
րալները, ծովապետները և ալև։ Մօտ ժամ 3 սկսեցին ժողովել  
կաչարական ընտանիքի անդամները և արդէն Մոսկվայում գտնւող օտար-  
ազգի պրինցները։

Հինգ ժամ 27 ր. բարձրածայն «ուստավի» ճանը աւետեց Կայսերա-  
կան գնացքի մօտենալը։ Տիրեց հանդիսաւոր լուութիւն։ երաժշտութիւնը  
ածեց «Գէպ առաջն», կաչարուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնայի լէլք-ուլան-

ները զինտրական պատիւ արին, Նոցին Մեծութիւններին դիմաւորեցին Կալսերական ընտանիքի անդամները և Մոսկաւ եղած բոլոր օտար պրինցները, Երկաթուղու կառավարիչ Շիշվսկու կինը մատուցեց Թագուհի Կալսուհուն ծաղիկների մի շքեղ փունջ:

Նոցին Մեծութիւնների հետ միասին ժամանեցին՝ Մոսկավի օդոսափառ զեներալ-Նահանգապատետը, որը դիմաւորեց Նոցին Մեծութիւններին Կլին կայարանում, Մեծ Իշխանուհի Օլդա Նիկոլաևնա և Մեծ Իշխան Ալէքսանդր Միխալլովիչ իր ամուսին՝ Մեծ իշխանուհի Կունիա Ալէքսանդրովավի հետ:

Թագաւոր կալսուր մօտեցաւ զօրախմբերի բոլոր զլսաւորներին և ապա Նոցին Մեծութիւնները ծածկւած կառքով, ժողովրդի հիացման ալազակների ուղեկցութեամբ, գնացին Պետրովսկի պալատը, Նոցին Մեծութիւնների կառքի առաջ ձիում էին Նորին Մեծութեան սեպհական թիկնապահ գնդի օֆիցերները կարմիր չերկեսկաններով, հետեւեալ կառքով գնում էին՝ Մեծ Իշխաններ Ալրգի Ալէքսանդրովիչ, Ալէքսանդր Միխալլովիչ և Մեծ Իշխանուհի Կունիա Ալէքսանդրովան, ապա Մեծ Իշխանուհի Օլդա Նիկոլաենա, դաստիարակչունու և զանակի ուղեկցութեամբ:

«Ուռակի» ոգեսրուած աղաղակները հնչում էին, մինչև որ Նոցին Մեծութիւնները մտան Պետրովսկի պալատը, ուր կտուրի վրայ ծածանեց Կալսերական դրոշակը: Պալատում հաւաքեցին Նոցին Մեծութիւններին դիմաւորելու լուսաց թագուհին, Ռումանիաի թագաժառանդ իշխանուհին, Մեծ իշխանուհիներ՝ Մարիա Պալովնան և Վէրա Կոնստանտինովնան, Վիլյուսէմբէրգեան դքսուհին իր ազգիկներով, Օլդէնբուրգեան Եւգենիա պրինցուհին, պալատի մինիստրը պալատական պաշտոններով, գեներալ-ադիւտանտ Կոստանդա Մոսկաւի զինտրական շրջանի առանձին բաժինների զլսաւորների հետ: Զեկուցագիրն ընդունելով, Թագաւորը անցաւ պատւաւոր պահնակախմբի առջեից, բարեելով նրան, դրանից չետու Նոցին Մեծութիւնն աղ ու հաց ընդունեց Մոսկաւի զեմստօւից, Անցնելով առանձին մասերի զլսաւորների առջեից, Նոցին Մեծութիւնները բարձրացան երկրորդ չարկը, բոլորակ Սպիտակ գալիքը, ուր գտնում էին՝ պալատական աւագ քահանակ և անիշն, հոգնորականութիւնը և պալատական երգեցիկ խումբը: Նոցին Մեծութիւնների դալուց չետու, կարճառօտ մաղթանք կատարեւեց՝ արեշատութիւն մաղթելով Նոցին Մեծութիւններին, Թագաժառանդ Ցէսարեիչին և ամբողջ Կալսերական տանը: Մաղթանքից չետու Նոցին Մեծութիւնները մտան ներքին սենեակները, որոնք գտնում են բոլոր դահլիճի աջ կողմում, պալատի երկրորդ չարկում:

Նոցին Մեծութիւնների Մոսկաւ գնալու ժամանակ, Տւեր և Կուն կայարաններում, ալդ քաղաքների դաստիարակչին ներկայացուցիչները Նոցին Մեծութիւններին աղ ու հաց մատուցին:

Ա. Փրկչի տաճարում, Թագաւոր Կալսրի ծննդեան օրը, պատարագից հետոյ հանդիսաւոր մաղթանք կատարւեց, Եկեղեցում գտնւում էին Մոսկա եկած ուղղափառ բոլոր հովանապետները. Տաճարը լի էր. Մաղթանքին ներկայ էին՝ ամբողջ Թագաւորական Ընտանիքը և պալատի բոլոր բարձրաստիճան պաշտօնեաները:

Մալիսի 7-ից սկսւեցին օտարերկրեալ գահակալների, թաղաժառանդ պրինցների և արտակարգ դեսպանութիւնների հանդիսաւոր ընդունելութիւնները:

### Պետրովսկի պալատում՝ սերենադա

Մալիսի 8-ին, Երեկոյնեան 10 ժամին, Պետրորսկի պալատի բակում տեղի ունեցաւ սերենադա, հետևեալ պրոգրամով. արեշատութեան խմբական նւագ «Բուտակալից», Գունոցի «Գիշերը», Լեազովի «Գետակի ափին», «Պանորամա», Զայկովսկու «Քնած գեղեցկուհի» բալետից, Մէնդէլսոնի «Անտառը», և «Շաբախ»։ Երգիչները ձեռքերում բունել էին երկար ձողեր գոյնզգոյն լապտերներով։ Երբ նոցին Մեծութիւնները բարձրագոյն անձերի հետ դուրս ելան պատշգամբը, սկսւեց սերենադան։ Մասնակցում էին խորեր՝ ուսւաց խորակին ընկերութեան և Մոսկալի կոնսերւատորիալի, Մոսկալի Կալսերական թատրոնի, Լիդերտանէլ, Փիլարմոնիական ընկերութեան, Բոլոր մասնակցողներն էին՝ 1200 հոգի։ Երաժշտական իւրաքանչիւր կտորից լետոյ թագաւոր Կալսրը ծափահարում էր։ Պատասխանն էր պալատի մօտ կանգնած խորի և ժողովրդի ահազին «ուռուանո»։ Սերենադալի վերջը, Թագուհի Կալսրուհին չորհակալութիւն լայտնեց կատարողներին, որոնք պատասխանեցին բարձրաձալն «ուռուակով»։

### Հանդիսաւոր մուտք Կրէմլի պալատը

Նոցին Մեծութիւնների հանդիսաւոր մուտքը Կրէմլեան պատար կալացաւ ժողովրդի անհամար բազմութեան մէջ, և պահառ օրը Թագաւորական ճանապարհը, որ շքեղ կերպով զարդարւած էր, հիանալի պատկեր էր ներկայացնում։ Տները ծածկւած էին զրօշակներով, կանաչով վահաններով։ Նոցին Մեծութիւնների անունների սկզբնատարերով և ուրիշ զարդարանքներով։ Ճանապարհի վրայ շինւած տրիբոնները լցւած էին հանդիսաւոր հասարակութեամբ։ Առաւտեան մօտ 10 ժամին փողոցների վրա արդէն ազատ անցուղարձ անել անկարելի էր. ամեն ուղղութեամբ հաւաքւում էր ժողովուրդը՝ հանդիպելու Արքայական գնացքին։ Հանդիսաւոր ընթացքը շարժւեց ճիշտ  $2\frac{1}{2}$  ժամին։ Մալրաքաղաքը մուտքործելու ժամանակ Թագաւորին դիմաւորեց Օգոստափառ գեներալ-նահանգափետը, որը միացաւ հանդիսաւոր ընթացքին՝ իր աղիւտանտներով՝ Թաղթական դռների մօտ, Զէմլեանով գորոդ անւանւած փողոցը մուտք

գործելու ժամանակ Կալսրին դիմաւորեց քաղաքագլուխը՝ քաղաքալին վարչութեան անդամների հետ։ Բէլի-գորոդ մուտք գործելու ժամանակ դիմաւորեց Մոսկալավի զէմստուօն։ Տէրսկալա հրապարակի վրայ դիմաւորեց Մոսկալավի աղնւականութիւնն իր ներկացացուցիչներով։ Վոսկրեսէնսկի դոների մօտ դիմաւորելով Մոսկալավի նահանգապետի, վարչական և դատաստանական հիմնարկութիւնների կողմից, Նոցին Մեծութիւնները բարեհաճեցին կանգ առնել իւերսկալա մատուի մօտ։ Թագաւորը իշաւ ձիուց, իսկ երկու Կայսրուհիները դուրս եկան կառքից և երկրպագեցին իւերսկալա Աստւածամօրը, Կրասնալա հրապարակի վրայ, Մինին և Պաժարակու արձանների գծով, կանգնած էին Մոսկալավի կորպուսների կաղէտ ները։ Ազդտեղ էին կանգնած և վոլոստների ստարչինաները և օտարազգինների գոչնզգովն խումբը փակուն զգեստներով։ Կրէմլ հասնելուց չետու, Ռւսակն սկի տաճարի գաւթում Նոցին Մեծութիւններին դիմաւորեց հոգևորականութիւնը խաչով և սուրբ ջրով։ Շարականը և կածնը երգելու ժամանակ Թագաւորը և Թագուհին մտան Ռւսակն սկի տաճարը, ուր համբուրեցին մասունքները և պատկերները, Դրանից լետով Նոցին Մեծութիւնները աղօթեցին Արխանգէլսկի տաճարներում։ Հանդիսաւոր ընթացքի ժամանակ Նոցին Մեծութիւնների առջեկց գնում էին պալատական պաշտօնեաները։ Մանելով Կրասնոչ-Կրիլցու, Նոցին Մեծութիւնները ողջունեցին բոլորին, որոնք հաւաքել էին Սորորնալա փոքրիկ հրապարակի վրայ և մտան Կրէմլի պալատը։ Ի պատասխան Նոցին Մեծութիւնների ողջունին լսեց հիացած «ուռա»։ Տրիրունների վրայ իւան Վելիկի զանգակատան մօտ նստած էին՝ Բուխարայի էմիրը և Խիւալի խանը իրենց ժառանգներով, նոյնպէս և օտարազաւանների ներկացացուցիչները, Մնացած տրիբունները գրաւած ունէին աշակերտունիները և միանձնունիները։

Թագաւոր Կալսրը Մոլէնսկի զնդի համազգեստ ունէր հագած Անդրէսեան ժապաւէնով և նստած էր սպիտակ ձիու վրայ։ Շքախումբը աշագին էր և փառաւոր Նորին Մեծութիւնը շրջապատւած էր եկած օտարազգի պրինցներով։ Երկու կալսրուհիները և բոլոր Մեծ իշխանուհիները ուսւական սպիտակ շորեր ունէին՝ կոշիկներով։ Ամբողջ ճանապարհի վրայ ուրախ ժողովրդի բարձրաձայն առւանա խառնում էր թնդանօթաձգութեան և զանգահարութեան ձախների հետ։

Նոցին Մեծութիւնների Ալէքսանդրեան պալատ գնալիս՝ բոլոր ճանապարհի վրայ կանգնած էր ժողովրդի ահագին բազմութիւն, որ և ցընծութեան «ուռա» աղաղակիներով դիմում էր Նոցին Մեծութիւններին։ Ճանապարհի վրայ իրենց շքեղ զարդարանքներով և լուսավառութեամբ աչքի էին ընկնում բազմաթիւ տներ, Մոսկվորեցիկի և Քարեաչ կամուրջները և Թոփիատի գետափը։ Առանձնապէս աչքի էր ընկնում թատրոնական հրապարակի և նրան շրջապատող շինութեանց լուսավառութիւնը։

ՊԵՏՐՈՎԱԿԱՅԱ պալատում՝ նախաճաշիկ

Մայիսի 9-ին Պետրովակայա պալատում բոլոր Բարձրագոյն անձանց, հրաւիրած արքակազն իշխանների և իշխանութիւնների գալուց չետու նախաճաշիկ տրեեց 180 հոգու համար: Երեկուեան Նոցին Մեծութիւնները և թագուհի Կալսորուհի Մարիա Ֆէօղորովնան Մեծ իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչը և Մեծ իշխանուհի Օլգա Ալեքսանդրովնաի հետ փոխադրեցին Նեսկունի, Ալեքսանդրեան պալատը, Թագաւոր Կալսորը Եկատերինուալսեան զօրաբանակի համադղեստով էր: Պալատում Նոցին Մեծութիւններին հանդիպեցին պալատական նախարար կոմս Վորոնցով-Դաշկով և զեներալ աղիւանու Մտողիպին:

Արտակարգ դեսպանութիւնների ընդունելութիւններ

Մայիսի 10-ին Կրէմլի մեծ պալատում Նոցին Մեծութիւններին ներկայացան արտակարգ դեսպանութիւններ—Փրանսիական, իսպանական, եապրնական և կորէական: Ընդունելութիւնից առաջ գեսպանութեանց ընակւած տներն եկան արարողական պատոնեանները և արարողապետները, նոյն տեղը ուղարկեցին Բարձրագոյն Դոնից վեց ձի լժած չքաշկառքերը զեսպանների համար և չորս ձիանի կառքեր գեսպանութեանց միւս անդամների համար: Ալգ բոլոր կառքերը ճանապարհ ընկան հետեւեալ կերպով: Առջեցից կարէտում գնում էին արարողական հաստատութեան պաշտօնեանները, հետեւալ ոսկեաց կառքում գալ: Այս արտակարգ դեսպանները, Կարէտի աջ կողմից ձիով գնում էր ախոռապետութեան սպան, իսկ կառքի լեռեցից վեց հեծեալներ: Իւրաքանչիւր ձիու սանձից բռնած վարում էր մի ձիապան հանդիսաւոր զգեստով զարդարւած: Արտակարգ դեսպանութեանց զօրանոցների մօտով անցնելիս՝ պալատական պահակ զօրքը դուրս էր զալիս ողջունելու: Պալատում դեսպանութիւններին դիմաւորեցին զլխաւոր արարողապետը և արարողապետները: Փրանսիական արտակարգ դեսպաննին դիմաւորեց իշխան Պրովորովսկի: Դավիցին, իսպանական դեսպան Դոն-Խուան Դէ-Զավանային դիմաւորեց իշխան Մեջերովի, եապոնական մարշալ մարքիզ Անդազատային—կոմս Տուսոյ և Կորէալի զեսպան Մին-Եունդ-Խուանին—Վասիլչիկովը: Արարողական պաշտօնեանների և արարողապետի առաջնորդութեամբ իւրաքանչիւր դիման անցնում էր Ալեքսանդրեան դանիձը, ուր սպասում էին Բարձրագոյն ընդունելու թեան: Ծալրագոյն արարողապետը առաջնորդում էր զնոպաններին Եկատերինեան դանիձը, ուր գանւում էին Նոցին Մեծութիւնները: Դեսպանների ընդունելութիւնից չետու, Նոցին Մեծութիւններին ներկայացրին դեսպանութեանց բոլոր անդամներին:

Մայիսի 10-ին Նոցին Մեծութիւններին ներկայացաւ Հիւսիսավին Ամերիկայի արտակարգ դեսպանութիւնը Կիֆասոն Բրիքանդրիչի առաջնորդութեամբ:

Նրեկոյթ արտաքին գործերի նախարարի մօս

Մայիսի 10-ին ուշ երեկոյն, փառաւոր երեկովթ տեղի ունեցաւ արտաքին գործերի նախարարի մօսու Նրեկովթին ներկալի էին՝ Մոսկովակի Օգոստափառ ընդհանուր նահանգապետը, կալվերական ցեղի անձինք օտար իշխաններ, արտակարգ գեսպանութիւններ, գեսպաններ, պետական խորհրդի անդամներ, նախարարներ և ազլ բարձրաստիճան անձինք, փողովն արտասովոր կերպարանք ունէր. ժամը 12-ին դեռ ամենքը չէին հաւաքած, բայց դահլիճն արդէն լցւած էր. Քոլոր հիւրերին դիմաւորում էր իշխան Լոբանով-Ռաստովսկի. Նրեկովթում չափազանց կենդանութիւն էր տիրում:

Նախնթաց օրւակ երեկոյեան Կրէմլի արտաքին լուսավառութեան փորձը եղաւ. չտեսնըւած հրաշալի երեկովթ էր:

Ալդ օրւան հրամանատար նշանակւած էր գեներալ Ստոլիպին:

Թագաղրական խմբերի կազմակերպութիւնը

Մայիսի 11-ին հերուբներն սկսեցին հանդիսաւոր կերպով բարձրակ թաղադրութեան օրւակ մասին, Խմբերի կազմութեան մէջ մտել էին. — 1) գեներալ-ազիւտ. իշխան Օրուենսկի, թագադրութեան արարողապետներ իշխան. Ուրուսով, առաջին արարողապետներ իշխաններ՝ Վասիլիչիկով և Մեծ չերսկի, հերուլդ Պրիբիլսկի և քարտուղար Պողէնպոլ. 2) գեներալ-լէտչէն. Լոբկո, թագադրութեան աւագ արարողապետ Դրաշուսով և կոմս Տուլսով հերուլդ Ֆրուլով և քարտուղար Խոդաբարյանը կալվացաւ համաձան հրամարակւած ծրագրի. Հերուլդները բաժանում էին ժողովրդին շքեղ տպած բաշտարարութիւններ. Խմբերին ամեն տեղ հետևում էր ժողովրդի ահազին բազմութիւն. Գեղեցիկ տեսարան էր երբ ամբողջ հանդէսը գուրա էր գալիս Սպասակի դռներից Կրամսնաչա հրապարակ, ուր հեծեալ զօրաբանակը շարւեց և երկու խմբերը բաժանեցին.

Ազգօր Նոցին Մեծութիւններին ներկացացան Նկատերինեան դահլիճում նիդերլանդական, սերբիական և Մեքսիկակի արտակարգ գեսպանութիւնները:

Պետական դրօշակի օշումն

Մայիսի 12-ին Նոցին կալսերական Մեծութիւնների, կալվերական ցեղի և բարձրաստիճան անձանց ներկայութեամբ Զինարանի պալատի գահական դահլիճում տեղի ունեցաւ պետական դրօշակի օծումն. Մըբազան օծումն կատարում էր Նոցին Մեծութիւնների խոստովանահայր աւագ քահանական կանչեւ. Դահական դահլիճը ժամանեցին Թագաւոր կամրը, Թագուհի կամրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան, լունաց Թագուհին, Հեսէնի մեծ դուքսն ամուսնու հետ, Դահական դահամառանդ իշխանը, Սպար-

տաէի և Սակսէն։ Կոբուրգի զքսերը և թագաւորազունք Գէօրգի և Նիկոլայ-  
Ալդ միջոցին աշնոեղ էին գտնւում Թագուհի Կայսրուհու Փրէվինները։  
կալսերական պալատի նախարարը, ծարագոյն մարշալը, օբեր-հոֆմար-  
շալը և կալսերական չքախմբի անձինք։ Նախշեւ աւագ քահանան օծու-  
մից առաջ ասաց։

«Բարեպաշտ Թագաւոր Աստիածակին Նախախմանութիւնը բարեհա-  
նեց դահաժառանգութեան օրէնքով լանձնել Քեզ համան Ռուսիոյ թա-  
գաւորութեան ինքնակալ Պետիդ նրա միութեան և հզօրութեան ալս  
սրբազն զրօշակը։ Թող միացնէ նա—ազօթենք առ Աստած—քո բոլոր  
հպատակներին, որ նոքա չափանան նւիրած լինին դահին և հալրենի-  
քին և անձնւիրաբար կատարեն իրենց հալրենասիրական պարտքը։ Դա-  
որ սարսափ է Ռուսիալի թշնամինների համար, թող լինի Քեզ նշան օգ-  
նութեան Տեառն Աստուծու որ չանուն Նորա սուրբ անւան ուղղափառ  
հաւատու, առաքինութեան ճանապարհով, քաջաբար, չնակելով ոչ մի ար-  
գելքի, մզես Քո աղջը բարօրութիւն, մեծութիւն և փառք։ Թող  
իմանան բոլոր աղջերը, որ Աստած մեզ հետ է»։

### Կայսերական նշանների հանդիսաւոր փոխադրութիւնը

Մայիսի 13-ին, ժամի 4-ի սկզբում, տեղի ունեցաւ կալսերական-  
նշանների հանդիսաւոր փոխադրութիւնը Օրուժէնակա պալատից մեծ-  
կրէմլի պալատի գահական դահիճը։ Յերեկւաց 2 Ժ. 25 րոպէի մօտ Օրու-  
ժէնակա պալատ հաւաքւեցան բարձրաստիճան անձինքը իրենց լնթե-  
րականների հետ, որոնք նշանակւած էին նշանները տանելու։ Օրուժէնակա-  
պալատում ծարագոյն մարշալ կոմս Պալէն լահձնում էր նշանները պաշ-  
տօնեաններին։ Դրանից լետու հանդիսաւոր գնացքը ճանապարհուց ան-  
դատիկոնով, որ տանում է Բուքարուկալա վոքրիկ հրապարակը դէպի գահա-  
կան դահլիճը, համաձայն հրատարակւած ծիսակատարութեան։ Կալսերական  
նշանները տանում էին ոսկի զիպակի և բարձերի վրայ, որոնք զարդար-  
ւած էին ազգակին զոհների ծովերով։ Ա. Անդրէի փոքր չղթան տանում էր  
Մ. Ն. Օսարովսկի, պետական զրօշակը—Պ. Ա. Շոււալովի, պետական  
կնիքը—իշխան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկի, պետական նիզակը—Ն. Ա.  
Գանեցկից, Թագուհի Կալսրունու ծիրանին—Ն. Ի. Ստոեանովսկի, Թագաւոր  
Կապրի ծիրանին Ս. Անդրէի մեծ շղթալի հետ—Բ. Պ. Մանսուրով և Ն.  
Ա. Պերետց, գունդը—Դ. Ն. Նաբոկով, գալանը—կոմս Ի. Դ. Դելեանով,  
Թագուհի Կալսրունու թագը—կոմս Փ. Լ. Հէղէն 2-րդ, Թագաւոր Կալսրի  
թագը—կոմս Դ. Ա. Միլիւտին, Կալսերական նշանների երկու կողմով  
դնում էին ընթերականները, իսկ գնացքի երկու կողմով՝ պալատական-  
գրենադէրները,

«Նշաններին դիմաւորեցին պալատական բարձրաստիճան անձինք։ Դա-

հական դահլիճում կաչսերական նշանները ընդունեց ծաբագոյն մարշալը և դրեց նրանց գահի մօտ կանգնած սեղանի աջ կողմին, իոկ գրօշակը սեղանի ետևում։ Դրանից լեռոց նշանների մօտ կանգնեցին օրապահ սենեկապետները և պալատական գրենադերների պահակախումբը։ Փալլուն արև օրը տալիս էր գնացքին աւելի չքնազութիւն։ Մայիսի 13-ին, երեկոյեան ժամը 4-ին, Ալեքսանդրեան պալատից Նոցին կաչսերական Մեծութիւնները գնացին Մեծ Կրէմիեան պալատը։

### Թագաղրութեան հանդէսը

Մոռկւա, 1<sup>ւ</sup> մայիսի Առաւոտեան 7 ժամից սկսեցին գալ Կրէմիեան պալատը այն անձինք, որոնք պէտք է մասնակցէին Ռւսակին տաճարը դիմոզ հանդիսին։ Զօրքը կանգնեցրած էր Կրէմիկ շուրջը և Սուրոբնի հրապարակի վրայ առաւոտեան 5 ժամից զէպի Ռւսակին տաճարը և աւելի հեռու՝ զէպի Արխանգելսկի և Բլագովիչչենսկի տաճարները տանող փողոցի վրայ շարքով կանգնած էր զօրքը՝ երաժշտութեամբ։ Ժամը 7<sup>1/2</sup>-ին Մեծ Խշան Վլադիմիր Ալեքսանդրովիչ անցաւ զօրքերի շարքերով, Վոլոստների ստարշինները, վոյտերը, ստարոստները տեղաւորւած էին Սորոբնականապարագակի վրա։ Տախտակեազ անցքերը ծածկած էին կարմրուգով։ Ֆողուրդի համար շինած տրիբունների վրայ դանւում էին բազմաթիւ կանաչք՝ զեղեցիկ հագնւած։ Դիպումատիական տրիբունը (Երկարկանի) լի էր օտարերկրացի պրինցների շքախմբի անդամներով։ Ներքին չարկուած նստած էին բոխարակի էմիրը և Խիւալի խանը։ Ժամը 8-ին բերեց Կրասնովելիրիցովի մօտ երկու ամահովանի։ Փոքրը՝ ալրի Կապրունու համար, մեծը կաչսերական Զուզի համար Ռւզիդ ժամը 9-ին սկսւեց հանգիստաւոր գնացքը զէպի Ռւսակին տաճարը՝ համաձայն ցերեկնիալի։ Առաջին ամահովանու տակ, որը տանում էին գենեներալ-աղիտանաները Ծնթերականներով, գնում էր մալր-Կապրունի։ Մարիա Ֆէօդորովնան, երկու ընթերականներով։ Մեծ Խշան Ալեքսէ Ալեքսանդրովիչ և Դանիալի պրինցը, Կալսունու ետևից գնում էին պալատական տիկինները։ Երբ Կալսունի Մարիա Ֆէօդորովնան երեաց, երաժշտութիւնը հնչեցրեց ռուսաց հիմնը։ Փաղովաւրդը ուրախ աղաղակներով ողջունեց Կալսունուն։ Միւս ամահովանու տակ, որ տանում էին գենեներալ-աղիտանաները—Ծնթերականներով գնում էր Թագաւոր Կալսուն Նիկոլա Ալեքսանդրովիչը Թագունի Կալսունի Ալեքսանդրա Ֆէօդորովնալի հետ։ Կալսունի Ծնթերականներն էին։ Մեծ Խշաններ Ալեքսանդր Միխայլովիչ և Վլադիմիր Ալեքսանդրովիչ, Կալսունու ընթերականները՝ Սէրգէ և Պաւել Ալեքսանդրովիչները։ Երբ Կալսունու զուգը երեաց, երաժշտական խումբը հնչեցրեց ռուսաց հիմնը, որին չաջորդեց ողերւած անոլիք սուսան։ Եկեղեցիններում ոկտևց ընդհանուր զանդահարութիւն և թնդանօթաձղութիւն, Երբ Կաչսերական բէգալիաները

քերւեցին Ուսպենսկի տաճարի մօտ, ընդ առաջ դուրս եկան Մոսկվակի և Կիևի միտրոպոլիտները՝ սրսկելով օրհնած ջուր, Հենց Կալսկրական Զողը մօտեցաւ Ուսպենսկի տաճարի գաւթին, ընդառաջ դուրս եկան Պետերբուրգի, Մոսկվակի և Կիևի միտրոպոլիտները, յարձրագոյն հոգեսորականութեան հետ; Մոսկվակի միտրոպոլիտը Կալսկրական Զուղին ուղղեց ճառ, Պետերբուրգինը խաչ մատուցեց հոմբուրենլու համար, Կիևինը՝ սրսկեց օրհնած ջրով; Առաւտեան 8 ժամին Ռւսպենսկի տաճարը լի էր, Սեղանի աջ կողմում, գաներին մօտիկ, որոշւած էին տեղեր Մեծ իշխանների և օտարերկրացի պրինցների համար, ճախի կողմում՝ Մեծ իշխանուհիների և օտարերկրացի պրինցների համար; Աջ պատի ուղղութեամբ տեղաւորւեցին զիազմատիական կորպուսը և օտարերկրացի բարձրադոյն անձանց շքախումբը, ճախ պատի ուղղութեամբ՝ պալատական կանակը և ֆրէցինները, կենտրոնական պատի մօտ, գաների ետեից՝ պալատական պաշտօնեանները, աղնականութեան պարագլուխները, քաղաքաղլուխները, ուսափաց և արտասահմաննեան թղթակիցները, Տաճարը ներկայացնում էր հազարգիւտ տեսսարան; Ժամը 9-ին ժամանեցին տաճարը Նոցին Կալսկրական Մեծութիւնները; Առաւտեան 10½ ժամին կատարւեց մեծ հանդէսը; — Սիրեցնալ Միապետը թաղաղրւեց ներկալութեամբ կալսկրական ընտանիքի անդամների, օտարերկրացի պրինցների, պաշտօնեանների, դասակարգացին ներկայացուցիչների; Թաղաւոր Կալսկրը կրում էր Պրէօբրամեննեան համազգեստ, ու Անդրէվի շքանշանի շղթան և Ալէքսանդր Նեւսկու ժապաւէնը. Թագուէի Կալսկրուհին՝ սպիտակ արծաթագոյն շրջազգեստ, և ս. Նկատերինաւի շքանշանի ժապաւէնը. Ժամը 10-ին և 4 րոպէին Կալսկրը բարձրաձան և պարզ կերպով կարդաց Հաւասար Հանգանակը, Ժա. մը 10-ին և 30 րոպէին ծածկեց թաղը և երեք բուլի անց՝ փոքրիկ թաղը դրեց Կալսկրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնեալի գլխին, Երբ կարդացւեց Կալսկրական ամբողջ տիտղոսը, ժամը 10-ին և 40 րոպէին սկսեց թնդանածդութիւն; Ապա Նոցին Կալսկրական Մեծութիւններին չնորհաւորեցին Կալսկրական ընտանիքի անդամները օտարերկրացի պրինցները և պրինցների, Ժամը 10 ին և 55 րոպէին, Կալսկրը ծնկաչոք կարդաց որոշւած աղօթքը; Ապա Պետերբուրգի միտրապոլիտը աղօթքեց Կալսկրի համար ամբողջ ժողովրդի անունից; Այդ ժամունակ ամենքը ծունկ չոքեցին, Օծումից և հաղորդութիւնից լետու; Նոցին մեծութիւնները, արքաւական բոլոր շքանշաններով ուղեսորւեցին Արխանգելսկի և Բլագովեշչենսկի տաճարները և ապա, Կրասնոյե-Կրիլցովի վրայով, Կրէմլի պալատը, Կրասնոյե-Կրիլցովից Նոցին Մեծութիւնները ողջունեցին ժողովրդին; Ժողովրդի ոգեսորւած «ուսան» եղաւ պատասխան Միապետի ողջունին; Սըրքապան թագաղրւեթիւնը կատարւելուց լետու, Կալսկրուհի Մարիա Ֆէօդորովնան դուրս եկաւ տաճարից ժողովրդի ոգեսորւած բացականչութիւնների;

ուղեկցութեամբ և ուղղեց քալերը ամպհովանու տակ դէպի Նրէմի պալատը, Կալսրունու ետելից գնում էին, պալատական տիկինները, բոլորը միատեսակ թաւշեալ մոլոգ-կարմիր ոսկէկար ոռուսական հազուստով, Կալսերական Զուգը զուրս եկաւ Ուսպէնսկի տաճարից, Հակառակ կողմից, և դիմոց դէպի Արխանգելեան տաճարը, Առջեց գնում էր Կաւալէր-գարդների մի գունդ, ապա հետեւում էին պալատական գրենադէրների զրօշակները և պետականը, Կալսրի ամպհովանուց առաջ, որ տանում էին զեներալաղիւտանաները իրանց ընթերականներով, գնում էին պետական խորհրդի անդամները և մինխտրները, Արխանգելսկի տաճարը համնելուն պէս՝ Կալսերական Զուգին զիմաւորից հոգեսորականութիւնը, Երկրպաղելով Նախահայրենի շիրիմներին, Օգոստափառ Զուգը անցաւ Բլագովեշչենսկի տաճարը, ուր համբուրեց սուրբ պատկերները, զուրս գալով Բլագովեշչենսկու տաճարից, Նոցին Մեծութիւնները գնացին Կրամնուկ-Վրիլցո և ողջունեցին Ժողովրդին, որը անվիրջանալի և ոգեսորած բացադանչութիւններով ողջունեց Նոցին Մեծութիւններին, Ամբողջ տեսարանը վերին աստիճանի հանդիսաւոր էր, մանաւանդ այն բոպէն, երբ ժողովուրդը նկատեց Միապետի ողջունը, Աղանակը հրաշալի էր և տաք:

### Բարձրագոյն հրովարտակ

Բարձրագոյն հրովարտակը բռնում է  $15\frac{1}{2}$  երեսներ: Նրա բռվանդակութիւնը հետեւեալն է. Ամենաողորմածաբար հրամայւած է, չնորհել դիւրութիւններ պետական հողային հարկի վերաբերմամբ, տուգանքները մինչև 300 ռ. առևտորից վերցնելող հարկերից, իսկ տուգանքները, որոնք վերոցիշեալ գումարից բարձր են, 300 րուբլով սպակասեցնել. դրոշմատուրքի կանոնադրութիւնը խախտելու համար եղած պահանջները ներել մինչև 300 ռ. իւրաքանչիւրը. 300 ռուբլուց բարձր պահանջներից ներել 300 ռ., դանձարանն իր ժամանակին նպաստներ չմտցնելու տուգանքը ներել՝ անկանոն դատեր սկսելու համար: Ներել թոշակները վերցնելու համար եղած ապառիկները. ներել այն վնասները, որ կրել է զանձարանը պաշտօնաթող եղած զինւորներին, նրանց կանանց և այրիներին անկանոն կերպով նպաստներ տալու պատճառով. ներել ապառիկները պատահան վարչութեան, թագաւորական, կարինէտացին, Կայսրուհի Մարիայի հիւանդանոցներում բժշկութիւն և ասլաստան տալու համար. չառնել ազնւականութիւնների վրայ մնացած ապառիկները թոշակաւորներ պահելու համար. ազատել պետական, ուղէների,

Թագաւորական, պալատական և կարինէտային կալւածները սկահողներին զանազան պահանջներից դիւրութիւններ տալ անձինքներին, հասարակութիւններին և զասակարգերին՝ արած փոխադարձնելու ժամանակ. ներել այն անձանց, որոնք սեպհականացրել կամ՝ վառնել են ծառայութեան մէջ՝ նրանց յանձնւած գոյքերը ոչ բարձր 1000 րուբլուց, եթէ սեպհականացրածը ամբողջապէս վերադարձնել են, ազատել դատաստանից և պատժից այն անձանց, որոնք 193, 194, 1575 յօդւածներում չիշատակւած յանցանքներն են գործել. աւելի մեծ յանցանքներ գործած անձանց վերաբերութեամբ որոնց գատարանը դատապարտել է կալանաւորման բանտում կամ բերդում, առանց զրկելու մի քանի առանձին իրաւունքներից և արտօնութիւններից, պակասացնել բանտարկութեան ժամանակամիջոցը <sup>2/3</sup>-ով. այն պաշտօնական անձանց համար, որոնք ենթարկվել են պատժի օրէնտրութեան 65 յօդւածի 2-ից մինչև 9 կետերի համեմատ, այդ պատիմներն արգելք չպիտք է լինեն ծառայութիւնը շարունակելու, թոշակ և սլարդեներ ստանալու, բացի անբիծ ծառայութեան պարզելը և ս. Վլադիմիրի շքանշանը. մինչև 1886 թւի յունիսի 11-ի օրէնքը կասկածի կամ մեծ կասկանի տակ եղող բոլոր անձանց ազատել հետևանքներից, ազատել դատաստանից և պատժից այն անձանց, որոնք գործել են վոլոստների գատարաններին ենթակայ յանցանքներ, որոնց դէմ հալածանք չէ սկաւել կամ վճիռ չէ կայացել, կամ վճիռը չէ իրադործել, կամ որոնք կրում են դատարանի կայացրած պատիմները։ Այդ շնորհները չեն վայելում այն անձինք, որոնք գողութիւն են արել, խարդախութիւն են գործել, իւրացրել, վատնել են իրանց յանձնւած գոյքը, որոնք վաշխառութեամբ, կաշառակերութեամբ և զշաքաղութեամբ են պարապել, անզգուշութեամբ մնանկացել են, պատի դէմ յանցանք են գործել, որոնք մարմական անբռնաբարելիութեան կամ առողջութեան դէմ են գործել, որոնք բանտարկութեան պիտի ենթարկւէին՝ ծառայութիւնից արձակւելու, կամ այնպիսի պատիմներ կրելու փոխանակ, որ սահմանափակում են իրաւունքները, նոյնպէս և այնպիսի գործերի համար, որոնց պատճառով զրամական տուգանքները տրուում են ոչ յօդուա դանձարանի, ուղէլի, պալատական վարչութեան և ոչ էլ մտնում են բանտար-

կութեան տեղեր կառուցանելու յատկացրած և միջմկի անւանւած դրամագլուխների մէջ։ Պակասացնել  $\frac{1}{3}$ -ով այն յանցաւորների պատիժը, որոնք ենթակաց են բանտարկութեան կալանաւորների տան մէջ, բերդում՝ կամ բանտում, զրկելով առանձին կամ մի քանի իրաւունքներից։ Այն պաշտօնական անձանց, որոնք արտաքսւած են ծառայութիւնից ոչ շահասէր կամ անձնական նկատումներով կատարած յանցանքների համար, հրաժարւած համարել ծառայութիւնից։ Այդ շնորհը տարածում է այն պաշտօնական անձանց վրաց, որոնք գատապարտւած են ժամանակաւոր բանտարկութեան բերդում։ Բանտարկութիւնից ազատւած և տեղական ոստիկանութեան հսկողութեան տակ զրւող անձանց ժամանակամիջոցը կրծատել  $\frac{1}{3}$ -ով։ Այնպիսի յանցանք գործողներին, որոնց համար նրանք ենթակաց են աքսորի Սիրիր կամ հեռաւոր նահան նները, շնորհել հեռաւոր նահանգները աքսորւածների համար—10 տարուց յետոյ, իսկ Սիրիր աքսորւածների համար—12 տարուց յետոյ, բնակութեան իրաւունք եւրոպական և ասիական Ռուսիայում, բացի մայրաքաղաքներից և մայրաքաղաքների նահանգներից, առանց վերականգնելու իրաւունքները։ Սիրիր կամ հեռաւոր նահանգներն աքսորւածները, որոնք բանտարկւած են կամ իրաւունք չունին հեռանալ իրանց տեղերից, աքսորի ժամանակամիջոցը կըրճատում է  $\frac{1}{3}$ -ով։ Աքսորի մէջ 14 տարուց ոչ պակաս մնացողներին թոյլ տալ բնակութեան տեղ լնտրել, բացի մայրաքաղաքներից, զնելով նրանց 5 տարի հսկողութեան տակ, ճանաչել նրանց զրկւած առանձին իրաւունքներից, փոխանակ բոլոր իրաւունքների, առանց իրաւունք ունենալու գոյք ձեռք բերել։ Տաժանակիր աշխատանքներին զատապարտւածների ժամանակամիջոցը կրծատել  $\frac{1}{3}$ -ով, ցմահ տաժանակիր աշխատանքները փոխարինել 12 տարւաց տաժանակիր աշխատանքներով։ Այդ շնորհները վայելում են այն անձինք, որոնք պատիժ են կրել Բարձրագոյն հրամանով, փոխանակ դատարանին որոշած աւելի խիստ պատիժների։ Այն անձանց, որոնց զիւրութիւններ են տրւած նախորդ հրովարտակներով, հետևեալ արտօնութիւնները տալ, —ժամանակաւոր բանտարկութեան կամ բնակութեան համար նշանակւած տեղից անպայման չբացակայելուն դատապարտւածների պատիժը կրծատել մէկ երրորդականով։

Սիրիր կամ հեռաւոր նահանգները աքսորւածներին, 1894 թւի հրովարտակով աքսորից ազատելուց յետոց, թողլատրել անցագիրներ ստանալ, առանց յիշելու «աքսորականներից». 1894 թւի նոյեմբերի 14-ի հրովարտակի 4-րդ յօդւածի 13-րդ կէտի հիման վրայ՝ արտօնութիւնների իրաւունք ստացած անձանց աքսորի ժամանակամիջոցը կրծատել մի տարով. գիւղական շրջան մանելու իրաւունք ձեռք բերած աքսորականներին թոյլ տալ քաղաքային մէշչանների հասարակութիւնների շրջանը մտնել Սիրիրում առանց իրաւունք ունենալու եւրոպական Ռուսիա գնալ, մինչև որ թողլութիւն չլինի այն կարգով, որ որոշւած է 1894 թւի հրովարտակով. իսկ 1894 թւի հրովարտակի 4-րդ յօդւածի 13-րդ կէտի հիման վրայ արտօնութիւնների իրաւունք ձեռք բերողների Սիրիր մնալու ժամանակամիջոցը՝ կրծատել մի տարով: Աւզդիչ բաժանմունքների տաժանակիր կալմանաւորներին, աքսորականներին, բնակութեան համար աքսորեալներին շնորհած արտօնութիւնները չեն սահմանափակում 1894 թւի մայիսի 7-ի և 1895 թւի մայիսի 9-ի հրովարտակներով ժամանակամիջոցը կրծատելու և արտօնութիւնների վրայ ունեցած իրաւունքները և Սիրիրի երկաթուղին կառուցանելու կանոնները: Չորս տարուց ոչ պակաս ժամանակամիջոցով տաժանակիր աշխատանքներին դատապարտւած կամ դատապարտող անչափահաններին՝ տաժանակիր աշխատանքներից ազատել, հաշւելով դրանց աքսորականների թւում: Այն յանցանքները, որոնց դէմ այս հրովարտակի հիման վրայ հալածանքը չէ դադարում և որոնք գործւած են մինչև թագաղրութիւնը, պակասացնել մի երրորդականով: Սրանութիւնների գործադրութիւնը թողնել արդարադատութեան մինիստրին, երկուոսկի և Պրիմուրեան գեներալ-նահանգապետներին, երբ կը հաւաստիանան, որ դատապարտեալները բարի վարք ունեն: Այն անձանց, որոնք ապօքէն գործողութիւնների համար ենթակայ են դրամական տուգանքի վարչական ձեռվ, ազատել պահանջից մինչև 300 բուբլի: Ազատել պահանջից, քննութիւնից և դատից զինւորագրութիւնից փախչող անձանց, եթէ նրանք եկել են մինչև թագաղրութեան օրը կամ կը գան մի տարայ լնթացքում: Թափառաշրջիկութեան համար դատապարտւածներին, այն դէպքում, երբ նրանք կը յայտնեն իրանց կոչումը,

Թոյլ տալ վերադառնալ իրանց հասարակութեան մէջ։ Վարչական կարգով կամ հասարակական վճռով Սիբիր աքսորող անձանց, որոնց հասարակութիւնը, չի ընդունում պատիժը կրելուց յետոց, թոյլ տալ Յ տարուց յետոց անցնել ուրիշ նահանգները և եթէ նրանք լաւ վարք ունենան։ Պետական յանցանք գործած անձանց մասին, որոնք իրանց յանցանքի յատկութեան կամ զզջալու պատճառով՝ արժանի են ներողամուռթեան, թոյլ տալ ներքին գործերի մինիստրին միջնորդել, նոյնպէս և Բարձրագոյն հայեցողութեան ներկայացնել այն աքսորականների ծագումի նախկին իրաւունքները վերականգնելու մասին, որոնք Սիբիրում պարտաւորիչ կերպով մնալուց յետոց, աչքի էին ընկնում իրանց անբիծ և աշխատաւոր կեանքով։ Ներքին գործերի մինիստրին թոյլ տալ միջնորդել այն անձանց վերաբերմամբ, որոնք պետական յանցանքների համար պաժին են կրում վարչական կարգով։ Նոյնպէս ազատել բնակութիւն հաստատելու արգելքից այն անձանց, որոնց վերադարձը հակառակ չէ հասարակական կարգին։ Պետական յանցանքներին վերաբերեալ գործերը, որոնք ենթակայ չեն վաղեմնութեան և որոնք 15 տարի շարունակ ծածուկ էին, մոռացութեան տալ։ Այն յանցանքների վերաբերեալ գործերը, որոնք նախատեսւած են 246-ից մինչև 248 յօդւածներում, և որոնք ծածուկ էին մնում, մոռացութեան տալ։ Այդ յանցանքների համար մեղադրւող կամ պատիժ կրող անձանց ազատելքուր հետեւնքներով։ Թոյլ տալ ներքին գործերի մինիստրին՝ պետական յանցանքներ գործելու պատճառով հայրենիքը ինքնակամ թողած անձանց միջորդութիւնը ներկայացնել, եթէ նրանք չեն մեղադրւում 241-րդ յօդւածներում յիշած չարագործութիւնների մէջ։ Լեհաստանի թագաւորութիւնից և Արևմտեան նահանգներից գալթածներին, որոնք լեհական ապստամբութեանը նպաստելու համար ապանութիւններ, կողոպտումներ և հրդեհաձգութիւններ չեն արել չենթարկել ոստիկանութեան հսկողութեանը և թոյլ տալ ազատքնակութիւն, երբ նրանք հայրենիք կը վերտպառնան և կերպւեն, իսկ նրանց, որոնք ապստամբութեան նպաստելու համար վերոնշեալ քրէական յանցանքներից մէկը կատարել են, հալածանքի չենթարկել, թողնելով նրանց ոստիկանութեան հսկողութեան տակ՝ Յ տարով։

## Ա. Կ. ՄԵծութիւնների Բարձրագոյն Ճաշը

Երբ թագադրութիւնը վերջացաւ, Գրանովիտեան պալատը հաւաք-  
ացին սինողը, առաջին և երկրորդ կարգի երկու սեռի անձինք, բարձր  
պաշտօնեաները, Օդոստափառ հիւրերի շքախմբերը և կանդնեցին սեղան-  
ների մօտ. Մօտ երեք ժամին ամեն ինչ պատրաստ էր: Նոցին Մեծու-  
թիւնները թագերով և ծիրանիններով գնում էին զէպի Գրանովիտեան  
պալատը՝ ուղեկցութեամբ ընթերականների, պալատի մինիստրի, զինուրա-  
կան մինիստրի, գեներալ-ազիւտանտ Ռիխտէրի, շքախմբերի գեներալ-  
մարորի, Փլիպէլ-աղիւտանտի և կաւալէր-գարդեան գնդի հրամանատարի:  
Գահական դահլիճում թագաւորը ընդունեց գալիսոնը և գունդը. Ընթացքը  
բաց են անում՝ աւագ-արարողակետները, պալատի առաջին պաշտօնեա-  
ները, հոփմարշալը և հերոդզները. ձախ կողմից գնում էին՝ ստատո-սեկ-  
րետարները և պալատի երկրորդ պաշտօնեանները: Ետեւից գնում էին Կայ-  
սերական ընտանիքի անդամները, օտարազդի անձինք, հոփմէլստերունի-  
ները, ստատո-դամերը, Փրէլինները և օտար պալատական կանաչը: Նոցին  
Մեծութիւնները ժամանելով Գրանովիտեան պալատը, բարեհանեցին բաղ-  
մել գահերի վրայ ամպհովանու տակ: Երեք հոգու ճաշ էր պատրաստւած:  
Ճած նշանով, ծալրազո՞ն մարշալը, աւագ-հովմարշալը և արարողակետ-  
ները դուրս գնացին կերակուրները քերելու. Կերակուրները Գրանովիտեան  
պալատը ներս բերին պաշտօնաթող շտաբ-օֆիցէրները Մոսկավի նահան-  
գի աղնուականներից, չառաշընթաց ունենալով ծալրազո՞ն մարշալին և  
արարողակետներին, որոնց կողքից գնում էին կաւալէր-գարդների գնդի  
օֆիցէրները, կերակուրները սեղանի վրայ գնում էին տւագ-հովմարշալը  
և հոփմարշալը: Նորին Մեծութիւնը թագը, գալիսոնը և գունդը չանձնեց  
պաշտօնեանիներին, Միարոպովիտ Մերգի օրհնեց սեղանը: Թագաւորի սեղա-  
նին ծառազում էր Մոսկավի նահանգական ազնւականութեան պարագլուխ  
իշխան Տրուբէցկով, Կալսունի Մարիա Ֆէոդորովնայի սեղանին ծառազում  
էր կոմս Մուսին-Պուչկին, Կալսունի Ալէքսանդրա Ֆէոդորովնայի—Կոր-  
նիլով: Ճաշի ժամանակի, փողերի, թմբուկների ձախնակցութեամբ ու թըն-  
դանօթաձգութեամբ, օբերշնկը չորս կենաց առաջարկեց՝ Թագաւորի, Թա-  
գուհիների, Ֆէսարեւիչի և ամբողջ Թագաւորական ծան, հոգևորական ան-  
ձանց և բոլոր հաւատարիմ հապատակների կենացը: Նոցին Մեծութիւն-  
ները, ճաշը վերջանալուց վետով, դիմեցին զէպի Անդրէնեան դահլիճը,  
Հէնց որ մինեց, Նոցին Մեծութիւնները դուրս եկան Կրէմլի պալատի  
պատշամբը, Կալսերական ընտանիքի անձանց հետ: Կալսունի Ալէքսան-  
դրա Ֆէոդորովնային մատուցւեց մի ծաղկափունջ և հէնց որ Նա բարե-  
հանց ընդունել փունջը, լուսաւորւեց նա ելէկտրական բազմաթիւ փոք-  
րիկ լամպաներով. ծաղկափունջից տարւած ելէքտրական անցքերի միջո-

ցով նոյն վայրկենին լուսաւորւեցին Կրէմլի աշտարակները և ամբողջ Կրէմլը: Զահանուած տեսարան էր ներկաչացնում լրւսաւորւած Մոսկվան երեկոյնեան խաղաղ, տաճառ եղանակին: Բոլոր փողոցները լցւած էին ժողովրդով: Կարգը օրինակելի էր:

### Շնորհաւորութիւնների ընդունելութիւնները

Մայիսի 15-ին առաւօտեան 11½ ժամին, Կրէմլի պալատում, Անդրէսեան Գահական դահլիճում, Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին բարեհաճեցին շնորհաւորութիւններ ընդունել սրբազն սինողի և բարձր հոգեորականութեան անդամներից, օտար դաւանութեան պատկանող քրիստոնեական հոգեորականներից, Պետական Խորհրդից, մինիստրներից, գլխաւոր կառավարիչներից, Կառավարիչ Մենատից, ստատս-սեկրետարներից, պատւաւոր լինամականներից, նահանգական ազնւականութեան պարագլուխներից, Մոսկվայի նահանգի գաւառական ազնւականութեան պարագլուխներից, նահանգական գլխաւոր կառավարի վարչութիւնների նախագահներից, Մոսկվայի նահանգի գաւառական գլխաւոր կառավարի վարչութիւնների նախագահներից, քաղաքագլուխներից, Ֆինլանդիայի Մեծ իշխանութեան պատգամաւորներից, բորսակին կոմիտեանների և առևտորի ու մանութակատուրակի կոմիտեան ներկաչացուցիչներից: Թագաւոր Կայսրը, եգերեան գնդի համազգեստով՝ ձախ կողմը ունենալով Թագուհի Կայսրուհուն, Որը շքեղ սպիտակ զյեստ էր կրում, թաղը զյեստ և ս. Անդրէսեան ժապաէնը ուսին, բարեհաճեց կանգնել գահի մօս և շնորհաւորութիւններ ընդունել անձինքներից և պատգամաւորութիւններից, որոնք միմեանց ետեից մօտենում էին շնորհաւորութիւններով: Ընդունելութեան ժամանակ ներկայ էին՝ Մեծ իշխանները, Մեծ իշխանուհիները և Մոսկվայում գտնուղ գահակալները: Ընդունելութիւնը հանդիսաւոր էր: Թագաւոր Կայսրը ողորմած կերպով բարեհաճեց շնորհակալութիւն լայտնելներկաչացուցիչներին: Թագուհու կայսրուհու ձեռքը համբուրում էին: Ազնւականութեան, զեմստառների և քաղաքների բոլոր պատգամաւորութիւնները աղ ու հաց մատուցին շքեղ սկոտեղների վրայ: Միմեանց ետեից պատգամաւորութիւնները անցան Թագաւորի առաջ՝ թւով 1200 հոգուց աւելի: Դա ամբողջ սուսաց երկիր ակնյալացնի և պարզ արտակալութիւն էր սիրու, վատահութեան և բարեցակամութեան գէպի իր Թագաւորը, Յերեկւաէ մէկ ժամին վերջացաւ պատգամաւորութիւնների, ընդունելութիւնը: Երևկուեան 7 ժամին նշանակւած էր ճաշ Գրանուիլիտեան պալատում երկու կարգի պաշտօնեաների համար:

Պետերբուրգի միտրոպոլիտ Պալլաղի ճառ խօսեց Թագաւոր Կայսրի առջև Ուսպէնսկի տաճարում:

Մոսկւակի միտրոպոլիս Սէրգի ճառ խօսեց Թագաւոր Կայսրի առջև Ուսպէնսկի տաճար մտնելուց առաջ:

Մոսկւակի աղնաւականութեան պատգամաւորութիւնն ընդունելու ժամանակ, Թագաւոր Կայսրը, նահանդական պարագլուխ իշխան Տրուբչեցիովի մատուցած ողջունին, բարեհաճեց ասել. «Ինձ առանձնապէս հաճելի է Մոսկւայի ազնւականութեան աղ ու հացն ընդունելը: Շնորհակալ եմ մեղանիցու Մոսկւակից Թագաւոր Կայսրին աղ ու հաց մատուցանելու ժամանակ, Մոսկւակի քաղաքագլուխն ասեց. «Մեծ Թագաւոր, Մեծ Թագուհի. Ծնդունեցէք Զեր Մոսկւակի ամենաանկեղծ շնորհակալութիւնը: Մոսկւան ի սրտէ սիրում է Զեզ և անկեղծ կերպով աղօթում է Աստծուն Զեզ համար»: Թագաւոր Կայսրը ողորմած կերպով ասեց. «Շնորհակալ եմ մեղանից»:

Ճաշ բարձր հոգեւորականութեան եւ առաջին երկու կարգի պաշտօնեանների համար

Մայիսի 15-ին, երեկոյին 7<sup>1/2</sup> ժամին, Գրանովիլստեան պալատում, ներկայութեամբ Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհու, Թագաւորական տան անդամների և օտար պրինցների ու պրինցուհիների՝ տեղի ունեցաւ ճաշ բարձր հոգեւորականութեան և առաջին երկու կարգի պաշտօնեաների համար: Հրաւիրած էին 286 անձինք: Բարձրագոյն սեղանի շուրջը նըստած էին Բարձրագոյն անձինք և հոգեւորականութիւնը: Թագաւոր Կայսրի դիմաց նստած էր պալատի մինիստր կոմս Վորոնցով-Դաշկով, աջ կողմը նստած էր միտրապոլիտ Պալլադի, ձախ կողմը միտրապոլիտ Սերգի: 8<sup>1/2</sup> ժամին ճաշը վերջացաւ: 9 ժամին Կրէմլը կրկին լուսաւորւեց, նրա հետ և ամբողջ Մոսկւան:

Մայիսի 15-ին Նոցին Մեծութիւններին ներկացաւ պապի զեսպան արքուպիսկոպոս Ալլիարդի լր շքախմբով.

Մայիսի 16-ին Նոցին Մեծութիւնները երկրորդ անգամ ընդունեցին բուխարակի էմիրին և Խիւակի խանին, որոնք եկել էին չորեքակալութիւն լաւտնելու Թագաւոր Կայսրին՝ իրանց տրւած շնորհների համար, այն է Բուխարակի էմիրին շնորհած է անորին բարձրութիւն» տիտղոսը և Նորին Մեծութեան Անւան շիֆը, իսկ Խիւակի խանին պարճառափակութիւն տիտղոսը և Օրէնբուրգեան կողակների զօրքի գեներալ-լեյտէնանտի աստիճան:

Բարձրագոյն ընդունելութիւններ

Մայիսի 16-ին Կրէմլի պալատում շնորհաւորութիւններ մատուցին Նոցին Մեծութիւններին օտար գեսպանները, զիպլոնատիական կորակուսի անդամները, գեներալ-աղիւտանոները, Նորին Մեծութեան շքախիբութիւն

գեներալ-մայորները և ուրիշները: Բոլոր անձինք առաւտօտեան 10<sup>1/2</sup> ժամին հաւաքւեցին Գէորգեան դահլիճը. վոլոստների աւագները և զիւղական ազգաբնակութեան ներկալացուցիչները—Վլադիմիրեան դահլիճում և Բուեարտկալա հրապարակի վրաց: Նոցին Մեծութիւնները, ներքին սենեակներից դուրս գալուց չետու, կանգնեցին Գահական դահլիճում գուների մօտ: Արարողապետները հերթով առաջնորդում էին հաւաքւածներին: Պատղամաւորութիւնները ասիական ժողովուրդների կողմից, վոլոստների աւագները, կողակների, զօրքերի և զիւղական ազգաբնակութեան ներկալացուցիչները շնորհաւորութիւններ մատուցանելով նոցին Մեծութիւններին, աղ ու հաց և սուրբ պատկերներ էին մատուցանում նրանց:

### Վոլոստների աւագների ընդունելութիւնները

Մակարի 15-ին վոլոստն. (գաւառակ) աւագները շնորհաւորելու համար հաւաքւեցան կրէմլի պալատի Վլադիմիրեան դահլիճը: Առջեւը կնդնած էին օտարերկրացիները գողնզգոչն հագուստներով, սրանց ետերը—վոլոստների աւագները, իւրաքանչիւր պատղամաւորութիւն առանձին: Օտարականների առաջ կանգնած էր նրանց պարագլուխ Սուլթան-Հաջի-Վալի-խանը: Գէորգեան դահլիճի աջ կողմը կանգնեցին օտարականների պատղամաւորութիւնները շրեղ սոկեկար խալաթներով և գողնզգոչն չալմաներով: ձախ կողմը՝ մուսուլմանների, կարախմների և լամաների հոգեորականութիւնը: մուսուլմանները սպիտակ և կապուտ թալարներով (ուսնամաններով) էին, ծալրագոյն լաման կապուտ հագուստով էր, ոսկեկար գունաւոր մնացալից: Դահլիճի կէսը բռնել էին կաղակների ներկալացուցիչները մեծ ասաները ձեռքերին, կաղակների պատղամաւորութիւնների ընդունելութեան ժամանակ ներկաւ էին՝ զինւորական մինիստրը, Կովկասի կառավարչապետը և զիւղաւոր աստամանները: Դիւղացիների պատղամաւորութիւններից մեծ մասը նոցին Մեծութիւններին մատուցին սրբերի պատկերներ թանգագին զառերով և աղ ու հաց: օները մատուցին մի արծաթեակ սեղան, վրան երեք հատ չորեքա և աղ:

### Տիկինների շնորհաւորութիւնները եւ պարահանդէս

Մակարի 16-ին, երեկոկեան կոչմլի պալատում կալացաւ Բարձրագոյն ելքը Ութերորդ ժամին դահլիճը լցւեցան դիպլոմատիկական մարմին, քարձրաստիճան անձերի, աղնաւականների ներկալացուցիչներով: Տիկինները մեծ մասամբ ուստական հագուստներով եկան: Երեք երաժշտական խումբ էր նւագում: Բարձրագոյն ելքը սկսւեց 10-րդ ժամի վերջը, Թագաւորը հեծելագնդի հագուստով էր: Նոցին Մեծութիւնների առջնից գնում էին՝ արարողապետներն ու մարշալը: Նոցին Մեծութիւններին հետեւում էին

առաջ կամերական ընտանիքի Օգոստավառ անձերը, զնացքը սկսեց Ժիզն զա Ցարեա հիմնով, մի պարբերգովի, Նոցին Մեծութիւնները ողորմած-աքար զլուխ տալով, հաճեցին եօթը պտուտ անել և ապա հեռացան ներքին սենեակները 12-րդ ժամի սկզբին:

Մայիսի 17-ին Գահ ական դահլիճն եկան շնորհաւորելու տիկինները, ժամը 12-ին կաչացաւ Բարձրագոյն ելքը Եկատերինեան դահլիճից Գահական դահլիճը, Նոցին Մեծութիւնները կանգնեցին դահի մօտ, Նրանց ետել բունեցին իրանց տեղերը պալատի մինիստրը, աստիճանա. որներն ու օրապահները:

Առաջին անգամ շնորհաւորեցին Մեծ իշխանուհիներն ու օտարերկինաց պրինցուհիները, ապա աւագ արարողապետուհիները, Թաղուհի Կաչառուուն մօտ կանգնեց աւագ-արարողապետուհի՝ պաջառափակը իշխանուհի Գալիցինա՛ն, որ ներկայացնում էր Նոցին Մեծութիւններին պալատական և այլ տիկիններին, դիւանագիտական մարմինը, քաղաքակին տիկիններին, զինուրական և քաղաքացիական բարձրաստիճան անձերի ամուսիններին, ուստի նշանաւոր ազնւականութեան ներկայացուցիչ կանանց հետ, Ընդունելութիւնը վերջացաւ ժամը 4-ին:

Նոյն օրը ժամը 4-ին, կամսերական նշանները հանդիւսաւոր կերպով վետ տարան զինարանը, նոյն հանդիսակատարութեամբ և նոյն անձերը, որոնք բերել էին Գահական դահլիճը:

### Հանդիսաւոր ներկայացում մեծ թատրոնում

Մայիսը 17-ին Մեծ թատրոնում հանդիսաւոր ներկայացում եղաւ, Ամրողջ ճանապարհը Ալէմիլից մինչև թատրոնը բունել էր հազարաւոր ամբոխը, Թատրոնի դիմացը Նոցին Մեծութիւնների մուտքի համար շինւած էր մի ահազին վրան մուգ-կապտագոյն մահուղից, զարդարւած ասողնագործ արքալիճներով, Վրանի զլսին կար մի մեծ մետալից շինած արծիւ, որն իր ճանկերով բունած էր վրանը, Վրանի ներսը զարդարւած էր կանաչով և լուսավառւած ելէքտրականութեամբ: Բազկաթուները բոնել էին մինհստրներն ու գեներալները, օթեակները՝ զիպլոմատներն իրանց ընտանիքներով, Նրանց մէջ և Լի-Հունդ-Զանդն ու եազոնական դեսպանութիւնը, Բուլսարաքի էմիրը, Խիւալի խանը, Կորէացիները, և զանազան պատգամաւորութիւններ և քաղաքագլուխներ:

Թագաւորական օթեակում Նոցին Մեծութիւններին սպասում էին Մեծ իշխաններ ու Մեծ իշխանուհիները, պրինցներն ու պրինցուհիները: Ժամը 8-ից 40 ր. անց Նոցին Մեծութիւնները եկան, Բոլորեքեան տեղներից վեր կացան, օրհներզի ձանը միախառնւեց ցնծալից առւալից հետ: Նոցին Մեծութիւնները զլուխ էին տալիս: Օրհներզը կրկնւեց երեք անգամ, «Ճիզն զա Ցարիայի» և գործողութիւնից ինտու տեսարանը փոխւեց

և ներկալացաւ Կրասնի հրապարակի հանդիսաւոր մուտքի պատկերը Բեմի վրայ կանգնած երգեցիկ խումբը բաղկացած էր 80 հոգուց: Ներկալացումը վերջացաւ «Գեղեցիկ Մարգարիտ» բալչտով: Նոցին Մեծութիւնները թատրոնից հեռացան ժամը 11-ին: Հազիւ թէ Նրանք տեղներից վեր էին կացել, որ հնչեց բարձրագոչ «ուռան» և աղաղակներ՝ «օրհներգը, օրհներգը», Հիմնից լետով «ուռանի» ձախը գղրդում էր թատրոնում, որին ձախակցում էր ժողովուրդը փողոցում:

### Վոլոստների աւագներին տրւած ճաշը

Ժողովրդական տօնախմբութիւնից լետով, Պետրովիկի պալատի բագում ճաշ տրւեց վոլոստների աւագներին: Պալատի սանդուխքի վրայ կանգնել էին Մոսկվայի նահանգի և գաւառների ազնւականութեան պարագլուխները: Չորս ահազին վրաններում պատրաստւած էին ճաշի սեղաններ: Մոսկվայի պատգամաւորներին ընդունելուց լետով, Նոցին Մեծութիւնները հաճեցին դուրս զալ ընդհանուր նահանգապետի Մոսկվայի Օդատափառ Կալսերական պալատի ու ներքին գործերի մինիստրների, Կայսերական գլխաւոր զօրաբանակի: հրամանատարի և Մոսկվայի նահանգապետի ուղեկցութեամբ: Թագաւոր Կալսրի շուրջը խմբեցան վոլոստների աւագները, և Թագաւոր Կալսրը ճառ խօսեց: Միապետի ճառից լետով ուրախական անընդհատ «ուռան» թնդացնում էր օդը: Միապետի ճառը մեծ տպաւորութիւն թողեց գիւղացիների վրայ Գիւղացիներին ճառ խօսելուց լետով, Թագաւոր Կալսրը մօտեցաւ աղնւականների խմբին և նրանց ևս ճառ խօսեց լի ողորմածութեամբ և հաւատով: Միապետի ճառից լետով վոլոստների աւագները տեղաւորւեցան սեղանների շուրջը: Ճաշի ժամանակ Թագաւոր Կալսրը, Թագուհի Կալսրունու հետ անցաւ ճաշողների մօտով և ապա մնաք բարի ասելով ժողովականներին, մտաւ Պետրովիկի պալատը:

### Թագաւոր Կայսրի ճառը վոլոստների աւագներին

«Կալսրուհին և Յս սրտանց չնորհակալ ենք ձեղանից ձեր արտաւարտած սիրու և անձնւիրութեան զգացմունքների համար: Չեմ կասկածում, որ սրան մասնակից են ձեր բոլոր համագիւղացիները: Նրբ նրանց կը տեսնէք, Հալսնեցէք Մեր չնորհակալութիւնը: Ձեր վիճակը բարեկաւելու հոգսերն ալնայիս մօտ են Խմ սրտին, որպէս և մօտ էին Խմ Պատին և Խմ անմոռանալի թանկաղին Ծնողին: Ցիշեցէք անս խօսքերը, որ Նրանք ասել են ալստեղ վոլոստների աւագներին թագաղրութեան ժամանակ: Ձեր մէջը շատերը կան, որոնք անձամբ լաւ են անս խօսքերը: Յս կամենում եմ, որ ալդ խօսքերն ընդ միշտ ծառալեն ձեզ որպէս հաստատուն ղեկավար: Տացէ Ասուած ձեզ ապագակում առողջութիւն և աջողութիւն աշխատանքի և բարի գործերի մէջ»:

*Թագաւոր Կայսրի ճառը ազնականներին*

«Մրտանց չնորհակալ եմ ձեզանից ձեր զդացման և հաւատարիմ ծառադութեան համար. Չեմ կասկածում, որ ազնականութիւնը միշտ կը լինի, ինչպէս և եղել է, գահի նեցրելը. Աս անկեցօքէն դնահատում եմ ազնւականների օգտաշահ և անշահատէր մասնակցութիւնը տեղական գործերում. Խնձ չալանի է ան ծանր ժամանակը, որ անցրել է աղնւականութիւնը, և հանգիստ եղէք. Աս, իմ հոգսերի թւում, չեմ մոռանալ աղնւականներիդ կարիքները մեր թանկագին հազրենիքի լառաջադիմութեան համար. Խորին չնորհակալութիւն եմ չալանում ձեր ջերմագին մասնակցութեան համար Մեր տօնախմբութիւններին»:

*Աղէտ Մոսկվայում*

18 մայիսի. «Կանոնարական պալատի նախարարի ուղղած հեռագիրը  
Պրաւիտել. Վետանիկին».

«Թագ Հղութեան հանդէսների փալուն ընթացքը մթագնեց մի ցաւալի դէպքով. մայիսի 18-ին՝ ժողովրդական տօնախմբութեան սկզբից շատ առաջ մի քանի հարիւր հազարեան ամբոխն աջնակէս արագութեամբ էր գաղում դէպի Խողինսկի դաշտը՝ ճաշիերութիւն տեղը, որ իւր տարի հարիւրական ոչժողով հարիւրաւոր մարդիկ ջարդեց Շուտով կարդը վերականգնեց բաց ի մեծ վիշտ՝ ամբոխի առաջին ճնշման հետնանքը քիչ զոհեր չնպան. Խոկական թիւը կը չալարարւի. Մինչև 4 ժամը ոտոիկանութեան ստացած տեղեկութիւններից երեսում է, որ մեռած են 331, վիրաւորած՝ 459 հոգի. Նորից Կանոնարական Մեծութիւնը խորապէս վշտացած առդ դէպքից, հրամակեց իւրաքանչիւր ողբացեալ ընտանիքի մի հազար ոռուրի նպաստ տալ, իսկ սպանաւծների թաղման ծախսքը իւր հաշւով հոդալ»:

Պաշտօնական. Վերջին տեղեկութիւններից երեսում է, որ Խողինսկի դաշտում մեռածների թիւը հազար հարիւր երեսուն և ութ է:

«Խողինսկի դաշտում մայիսի 18-ին պատահած ցաւալի դէպքի պարագաներն ու խոկական պատճառները պարզելու համար, մի անցք, որին հազարից աւելի մարդիկ զոհ գնացին, պատշաճաւոր կարգով քննութիւն է նշանակած, որ կատարում է Մոսկվակի նահանգական դատարանի կարնոր գործոց քննիչ Կրէզէրը՝ Մոսկվակի դատաստանական պալատի և նահանգական դատարանի դատախազների անձնական հսկողութեամբ»:

«Ալսօր դատաստանական վարչութիւնները քնննեցին աղէտի տեղը, Վագանկովսկի դերեզմանոցը լիքն էր ժողովրդով. Անվերջ շղթաւով դէպաղտեղ է ձգւում ժողովրդը՝ զիակների մէջ իրանց հարազատներին զտնելու համար. Օրւակ չորս ժամին զերեզմանոցը եկաւ հայր Յովհան

Կրոնշտատսկին, Նա միմիթարական խօսքերով դիմեց լաց լինով շատ կանանց, Վշտահարների վրաւ հայր Յովհանի երևալը սաստիկ տպաւորութիւն ունեցաւ:

Խողինսկի դաշտում աղէտն աջապէս է պատահել, Լուսադէմին խըռնըւած ժողովուրդն սկսեց դիմել դէպի բուփէտների շարքը, ուր հացլերովթ էր պատրաստած ձիարշաւի հրապարակների կողմից՝ բուփէտների առաջին երեսուն սաժէն հեռաւորութեան վրաց տասը սաժէն լանութեամբ մի խորը ձոր է գտնուում: Արագ շարժելով՝ ժողովրի հոսանքն աջնտեղ է զցում առաջնի շարքերը, մարդիկ փոսն էին թափւում ոչ թէ տասներակներով, այլ հարիւրներով: Շուտով փոսի՝ Պետերբուրգեան խճուղուն մօտի մասը համարեա լցւեց ժողովրդով: Այդ բոլորը կատարւեց ընդամենը 15 րոպէում: Այդ կարճ ժամանակամիջոցում մօտ հազար հողի կոտորեցին, մնացած՝ բազմութիւնը՝ հրելով հետեւ, հարիւր հազարեան ամբոխից, արագ հոսանքով անցնուում էր դէպի բուփէտները, ուր սկսել էր հացի և թագաղրական բաժակների բաշխումը, Ոչ ոք չէր իմանում գետնի վրաւով է զնում, թէ մարմինների: Գիշ վատոց բուփէտների մօտ աջնպէս էր խոնմել ամբոխը, որ անկարելի էր շունչ քաշել: Բաշխման տեղը հասած ամբոխն սկսեց զուրաց շպրտել բաժակներն ու հացի կապոցները: Տեղի ունեցաւ մի կոխկոտոց, որ վերջացաւ շատ զոներով: Սպանւածներն ալճքան չէին, որքան ալւանդակւածները: Կարգը շուտով վերականգնւեց:

Սարսափելի տեսարանից վայրկենաբար ուշքի գալով ամբոխը՝ արտասուբն աչքներին և հեծկլտանքով սկսեց երկար փոսից դուրս հանել դիակները: Բժշկական օգնութիւն պահանջւեց: Բժիշկները շուտով ձեռք առան տառապեալներին օգնելու իրանց սրբազան գործը: Ալւանդակւածւածներին հիւանդանոցներն էին տանում, դիակները՝ հիւանդանոցներն ու Վագանկովսկի գերեզմանոցը: Սարսափահար ժողովուրդը՝ հեծկլտալով հետեւում էր տիսուր կառքերին:

Ալսօր՝ օրւաւ երկու ժամին Նորին Մեծութիւններն Ծղոսափառ ընդհանուր նահանդապետի և նրա ամուսնու ուղեկցութեամբ՝ այցելեցին էին Եկատերինեան հիւանդանոցը, ուր թուզ 141 վիրաւորներ են զետեղւած: Թագաւորն ու թաղումին մտան բոլոր սենեակներն ու վլանները ուր վիրաւորեալներն էին գտնւում, և նրանցից շատերի հետ ողորմածաբար խօսեցին, ուշադրութեամբ հարցելով, թէ Բնչպէս են վիրաւուել: Թաղումին առանձին կարեկցութեամբ էր դիմում հիւանդներին: Թագաւորի երեալու ժամանակ հիւանդները երեսնին խաչակնքում էին թագումին խիստ լուզւած էր: Հիւանդներից մէկը մինչև այժմ ուշքի չէր եկել: Երեքը հիւանդանոց են բերւած բոլորովին խելագարւած: Թագաւորին ուղեկցում էին Մոսկաւի բոլոր հիւանդանոցների վերատեսուչ բժշկա-

պետ Ռողանովը և Բաղդանով ու Գեթէ հերթապահ բժշկապետները, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնան հիւանդանոցներում զտնող իւրաքանչիւր հիւանդի համար մի մի շիշ մաղէր ուղարկեց:

Մեռածների դիակները՝ պաշտօնական տեղեկութեամբ թւով 1282, տարած են Վագանկովսկի գերեզմանոցը, Առաւտից սկսած գալիս են ծնողներն ու ծանօթները՝ իրանց հարազաներին որոնելու։ Նրանց կարելի է միայն զգեստից և ուրիշ նշաններից ճանաչել, զէմքերից անկարելի է ճանաչել։ Օրւաէ երկու ժամից թաղումն է կատարւում։ Աճնտեղ են դժնուում ոստիկանութեան պաշտօնեաները, որոնք գրում են ճանաչւածների անունները, և մի քանի քահանաներ, որոնք հոգեհանդիսաւ են կատարում։ Վաղն անկալս դիակները ես կը թաղւին։

### Փրանսիական ղեսալսնութեան պարահանդէսը

Մայիսի 18-ին Փրանսիական ղեսալսնութեան մէջ կալացաւ մի փառաւոր պարահանդէս։ Դահլիճներն ու սենեակները շքեղ զարդարւած էին։ Մի քանիսը նրանցից կատարիալ ձմերապին ազդիներ էին դարձել։ Մի դահլիճում շխնւած էր շատրւան լուսաւորւած ելեքտրական գովնզգովն լուսի։ Նոյին Մեծութիւնների ժամանելուն սպասում էին պրինցները, պրինցուինները, կալսերական ընտանիքի անդամները, դիւանագիտական մարմնի ներկալացուցիչները, պալատական աստիճանաւորներն ու արքինները։ Ամեն տեղ կենդանութիւն էր տիրում։ Նոյին Մեծութիւններին մուտքի մօտ զիմաւորեցին զեսպանն ու իր ամուսինը և զեսպանատաննը մնացին մինչև դիշերւաէ ժամը 2-ը, Պարահանդիսի ժամանակ տիկիններին առաջարկեցին շքեղ հոլիարներ և վնչեր ֆրանսիակից բերած ծաղիկներից։ Պարահանդէսն արտակարդ էր շքեղութեամբ ու կենդանութեամբ, և շատերի վրաէ անջնջելի տալաւորութիւն թողեց։ Պարելեկովիթին նւազում էին երաժիշտները և երգում ուստ երգչուհները ուսւական շքեղ հագուստներով,

### Ալքսանդրեան դահլիճում ճաշ դասակարգային ներկայացուցիչներին

Մայիսի 19-ին Կրէմլի պալատի Ալէքսանդրեան դահլիճում ճաշ տըրմեց զասակարգավին ներկալացուցիչներին։ Հոչակապ վարդապոչն դահլիճում դրւած էր 12 սեղան։ Դահլիճի աջ կողմը բացւած էր Թագաւորական սեղանը։ Դլխաւոր սեղանի երկու կողմը նշանակւած էր պալատական տիկինների և ֆրէզինների համար։ Դահլիճի ձախ կողմը դրւած էր 9 սեղան։ Առաջին երեք սեղանների շուրջը նստած էին քաղաքագլուխները, հետեւեալ սեղանները բռնել էին նահանդ։ Վարչ նախադաները, ազնւականութեան պարագլուխները, կազակների պատգամաւորներն ու

ասիացի օտարականները, որոնց մէջ էր բուխարակի էմիրը և Խիւալի խանը: Նոցին Մեծութիւնները մուտք գործեցին դահլիճը 6 ժ. 45 ր., ուղիկցութեամբ Մեծ Խշանների, Մեծ Խշանուժների և պրինցների: Նոցին Մեծութիւնների սեղանի մօտ, թաղաւորի կողքին նստած էր լունաց թագուհին, իսկ թագուհու մօտ՝ Նշապոլիտաննեան պրինցը: Նոցին Մեծութիւնների դիմացը նստած էին պալատի մինիստը և Մուկալի ազնւականութեան պարագլուխները: Ճաշին նւագում էր պալատական երաժշտախումբը: Կենացներ չառաջարկեցան: Վերերից շատերի հետ Նոցին Մեծութիւնները ողորմածաբար խօսում էին:

### Մեծ իշխան Սերգի Ալէքսանդրովչի պարահանդէսը

Մուկալի Օդոստափառ տաճտիրոջ, Նորին Կալսերական բարձրութիւն Խշան Սերգէէ Ալէքսանդրովիչի երեկոթթը՝ երկուշաբթի, մայիսի 20-ին թագաղրութեան աչքի ընկնող հանդէսներից մէկն էր: Ըսդհանուր նահանդապետի բնակարանի կահաւորութիւնը նշանաւոր էր գեղանի պարգութեամբ: Կաթնագոյն լուսաւորութիւնը խաղաղ և հաւասար լուս էր սփոռում բոլոր առարկաների վրաց: Հրատիրածներն սկսեցին ժողովել 9<sup>1/2</sup>, ժամից: Եկան կալսերական տասն անգամները, օտար արքալաղունները, ի թիւս որոց գտնուում էին Զերնոգորիաի իշխան Նիկալայը իւր որդոց և իշխանուէի Ելենա դստեր հետ, Բոլղարիակի իշխան Ֆերդինանդը և արտասահմաննեան գեսպանները: Մեծ իշխան Սերգէէ Ալէքսանդրովիչին ու Ելիզաւէտա Ֆէոդորովնան բարեհածեցին հիւրերին ընդունել դահլիճի մուտքում և իրանց ողորմած սիրելութեամբը և ուշաղրութեամբը հիացրին ամենքին: 10<sup>1/2</sup> ժամին թագաւոր Կալստուն ու Թագուհի կալստունին երջանկացրին երեկոթթն իրանց գալստեամբ: Որոտալից «ուռուան» որ հնչեց հրապարակում և անցաւ ամբոխին, նշան էր Նոցա գալուն: Երբ Նոցին Մեծութիւնները եկան, պարերն սկսւեցան և տևեցին մինչև մէկ ժամ: Երեկոթթի ամբողջ ընթացքում ժողովրդեան խուռն բազմութիւնը կանգնած էր մարտաքաղաքի Օգոստափառ կառավարչի տան առջև՝ հրապարակում: Ժամանակուցի մէջ մի քանի խմբեր էին կազմել, որոնք երգում էին ժողովրդական օրհները՝ «Օքառ Գոսпод», լուծ ՏՅՈՐ: Ուժգին աղաղակի ուռու մարդու սրտից բղխող «ուռուան» չէր ընդհատում: Նորակառուց պաշիլիոնի բոլոր դահլիճներում՝ ի բաց առեալ երեկոթթի դահլիճը, պատրաստ էր չքեղ ընթրիքը: Արքալական սեղանը բացւած էր մեծ Օրանծէւակա դահլիճում: Խնչպէս ամեն ինչ, աչդ երեկոթթին նշանաւոր էր և մենակն, որ պատրաստել է նկարիչ Վասնեցովը, ոռուսական ոճով դրւակների մէջ՝ զետեղւած է Նոցին Մեծութեանց սրակաւոր պատկերը, պատկի վերեից՝ պատմական գերբը և իշխանութեան ու մեծութեան նշանակներ:

Ճաշկերութ է պատրաստւած արքալական պալատում: Ալէքսէլ Միխալո-

## Ազնւականութեան պարահանդէս

Մայիսի 22-ին «Աղնւականների» ժողովում աղնւականութիւնը պարանանդէս տևեց ի պատիւ Նոցին Մեծութիւնների, Դահլիճը ձմերապին ալգու տեսք էր ընդունել: Հիւրերն մօտ 6000 հազի էին, 10 ժամ 50 բովին նւազախումբը հնչեց ժողովրդական օրհներգը: Ժողովարանի բաց պատուհաններում լսւեցին ժողովրդի ոգեսորած բացականչութիւնները, որ ողջունում էր Նոցին Մեծութիւններին, Նոցին Մեծութիւններին զիմատորեցին Պոկրաչի աղնւականութեան զաւառական պարագլուխները նախանդական պարագլիմի առաջնորդութեամբ: Վերեի աստիճանի վրայ Նոցին Մեծութիւններին զիմատորեցին պարահանդիսի տանտիրուհի իշխանուհի Տրուբեցկայա՝ իշխանուհի Գալյոցինաչի և Մ. Ն. Կրիտափի հետ: Ողջուններն ընդունելուց լեռոց Կալսերական Զօղցը անցաւ հիւրասենեակը ուր հաւաքւած էին Մեծ Խշանաները և Խշանուհիները և օտար բարձրադրադոյն անձինք: Օրհներգից լեռով նւազախումբը ածեց «աղոլնէց»: Առաջին պատութ Թագուհի Կալսորուհին արաւ իշխան Տրուբեցկովի հետ, երկրորդը՝ նախկին պարագլուխ կոմս Շերեմետէվի հետ, երրորդը՝ նախկին զեներալ Երմոլովի հետ: Թագաւորը առաջին պատուն արաւ իշխանուհի Տրուբեցկովի հետ, երկրորդը՝ իշխանուհի Գալյոցինաչի հետ և երրորդը՝ տիկին Կրիտափի հետ: Նոցին Մեծութիւնների ետքեց զնում էին օտար պրինցները, պրինցուհիները, Մեծ Խշանաները և Խշանուհիները: Դիշերւազ առաջին ժամին Նոցին Մեծութիւնները գլուխ տևեցին Կալսերական օթեակլից զալիճում բարոր հաւաքւածներին, թնդաց բարձրածալին «ուռա»:

Մայիսի 22-ին, առաւտուեան 9 ժամին, Նոյին Մեծութիւնները գնացին Տրուկի Արդյունավար վահորը:

Նոցին Մեծութիւնների քաղաքային խորհրդաւանն այցելու  
թիւնը

Մայիսի 22-ին Նոցին Մեծութիւնները օտար բարձրագոյն անձանց, Կակուրական ընսանիքի անդամների և Բարձր պաշտօննեաների հետ ալցելեցին ալսօք քաղ. խորհրդարանը, Խորհրդարանի առաջ, սպիտակ զրոշակներով, կանգնեցին Մոսկվաւի քաղաքավին զպրոցների տօնական շորեր հազար երեխաներ. Սանդուղքի վրաց կանգնած էին փոքր աղջիկներ սպիտակ շորերով և ծաղիկներով լի զամբիւղները ձեռքներին. Երկու ժամին առւապիլ ճաշն լսեց. երեխաներն էին զրանք, որ ողջունում էին Թագաւորին և Թագունուն. Պրէաբրածէննեան մարշի ճաների ուղեկցութեամբ Նոցին Մեծութիւնները մտան դահլիճը: Քաղաքագլուխը վարչութեան անդամների հետ դիմաւորեցին Նոցին Մեծութիւններին, մանուկները ճանապարհն ցանում էին ծաղիկներ: Երբ Նոցին Մեծութիւնները գրաւեցին իրանց տեղերը, քաղաքագլուխ Ռուկաւչչիկով կարգաց խորհրդարանի որոշումը, որով ի վիշտակ թագագրութեան ապաստան է չիմնում 200 մարդու համար: Դրանից չետու մանուկները երգեցին հանդիսաւոր կանտատա (Բուլակեւի խօսքեր, Խաղովիտ-Խւանովի երաժշտութիւն): 500 մանուկների երդեցողութիւնը անքան լաւ էր, որ Թագաւորը ցանկացաւ կրկին անդամ լսել կանուատան: Երգեցողութիւնից լսուու քաղաքագլուխ Ռուկաւչչիկով ասեց Թագաւորին. «Մեծ Թագաւոր, փալուն զի՞ծ է թողնելու ալսուրաւ օրը Գո Մոսկվի պատմութեան մէջ: Ամբողջ Մոսկվան երջանկացած է ան բարձր պատուի, որ Գու ցուց տւիր նրան, Թագաւոր, ալսօք ալցելելով քաղ. խորհրդարանը և ողջուն ընդունելով Մոսկվաւի բնակիչների մանուկներից, Մոսկվի քաղաքավին խորհուրդը անսահման երջանիկ է առաջին անդամ ընդունելով իր մօտ Իր Միապետին, տեսնել իր պատերի մէջ Քեզ, Մեծ Թագաւորը, Մեծ Թագունի և Գո Արքական ընտանիքը: ամենաանկեղծ, սրտագին երախտագիտութեամբ խոնարհ, մինչև դետին, երկրագում է Քեզ, և մինչև լաւիտեան անջնջելի կը մնաց ալս օրը քաղաքավին խորհրդարանի չնորհապարտ լիշողութեան մէջ: Կեցցէ Մեծ Թագաւորը, Կեցցէ Մեծ Թագունին և ամբողջ Թագաւորական ընտանիքը: Եւ թող Նրանց պահպանէ Տէրը իր չնորհով երկար տարիներ, ուրախութիւն իր ի սկզբանէ հաւատարիմ և Թագաւորին և Թագաւորական ընտանիքը սիրող Մոսկվաւիլու: Թնդացին առւան» և ժողովրդական հիմնի ճաշները: Երբ որ բոլորը լռեցին, Թագաւորն ասաց.

«Կայսրութին եւ Ես չնորհակալութիւն ենք յայտնում Մոսկվայի խորհրդարանին ջերմ դիմաւոր ման եւ այսօրւան տօնի համար: Մեր սրտերից անջնջելի կը մնայ այդ սիրավիր ընդունելութիւնը: Ամեն բանի համար ի սրտէ չնորհակալութիւն ենք յայտնում եւ ցանկանում ենք կատարեալ առաջադիմութիւն Մեր Թանկագին Մոսկվային»:

Որ գես պատասխան Միապետի ալդ ողորմած խօսքերին՝ կրկին  
թողաց «ուռան»: Բայց ականչութիւնների մէջ լուսում էին և մանկական  
ձայներ:

2<sup>1</sup>/<sub>2</sub>, ժամին Նոցին Մեծութիւնները, օրհներզի ուռալի ձաների ու-  
ղեցութեամբ, հեռացան քաղ. խորհրդարանից:

Նահանգական քաղաք. Ներկայացուցիչների ճաշի

Խորհրդարանի գահինում հանդիսաւոր ընդունելութիւնից իւսով,  
քաղաքագլուխները և ընթերականները, 40 նահանգական քաղաքների  
ներկայացուցիչները հաւաքւեցին ճաշի «Մոսկուակի Մեծ հիւրանոցի» Սպի-  
տակ դահլիճում: Նախագահ Հայտերբուրզի քաղաքագլուխ Վ. Ա.  
Ռատկով-Շոժնով, Մի շարք ճառերում մատնացոց էր անւում, որ Թա-  
գաւոր Կալսրը, Բարձրագուն այցելութեամբ բախստաւորացնելով Մոսկուակի  
խորհուրդը, չորս արաւ ուռսաց բոլոր քաղաքներին Քաղաքներին ինք-  
նավարտութիւն չնորհելու օրից առաջին անգամն է, որ Միապետը բախ-  
ստաւորացրեց քաղաքալին խորհուրդը իր ներկայաւթեամբ: Դա ցոյց է  
տալիս այն հասունութիւնը, որին հասել են քաղաքները: Թագաւորի և  
թագուհու կինացը խմենց ամենամեծ ոգեսորութեամբ:

Կրէմլի մեծ պալատի Ալէքսանդրեան դահլիճում  
պարհաւղէս

Մայիսի 23-ին, Կրեկուեան, Կրէմլի մեծ պալատի Ալէքսանդրեան  
դահլիճում տեղի ունեցաւ արքայական շքեղութեամբ, փալլուն և աշխովք  
պարահանդկութեամբ: Ելեկտրական լուսաւորութեամբ փալլող շքեղ դահլիճը լի-  
էր բարձր հասարակութեամբ: Աչքի էին ընկնում լրանց հագուստներով  
կովկասեան ազնւականութիւնը, անւանի կիրզիզները, օտարազգիները,  
Բուխարայի էմիրը իր որդով և շքախմբով: Տիկինների շքեղ հագուստներն  
աւելի փակ էին տալիս պարահանդիսին: Երեկուեան 11 ժամին տեղի ու-  
նեցաւ Բարձրագուն ելք: Ընթրիքը պատրաստած էր Գէօրգեան դահլի-  
ճում, Գրանովիտեան պալատում, Ոսկէ պալատում, Բուհարսկալա հրապա-  
րակի վրայ և վրաններում: Բարձրագուն սեղանը պատրաստած էր 45  
անձի համար: Դահլիճի կենդրունում նստեցին Թագուհին, աջ կողմը—Նէս-  
պովստանեան պրինցը, ձախակողմը Դանիակի պրինցը, ասլա Կալսերա-  
կան ընտանիքի անդամները:

Երաշտական դրամատիքական եղեկոյթ զերմանական դեսպանութեան մէջ

Մալիսի 25-ին գերմանական դեսպանատան մէջ տեղի ունեցած երաժշտական դրամատիքական երեկոյթը փառաւոր աջազութիւն ունեցաւ Հրավրւածների թիւը սահմանափակւած էր 500-ով՝ բնակարանի պատճառով։ Հանդիսականների սրանում զտընում էին կախերական Զովքը, Մեծ Խշանները և Խշանուհիները, օտարազգի արքայազն իշխանները և իշխանուհիները, զիպլոմատները, մինիստրները և բարձրաստիճան անձինք։ Նոցին Մեծութիւնների գալուստը ողջունեց օրհներգով, որ կատարեց բերլինեան Փիլհարմոնեան նւագախումբը, Երաժշտական ծրագիրը, որ բազկացած իր Մոցարտի, Բէթհովենի, Վէրէրի, Վագնէրի կտորներից, կատարեւց Գերմանիակի երաժշտական ամենալաւ ուժերի ձեռքով։

Մալիսի 25-ին, Թագուհու կալսրուհու ծննդեան օրը, Կրէմլի մեծ պալատի առաջ, սպալատական նւագախումբը սէրենադ կատարեց։ Պալատական եկեղեցում կատարեւց մաղթանք, որին ներկաւ էին Նոցին Մեծութիւնները և բարձրադուն անձինք։

### Կը է մշխի սլալատի Գէօրգենեան դահլիճում ճաշ

Մալիսի 25-ին Կրէմլի սպալատի Գէօրգենեան դահլիճում ճաշ էր պատրաստած դեսպանների, արտակարգ դեսպանների և նրանց ամուսինների, պետական խորհրդի անդամների, սենատորների, սպալատի առաջին և երկրորդ կարգի աստիճանաւորների, զեներալ-աղիւտանների, ստասս-սեկրէտարների, Նորին Մեծութեան շքախմբի անդամների, պալատական սենեկապետների, տիկինների, նոյնակն և օտարազգի սպալատական տիկինների համար։ Բացւած էր կաչսերական սեղան 96 հոգու համար։ Թագաւորի հետ նստած էին Հեսսենի և Ռումինիակի արքայազնուածինները։ Կալսրուհի Ալեքսանդրա Ֆէօրորովնակի հետ Գանիմարքակի Թագաժամանգը և Նէապոլիտաննեան աշքայազնը։ ճաշողները 700 հոգի էին։ Նրգում էր Կաչսերական օպերան։ Ճաշի մեջուն պատկերացնում էր Կաչս Զովքի հանդիպաւոր մոււաքը և հեռւում Սպասի աշտարակը։

### Բարձրագոյն մանիֆէստ

«Ողորմութեամբ Աստուծոյց, Մենք Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ ամենայն ռուսաց և այլն, և այլն, յայտնում ենք բոլոր Մեր հաւատարիմ հապատակներին։

«Մեր թագադրութեան հանդիսաւոր օրերում նախաթռու մայրաքաղաքի ազգաբնակութիւնը, ի մի ձուլւելով ամբողջ Ռուսաս-

տանի ներկայացուցիչների հետ, ցոյց տւեց ժողովրդի առ իր Վեհապետը ունեցած անկեղծ անձնւիրութեան և ողեղորւած սիրոյ հաւաստիքը, որ ուրախացրեց Մեր սիրուր։ Այդ ժողովրդական զգացումները, որոնք հին ժամանակներից ամրապնդում էին մեր Վեհապետ նախնիքների ոգին թէ ուրախութեան և թէ ցաւերի տարիներում, առանձին բուռն ոյժով արտայացուեցին ժողովրդական տօնախոմբութեան օրը և Մեզ հոգեկան մխիթարութիւն պատճառեցին փառաւոր օրերի մէջ պատահած Մեզ վշտացնող այն դրժբաղդութեան ժամանակ, որ հասաւ տօնախոմբութեան մասնակցողներից շատերին և ամբողջ Խուսաստանի առաջ վկացեցին թէ անքակտուլի է այն շաղկապը, որ կապում է Մեզ Մեր հաւատարիմ ժողովրդի հետ։

«Ամենաբարձրեալի այն շնորհը, որ դրոշմեց Մեր մեծ կոչումը, թող Խուսաստանի բոլոր հաւատարիմ և բարեսպաշտ որդիների աղօթքներով պարզեւէ Մեզ ոյժ և խմաստութիւն կատարել Մեր ծառացութիւնը Սիրեցեալ հայրենիքի բարիքի համար։»

«ՆԻԿՈԼԱՅ»

## ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ

(Դոկումենտներ եւ կոմինտարիաներ)

Մի գեղեցիկ օր, Մշակ'ի № 51-ում տպագրուեց հետևեալ ապշեցուցիչ գրութիւնը, որի միակ արդարացումը այդ գրութեան տակ ստորագրողի անունը կարող էր լինել: Գրութիւնը հետևեալն էր.

«Թիֆլիս, մայիսի 3-ին

«Թուլ տւէք ինձ մի փոքր շեղւել համեստութեան կանոններից և հրապարակվ չնորհակալութիւն չափուել այն բոլոր անձանց, որոնք թէ խմբովին և թէ առանձին-առանձին, հեռագրերով և նամակներով պատի արեցին ինձ չափուելով իրանց ջերմ համակրութիւնը:

«Ես մի բոպէ, մի վազրկեան անդամ չեմ կասկածում, որ շուտով արմատախիլ կը լինի հալոց մամուլը ապականող չանտաժը, մտքի և գրի վաճառքը, խօսքի և զգացմունքի ֆալսիֆիկացիան, և հէնց այդ համոզմունքն է, որը ստիպում է ինձ տանել աճապիսի բարոչական վիրաւորանք, ինչ պիսին ես զգում եմ, տեսնելով իմ անունը, թէս աննշան, դրւած իմ հակառակորդների «ճռչակւած» անունների կողքին՝ մամուլի մէջ, լրագիրների էջերում:

Հաւատարիմ մնալով իմ արժանաւոր ուսուցիչներին, որոնք կազմում են հալոց մամուլի պարծանքը, ես կը շարունակեմ առաջ գնալ նրանց զծած ուղղութեամբ, և ոչ բանտը, որով սպառնում է ինձ Սպանդար Սպանդարեան, դիմելով դատարանին, ոչ գիշերավին գողերին վայել յարծակումը որին դիմեց Սպանդարեանի արժանաւոր աշակերտ՝ Արձագանքա-ի աշխատակից Ս. Հախումեան, և ոչ էլ այն սոտիկանական սպառնալիքը որ արաւ «Տարազ»-ի խմբագիր Տիգրան Նազարեան, տպագրելով իր թերթում «զգոց կացէք» բազմախորհուրդ խօսքերը, և հազար ու մի այդպիսի դաւեր չեն կարող մաղի չափամ շեղել ինձ ճանապարհից. և ես, հետեւ մելով ամենալաւ գրողների օրինակին, միշտ և ամեն տեղ կանւանեմ գողին՝ գող, մտավաճառին՝ մտավաճառ, ափերիստին՝ ափերիստ:

Այդ գրութեան մէջ չկաէ մի հատ տող, որը զաքրեցուցիչ չլինէր։ Սկսնք վերջերքից։

Ինչու համար այդ գրութեան մէջ չիշած է Սպանդար Սպանդարնեանի անունը? Պարզ հաշով, որ Նոր-Դար'ի խմբագրի դէմ լառաջղիմական կուսակցութեան կողմից տածած հակակրութիւնները ծածկեն այն ամօթավի դիրքը, որ բռնել էր Մալումեանը մի գրական պրոցեսի մէջ՝ Թիֆլիսի նահանգական դատարանում։ Հանգամանքը այս է, որ Նոր-Դար'ի խմբագիրը Մալումեանին դատի էր ենթարկել մի լոդւածի համար (տպւած Մշակ'ում տարիներ առաջ), ուր լոդւածադիրը ակնարկներով լաւտնելով այն, ինչ մի ուրիշը մի այլ թերթում իրանից առաջ շատ աւելի պարզ էր լաւտնել Սպանդարնեանին վերազրում էր Զէլթունի համար Նոր-Դար'ի միջոցով հաւաքած փողերի վատնումը։ Նահանգական դատարանում, սական, Մալումեանի փաստաբանը, իւր կիբէնտի (Մալումեանի) ներկայութեամբ, լաւտնել էր թէ Մալումեանը այդ լոդւածում ի նկատի չէր ունեցել Սպանդարնին։ Եւ Մալումեան չերքեց այդ խօսքերը։ Դատարանը, հիմնելով այդ բանի վրա, որի հիման վրայ Մալումեան լայտնեց թէ «իրան մեղաւոր չի ճանաչում», որ նշանակում էր այդ գէպքում թէ իւր լոդւածում ակնարկը Սպանդարնեանի վրա չէր, — նահանգական դատարանը, ասում ենք, արդարացրեց Մալումեանին։ Ցգուն նահանգական դատարանի վճռից՝ Սպանդարնեանը գործը անցկացրեց դատարանական պալատը, ուր զեռ ևս հարցը չի քննեմլ.

Որ Մալումեանը, իւր թուկութեան համար, որ նա ցուց տւեց նահանգական դատարանում այդ գործի մէջ, արժանի է աւնսւազն խիստ յանդիմանութեան, — այդ պարզ է։ Բայց այսօր (և սա առաջին անգամը չէ!) երբ նոյն Մալումեան, հէնց նոյն դէպքը ակնարկնելով՝ քաջօրէն լայտնում է՝ «ևս, հետեւելով ամենալաւ գրողների օրինակին, միշտ և ամեն տեղ կ'անանելմ գողին՝ գող» — գորա համար աչքակապութեան ահագին գոզա պիտի ունենալ!

Տիգրան Նազարեան և — «ոստիկանական սպառնալիք»։ և ում դէմ։ Մալումեանի դէմ!... Մենք ճանաչում ենք Տիգրան Նազարեանին իբր մէկը, որը ե' ընդունակ է, ե' թէ չի խնակել իւր ջանքերը գործ գնելու լոգուտ հալածեաների։ բայց որ նա ընդունակ լինի ոստիկանական սպառնալիքով գործել ում դէմ և իցէ — ալպիսի խօսքեր շպրտելու համար հարկաւոր է որ մի գրող պատասխանատու չլինի իւր ուղղված առողջութեան համար։ Բայց բնորոշ է, որ ալպիսի ինսինուացիաներ արտակտուելու համար տեղ է գտնում Գրիգոր Արծրունու կտակած Մշակ'ում, այն Արծրունու, որի գլխին պատկ դնելու համար, նորա լոբելեանին, Տիգրան Նազարեանցի ձեռքերը ընտրւեցին, և որի մնանանդէս լուղարկաւորութեան դժւարութիմները հարթելու համար Տիգրան Նազարեանը հարկաւորեց...

Բայց Տարագ'ը, մահաւանդ ուշք դարձրեց Մալումեանի վերը առաջ բերած դրութեան այս տողերի վրայ, որոնցով նա չնորհակալութիւններ էր լայանում իրեն «Չերմ համակրութիւններ» լավանած անձերին։ Մուրճ'ի ընթերցողներին լավանի չէ, որ ապրիլ ամսին Արձագանք'ի աշխատակից Սիմէռն Հախումեան թատրոնի Փոքրում, ուստաց ներկաչացման անտրակտի միջոցին, բարձակումն էր գործել Մալումեանի վրայ, վրէժ լուծելու Մշակ Հ 39-ում տպւած մի ջողածի համար, ուր ի միջի ալլոց, անձնական վիրաւորանքներ կային Հախումեանի հասցէին, ալղտեղ նորա նկատմամբ գործ էին ածւած «մտաւոր պոռնիկ» և «գրչավաճառ» խօսքերը մի ջողածի առիթով, որ տանել էր Հախումեանը Արձագանքում նոյն Արձագանք'ի աշխատակից և «Ճիկին Մարգարիտ» ստորագրող կին-գրողի մահան առիթով և լատկապէս այդ կնոջ մասին։

Անուրանալի է, որ մի այդպիսի դէպքում ամտաւոր պոռնիկ» և «գրչավաճառ» խօսքերը առանձին վիրաւորական հանգամանքն էին ստեղծում, մի վիրաւորանք, որը շատ աւելի հեշտ էր վիրաւորողի համար գրչով ստեղծել, քան վիրաւորւածի համար զրչով սրբել։ Մենք պախարակում ենք հետեապէս ոչ միան անպիսի վարեենի լարձակումները, ինչպիսին իրեն թող տես Սիմէռն Հախումեան, որը հնարաւորութիւն ուներ բացատրաւթիւն պահանջնելու, այլ և անպիսի դրչի լարձակումները, որոնք դնում են հակառակորդին դրչով պաշտպանւելու անկարողութեան մէջ։ Մէկի և միւսի վարեենիութիւնները այս զէպքում առնւազն իրար հաւասար են, և մէջ տեղում իսկապէս տուժողը—ընթերցող հասարակութիւնն է։

Բայց ինչ «Ճերմ համակրութիւնների» կարող էր արժանանալ այս զէպքում մէկը, որը, եթէ թատրոնի անցքում զոհն էր, բայց և միաժամանակ վարեենիութեան դրդիչն էր լրագրի մէջ։ Բարեբախտաբար հասարակութեան համար, ակժմ արդէն պարզւած է, չորրիւ Տարագ'ի, որ ընդհանուր «Չերմ համակրութիւնների» առարկաց չի եղած Մալումեանը, լնչպէս ինքը վերնի գրութեամբ տողերի մէջ հասկացնել էր ուղում։ Նա, որը այդ զէպքում լիշելով «հայ մամուլի պարձանքը կազմող արժանաւոր ուսուցիչներին», անշուշտ մտածում էր այդ «Ճերմ համակրութիւններին» դեռ աւելի էլ ընդհանուր բնաւորութիւն տալ...

Եւ ահա Տարագը, որի հրատարակչի անունը տեսանք արդէն թէ ինչ խօսքերի հետ էր խառնւած Մալումեանի նոյն այդ գրութեան մէջ, տպաց հետեալը։

«Խաչատուր Մալումեանին։ Որ եղել են հրապարակախօսներ, որոնք «հայոց մամուլի պարձանքն են կազմում», այդ բանը մենք նոր չպիտի լսենք, բայց որ այդ արժանաւոր ուսուցիչների արժանաւոր աշակերտը լինէք դուք—ահա մի հարց, որին պատասխանելը ձեզ չի պատկանում։ Եթէ մեր վկայութիւնը կարեոր է դորա համար, մենք կ'ասենք դրականապէս

որ գուք ալդ ուսուցիչների արժանաւոր աշակերտը չէք: Խմացէք նաև, որ անհամեստութիւն չէ եթէ նոյն իսկ դաւք հրապարակաւ չնորհակալութիւններ լատնէք որևէ է բանի համար. բայց արդէն ոչ սիայն անհամեստութիւն է, այլ և զազրելի է, երբ «Մշակում» տպւած առանց կենդի երկու ջուխտ գրութիւնները ձեզ բաւական են թւացել որ հրապարակաւ գաք չնորհակալութիւն չալտնելու այն բոլոր անծանց, որոնք, ինչպէս դուք էք պնդում, «խմբովին և թէ առանձին առանձին, հեռագրներով և նաևակներով պատիւ արեցին ինձ (Մալումեանիդ) լազոնելով իրանց ջերմ համակրութիւնը»:

«Խնդրում ենք նեղութիւն կրէք մեր կամկածը ալդ մասին փարատելու, թւելով այն անձերին, որոնք մինչև ձեր գրութեան օրը (մայիսի 3) ձեզ՝ Մալումեանիդ՝ ջերմ համակրութիւն են չալտնել: Մշակում տպւած էին մի քանի գրութիւններ, որոնք խիստ դատապարտել էին բռունցքը այն էլ թատրոնի պէս հրապարակական տեղում, բայց մենք չենք կարդացել ջերմ համակրութեան մի հատ բառ. ձեր՝ Մալումեանիդ՝ մասին. Եթէ գրողի պատիւ էք ճանաչում—պատասխանեցէք, որովհետեւ մենք մեղադրում ենք ձեզ կեղծութեան մէջ:

«Փալով! Տ. Նազարեանի «զգուշ կացէք» բառերին որ նա ուզզել է ձեր խմբագրութեանը, դոքա կարող են «խորհրդաւոր» լինել, բայց մի վալրկեան անգամ չենք կարող թուլ տալ որ պ. Նազարեանը ալդ բառերով որ և է «սատիկանական» սպառնալիք արտավառութ լինի! Պա էլ ձեր խնսինուացիներից մէկն է...»

Երբ Տարազը գրում էր թէ՝ «Մշակում ապւած էին մի քանի գրութիւններ, որոնք խիստ դատապարտել էին բռունցքը», նա, Տարազը ի նկատի ուներ Մշակ'ում ապւած երկու ջուլածներ կամ նամակներ, (Մշակ № 42 և 44), մի ալդ գրութիւն երկու հոգու ստորագրութեամբ (Մշակ № 41) և մի հեռագիր մի հոգու կողմից (Մշակ № 43): Ալդ գրութիւնները տպւելուց հետո՝ Մշակը չէր չաւանել թէ ստացւած են նաև ուրիշներ, որոնք չեն տպագրելու: Դրանով հիմք էր տրւած Տարազին կարծելու, որ Մալումեանը հիմնել է միայն ալդ գրութիւնների վրայ և և Մալումեանը հրաւիրւում էր հետեւապէս ցոյց տալ այն ջերմ համակրութեան խոսքերը, որ Տարազը չէր տեսել ու կարդացել: Ալս էր Տարազի գրութեան իսկական իմաստը:

Մշակը չվստահացաւ Տարազում դրւած հարցը արտատպել և ճանրացւ լոկ այն հանգամանքի վրայ թէ բացի տպագրւածներից՝ կան նաև չտպագրւած գրութիւններ՝ բռունցքը դատապարտող: Ահա ալդ պատասխանը.

«Թիֆլիս, մայիսի 6-ին»

«Տարազ»-ի ժամանակաւոր-խմբագիր Աւետիք Արասխանեանցին

«Դուք, պարոն, ստանձնելով «Տարազ»-ի ժամանակաւոր խմբագրութիւնը, հենց առաջին համարից թով աւեցիք ձեզ մի այնպիսի քայլ անել, որ իրան երբէք չպէտք է թով տալ մի բարեխիղճ գրական գործող։ Դուք վստահանում եք պնդել որ ես որ և է համակրական նամակ և հեռագիր չեմ ստացել, բացի այն «առանց կենտի երկու ջուխտ» գրութիւնները, որոնք ապագրւած են «Մշակ»-ի մէջ։ Եւ հիմնելով այդ համարձակ եղրակացութեան վրա, ինձ մեղեղում էք կեղծութեան մ'չ»։

«Նախ՝ թէ ինչի բացի տպագրւած նամակներից չտպագրւեցին ուրիշ անձանց լոգւածները՝ այդ կարող էք տեղեկանալ ցչնողուրական կոմիտէտում։ Իսկ եթէ անձամբ ձեզ հետաքրքրական է, կարող ենք ձեզ տալ կարդալով՝ պարոններ՝ Քրիստոնիոր Միքայէլեանի նամակը, Առողջութեանի նկատողութիւնը, «Մուրճ»-ի, աշխատակից Ա. Աղելեանի նամակը, «Տարազ»-ի աշխատակից Պ. Մոմոռեանցի լոգւածը, և ուրիշ նամակներ՝ ստացւած Նոր Բայազէտից, Բոստովից, Թիմիրյան-Շուրաչյից, որպէս զի գոնէ այժմ հասկանաք, թէ ինչ կարծիք ունեն անբարուականացած դրչափանառների և նրանց վարմունքների մասին մեր ինտելիգէնցիալի ներկայացուցիչները, և նոյն իսկ «Մուրճ»-ի և «Տարազ» ի աշխատակիցները, որոնց գրածները, դուք, պարոն, կուտած էք խմբագրելու...»

«Դալով ձեր լանդուզն մեղադրամքին, որով ինձ զրպարտում էք կեղծելու մէջ, պնդելով որ ես, բացի «Մշակ»-ի մէջ տպագրւած նամակներից ուրիշ ոչինչ չեմ ստացել, ես կը դիմեմ ամենակտրական ճանապարհի։ Հրաւիրում եմ ձեզ, ապ. Արասխաննեան, ալօր, երեքարթի, ցերեկիակ ժամը 12-ին, մտնել «Մշակ»-ի խմբագրատուն, ուր ձեզ ցուց կը տրեն բալոր գոկումէնտները՝ հեռագիրները և նամակները, նոյն իսկ այն ընծան, որ մի անձանօթ պարոն պատիւ արեց ուղարկել ինձ՝ իբր նշան իր համակրութեան։ Տեսնելով այդ գոկումէնտները, դուք, ի հարկե, պարտաւորւած կը լինէք անմիջապէս հրավարակով չետ վերցնել ձեր խօսքերը և ինձանից ներողութիւն խնդրել։ Բացի զրանից, որովհետեւ դուք թով տւիք նախքան ստուգելը, մեղադրել ինձ կեղծելու մէջ, այդ պատճառով ես ինձ իրաւունք կը համարեմ, զոկումէնտները ձեզ ցուց տալուց չետոյ ձեր հասցէին արտասահել այն թէև ծանր, բաց արդարացի խօսքը<sup>1)</sup>, որին ար-

<sup>1)</sup> Այս խօսքերով Մալրւմեանը ուրիմն խոստանում էր Արասխանեանցին, Մշակի խմբագրատան մէջ, խօսքերով վիրաւորել և անձնական կախչառաջացնել։

ժանի են այն բոլոր մարդիկ, որոնք վստահանում են, առանց որ և է հիմքի և պատճառի, լոկ անձնական կրթից դրդւած, ուրիշն մեղադրել կեղծելու մէջ,

«Ուրիմն պ. Արասխանեան, ակսօր ժամը 12-ին,

«Խ. Մալուհեան»

Որպէս տեսնում է ընթերցողը, Մալումեանը թւում էր անտիա գրութիւններ, որոնք բռունցքն էին գատապարտում, և ոչ մի պարզ խօսք, թէ ունի նաև նամակներ, որոնց մէջ «Ճերմ համակրութիւններ» լաւանում լինեն իրեն՝ Մալումեանին, բացի մէկից, որը մի «ընծայ» էր աղարկել իրեն:

Հետեապէս Տարազը, թողնելով Մալումեանի «հրաւէրքի» գնահատութիւնը մի այլ անդամի, պատասխանեց՝

«Խաչառուր Մալումեանին: Ինչ էինք պահանջել ձեզնից, և ինչ պատասխան տւիք մեզ, Նախ ձեր խօսքերը, որոնցով գուք չնորհակալութիւն էլք լաւանում այն բոլոր անծանց, որոնք... հեռագրերով և նամակներով պատիւ արեցին ինձ (Մալումեանիդ) լաւանելով իրանց շերմ համակրութիւնը».

«Պարզ է որ զուք մաշխի 3-ի նամակով պնդում էիք, թէ բազմաթիւ անձինք ձեզ չերմ համակրութիւն են լաւանել: Եւ համակրութիւն խօսքը սորուագնել էլք ինքներդ:

«Այդ բանի մէջ մենք նկատեցինք ոչ թէ ներելի սնապարծութիւն, այլ ուղղակի կեղծիք, և մենք զիմնեցինք ձեզ նոյն այս էջերում ահա թէ ինչ հարցով. (արտասպում ենք բառ առ բառ):

«Խնդրում ենք նեղութիւն կրեք մեր կառկածը այդ մասին փարատելու, թւելով այն անձերին, որոնք մինչեւ ձեր գրութեան օրը (մայիսի 3) ձեզ՝ Մալումեանից՝ չերմ համակրութիւն են լաւանել: Մշակում տպւած էլու մի քանի գրութիւններ, որոնք խիստ զատապարտել էլու բռունցքը այն էլ թատրոնի ոլէս հրապարակական տեղում, բաց մենք չենք կարողել չերմ համակրութեան մի հատ բառ ձեր Մալումեանիդ մասին: Եթէ գրողի պատիւ էք ճանաչում—պատասխանեցէք, որտիետև մենք մեղադրում ենք ձեզ կեղծութեան մէջ»:

«Ճերթը, ուրիմն ձերն էր պատասխանելու. բաց ինչ պատասխանեցիք, ապացուցանելու համար այն չերմ համակրութիւնները, որ իբր թէ դուք ստացել էք, ինչպէս որ ձեր ոճից երեսում էր՝ բազմաթիւ անձերից: Փոխանակ մեզ թւելու չերմ համակրութիւն արտավագտած անձերին, դուք թւեցիք եօթը նոր գրութիւնները <sup>2)</sup>, բաց ինչի համար. նրա համար—

<sup>2)</sup> Ընթերցողներին նկատել ենք տալիս որ Տարազը իշում է առ-

«որպէս զի (ասում էք զուք մեր ժամանակաւոր խմբագրին) զո՞նէ ալֆմ հասկանաք թէ ինչ կարծիք ունին անբարուցականացած գրչավաճառների և նրանց վարմունքների մասին մեր ինտելիդէնցիալի ներկաւացուցիչները և նոյն իսկ Մուրճի և Տարազի աշխատակիցները»...

«Բայց, պարոն, մենք ձեղնից չէինք պահանջում այն, թէ «մեր ինտելինգենցիալի ներկաւացուցիչները» ինչ ևն մտածում Ս. Հայուսմանի և նրա վարմունքի մասին:

«Դուք ահսնում էք ալդպիսով, որ ոչ միայն մալիսի Յ.ին ձեր նամակումն էք կեղծիր մտրցրել, ալ կեղծիքը շարունակել էք մոցնել նաև մեր ժամանակաւոր խմբագրին ուղղած նամակում, ուր զուք, փոխանակ ձեզ ջերմ համակրութիւն արտապատողներին թւելու, անոններ էք առաջ բերում, թէ ովքեր են բառնցքը դատապարտել:

«Ակեղծիք, կեղծիք և կեղծիք, ամեն անզ կեղծիք:

«Բոռնցքը դատապարտեց և Խօսօ Օօօզքնիւն—առանք դէպի ալդ բոռնցքի զարկ (ալսինքն՝ ձեզ Մալումեանիդ) որ և է համակրանք արտապատելու. մինչեւ անգամ, ընդհակառակիր, ալզ թերթը ձեզ խրատ էլ տիեց Բոռնցքը դատապարտեց և Տիֆլասկի Լիստօք-ը—որը դրդւած չզդաց դէպի ձեզ ոչ միայն ջնոր, ալզ և պարզ համակրութիւն արտապատելու Բոռնցքը դատապարտեց և Տարազը: Բոռնցքը և Հայուսմանին դատապարտեցին նաև մի քանի անձնիք Մշակում, բողոքելով բարրարս վրէժինդրութեան ծեւերի գէմ, առանց զրդւած զգալու սակայն դէպի ձեզ՝ Մալումեանի՝ ջերմ համակրութեան խօսքեր շռավելու:

«Եւ զուք, պարոն, ալֆմ զալիս էք և հրաւիրում մեր ժամանակաւոր խմբագրին զալ ձեզ մօտ կարդալու ալս ու այն լազտնի և անդատ անձերի կարծիքները Հայուսմանի և բռունցքի մասին?

«Եւ, լսեցէք, նոյն իսկ Մշակի խմբագրութիւնը, տալելով ձեր առաջին նամակը, իր «Նամակ Խմբագրութեան», ուր զուք պատմում էիք ձեզ հետ պատահած դժբախտութիւնը, ալզ խմբագրութիւնը, ասում ենք, զլացաւ որև է նոյն իսկ պարզ ցաւակցութիւն լաւտնելու իր զվաւարու աշխատակցինն...

«Իսկ եթէ զունւել են մի-երկու անձինք, որոնք այարզ ցաւակցութիւն են լաւտնել, պատիւ ճանաչող զրողին անվաէլ է ալզ և ալզ զրութիւնների մէջ շեշտը տեղափոխելով՝ զալ ու հրապարակաւ չնորհակալութիւններ լաւտնել ջերմ համակրութիւնների համար, այն էլ ձեացնելով թէ դրանք շատ բազմաթիւ են եղած:

---

տեղ Մալումեանի պատասխանի մէջ թւած բոլոր եօթ զրութիւնները, և ալզ նոյն լիշտակութիւնը երկրորդ անգամ կրկնում է աւելի ներքե, նոյն ալզ զրութեան մէջ:

Ծանո. Լուսիսնիի

«Եւ մարմնացած կեղծիք սէտք է լինել համարձակւելու համար Տիգր, Նպարեանի կողմից «ոստիկանական սպառնալիքով» հալածւած ձեանալ:

«Այսպիսով ձեր նոր զրութիւնից չետոց ոչ միան ետ չենք կարող կանգնել մեր սասածից, աւ և զտնում ենք, որ մեզ անչափ եղած զրութիւնների բովանդակութիւնը հաղորդելով՝ աւելի ևս ուժեղացրիք մեր կարծիքը ձեր վերաբերմամբ»: (Տարազ № 18)

Մալումնանի պատասխանի անբաւարարութիւնը ակնչալսնի էր. պէտք էր նրան օդնութեան գալ եթէ ոչ իրան Մալումնանի, գեթ Մշակի համար, որի պատիւը շօշափւած էր: Կարայլ! բղաւեցին նախ տասը հոգի Բաքվից, որոնց ուղարկած հեռագիրը (Մշակի № 54) աւելի երկար էր, քան երբ և իցե ստացել էր մի հաջ լրադիր համկական խնդրի ամնանեռուն ամիսներին: Այդ հեռագիրը, վկաչելով որ «մերկայ դէպքում բոլոր օրինաւոր մարդկանց համակրութիւնը Մալումնանի կողմն է», գալիս էր միան Մալումնանին գժւարութիւնից դուրս բերելու, որը շատ քիչ «գորիսամէնտներ» էր թւել իւր պատասխանի մէջ և նոցա մէջ ոչ մէկը իրեն «Ճերմ համակրութիւն» լայտնածներից, եթէ միան սոքա կալին: Բաքվի այդ պարոնները Տարագի պէս պիտի հասկացած լինէին Մալումնանի պատասխանը: Նոքա ևս տեսան որ Մալումնանի պատասխանի մէջ բացակում է այն, ինչ սպասում էր Տարազը. ահա ինչու, Մալումնանին փրկելու լատուկ նախակով, այդ տասը հոգին լատոնում էին իրենց հեռագրում որ «եթէ շատերը չալանեցին իրենց զգացմունքները (Հախումնան-Մալումնանի գէպքի առթիւ), դրա պատճառն ան էր միան, որ նախ համարում էին այդ զգացմունքները շատ տարրական և առանց ան էլ հասկանալի և լատուկ ամբողջ ընթերցող հասարակութեանը, և երկրորդ՝ չէին կամենում երկար յամանակ զբաղեցնել մամուլի էջերը...» Այդ տասը հոգին, ուրեմն, գտնում էին լարձակման մէջ զոհ եղածին համակրութիւններ (թէ ցաւակցութիւններ) լայտնելը շատ հասկանալի» բան: Եւ ով էր վիճում այդ մասին. բայց Մալումնանը նոյն խոկ այդ «հասկանալի», այդ «տարրական» զգացմունքներից բղխած ցաւակցութեան արտապատութիւնները, (զեռ չնալած որ նոքա շատ և շատ քիչ թւով են եղած) կամեցել էր շահագործել՝ իւր անձը ինչ որ «Ճերմ համակրութիւնների» առարկաց ցոյց տալու համար, ձեացնելով, որ նա զոհ է եղած մտքի անվեհերութեան, քաջութեան, և որ այդ կոխներում իրեն սպասում է հալածողի վիճակը, որի համար և կոչումն էր անում մամուլի պարծանքը կաղմող մեծ ուսուցիչներին!...

Կարենորը նա է, որ այդ 10 անձերը, այն էլ յետին թւով համակռութիւն էին լատոնում ոչ թէ ընդհանրապէս Մալումնանին, աւ միան որ-

քանով որ նա լարձակման զոհ էր հղած. ալդ են նշանակում «ներկայ դէպքում», «տարրական զգացմունքներ», «ինքն ըստ ինքեան հասկանալի» և այլ խօսքերը: Եւ երկրորդ, ալդ հեռագրից երևում էր որ ալդ 10 պարունակը իրենց հեռագրով կամեցել էին լրացնել այն պակասը, որ նկատել էին Մալումեանի պատասխանի մէջ: Միմիան Տարազը չէր, ուրեմն, որ չէր նկատել Մալումեանի պատասխանի մէջ կատարեալ բացակալութիւն պահանջւած ապացուցների «ջերմ համակրութիւնների» նկատմամբ...

Մշակը ալդ միջոցում իւր ամբողջ կազմով արդէն կատարելապէս ընդգրկել էր Մալումեանի գատը: Դեռ ևս երբ Մալումեանը Արասխանեանցին «ուանդէ-վու» էր նշանակել Մշակի խմբագրատանը, աչսինքն իւր տանը, ոչ միան թղթեր ցուց տալու, այլ և անձնական սկանդալ սարքելու համար իւր հիւրի հետ, և Արասխանեանց բնականաբար չէր ընդունել մի անպիսի «քաղաքալարի» հրաւէրք, նորան իւր «պարտքը» փշեցնողը եղաւ ոչ թէ Մալումեան, այլ Մշակի «խմբագրութիւնը» (տես թերթի № 53) և ահա ինչ խօսքերով, որոնք երեխ նշանակւած էին սարսուռ ազգելու և Խմբագրութիւնը չպատճում է՝ Թիֆլիս, Աւետիք Արասխանեանցին: Երեկ մակիսի 7-ին, նշանակւած 12 ժամին, գուք չբարեհաճեցիք զալ Մշակի խմբագրատուն: Բացի զրանից, գուք ոչ մի տողով չբացատրեցիք ձեր չգալու պատճառը, մինչդեռ ձեզ վրա բարուական անխուսափելի պարտք կար ստուգել փաստը և զետ վերցնել ձեր խօսքը: Ազգիսով ձեր պատասխանաւութիւնը աւելի ծանր կերպարանք է ստանում:

Մալումեանից պիտի մարդիկ սովորէին թէ թղթեր տեսնելու հրաւէրքի հետ կարելի է նաև վիրաւորական խօսքեր լսելու հրաւէրք անել: և Մալումեանից չետո՞՛ Մշակի խմբագրութիւնից պիտի սովորէին թէ վակելու է լրագրով պահանջել մէկից որ սա այս ինչ տեղը գա՞՛ հրաւէրքը պարունակող լրագիրը քաղաքում քաֆանելուց մի քանի ժամ չետո՞՛ Ալդ շտապողութիւնը խօ ոստիկանական պահանջից էլ անցնում էր...

Ահա ալդ ամենից լիտոչ է, որ ասպարէդ են դալիս եօթ նոր անձնաւորութիւններ, մի քանիսը բաւականի լայտնի հասարակութեան: Աւելի ընդհանուր նկատումներով հետաքրքրական էր նոցա ասպարէզ զալը: որովհետև զա պէտք է մի աւելորդ անգամ ապացուց ծառակէր թէ որքան ապերախտ բան է վատ դատի համար փաստաբանութիւններ անելը: Եւ արդարե, դորա համար նոքա ստիպւած էին անտես առնել Մալումեանի «չնորհակալական զրութիւնը» իրը ամբողջութիւն, նորա գրւածքի տոնը: անվալել ակնարկները, դորա համար նոքա պէտք է ուրանալին նաև Տա-

բազի գրւածքը իբր ամբողջութիւն, նորա հասարակական տեսդենցիան, և նոյն իսկ այն հանգամանքը, որը նիւթական հիմք էր ծառալիք «դոկումենտների» գոլութիւնը կասկածելու. ալդ բոլորի հետ նոքա պէտք է ուրանակին Մալումեանի սպատասխանի անբաւարարութիւնը և այն, որ նա կատարեալ հնարաւորութիւն ունէր առաջին պատասխանումն իսկ ասել այն, ինչ նրանից պահանջում էր, բայց չկատարեց, որովհետեւ երեխ եղածը չը արդարացնում այն, ինչ նա, Մալումեան, շինծու կերպավ ենթադրել էր տալիս. Մի խօսքով ալդ եօթ պարոնները ստիւլած էին սեղմնել խընդիրը, զրկել նորան որ և է հասարակական նշանակութիւնից. Բայց թէ նոյն իսկ այդ ձեռվ ինչպէս նոքա վարեցին, ալդ ցուց կը տայ նոցա գրութիւնը, տպւած Մշակի № 55-ում, և դուռնով բորբոքւած նոր պոլեմիկան։ Առաջ ենք բերում ալդ եօթ անձերի գրութիւնը իւր ամբողջութեամբ, չափութ որ խօսքերի ստորագծումներից մի քանիսը մերն են։

### «Թիֆլիս, մայիսի 12 ին

«Խնդրում ենք «Մշակ»-ի մէջ տեղ տալ մեր հետեւալ բացատրութեան, «Տարագ»-ի ժամանակաւոր խմբագիր պ. Արասիաննեանցը «Տարագ» ի № 17 ում ծանր մեղադրանք բարդեց պ. Մալումեանի վրա, թէ սա, հիմնական միմիան «Մշակ»-ի մէջ տպւած առանց կենտրոն երկու ջուխտ գրութիւններին վրա՝ չնորհակալութիւն չալտնեց այն բոլոր անձանց, որոնք չերմ համակրութիւն են չալտնել իրան, և թէ պ. Մալումեանի ստուցած համակների մէջ չկայ որ և է համակրութեան արտապատութիւն զէպի նրա անձնաւորութիւնը. ուստի նա հրապարակով մեղադրեց պ. Մալումեանին կեղծութեան մէջ և նրանից պահանջնեց հերքել այս մնդագրանքը։ Պ. Մալումեան հրաւիրեց պ. Արասիաննեանցին՝ գալ անձամբ ծանօթանալ այն դոկումենտների հետ, որոնց հիման վրա ինքը հրապարակաւ չնորհակալութիւն էր չալտնել, և այնուհետև չետ վերցնել իր մեղադրանքն ու ներողութիւն խնդրել, և այս առիթով յիշեց մի քանի դոկումենտներ։ Պ. Արասիաննեանցը չկատարեց պ. Մալումեանի օրինաւոր սրանջը, չկամեցաւ ծանօթանալ փաստերին, որոնք կամ ապացուցանէին կամ հերքէին նրա մեղադրանքը։ Պր. Արասիաննեանցի այս վարմութն ինքն ըստ ինքեան խիստ պախարակելի էր, և նրա մեղադրանքը պ. Մալումեանի զէմ՝ զարձաւ զըրպատութիւն։ Բայց մենք զսպեցինք մեր զալութը պ. Արասիաննեանցի այս վարմութն զէմ, լուսալով, որ նա իր պատիւը կը վերականգնէ՝ «Տարագ»-ում հրապարակով չետ վերցնելով իր զրագարտութիւնը ու ներողութիւն խնդրելով պ. Մալումեանից։ Սակայն պ. Արասիաննեանցը ոչ միայն չղիմեց իր պատիւը վերականգնելու այս վարչին միջոցին, ալլ իր պատասխանով «Տարագ»-ի № 18-ում ցուց տեց, որ նա ընդունակ է նաև հարցը խեղաթիրելու և անվակել սովինատութեան։ Նա քաջութիւն չունեցաւ խոստովանելու, թէ պ. Մալումեանը, բացի «Մշակ»-ում տպւած գրութիւններից, սաացել

է եւ ուրիշ բաւական թւով գրութիւններ, ուրեմն և թէ սուտ էր իր մեղս. դրանքի առաջին կէտը. նա այս մասին լրելով՝ ծանրացաւ իր մեղադրանքի երկրորդ կէտի վրա, և սովորութեամբ ճիննց ապացուցանել թէ պ. Հախումեանի ստոր և վայրենի վարմունքի զէմ պ. Մալումեանին ուղղած համակները չեն պարունակում ջերմ համակրութիւն, այն ինչ ամեն մի կրթւած մարդ զիտէ, որ մի որ և է արտաքայտութիւն, որ ուղյում է ան-արդար վարմունքի զոհին և զատապարտում է նրան վիրաւորանք հաց-նող անձնաւորութիւնն ու զործը՝ ինքն ըստ ինքեան համակրութիւն է դէպի ալդ զոհը, ալլագէս նա կամ չէր գրւի, կամ չէր ուղղվի ալդ զոհին,

«Այս պատճառով, այլ ևս մի կողմ թողնելով պ. Արախսանեանցին, միմիայն հասարակութեան մէց որ և է կասկած չթողնելու համար՝ մենք պարտք համարեցինք ծանօթանալ պ. Մալումեանի ունեցած զոկումնտո-ների հետ և նրանց մասին հաշիւ տալ ալատեղ. Մենք մի առ մի ծանօթանալով այս գոկումէնաների հետ 1) դատանք հետեւալը.

(1) Բայցի «Մշակ»-ի մէջ մինչև մալյոփ 3-ը տպւած զրութիւններից՝ գոյութիւն ունեն նաև չտպւած 20 գոկումնտ, որոնցից 18-ը ստացւած են մինչեւ մայիսի 3-ը. Սրանք ստացւած են Ալմենից (Դերմանիա), Կարսից, Ղարասուբաղարից, Արդահանից, Ղուբալից, Շուլաւէրից, Մոսկովից, Եալտալից, Կուդկաշէնից, Թիֆլիսից, Թեմիր Խան-Շուրալից. Նոր. Բալազէ-տից, Բոստովից, Վերին-Ագուլիսից, Մեղրից և Ալէքսանդրոսովից.

(2) Այս 18 զոկումէնաներից 4-ը հեռագիր են, 13-ը նամակ, և 1-ը ոսկէզօծ ժետոն, վրան փորագրւած ապարիլի 9ո, և պ. Մալումեանի նիփ-րողների անունները.

(3) Հեռագիրներից մէկը կրում է 5 անձի ստորագրութիւն.

(4) Բոլոր 17 գրաւոր զոկումէնաները գրւած են ընդհանրապէս հա-մակրական զգացմունքներով և արտակալատում են խորին զգւանք դէպի պ. Հախումեանի վարմունքը:

(5) Այս 17 զոկումէնտից 10-ը պարունակում են նաև՝ յատկապէս հա-մակրական խօսքեր, ուղղւած պ. Մալումեանի անձին և գործունէութեան.

«Սրանից երեսմէ, որ կատարելապէս ճիշտ և հիմնաւոր էին պ. Մա-լումեանի նամակի այն խօսքերը, որոնցով նա չորհակալութիւն էր լայտ-նում առն բոլոր անձանց, որոնք թէ խմբովին և թէ առանձին-առանձին հեռագրերով և նամակներով լավանել են նրան իրանց ջերմ համակրութիւնը.

«Ար. Մալումեանց, Յակոբ Քոչարեանց, Վահագեան Լուսնէէ, Քըսուստէու Միայնէլէանց, Կրոս. Գիւշնազորեանց, Սամաւել Բալանցան, Գր. Յովհանջոնէանց»:

1) Ընթէրցողներին դիտել ենք տալիս որ այդ խօսքերսվ ստորա-գրողները չախտում էին թէ իրենք՝ բոլոր եօթ ստորագրողները՝ անձամբ տեսնել և ծանօթացել են «զոկումէնաների» հետ.

Ծան. Լուսինիիւ

Վերջապէս, ուրեմն, խնդիրը հրապարակ դրւելուց երկու շաբաթ չետոք՝ լաջողեց իմանալ գէթ մի որ եւ է պատասխան, այն էլ ոչ թէ ումնից պատասխան էին ուզում, ալ ուրիշներից։ Պատասխանը ուրեմն սա էր որ Մալումեանին լատկապէս համակրութիւն արտադարսող գրութիւններ եղել են թւով 10 հատ, ինչ ևն հաշանակում 10 հոգու ցաւակցական և համակրութեան համակներ մի ալսպիսի խնդրում, ի դիմաց այն աշնորհակալական համակի» որ տպւեց Մշակում? Եւ դեռ նոքա զգուշոցել էին անուններ աալ, մինչդեռ Տարազը անուններ էր պահոնջել, Եւ հասարակութեանն էլ հետաքրքրողը հէնց այն էր թէ ինչ կարգի անհատներից կարող էին ջերմ համակրութիւններ ցուց տրեւի Մալումեանի գործունէութեան։ Բայց գո՞նի՞ այդ հօթ անձերը, համակների թիւը լայտնելով՝ աշխատել էին մերձենալ խնդրին, նոցա միակ ծառակութիւնը ներկայ խնդրում ակտ էր։ Ազդ ծառագրութիւնը աւելի մեծ էր այն մտքով, որ գոնէ հասարակութիւնը իմացաւ թէ ինչ է նշանակում երբ Մշակի ներկայ խմբագրութեան ամենապիսաւոր ներկայացուցիչը չնորհակալութիւններ է լայտնում իրեն ցուց տած «ջերմ համակրութիւնների» համար Արդարե անգնահատելի է այդ ծառագրութիւնը! Ինքը Մալումեան հրաժարում էր ոչ միայն անուններ, ալ և թիւը լայտնել։ Եւ նա զիտէր թէ ինչու չէր լայտնում ակտ, Եւ լանկարծ այդ լայտնում է այն հօթ անձերի ձեռքով; որոնք չէին էլ կասկածում թէ դորանով ինչ ծառակութիւն են անում Մալումեանին, որի կամաւոր փաստաբաններն էին հանդիսանում։

Դէ այժմ տեսնենք թէ ինչ գնով ակտ հօթ անձերը դնեցին խնդրին մերձենալու ակտ առաջին և, որպէս երեաց, նաև վերջին փորձը։ Եւ հօթ անձեր ասելով՝ պէտք է միաժամանակ հասկանալ Մշակի ամբողջ խմբագրութիւնը, և հա ալդանիդ պիտի պարզէր ակտ ամբողջ միջամտութեան ներքին իմաստը, նորա բնաւորութիւնը, դիտաւորութիւնը, մի-մի խնդիրներ, որոնք մերկացման կարօտ էին։

Տարազ № 19-ում տպւեց հետևեալը հօթ անձերի այն գրութեան առիթով, որ առաջ բերինք վերը.

«Թիֆլիս, Ստ. Մալիսասեան, Վալերիան Լամեկեիչ, Յակոբ Քոչարեան։ Դուք ասպարէզ եկաք վկալութիւն տալու և դատելու։ բայց իսկուն կը տեսնէք, որ դուք միայն դատաւելու և դատավարտւելու համար ձայն բարձրաց-րիք։ Մշակի № 55-ում զետեղւած գրութիւնը ստորագրել էիք դուք և չորս ուրիշներ։ Եւ դուք կարծում էիք, թէ կարող էք աչքակապուկ խաղալ մեզ և հասարակութեան հետ։ Զարաշար կը տուժէք։ Խող ուրեմն լայտնի լինի ամենքին, որ ձեր տպած գրութիւնը իր մէջ կեղծիք է պարունակում։ Դուք թալսանձել եք մի քանի հոգու ստորագրել թուղթը և նրանք

ստորադրել են առանց տեսած լինելու ձեր թւած դոկումենտները։ Այլ խօսքերով դուք առաջարկել էք մի քանիսին ստորագրութեամբ հաստատել թէ տեսած են այն, ինչ որ չեն տեսած։ Ձեզ հետ թուղթը ստորագրադներից մեզ արդէն լաւանի են երկուսը, (գուցէ կազ և երրորդը), որոնք ստորագրել են թուղթը, բայց դոկումենտները չեն տեսած, չնաևած որ ստորագրած թղթի մէջ ասւած է թէ «մենք պարտք համարեցինք ժանօթանալ պ. Մարտահանի ունեցած դոկումենտների հետ»<sup>1)</sup>։ Ահա մի սկանդալ, որ այսուհետեւ կապւած կը լինի ձեր անունների հետ։

«Տեսնում էք, ուրեմն, թէ ինչպէս հեշտութեամբ դուք ձեր առաջին քայլով իսկ մատնեցիք թէ ինչ պատուիներ էք դուք, այն դուք, որ մեզ դէմ էք դուքս և կել ոչ միայն իր վկաներ, այլ և իր դատաւորներ։ Միթէ մաքուր մարդը բնգունակ կարող է լինել ուրիշն առաջարկել որ սա ստորագրի թէ տեսած է այն, ինչ որ իրօք նա ցի տեսած?»

«Ուրեմն՝ դուք հէնց գրանով մատնեցիք թէ ինչ դիտաւորութեամբ վէճի մէջն էք խառնելի։ Այդ վարմունքը անսագնիւ վարմունք է։ Ձեզ հարկաւոր էր ստորագրութիւնների շատութիւն, և զրա համար դիմել էք պահուածելի միջոցի։

«Ազդմնակի անձերի անաշառութեան կեղծ դիմակով դուք պնդում էք, թէ Արասիսաննանցը «զկատարեց պ. Մալումեանի օրինաւոր պահնաջը, չըկամեցաւ ծանօթանալ վաստերին»։ Բայց դուք կոյր էք ծեւանում, չվիշելով որ Մալումեանը ինքը առաջուց լաւանում էր իր փշած դոկումենտների բավանդակութիւնը, ասինքն թէ իր փշած թղթերը խօսւմ են միայն Հախումեանի մասին, բայց ոչ Մալումեանի մասին։ Իսկ մեզ հարկաւորը չ'որ միայն սա էր։ Շարունակեցէք լսել։ Դուք ֆոկումենտի արժանաւոր ընկեր էք հոչակում ձեզ, օրինաւոր պահնաջ հոչակելով Մալումեանի այն հրաւէրը որով նա կանչում էր մեզ զալ Մշակի խմբագրատուն թղթեր տեսնելու բայց դուք, իր ֆոկումենտի ընկերներ, ծածկում էք այն հանգամանքը, որ Մալումեանը, հրաւէրելով մեզ իր մօտ, միենողն ժամանակ խոստացել էր մեր ներկաւելինից օգուտ քաղել՝ իր խելքի կարածը մեր ներկաւութեամբ արտասանելու, ուրիշն կոյի սարքելու իր հիւրի հետ։

«Եւ դուք համարում էք ազդ օրինաւոր հրաւէրք, հրաւէրք դոկումենտների հետ ծանօթանալու... Դուք, այն, ապացուցներ էք տալիս որ արժանի էք Մալումեան։

«Օրինաւոր համարելով Մալումեանի կողմից տմարդի ձեռվ արւած պահանջը, դուք, պարուներ Ստ. Մալիսասեան, Լունկեւիչ և ընկերներ, լուսութեան էք տւել մեր սկզբնական ամենաօրինաւոր պահնաջը, որ Մալումեանը

<sup>1)</sup> Այդ իրողութիւնը լաւանի էր եղել իրհնց ստորագրուդների խոստովանութեամբ որ և կատարելապէս ճշդւեց ու չհելքւեց, Ծան։ Լուսինիին

տալ իրան «ջերմ համակրութիւն վալոնած անձերի անունները», մի պահանջ։ որին մինչ օրս էլ բաւարարութիւն չորւեց։

«Հիմա թող իմանաչ հասարակութիւնը, թէ ովքեր էք դուք և ինչ նպատակով էք ասպարէզ եկել Մշակի էջերում։

«Դուք ասպարէզ էք եկել ոչ թէ իմոդիր պարզելու, այլ խճընելու, և դրա համար դուք չէք քաշել նոյն խակ բացարձակ սուտից։ Եւ այդ բացարձակ սուտն էլ ահա Ձեր ասելով պ. Արասխանեանց «քաջութիւնը չունեցաւ խոստովանելու, թէ պ. Մալումեանը, բայց Մշակում տպւած գրութիւններից, առացել է և ուրիշ բաւական թուվ գրութիւններ, ուրեմն և խօսելով ձեր լեզով) սուտ էր իր մեղադրանքի առաջն կէտը»։

«Ուրեմն տեսէք որ բան ենք թագցրած եղել!»

«Բացարձակ սուտն Տարազի № 18-ում մեր պատասխանի մէջ լիշւած է Մալումեանի ակնարկած գրութիւնների մասին, և լիշւած է ոչ միան մի անդամ, այլ երկու անդամ, և ոչ միան լիշւած է երկու անդամ, այլ գեռասւած է թէ նրա լիշւած գրութիւնները թւով եօթն են։

«Եւ դուք, ինքնակոչ դատաւորներ, ուրանալով մեր ասածը, ջանացել էք թագցնել ընթերցողներից ան, որ Մալումեանը նոյն խակ քաջութիւնը չունեցաւ Տարազում մեր դրած հարցը Մշակում առաջ բերել ան հարցը, որին հրաւիրել էինք նրան պատասխանելու, բայց որի բաւարարութեանը ահա երկու շաբաթ է գուր սպասել ենք։ Մալումեանը ծածկով բուն ինդիցը, խակ դուք եկաք ծածկելու Մալումեանին։ Եւ այժմ լաւ հասկանալի է ձեր միտքը, երբ դուք գեռ ման էք ածել ձեր խմբագրած թուղթը, որպէս զի ուրիշներն էլ ստորագրելով՝ սուտ կերպով խոստովանեն, թէ նրանք քննել են մեր հարց ու պատասխանները և թէ իբր տեսած են այն թղթերը, ինչ որ իրօք չեն տեսած։

«Եւ ձեր այս ամեն քօղարկուած և աշկարա կեղծութիւններից լիսո՞յ դուք պահանջում էք որ հաւատանք ձեր վկացութեանը թէ 10 նամակ էք գտել ուր Մալումեանի հասցէին, ձեր ասելով, «պատահում են նաև լատկապէս համակրական խօսքեր»։ Այդ վկացութիւնը, իբր ոչ-արժանանաւատ ոնծերի վկացութիւն՝ մենք ուղղակի կրակն ենք գցում Քայց արտանց կը ցանկավի՞նք, որ այդ նոյնը վկաչած լինէին աւելի արժանահաւատ մարդիկի <sup>1)</sup>, քանի որ պատահում են նաև համակրական խօսքեր, մի ոճ է, որը խակի չի սազում արդարացնելու համար նրան, որը լրագրով ասպարէզ էր եկել չնորհակալութիւններ լավանելու իբր թէ բազմաթիւ անձերից լաւոնած «ջերմ համակրութիւնների» համար։

«Վերջ, մենք ապացուցեցինք որ դուք արժանի էք մէկը միախնու (Տարազ № 19)։

<sup>1)</sup> Այս խօսքերով Տարազը լաւոնում էր որ նա չի հերքում 10 նամակի գույութիւնը, բայց կը ցանկար որ այդ վկաէին աւելի արժանահաւատատ անձեր։

Սուրբ'ի ընթերցողները աւելի ևս լաւ չարմարութիւն ունին վերելի գրութեան ճշդութիւնը սասուղելու, քանի որ բոլոր հարց ու պատասխանները նոցա առաջն է: Վերմի գրութեան մէջ եթէ կայ մի կէտ, որ բացառութեան կարօտ էր, ալդ եօթ անձերի ստորագրութիւնների խնդիրն է: Անուններ չեն տրւած, բաց դա կատարելապէս հաստատ էր և Արասխանեանցի դէմ զուրս եկածները, դոցա հետ նաև Մշակի խմբագրութիւնը, երբէք չերքեցին իրողութիւնը: Տութ միաց միան սա, թէ արդեօք եօթ անձերից միան երկուսն էին թղթեր չտեսած ու ստորագրած, թէ կատին նաև ուրիշներ: Բաց ալդ կարեոր չէր. կարեորը ան էր, որ գրութիւնը կազմողը կամ կազմողները ջանք էին զործ զրել կարելիին չափ շատ մարդ դուրս բերել Արասխանեանցի դէմ՝ թւի շատութեամբ ազգելու համար հասարակական կարծիքի վրաւ չնալած որ ալդամդ անմնական վկայութեան խնդիր կար, հետեապէս ոչ մի կերպ չէր կարելի ալդիմի մի գրութիւն ուրիշներին առաջարկել ստորագրելու, առանց որ սոքա իրենք տեսած և քննած լինէին վկայաթղթերը:

Եւ առհասարակ Տարազի քննադատութիւնը, բոլոր կէտում անպայման ճիշդ լինելով, եկաւ ալդ եօթ անձերի երեսից անաշառ վկաների և անաշառ զատողների կեղծ դիմակը վերցնելու ևւ նոյն խալ ադոկումէններին մասին վկայութիւնը կարող էր կասկածի առարկայ լինել քանի որ, արդէն երկուսի վկայութեան կեղծութիւնը մերկացրած լինելով բնականապէս հիմք էր տրւած կասկածելու միւս հինդ հոգու մասին: Բաց Արասխանեանց ալդքան հեռու չգնաց. նա թողլ տեսց որ 10 նամակների մասին վկայութիւնը կարող է և ճիշդ լինել, բաց միան նա, աչքի սուած ունինալով եօթ անձերի մի շարք անիրաւութիւնները, չողեց ալդ վկայութիւնը ալդ եօթ անձերից ընդունել: Վկայութիւններ ընդունելը ոչ ոքին հարկադրել չի կարելի. իսկ Արասխանեանցի կողմից ալդ մերժումը կրկնակի արդարացի էր, քանի որ եօթ անձերը արդէն մերկացրած էին մի շարք անիրաւութիւնների համար, մանաւանդ որ չալտնի էլ չէր թէ բացի երկուսից՝ միւս ստորագրողները ինչպէս էին վարւել!

---

Եօթ անձերի գրութիւնից ինտոք Մալումեանի աղոկումէններին խընդիրը վերջացած պէտք էր համարել. արդէն պարզ էր, որ զուր էր աւելի խոսառանութիւններ սպասել Մալումեանից կամ Մշակի խմբագրութիւնից: Պահանջւած անունները նոքա չէին տալիս և, ինչպէս երեսում էր, մինչ վերջը պիտի խոլս տալին ալդ հարցից: Հետեապէս պոլեմիկան գոնէ Մալումեանի հետ պէտք էր փակել. և ազգպէս էլ արաւ Տարազը հետեալ խօսքերով, տպւած Տարազի նոյն № 19 ում:

«Խ. Մալումեանին: Երկու շաբաթը լրացաւ ան օրից, որ մենք, մե-

դպրելով ձեզ կեղծութեան մէջ, հրաւիրում էինք ձեղ տալ աւճ անձերի անունները, որոնք ձեղ չերմ համակրութիւններ են յայտնելու:

«Այդ պարզ ու որոշ դրած հարցին պատասխանելը մի ամենազիւրին բան էր, եթէ զուք ձեր ձեռքում ունեցած լինէիք ձեղ արդարացնող զոկումնաները: Դուք խոչ տιփ հարցից, զուք մինչ օրս չոպեցիք աչդ անձերի անունները, չնաևած որ տպեցիք անուններ, որոնք դատապարտել էին Հախումնանին և բոռնցքը, մի բան որ մենք ձեզնից չենք պահանջել: Շաբաթը երեք անգամ հրատարակող լրագիրը ձեր ձեռքին, զամանակումնաները ձեր ձեռքին—և չնաևած դրան՝ ձեղ ջերմ համակրութիւններ արտաչափած անձերի անունները երկու շաբաթւայ ընթացքում չվստահացաք տպել: Չվստահացան տպել այդ անունները նաև նրանք, որոնք «Մշակի» № 55-ում եկել էին ձեզ պաշտպանելու, չափաբարելով թէ նրանք իբր ալդպիսի նամակներ տեսել են: Այդ պալունների (Յտ. Մալիսասեան, Վալ. Լուսնիելիք և Օ<sup>թ</sup>) արժանահաւատառութեան գնահատութիւնն էլ կը գտնէք վերենում: Բայց մենք գալիս ենք ալս տողերով միան հաստատելու, որ երկու շաբաթը շատ-շատ ժամանակ էր մեր դրած պարզ պահանջին բաւարարութիւն տալու համար: Զեր լինդիրը ւախտենական դարձնելու համար չէր, որ մենք մեր հարցը զրել էինք: Յանում ենք ուրիշն, որ ձեր խնդիրը որքանով որ նա ձեղ և ձեր կարծեցեալ զոկումնաներին է վերաբերում—փակած ենք համարում: Ամբողջ ընթերցագ հասորակութեան դատասատանին ենք թողնում թէ ներելիք է մեզ երկու շաբաթ զոր սպասելուց յետոյ շարունակել ձեղ հետ վիճաքանել մի հարցի մասին, որին զուք կարող կը լինէիք վերջ տալ երկու շաբաթ առաջ, եթէ միան «դոկումենտները» ձեղ հնար տալին: Երկուսից մէկը, կամ այդ զոկումնաները չկան և կամ փոքրաթիւ նամակներ կան, (օրինակ հէնց 10), որոնց մէջ գործածած զովասանական խօսքերը ինքներդ և թէ ձեր պաշտպանները ամաչում էք հրապարակ զուքս բերել: Աչժմ արդէն զուք կատարելապէս աղատ էք պարծենալու թէ ան բանով, որ զուք Տ. Նաղարեանի կողմից առաջիկանական սպառնալիքներով» հալածածն էք և թէ զուք հաջոց մամուլի պարծանքը կազմող ուսուցիչների՝ արժանաւոր աշակերտն էք»:

«Զեր զատը վերջացած է» (Տարազ № 19):

---

Խոկ ինչ վերաբերում է եօթ անձերին (Մալիսասեան, Քոչարեան, Լուսնիելիք և ալլք), դրցա պրոցէսը Արաւանեանցի հետ զեռ միան: Նոր սկսում էր, չնաևած որ եօթ անձերը Տարագի № 19-ում նոցա հասցէին տպածի և ոչ մի խօսքը չներբեցին և ոչ էլ մի տող նւիրեցին: Երենց վրա եղած մեղաղրանքները սրբելու: Անկասկած, որովհետեւ Տարագի № 19-ում տպած անհերքելի էր: Բայց նոցա տեղ Մշակի խմբագրութիւնը իւր վրաց

առաւ եօթ անձերին փաստաբանելը, «Թող վաստերը խօսեն» վերնագրով մի խմբագրականով Մշակը (№ 59) սկսեց նորից վերադառնալ արդէն պարզւած խնդիրներին. չողւածի մեծ մասը ոչինչ չի պարունակում, բայց եթէ միան արդէն հերքւած պնդումներ. բայց միան լիակատարութեան համար առաջ ենք բերում նորա ամբողջ էական մասը, ալսինքն դէն գցելով միան սկզբի մի տասնեակ տողերը, որոնք առ. առաւելն կարող են ապացուց լինել Մշակի դրականական և զիտական «հմտութիւններին». Այդ չողւածը բնորոշ է, իբր նմուշ Մշակի պոլեմիկական ձերի և բարեխցութեան. Մեր դրած ծանօթութիւնները բաւական են այդ պարզելու. Բայց այդ գրութեան այն մասը, որ նաև հասարակական կարենութիւն ունի, դա այն է, որ վերաբերում է հրապարակական վկացութիւններ տալուն.

Ահա Մշակի այդ չողւածը.

«Մենք ամբողջ երեք շաբաթ սպասեցինք, և ամժմ, երբ պ. Արախիանեան լինքն իր բերանով չափարարեց, թէ՝ «Հարցը փակւած է», ցուց կը տանք, թէ այդ «հարցը փակւած է» ոլիմպիական վճիռը՝ ոչ ալ ինչ է, եթէ ոչ մի անջնջելի արատ «Մուրճի» խմբագրի համար.

«Դիմինք փաստերին.

«1) Պ. Արասիանեան «Տարաղի» № 17-ի մէջ մեղադրեց պ. Խ. Մալումեանին կեղծելու մէջ, ասելով որ բացի «Մշակի» մէջ տպագրած «առանց կենտի երկու ջուխտ գրութիւնները», նա ուրիշ ոչինչ չէ սուացել<sup>1)</sup>.

«Պ. Մալումեան առաջարկեց «Տարաղի» ժամանակաւոր խմբագրին չնորհ բերել «Մշակի» խմբագրատուն և տեսնել լինչպէս այն նամակները, որոնք զայրովթ են արտապատում չափոնի սկանդալի դէմ, բայց որոնք ցէնդուրալի կարգագրութեամբ չտպագրեցին, ալ և այն նամակները, հեռացիրները և ընծան, որով չափապէս ջերմ համակրութիւն է չափուած պ. Մալումեանին (Տես «Մշակ» № 52).<sup>2)</sup>

«Պ. Արասիանեան փախուստ տեսց և չեկաւ. Դա մէկ չանցանք,

«2) Նրկու օրից լետու «Մշակ» № 53-ի մէջ տպագրեց պ. Արաս-

<sup>1)</sup> Արասիանեանց ազդպիսի բան չէր ասել. ալ բան է որ Արասիանեանց հիմնել էր Մշակում տպւած գրութիւնների թվի վրայ և ալ բան է եթէ Մշակը կամ Մալումեան չափոնած լինէր թէ բացի տպածներից կան նաև չտպագրւածներ—և Արասիանեանց այդ բանը հերքած լինէր:

<sup>2)</sup> Նկատեցէք, որ առով չափապէս ջերմ համակրութիւն է չափուած» խօսքը քերականօրէն վերաբերում են միմիան աընծաց խօսքին և ոչ նաև «նամակները և հեռագիրները» խօսքերին. նետեապէս Արասիանեանց ամենան իրաւունք ունէր կարծելու, թէ դոքա ոչ թէ նամակներ և հեռագիրներ են, որոնցով ջերմ համակրութիւն է չափուած, ալ այն նամակներ ու հեռագիրներն են, որոնցով միան Հայումեանի վարժունքն է դատապարտուում:

Ծանօթ. Լուսինիի:

Ծանօթ. Լուսինիի:

խանեանին ուղղած հետեւալ խօսքերը. «Նրէկ, մայիսի 7-ին, նշանակած 12 ժամին, զուք չբարեհաճեցիք գալ «Մշակի» խմբագրատուն. բացի դրանից, զուք ոչ մի տողով չբացատրեցիք ձեր չգալու պատճառը, մինչդեռ ձեզ վրա բարուական անխուսափելի պարտք կար ստուգել վաստը և ինտ վերցնել ձեր խօսքը<sup>1)</sup>:»

«Պ. Արասխանեան երկրորդ անգամ վախուստ տեղ և ազդ հարցին էլ ոչինչ պատասխան չտեց: Դա երկրորդ չանցանք:

«3) «Տարագի» № 18-ի մէջ, պ. Արասխանեան, փոխանակ վետ վերցնելու իր խօսքերը, կրկնապատկեց իր մեղքը, պնդելով, որ համակրական նամակներ չեն եկել, այլ միայն մկանդալը և բուռնցքը դատապարտող նամակներ<sup>2)</sup>:» Դա էլ երրորդ չանցանք:

«4) «Մուրճի» խմբագրի վարմունքը դատապարտելու և միենոյն ժամանակ հասարակութեան հաջու տալու համար՝ եօթը միանդամայն վստահելի անձինք, պարուներ՝ Մալիխասեան, Քոչարեան, Լունկելի, Միքայէլեան, Գիւլնազարեան, Բալաղեան և Յովհաննշանեան «Մշակի» № 55-ի մէջ թւեցին այն բոլոր նամակները և հեռագիրները, թւով 20, որ ստացիլ է պ. Մալումեան, գոկումնտներով պացառցանելով, որ պ. Արասխանեանի խօսքերը՝ լոկ զրպարտութիւններ են, Խ՞նչ էր մնում պ. Արասխանեանին աներ Հրապարակով վետ վերցնել իր խօսքերը և ներողութիւն խնդրել պ. Մալումեանից: Բաց նա ոչ միայն ազդ էլ չարտ, այլ և մեղաղքեց, թէ ազդ հօթն անձանց և թէ պ. Մալումեանին կեղծելու, սուտ խօսելու մէջ, անւանելով մէկին Փոկուսնիկ և միաներին Փոկուսնիկի ընկերներ, կերծողներ և ալին և աչին: Դա էլ չորրորդ և ամենամեծ չանցանք:

«5) Աչդ էլ բաւական չէր: Իր չանցանքը ծածկելու համար պ. Արասխանեան թողլ տեղ իրան կեղծել. նա «Տարագի» մէջ ուղղակի ասում է, որ իրեն թէ «Մշակի» մէջ պ. Մալումեան ասել է, թէ ստացել է բազմեթիւ համակրական նամակներ: «Բազմաթիւ» բառը պ. Արասխանեանի հնարած, շինած բառն է: Աչդպիսի բառ պ. Մալումեանի նամակի մէջ երբէք չէ եղել<sup>3)</sup>:» Դա էլ հինգերորդ չանցանք:

1) Ակտեղ Մշակի խմբագրութիւնը դիտմամբ լուսւմ է որ Արասխանեանցին անձնական խոչնդոս էին զրել ազդ հրաւէրքն ընդունելու, բայցի այն որ աւելորդ էլ էր գնալը, քանի որ Արասխանեանց առանց թղթեր տեսնելու էլ հաւատացել էր Մալումեանին, երբ սա թւել էր եօթ գրութիւնները և նոցա հեղինակներին: Ծանօթ. Լուսինիի:

2) Արարասխանեան աչդպիսի բան չէր հերքել, քանի որ մինչև եօթ անձերի երևան զալը, «Ճերմ համակրութեան» նամակների մասին Մշակում որոշ խօսքերով չէին պնդում: Ծանօթ. Լուսինիի:

3) Բազմաթիւ բառը Տարագում չէր զրւած չակերտների մէջ: և անկասկած է որ Մալումեանի չնորհակալական նամակը ենթագրել էր տափս 10 հոգուց շատ աւելի բազմաթիւ համակրութեան նամակներ:

Ծանօթ. Լուսինիի:

«6) Ալդ կեղծիքին լաջորդեց մի ուրիշ, էլ աւելի անհերելի կեղծիքը Ցիտասներ առաջ բերելով եօթ անձանց նամակից, պ. Արասիսանեան «Մշակի» № 55-ի մէջ տպած՝ «արարունակում են նաև լատկապէս համակարական խօսքեր», խեղաթիւրել, կեղծել և չինել է արատահում են նաև լատկապէս համակարական խօսքեր» և թուլ տալով մի ազգինի կեղծիք նա լանգզնել է աւելցնել. «Դա մի ոճ է, որը իսկի չէ սալում արդարացնելու նրան, որը լրացրով ասպարէզ էր եկել չնորհակալութիւնը լաւ նելու իրը թէ բազմաթիւ անձերից սատցած չերժ համակրութիւնների համարու—Դա էլ վեցերորդ լանցանք՝<sup>1)</sup>»:

«Ալդպէս, ուրիմն պ. Արասիսանեան զործեց մեղք, և իր ալդ աննման անբարեխղճութիւնը ծածկելու համար, «Ժարազի» երեք համարներում նա աշնագիսի սովիեստութիւններ արեց, և դիմեց աշնագիսի խարդախութիւնների, որ իրանց թուլ չին տւել մեր մահուլի արատաւորւած ներկայացուցիչներն անդամ։ Ալդ սովիեստութիւններից մէկն էլ ան է, որ նա, թողնելով եօթն անձանց նամակի բովանդակութիւնը, որ տպւած է «Մշակի» № 55-ի մէջ խոլս տալով նրա մէջ պարունակած փաստիրից, պոլիցիականին լասուկ ձեռքով սկսեց զբաղւել ան հարցով, թէ ով ինչպէս է ստորագրել, թուլ տալով նրանց հասցէին ամենազդելի խօսքեր և ակնարկութիւններ, մոռանալով՝ որ երբ նամակի ստորագրողները իրանց վրա են վերցնում դրածի իւրաքանչիւր տողի պատասխանատութիւնը, ոչ ոք իրաւունք չունի մանել ընկերների փոխազարձ վստահութեան հարցի մէջ։

«Ալդպէս ուրիմն, ճշմարտութիւն պաշտպանելու դիմակի տակ, կեղծիքի դէմ կռւող պարոնը իրան թուլ տևեց մի շարք կեղծիքներ, խարդախեց տպագրած խօսքերը, վերազրեց ուրիշին անպիսի խօսք, որ նա չէ զրել, չզդաստացաւ ան եօթն հոգու նամակից անդամ, որը խօսկապէս մի վերջնական վճիռ էր, չչարգեց հասարակական կարծիքը, որի մի արտակարտութիւնն էր Բագուի հեռազիրը 10 հոգու ստորագրութեամբ, և իր նեղ վիճակից մի կերպ գուրա պրծնելու համար՝ պ. Արասիսանեան դիմեց սովիեստութեան, սովիեստութիւնից անցաւ խարդախութեան, խարդախութիւնից ամենաանբարեխիզմ ինսինուացիների...»

«Ալդպիսի վարմունք իրան թուլ չի տաչ ոչ մի ազնիւ մարդ, ոչ մի բարեխիզմ գրող, ալ միան սովիեստը, զբարարտիչը, և ինսինուատորը»...

<sup>1)</sup>) Տարազ № 20-ում ալդ պատահական և ձեական սխալին միանգամացն բաւարար բացարութիւն տրւեց, և աճնտեղ վիշեց նաև թէ այդ երկու պարբերութիւնները միենոն միավեն են լաբանում և որ հետևագիս խեղաթիւրութիւն բնաւ չկայ։

Մշակի վերև առաջ բերած գրութեան բոլոր ն կէտերը հերքւում են պարզ համեմատութեամբ Տարազի և Մշակի մէջ լուս տեսած գրութիւնների: Մի կէտ սակացն նոր էր. և այդ նորը՝ այն թէօրիան էր, որով Մշակը կամենում էր պաշտպան հանդիսանալ կեղծ վկայութիւններին:

Մշակը, ուրեմն, մի լոտէական պահանջի համար, թուլ տւեց իրեն վկայութիւններ տալու մի կեղծ ձև փաստաբանել: Մի հասարակական օրգանից դա միանգաման անսպասելի էր. և Մշակի խմբագրութիւնը դուրսով մի քաղ արաւ, որի համար մենք անկեղծ կերպով ցաւում ենք, չնայած այն ոչ-բարձր կարծիքին, որ ունինք այդ համբաւաւոր թերթի այժմեան ներկայացուցիչների մասին: Մշակի այդ քաղը ուղղակի դիպչում է թերթի անւան, դա այն քաղերիցն է, որոնք «հաշըւում են»...

Արասխանեանց չէր կարող մի այդպիսի քաղ անպատիմ թողնել. և Տարազ № 20-ում տպւեց հետևեալը.

«Մշակի խմբագրութեան: Անցեալ կիրակւաց համարում մենք, քննադատելով Մալխասեանի և վեց ընկերների հաւաքական դրութեան ամերող բովանդակութիւնը, գուրս էինք բերել այդ հօթ հոգու խմբի ճշգրիտ պատկերը. թէ ինչպէս, օրինակ, նա Խազգրել է մեր ասածները, թէ ինչպէս նա օրինաւոր պահանջ է համարել այն, ինչ օրինաւոր մարդկանց մէջ միանգամաշարակութեան պիտի մատնի. թէ ինչպէս նա, այդ խումբը, ետ չի քաշել նուն խակ ստից: Մեր խօսքերը ամենախորը տպաւորութիւն են գործել, և ինչպէս հիմք ունինք կարծելու՝ ոչ միան մեզ անձնապէս ծանօթ շրջաններում, այլ և ընթերցողների ընդհանրութեան վրայ ևթէ գուք այդ բանում դեռ. չէք համոզւած—կը համոզւեք գուցէ և շուտով, բայց վախենում ենք, որ այդ շուտը ձեզ համար արդէն շատ ուշ լինի: Եւ այդ միան ձեր մեղքը կը լինի, որովհետեւ դուք ուղղակի մամուլի լանցանքներ էք գործում, կամենալով մէկը միւսին ծածկել. Մալումեանը ուղեց Մշակում ծածկել մէր պարզ ու որոշ դրած հարցը. Մալխասեան, Լունկեիչ և ընկերներ ասպարէզ եկան Մալումեանին ծածկելու, նրան ազատելու համար, բայց հետեանքը այն եղաւ, որ նրանք իրանք խրւեցին Մալումեանի հետ միասին: Հիմք դուք էք, կիսա-վարագործի քանից դուրս գալու և առաջ եկել ծածկելու այդ հօթը հոգու խումբը: Բայց ինչով էք ազատել ուզում նրանց: Անբարույական արարքը ծածկելու համար գուք մի անբարոյական սկզբունք էք քարոզում: Անպէս չէ, մեր խօսքը շատ ծանր է. բայց թող մեր ընթերցողները իրանք մտածեն, թէ ինչ ուրիշ ամելի մեղմ անուն կարելի է տալ ձեր վարմունքին: Բայցատրենք ուրեմն:

«Մշակի № 55-ում տպւած գրութեան տակ ստորագրած էին հօթը հոգի, սկսած Ստ. Մալխասեանցով, Քոչարեանով, Լունկեիչով և վերջացած Սամուէլ Բալաղեանով ու Քր. Յոհաննանեանով: Գրութեան մէջ առած էր՝ «մենք պարագ համարեցինք ծանօթանալ պ. Մալումեանի ունեցած

գոկումնտների հետ և նրանց մասին հաշիւ տալ ալստեղոյն Ռով ալդ տողերը և ստորագրութիւնները կարդալիս՝ կը մտածէր թէ խարդախութիւն կայ զրա մէջ։ Մենք ինքներս չէինք կասկածել, թէն խոստովանում ենք, որ մեծապէս զարմացել էինք ստորագրութիւններից մի քանիսի վրաէ Բայց հէնց ալդ տողերի Մշակում հրատարակած օրը ստորագրողներից մէկը լավանել էր թէ ինքը ոչ մի դոկումէնտ ոչ տեսած էր և ոչ էլ քննած, Եւ լուրը ձշուեց։ Մի օր էատու չափանի եղաւ նոյնը երկրորդի մասին։ Այդ լուրերը լրացնում էին թութը ստորագրած անձերի խմբի պատկերը։

«Եւ մենք պահարակեցինք այն քաջագործներին, որոնք առաջարկել էին ուրիշներին ստորագրել թէ իբր տեսած են այն ինչ որ իրօք ոչ տեսած են եւ ոչ քննած։ և պահարակութիւնը տարածւում էր ի հարկէ նաև նրանց վրաէ, որոնք ալդպիսի ամօթալի առաջարկին հնթարկել էին։»

«Մեր արդար զակրովթը ամենքը հասկացան։ Բայց իրար ծածկելու միտէմը, Մշակի պ. պ. խմբագիրներ, թթացրել է ձեր մէջ ամօթի ալդ բնական զգացմունքը։ և ահա դուք, ձեր նէջնիմաւոր պատռախանի մէջ, մեր արդար զայրոյթը ծեր բարեկրի վրաէ չէք ամաչել առփաստութիւն անւանելու Առաջ բերենք ձեր գրած պարբերութիւնը, որ ըեթերցողները մի անգամ ևս յաւ հասկանան թէ ինչ մարդկանց և ինչ խմբագրութեան հետ գործ ռւնինք «Այդ սովիեստութիւններից մէկն էլ այն է, ասում էք դուք, որ նա (Արամխանեանց) ... աղլիցիականին չատուկ ձեերով, սկսեց զբաղւել այն հարցով, թէ ով ինչպէս է ստոլ ազրել... մոռանալով՝ որ երբ նամակի ստորագրողները իրանց վրաէ են վերցնում գրածի իւրաքանչիւր տողի պատասխանաւութիւնը, ոչ ոք իրաւունք չունի մտնել ընկերների փոխադարձ վստահութեան հարցի մէջո։»

«Հասկանում էք, Արամխանեանց ի միջի ալոց զբաղւել է նաև այն խնդրով «թէ ով ինչպէս է ստորագրել»... Զի թւում ընթերցողներին, թէ կարծես Արամխանեանց զբաղւել է նրանով, թէ եօթ ստորագրողներից ով կանգնած է ստորագրել և ով նստած, ով սեւ թանաքով է ստորագրել և ով կարմիր թանաքով. ով ստորագրելիս լուռ է եղել և ով հազել է...»

«Ահա թէ, մեզ դէմ կռւելիս, դուք, Մշակի խմբագիրներ, ինչպէս ստիպւած էք զուտ բարոյականութեան մի ինդիր իջեցնել ամենաստոր աստիճանի վրաէ, դրանով իսկ մատննելով ձեզ ինքներնիդ, թէ դուք ինչ բարուական զէնքեր ունիք մնզ զէմ կռւելու համար Լաւ միտներդ պահեցէք ձեր այսօրւայ սկզբունքը թէ պընկերների փոխադարձ վստահութեամբ կարելի է անպատիժ կերպով վկայութիւններ տալ (գրաւոր և թէ բերանացի) չսեսած և չսած բաների համար, և հետեապէս չտեսած բանի համար ասել՝ ատեսել եմ, չքննած բանի համար ասել՝ թննել եմ, Դրանով դուք մի սկզբունք էք քարոզում, որը խորը կերպով պիտի շօշափի նաև ձեր հրապարակամուռթեան ոգին. դուք վաղը՝ ձեզ հաւատարիմ լինելու համար՝ ստիպ-

ամ պիտի լինէք բոլոր կեղծ վկայութիւնները արդարացնել. բաւական է որ զրանց հեղինակները՝ սուս վկանութիւնը բռնւելուց ինտու՝ ասեն թէ մենք թէպէտ չենք տեսած, չենք լսած, բայց «մեր ընկերոջ հաւատացել էինք»:

«Եւ դուք հրապարակախօսներ էք! ալո, հասկանում ենք աչժմ թէ դուք ինչ կարող էք ունենալ «Մուրճի» խմբագրի դէմ! Շարունակեցէք իրար ծածկել. տեսնենք ակժմ ով է առաջ զալիս ձեղ ևս՝ Մշակի խմբագրութեանդ՝ ծածկելու...» (Տարակ № 20):

Տարագի № 19-ում տպւած լոդւածին անկարող գտնւելով որ և է հերքում տպել, եօթ անձերը (Մալխասնեան և ալլք) ստիպւած եղան խոստովանել, որ անկարող են հրապարակով պաշտպանւել, Անիրաւութիւնները Տարագում դուրս բերելը նոքա, ալդ եօթ հոգին, «վիրաւորանք» չափարարեցին. և ահա, փոխանակ գէթ մի կէտը հերքել փորձելու, նոքա գոռողաբար պահանջեցին Արասխաննեանցից իւր խօսքերը «ետ վերց նել». Եւ ալդ նոքա էին, որոնք աւելի վաղ Մշակի № 55-ում քաջաբար չանդնել էին Արասխաննեանցին «զրպարտութիւն», «սուտ» և ալլ քնքով խօսքեր չափացնել Արասխաննեանց ալդ խօսքերի համար հարկաւ շատ վիրաւուած պիտի լինէր, բայց նա միանդաման բաւական համարեց հերքել և ցոյց տալ թէ ուր է թագնւած իսկական «զրպարտութիւնը» և իսկական «սուտը», բոլորովին այնպէս, ինչպէս Մուրճում նա վարւեց Հայոց Բար. Ընկերութեան Ախալցխակի ճիւղի վարչութեան 5 թէ 6 անկամների հետ, որոնք նոյն Մշակում մի ամիս առաջ նոյնպէս «զրպարտութիւն» և «սուտ» էին հոչակել մեր քննադատութիւնը նոցա մասին. Եւ մենք իրար «միջնորդ դատարան» չկանչեցինք, Եւ ուր կ'երթար, եթէ ամեն ոք, իրան պիրաւորւածն համարելով մեր հրապարակական քննադատութիւնից, փոխանակ մեզնից ապացուցներ պահանջելու և մեր ասածները հերքել փորձելու, մեղ «միջնորդ դատարան» առաջարկէր. Հրապարակախօսները այն ժամանակ ուրիշ գործ չէին ունենալ, բայց եթէ միայն միջնորդ դատարների մօտ փաստաբանութիւններով զբազւելու...

Բայց այն եօթ անձերը իրենց համարում էին մի առանձին տեսակի պթոչումներ», ինչպէս ուները կ'ասէին. Իրենց պարտութիւնը ալլ կերպ ծածկել անհնարին համարելով, դոքա բանեցրին մի աչսպիսի լեզու Մշակի № 60-ի մէջ.

«Թիֆլիս, մալիսի 24.ին

«Տարագի № 19-ում պլ. Աւետիք Արասխաննեանցը՝ մեր նամակը, որ տպւած էր «Մշակի» № 55-ի մէջ, համարում է կեղծիք և ոչ արժանահաւատ, և մեր հասցէին ուղղում է վիրաւորական խօսքեր»

«Մենք սրանով ջալտարարում ենք, որ մենք, բոլոր 7 հոգիս, սկառախանատու ենք մեր անցեալ նամակի ամեն մի բառի համար, և հրատարակում ենք անվայելուչ պ. Արասխաննեանցի նոր վարմունքը, որով աշխատում է խուսափել հարցին ըստ էութեան պատասխանելուց:

«Ուստի դարձեալ պնդելով մեր նախորդ նամակում մեր բոլոր ասածների վրա՝ մենք պահանջում ենք պ. Արասխաննեանցից հրապարակով լուսվերցնել իր վիրատրական խօսքերը, որ թուլ էր տւել իրան ասել մեր հասցեին «Ժարագի» № 19-ում, հակառակ զեպքում մենք ստիպւած կը լինենք միջնորդ դատարանի դիմելու:

«Սա մեր վերջին խօսքն է նրան՝ մամուլի միջոցով:

«Յա. Մալխասեանց, Յակ. Քոչարեանց, Ք. Յովհաննանեանց, Ս. Բալաղեանց, Կոստ. Դիւլնազարեանց, Վ. Լունկելից, Քր. Միքայէլեանց»:

Արասխաննեանցի քննադատութեան և ոչ մի տողը չհերքելով և ոչ էլ հերքելը փորձելով՝ նրան առաջարկել որ նա իւր խօսքերը ես վերցնի, դա ի հարկէ կատարեալ լանդգնութիւն էր, և որքան լիշում ենք՝ դեռ չտեսնեած ու չլուած մամուլի տարիդրութիւնների մէջ:

Բայց կուրիոզ զորանով չէր վերջանում: Յալտնի է, որ երբ առհասարակ որ և է գատարանի դիմումն են անում, միշտ առաջուց սլարդ որոշում են այն խնդիրը, որը պէտք է քննութեան և վճռի հնթարկի: Այդ հօթ պարոնները վերենի գրութեամբ պահանջում էին Արասխաննեանցից «ես վերցրել» նորա «վիրատրական խօսքերը». հետեւապէս նորքա նաև միջնորդ դատարանին պէտք է առաջարկեին քննել Տարագ № 19-ում լուս տեսած «վիրատրական» լոդւածը և պահանջ զնէին որ Արասխանեանց ան վերցնէր» լիշեալ վիրատրական խօսքերը:

Ալսպէս էին նորքա դրել խնդիրը հրապարակով, Մշակ'ում: Բայց մինչդեռ հրապարակով այդ էին ասում, առանձին նամակով (թւագրած 31 մայիսի 1896թ.) պ. Քր. Միքայէլեան, ի դիմաց նուն այդ եօթ պարոնների, լալտնում էր Արասխաննեանցին թէ միջնորդ դատարանը պէտք է պարզի Մարտմեանի «գոկումնեների» գոյութիւնը:

Արդէն ուրիմն լեզուն փոխեցին:

Անցնում է մի՛ քանի ժամանակ. երբ Արասխաննեանց չի թուլ տւել իրեն վիմարացնել, և նամակով լալտնել է նոցա որ այդ խնդրի մասին այլ ևս ոչ մի բանակցութիւն չի ընդունում, այդ նուն պարոնները լաբոնեցին Մշակ'ում (№ 66) հետեւալը. սմբթէ միջնորդ դատարանը չպէտք է քննէր վէճը նրա բոլոր ամբողջութեամբ և կամ կարող էր անտես առնել երկու կողմից էլ որ եւ է պահանջ, զանգատ, բացատրութիւն կամ հարցու:

Ալնտեղ պահանջում էին որ Արասխանեանց ետ վերցնէր վիրաւորական խոռքերը Տարադի № 19-ից, ապա այն, թէ արդ չեն պահանջում, ազ այն թէ կայ արդիօք Մալումեանի մօտ նորա պրեշուտը 10 համակրական նամակ-ները. իսկ վերջը թէ իրենց պահանջը արդ էլ չէ, ազ խնդիրը իւր ամբողջութեամբ քննելը, ալսինքն ուրիմն թէ ինչո՞ւ զրեց Տարագում ամենքին լատոնի հարցը, ինչ հարկաւոր էր ասել թէ Մալումեան հալոց մամուլի պարծանքը կազմող ուսուցիչների արժանաւոր աշակերտը չէ. ինչո՞ւ Մալումեանը, պատասխաննելով Տարադին, վիշեց անուններ, որոնք համակրութիւն չէին լաւտոնած իրեն. թէ ինչո՞ւ Մալումեան ձեռնտու չէր համարում իրեն համակրութիւն լաւտոնած անձերի անունները տալ. թէ ինչո՞ւ եօթ անձերը պահանջ զգացին Արասխանեանցի ասածը ուրանալ և կամ Մալումեանի հրաւերը անձնական կոփու սարքելու համար օրինաւոր համարել. թէ ինչո՞ւ Մակը պահանջ զգաց մամուլի կոչման դէմ դնալ՝ կեղծ վկաչութիւնները փաստաբաննելովի, և ազն և այլն. հարիւր հարցեր, որոնց քննութիւնը երբեք միջորդ դատարանին չի լանձնում և որը երկու տարի քր բաւիլ քննել-վերջացնելու համար.

Դեռ ևս Մշակի № 60-ին Տարագը պատասխանել էր.

«Եօթն իմաստասիրաց (Ստ. Մալխասեան, Լունկեիչ և Ծ):

«Հրապարակական ճակատամարտը թողած, զուր կամննում էք փախուստ տալ մեր քննադատութիւնից և հրաւելում էք մեղմի ինչ որ ամիջնորդ դատարանու: Դուք պնդում էք թէ մենք ենք ձեզ վիրաւորել. իսկ մենք պնդում ենք որ ձեզ վիրաւորողը մենք չենք, ազ դուք ինքներդ, որ ազ. պէս չմտածած ասպարել էք դուրս եկել մեղմ դէմ, Մենք կ'աւելացնենք՝ դուք ոչ միայն վիրաւորել էք ձեզ ինքներիդ, ազ և արատաւորել:

«Մեր միջնորդ դատարանը ներկաւ դէպքում հասարակաց կարծիքն է: Ինչ վերաբերում է ձեր այն խօսքին թէ Մշակ № 55-ում տպած նամակի իւրաքանչիւր տողի պատասխանաւութիւնը դուք բոլոր եօթն էլ ձեզ վրաէ էք վերցնում, դա ոչ ազ ինչ է, եթէ ոչ մի նոր ամօթալի փոփուս ձեր կողմից, քանի որ մենք հենց սկզբից ձեր բոլոր եօթիդ պատասխանաւու ենք համարել ոչ միայն ձեր ամբողջ գրութեան համար, ազ և ան ամօթալի արարքի համար, որ դուք թուլ էք տեել ձեզ՝ չտեսած և չընած բանի համար ստորագրել և կամ սառագրել տալ թէ առեսել ենք, քննել ենք»: Ազդ իրողութիւնը դուք չէք հերքում, ազ Փրազներով ծածկել էք ուզում, իսկ Մշակի խմբագրութիւնն էլ ձեզ օգնութեան գալով՝ ամօթը ծածկելու համար չլուած թէօրիաներ հնարում:

«Պարոններ, քանի գնում՝ ալնքան աւելի մերկացնում էք ձեզ և ալնքան էլ ծիծաղելի զառնում: Կոգուք յայթ—առ պատկե պրոպատելու: (Տարադ № 20):

Եօթ պարոնները, ինչպէս տեսանք, միջնորդ դատարանի մասին

խօսելիս՝ շարունակ փոփոխում էին վէճի առարկան՝ մէկ այս ասելով, մէկ՝ այն և մէկ՝ երրորդ բան. տեսանք նաև թէ բանակցութիւններ սկսեցին Արասխանեանցի հետ. բաց թէ ինչ նոր օգուտ էին քաղել ուզում միջնորդ դատարանին խնդիրը գանձնելու մերժումից, ալդ նոքա լաւանեցին Մշակի № 66-ում. Մենք ալդ գրութիւնը իւր ամբողջութեամբ աւելորդ ենք համարում առաջ բերել, հետաքրքրականը ալդտեղ միայն այն մի քանի տողերն են, որ վերը առաջ բերինք, որպէս նաև այն, որ միջնորդ դատարանին դիմելու մերժումով Արասխանեանցի կողմից՝ նոքա միամտաբար իրենց պարուը ընթերցող հասարակութեան առաջ կատարած վերջացրած էին համարում. գոնէ աղպէս էին հասկացնում: Թէ որքան միամիտ լուսեր էին դրել ալդ սկարոնները «Արասխանեանցը մերժեց» խօսքի վրայ, ալդ երեսում էր նաև դրածքի ամբողջ տոնից, գրւածք, որ նոքա տպագրեցին «ի գիտութիւն հասարակութեան»! Դա ոչ ալ ինչ էր եթէ ոչ քօղարկումն իրենց փախուստի հասարակութեան առաջ, հրապարակով մամուլի մէջ իրենց պաշտպաննելու, որ ինարկէ արդարացի կերպով անհնարին էին համարում: Եւ ահա, երբ լուս տեսաւ Մշակումի դիմաց եօթ անձերի Քր. Միքայէլեանի և Լունկեիչի ստորագրած գրութիւնը՝ Արասխանեանցի մերժման մասին խնդիրը միջնորդ դատարանի լանձնել, Տարազը լաջորգ օրւաչ ՀՀ-ում (Տարազ № 22) տեսց իւր պատասխանը. (Նկատեցէք որ Մշակը ահազին ճարպիկութիւն բանեցնել է կարծում, երբ իւր լարձակողական գրւածքները սովորապէս շաբաթ օրերն է հրատարակում, որպէս զի հակառակորդը ժամանակ չունենալ պատասխաննելու. չէ որ շաբաթաթերթ Տարազը կերակի օրերն է յուրում, իսկ տպագրում է շաբաթ օրերը, ակտինքն հէնց այն օրը, երբ Մշակն է լուս տեսնում: Բայց ալդ տակտիկան այնուամենանիւ Մշակին օգուտ չէր տալիս, որպէս կը տեսնի ընթերցողը Տարազի տւած պատասխանից):

Ան եօթ պարոններին, որոնք իրենց վրաէ բարձած մեղադրանքների և ոչ մի տողը չէին հերքել, և հրապարակական լուսից փախչելով միջնորդ դատարանին էին կամենում լանձնել ալս բարդ խնդիրը, որի գործը չէ ալպիսի խնդիրներին լուծում տալը, Տարազը իւր № 22-ի մէջ տեսց հետեւալ պատասխանը, որի առաջ լուց ամեն ընդդիմախօսութիւն. Անա Տարազի ալդ լուածը, որ կրում էր նորա ժամանակաւոր խմբագրի ստորագրութիւնը:

«Հասարսկաց դատաստանին,

«Մշակի № 60, եօթ անձինք (Մալխասեան, Քր. Միքայէլեան, Լունկեիչ, Բալաղեան, Քր. Յովհանջանեան, և այլք) մնդ առաջարկել էին ետքերցնել այն վիրատորական խարերը, որ կավին Տարազի № 19-ում, ուր տըպ-

ասծ էր մեր պատասխանը ալդ եօթ անձերի մի ջողւածին, որ արդէն լայտ-նի է հասարակութեան։ Եթէ ետ վերցնելու չլինէինք մեր խօսքերը, ալդ պարոնները առաջարկում էին միջնորդ դատարանի դիմել լուսալով դրանով իրանց ամօթալի նամակը, տպւած Մշակ № 55, իսկ հասարակութեան ուշադրութիւնից։

«Ինչու համար էր հարկաւոր միջնորդ դատարանը, իբր թէ նրա համար որ միջնորդ դատարանի վճառվ ետ վերցնէինք մեր վիրաւորական խօսքերը։

«Բայց որոնք էին մեր վիրաւորական խօսքերը որ աշխարհքիս որ և է միջնորդ դատարան պիտի ստիպէր մեզ ետ վերցնելու. ահա զբանք։

«1. Եօթ անձերը, որոնք հաւաքական լողւած էին գրել մեզ դէմ (Մշակ № 55) և ուր կար նաև թղթեր, զոկումէնտներ տեսած եւ քննած վիճելու վկայութիւն, ալդ անձերը թող էին տեղ կեղծ վկայութիւն, ալսինքն ոմանք նրանցից առաջարկել էին ստորագրել և ոմանք էլ ստորագրել էին թէ քննած են այն, ինչ որ խակի չէին էլ տեսած։

«Եօթ պարոնները վիրաւորած էին մեր ալդ մեղադրանքից, և կամենում էին որ մենք ետ վերցնենք մեր ալդ վիրաւորական խօսքերը կեղծ վկայութեան մասին։

«Մենք ետ չվերցրինք։ Այժմ էլ ետ չենք վերցնում և ոչ էլ միջնորդ դատարարանին ևնք լանձնում ալդ խնդիրը, ալլ, եթէ անարդար են համարում մեր ալդ մեղադրանքը—թող զիմեն նահանգական դատարանին, որպէս զի մեր պատիժը, եթէ անարդար ենք, աւելի խիստ լինի։ Մենք մինչև այժմ հարկ չենք զցում անուններ տալ. բայց քանի որ անուններ չտալ անձինք «ինսինուացիայի» տեղ են հոչակում, ալսօր կանւանենք նրանց, որոնք ակնարկւած էին մեր առաջին պատասխանում։ դրանք են՝ Սամուել Բալաղեան և Քր. Յովհանջանեան. իսկ աղավիսի կեղծ վկայութիւն տալու առաջարկը ովքեր կը լինէին արած եթէ ոչ Ք. Միքայիլեան, Լունկիսի և միւսներ. ինչ գործ ունի ալսուեղ միջնորդ դատարանը, հարցնում ենք հասարակութեան։

«2. Եօթ անձերը վիրաւորած են համարում մեր ալն խօսքի համար, թէ ալդ անձերը ստել են, ուրանում էին թէ մենք քաջութիւն ունեցել ենք իշելու Մալումեանի թւած 7 գրութիւնները։ Այն, մենք ասել էինք թէ նրանք ստում են. և ապացուցեցինք. և ալսօր էլ պնդում ենք նոզնը, և ոչ մի միջնորդ դատարան չի կարող մեզ ետ վերցնել տալ այն, ինչ հիմնած է մամուլի մէջ լուս տեսած և ուրիմն հասարակութեանը ծանօթ մեր վկայութեան վրա։

«3. Ալդ եօթ անձերը վիրաւորած են ցոյց տալիս իրանց, երբ նրանց համարել էինք ֆոկուսնիկի արժանաւոր ընկերներ. Մալումեան ֆոկուս էր բանեցրել՝ որբ նա, հրաւիրելով մեզ գալ Մշակի խմբագրատուն, միւսնոցն

ժամանակ մեր գնալու դեմ անծնական խոշնդրությունը էր զրել Ազգակիսի հրաւերք անողին անւանել էինք ֆոկումնիկ, իսկ այն եօթ անձերին, որոնք ազդ ձեր հրաւերքը օրինաւոր էին հռչակել, անւանել էինք ֆոկումնիկի արժանաւոր ընկերներ: Միջնորդ դատարանը բնէ պիտի շնորի նաև ալդ խնդրում, քանի որ չի գտնւիլ ոչ մի օրինաւոր մարդ, որը համաձայն չենի մեղ հետ, թէ չի կարելի պատասխան տալ անպատճի հրաւերքին: Ազգակիսի խալտառակութիւն մատնում են հասարակութեան զղւանքին և ոչ թէ լանձնում միջնորդ դատարանին:

«Ա. Եօթ անձերը վիրաւորւած են համարում որ մենք, որ չենք հերքել 10 նամակի գովութիւնը, բաց այն բոլորի հիման վրայ, ինչ ասացինք վերև, չենք կամեցիլ ալդ վկացութիւնը ընդունել այն եօթ անձերից:

«Աշխարհիս որ անկիւնումն է լուած, որ մարդիկ, որոնց բռնում էք ստի, կեղծ վկացութեան և խօսքեր թագցնելու մէջ և ազն, հարկադրեն ձեզ, որ դուք անպալման կերպով նրանցից վկացութիւններ ընդունեք!»

«Յ. Սրանք են եղած ահա այն վիրաւորանքները, որ մենք հասցրել ենք այն եօթ պարոններին, որոնք, մեր ասածներից և ոչ մէկը հերքել և իրանց արդարացնել չկարողանալով՝ ալաօս անւանարկել են կամենում մեզ, չափարարելով Մշակում (№ 66) թէ Արասխաննեան էտ չվերցրեց իր խօսքերը և մերժեց միջնորդ դատարանին դիմելու առաջարկութիւնը:

«Այս գուք, ինսինուատորներ և անւանարկման վէշտակաւորներ, իմացէք, որ մենք ետ չենք վերցնում մեր ոչ մի մեղադրանքը, որով ձեզ խորը կերպով վիրաւորել ենք, և որ հասարակութեան առաջ պատասխանատու կը լինէք ձեր մեքենացութիւնների համար, որ լարել էք մեզ զէմ:

«Ա. ԱՐԱՍԽԱՆՆԵԱՆ (Տարազ № 22):

Մենք ջանացինք ընթերցողների առաջ դնել մի վիճաբանութեան բոլոր գոկումէնտաւին նիւթերը և զոցա վերաբերեալ բացատրութիւնները: Թէ և վիճաբանութիւնը տեղի է ունեցել Տարազի և Մշակի միջն, բաց Մշակի և նրան օգնութեան հասած երկու տասնեակ անձերի կէտ նպատակը շատերը տեսնում էին Մուրճի խմբադրին և միաժամանակ Մուրճին դիպցնելու մէջ: Վիճաբանութեան ընթացքում, ստացւեցան Մուրճի խմբագրութեան մէջ գրութիւններ, որպէս հետեւելիներն են:

Բաթումից, «Գրականական շտեսների (ραγνενις) սկսած դոնքիցոտական արշաւանքը Զեր անձի դէմ՝ քօղարկւած մի անխիղճ հալածանք է նոյն իսկ Մուրճին... Ապադան ձերն է»...

«Յ. Մշակումը»:

Բաքւից, «Յաւելով պիտի խոստովանեմ, որ դուք զո՞հ դառաք ինտրիգաների ինտրիգան հէնց այն էր, որ Զեր հակառակորդները, որոնք իրանք շատ լաւ զգում են իրանց անվանիլ ընթացքը, կարողացան օգտել այն հանգամանքից, որ Դուք «Տարազ»-ի ժամանակաւոր խմբագիրն էք, և Զեղ էլ խառնեցին իրանց հետ... Զեղ էլ զարձրին իրանց ընկեր՝ անդադար ակնարկելով «Մուրճ»-ին, որի զէմ նրանք շատ բան ունին: Խոկ «Մուրճ»-ի, զէմ նրանք դաշրացած են այն պատճառով, որ ազգ ամսագիրը ներկայումս միակ հրատարակութիւնն է Կովկասում, աչքի ընկնող իր զաղափարական անրատութեամբ և անկաշառ տինդենցիալով: Անկաշառ եմ ասում, աչքի առաջ ունենալով «Մուրճ»-ի այն շատկութիւնը, որ նա կարողացել է իր զոյութեան ընթացքում բարձր մնալ իր կոչման աստիճանին և երբէք խաղալիք չդառնալ անհատների բաղդախնդրական միտումների:

«Մուրճ»ի բարուսական ազգ առաւելութիւնը զգում են Թիֆլիզի բոլոր հրատարակութիւնները, և մասնաւորապէս «Մշակ»-ը—խեղճ Գր. Արծրունու հիմնած «Մշակը», որ այժմս բացի իր անունից և տառերի ձերից ոչինչ «մշակական» չի պարունակում իր մէջ... Այս միան իմ կարծիքը չէ: ամեն տեղ, ուր տեսնէք Գր. Արծրունու ժամանակւաչ «Մշակի» ընթերցող և համակրող, —վշտացած սրտով նոյն բանը կ'ասի ձեղ: «Մշակի» ացմենան խմբադիրը և մօտիկ աշխատակիցներից մի քանիսը իրանք էլ տինուում են թէ որպիսի թէք մակարդակի վրաէ է զրւած իրանց մի ժամանակ պաշտած և սիրած օրգանը, —տեսնուում են և չեն կարողանում կանդնեցնել անկման պրոցէսար... նրանք զիմում են այժմ ուրիշ միջոցների, նրանք ակաղակ են բարձրացնում, զոռում, զոչում են, որպէս զի ծածկեն հասարակութեան աչքերից իրանց հոգեկան սնանկութիւնը, —ահա թէ Բնէջ են նշանակում այդ բոլոր խմբական նամակները, ստորագրութիւնները, չնորհաւորական և չնորհաբաշխական «ցողցերը»: Ազդ պարտները իրանց վաղեմիջարաւը ձեղնով են լազեցնում... Բայց դուք մի վրդովէք, հասկացէք ձեր հակառակորդների հոգեկան դրութիւնը և ներքուստ մխիթարցէք, որ այս զէպքում զարձեալ արդարանում է պատմական գեղեցիկ ասացւածքը թէ «արջք օրհասականք հզօրագոյնս կուին»:

«Երանէ Պաղտբէտն»:

Խոկ ինչ վերաբերում է Արասխաննեանցի դիտաւորութեանը, որով նա Մալումեանի զրութիւնը վիճաբանութեան առարկաէ շինեց Տարագում, այդ մասին լաւագոյն գնահատութիւնը արւեց Ա. Ղ. Ա. ստորագրութեամբ Տարազի № 23-ում տպւած նոյն խոկ «Մշակ»-ի վաղուցւաէ աշխատակից պ. Աշոտ Աթանասեանի «ինչ ապացուցեց Մշակը» լոգւածով: Բայց մեր այս տեսութիւնը այնքան երկարեց, որ պիտի հրաժարենք այդ լոգւածը ալստեղ վրեաբաւաղրել:

Եւ ալսքանն էլ թող մնալու, աիշատակի համարու:

ԼՈՒՍԻՆԻ:

## ՆԱՄԱԿՆԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ

### I

Մասնիչ Սեղրաքին մահը և գոմեսէր Մարգարին վիրաւորսկլը: — Միշտ ձերբակալութիւններ: — Սահմանադրութեան տարեղարձը: — Վախ և խիստ հսկողութիւն:

Նրեք շաբաթ առաջ, Ղալաթիա, Յովհանէի մօտ, իրիկուն մը ուշ ատեն, դանակի շատ մը անխնայ հարւածներու տակ ինկած գտնւեցաւ արարկեցի Սեղրաքը, երիտասարդ լրտեսմատնիչ մը. ասիկա ցոցին ատեն հղած է լեզափոխական (?) ու եան ալ լրտես. իր հաշրենակիցներուն շատերը, Նեղը. վարժարանի մէկ քամնի աշակերտները ևս մատնած էր: Ոճրազործները — որ երկրու հոգի կը կարծւին — փախած են:

Եւ ճիշտ շաբաթ մը առաջ ալ, Գում-Գավու, Մարգար անուն գոմիսէր (ոստիկան) մը վիրաւորսեցաւ ծանրապէս: Երբ Մարգար սրճատան մը առջեն նստած է եղեր, հայ լեզափոխական մը՝ ծխավաճառէն բան մը գնել կեղծելով՝ իր բէտուէրը կը հանէ և կը պարպէ Մարգարի կուրծքին. ասիկա տեղէն ելլե, կ'ուղէ իր վեցհարւածեանովը պատասխանելու դիմացին: Սամաթիացի Սամիկ անուն ուրիշ ոչ-լեզափոխական հայ մըն ալ կուին մէջ կը մանէ բէտուէրով: Մարգար վիրաւորած կ'իջնալ: Հոն գտնող ժողովուրդը և հինգ վեց զինաւծ ոստիկանները սարսափանար կը փախչին: Մարգար միան Սամաթիացին կը ճանչնալ եղեր, և անիկա կ'ամբատանէ իրը ոճրազործ:

Ցեղափոխականը կրցած է փախչիլ և աղատիլ, իսկ Սամիկ ալ Մարեկեղեցին կ'ապաստանի: Այդ կեղեցնեցին մէկ պաշտօնեան, լուսարաը (Օննիկ) իմաց կուտապ ոստիկաններուն Սամիկին ապաստանարանը: Ոստիկանները Պատրիարքուրան կը դիմեն և կը պահանջեն ոճրազործը: Տէր Ոսկի անուն քահանաչ մը քրիստոնէաբար լորդորներ կուտապ որ Սամիկ զէնքը ձգելով դուրս ելլէ, մինչ անիկա զէնքովը դուրս ելլեւ և վրան եկողին կրակել միտքը զրած է եղեր. Սամիկ կը համոզէի և առանց զէնքի դուրս կ'ելլէ և... ծովակը կ'իջնալ: Տակալին կը շարունակի անոր հարցաքննութիւնը: Թիւրք թերթերը դրեցին թէ ոճրազործը բռնըւած է և կը դատւի:

Այս գոմիսէր Մարգարը ատորի է. նշանուոր մատնիչ մըն էր, որուն զոհերը քանի մը հազար կը հաշըււի. Ա՛ս ալ լուսահոդի Մամբրէին ճամբան բռնած էր, ավալինքն՝ շատերէն այլ և այլ սպառնալիքով դրամ կը կորդէր. իր պահանջումին մերժողական պատասխան մը բաւական էր որ Մարգար դիմացինը բանտէ բանտ քաշկուտել տար.

Զերբակալութիւն, միշտ ձերբակալութիւն, կասկածելի, անդործ գաւառացիները նախ կը բանտարկւին հոս և ետքէն իրենց հալրենիքը կը զրկին, թէ չըսեմ կ'աքսորւին. Բատիկաններն ու լրահենները իրարու պարծենալով կըսեն եղեր թէ՝ ալ Պոլիսը մաքրեցին, ոչ սրճարանները, ոչ խաները կասկածելի մարդ թողուցած են...

## 27 Սալիս.

Այսօր Սահմանադրութեան տարեղարձը ըլլալուն՝ խիստ հսկողութիւն կաէ Պոլսի բոլոր փողոցները. Թիւրքերը կը կարծեն եղեր թէ այսօր համերը նորէն ցուց մը պիտի ընեն և իրենք, ժողովուրդ և զինոր, այս անգամ պատրաստւած են բոլորովին անխնակ ջարդելու.

Անցած կիրակի արդէն եկեղեցիներու մէջ կարդացւեցաւ Ս. Պատրիարքին մէկ շրջաբերականը, որով կ'իմացնէր թէ այս տարի տեղի չափակի ունենալ Ազգ. Սահմանադրութեան տարեղարձին տօնը, և, անպատճենթեանց տեղի չաւլու համար, կը լորդորէ՞՞ որ ժողովուրդը չերթաք չխոնւի Ետի-Գուլէի Ազգ. Հիւանդանոցը:

## II

Նահպազ էֆէնդի:—Ենի խանի ոճիրը.—Սուլթանին վիշտը:—Գեղին մարդերու ձերբակալութիւն:—Չորս երիտասարդի դատն ու դատապարտութիւնը:—Ուրիշ դատապարտութիւններ:—Զերբակալութիւններ:—Պահուատներուն իրենց հալրենիք դարձը:—Թէրթիսան.

Եղիա էֆէնդի Շահպազ Խասպիւզցի հարուստ մըն է որ ազիւսի քառի մը գործարաններ ունի: Խախ՝ չնորհքով հազնւած երկու երիտասարդ կը ներկաւան իրեն նամակով մը, որուն պատասխանը կը խնդրեն: Շահպազ էֆէնդի, առանց կարդալ ուզելու նամակը, խկոյն վոնտել կ'ուզէ իր տունէն այդ երիտասարդները՝ կարգ մը հաջուկութիւններ տեղալով անսնց երեսին, ու, իր բոլոր ուժովը, օգնութիւն կը պոռակ. իր աղաղակներուն, զործարանին բեռնակիրները արտորալով կը հասնին անոնց բռնելու, բայց չեն կրնար. երիտասարդները կը լաջողին մէկ երկու բեռնակրի պղտիկ վէրքեր տալով փախչիր:

Այս գէպքին վրա բաւական մարդ ձեռբակալւեցաւ. և Շահպազ էֆէնդի ալ, Պարակէօզեան Վրիգորին պէս, ամեն զդուչութիւն ձեռք կ'առնէ. հետը ոստիկան և զախաս կը պտըտցնէ, ու ամեն օր, մին-

նուն ժամանակին դուրս չելեր, իբր պատճառ անոնց վրայ էարձակւելու կ'ըստի թէ երկուքն ալ զբանին տաճիկներուն կերցնել և հայերուն պէտք չէ տալ որոշած են եղեր:

Կ'երեալ թէ Շահալազ էֆէնդիի գիմում ընող երիտասարդները կամ անոնց ընկերները իրենց եղած նախատինքին ուզած ևն գնդակով պատասխանել. Ապրիլի 16-ին երկու երիտասարդ քանի մը անգամ Ղալաթիա, Ենի խան կ'երթան, ուր կը զտնւէր Շահպազի զրասենեակը. Մէջ մէջ անուն ոստիկան մը կը կասկածի անոնց վրայ և զանոնք ձերբակալելու նպատակով ուրիշ ոստիկան մը կանչել կուտայ. Խալիլ անուն ոստիկանը կը հասնի մօտակայ պահականոցին և մինչ Ենի խանի մէջ ձերբակալել կ'ուզեն ալզ երիտասարդները և անոնց ընկեր ուրիշ երկու երիտասարդներ ալ. անոնցմէ մէկը բէւուէրի առաջին հարւածովը գետին կը փոք Խալիլ էֆէնդին, ու կը փախչի իր մէկ ընկերոջը հետ. ոստիկանները չեն լաջողեր մինչի ետքը զանոնք ձերբակալել. միւս երկու ընկերները կը բռնւին՝ փախած ատենին դէմերին պատ մը կ'ելէ, որ կը դիւրացնէ ոստիկաններուն գործը:

Ձերբակալած երկու երիտասարդներուն վրայ երկուական բէւուէր կ'ելէ, Ոստիկանները—և ժողովուրդը նոյնիսկ—ծեծելով, քաշքուտելով ոստիկանութեան Դուռը կը տանին ալս ձերբակալածները, ուր նախական հարցաքննութիւն մը կը կատարւի. ձերբակալածներէն փախչողներուն դիմորոշ չատկութիւնները կը պահանջեն ու պաշտօնական գեկուցումներով ըստեցաւ որ անոնցմէ Սմբատ, ղեղնորակ, ծաղկաւեր, մէջտեղը թափած պէխերով, ծաւի աչքերով միջահասակ անձ մըն է. և Մարտիրոս ալ ղեղին ցից մաղերով և ծաւի աչքերով նոյնպէս, որոնք ձերբակալած Յովսէփ Շուրիշ անունով Կարապետ Թորոսեանի և Գրիգոր (ուրիշ անունով Լիոն) Յակոբեանի հետ կ'ամբաւտանւին՝ Շահպազ էֆէնդիէն դրամ ուզած ատեն Խալիլ էֆէնդին սպանած ըլլալուն, Փախչողները իրենց բացակացութեանը պիտի պատժէին և քաղաքական ամեն իրաւունքներէ և ստացւած քններէ պիտի զրկւէին. ու ալս մասին իրաւունք չափար չափին ունենակին որ և է զատքանալու.

Սուլթանը զարբացիր է Խալիլի սպանման լուրը առնելուն և հրամակած է եղեր որ իրեն մանրամասնօրէն տեղեկագրւի ոճրագործութեան պարագաները և չանցուորները խիստ կերպով պատժէին. Քննիչները Ենի սպանի մէջ Խալիլ էֆէնդիէն հոսած արիւնը չափեր չափչին են այդ տեղեկագրին համար.

Նորէն շատերը կը ձեռբակալւին, մամնաւորապէս ամեն անոնք որոնց մազերը ղեղին է, Կեղրոնական և Լուսաւորչական վարժարաններուն Փրանսացի դասատու ղեղին մազ միւսիւ Բ. Քիչեառ'ն ալ կը ձեռբակալւի. Փրանսացի ըլլալը երբ կ'իմանան, շուտ մը կը թողուն զանիկա՝ ներողութիւն

ինդրելով իրմէ, սական միւսիւ Քեչեառ թնչ հատուցում պիտի պահանջէ արդեօք ընդունած ապուակին համար:

Ապրիլ 29-ին ձերբակալւած երկու երիասարդներուն դատը կը տեսնի և միւս օրն ալ թիւրք թերթերը հրատարակեցին անոնց հարցաքննութիւնը և դատական վճիռը: Միշտ չորս մարդ կ'ամբաստանւին իրքն ոճրագործ: մինչդեռ մէկ անձ մը միայն Խալիլ էֆէնդին սպաննած է: հարցաքննութեան և դատարանի մէջ Յովսէփ որպէս թէ կը չափոնէ և կը խոստովանի, որ ինքն է բուն ոճրագործը, որ և կը վկաչին նաև ուժը տասը տաճիկներ: Խեղաթիւրւած և փոխւած էր բոլորովին հրատարակւած հարցաքննութիւնը:

Ահաւասիկ դատավճիռը.

«Զմշկածազցի Յովսէփ (ուրիշ անունով՝ Կարապետ) թորոսեան և Ռոդոսթոցի Գրիգոր (ուրիշ անունով՝ Լեռն) Յակոբեան և փախստական Մարտիրոս ու Սմբատ հաջ լեզափոխական ընկերութեան անդամ են, որոնք վաճառական Շահպազ էֆէնդիէն դաշնակցական անոն լեզափոխական ընկերութեան անունով դրամ ուղամ են: Շահպազ էֆէնդի պահանջած դրամը շտալուն և զիրենք ձերբակալն աալ ուղելուն համար, անոնք որոշած են համաձայնութեամբ Շահպազ էֆէնդին մեռցնել, և այս նպատակով ժողոված ատեննին ասոնցմէ Յովսէփ անուն անձը բէւուէրի գնտակով մը ոստիկան Խալիլ էֆէնդին սպաննած է, որ հաստատւած է վկաներուն միաձայն վկանութեամբը:»

«Որինազրքին ծառաց չողւածի դրամազրութեանը համաձայն Յովսէփ և Գրիգոր և նունակէս իրենց բացակալութեանը Մարտիրոս և Սմբատ մահւան դատապարտւած են:

—Շահպազ էֆէնդի ալ Պարիզ երթալ կ'ուզէ եզեր:

Նոյնական, ապրիլ 25-ին, Ոճրադատ ատենանը գարակէօգեան Տիգրան էֆէնտիի սպանմանը համար ամբաստանւածները դատեց: Համբարձում անուն անձը մահւան դատապարտւեցաւ. իսկ Յովին. Մինասեան, Արթին Սարգիսէ ան, Գրիգոր Յովհաննէսիսան, Սարգիս Արթինեան և Վարդան Սարգիսեան՝ իրեւ մեղակիցներ՝ տաւնական տարւան բերդարգելութեան:

Կենրոնական վարժարանի աշակերտներէն Վահրամ Արքահամեան (եւ կարգէն) և Մկրտիչ Սիմոնեան (դ. կարգէն) դրամ հաւաքած և թերթեր բերած ըլլալնուն տասնական տարւան բերդարգելութեան դատապարտւած են:

Հետզհետէ ձերբակալութիւնները կը շատնան, թերևս աջն նովակով որ հայերը իրենց տծնական և հանդիսաւոր օրերուն հաւաքումներ չընեն. ու

երբ բանդին գուտները գոցւին ալդ գաւառացիներուն վրաչ դուրսէն ոչ  
մէկը պիտի հետաքրքրով գիտնալու թէ ինչ կ'անցնի ներսը և այն մեծ  
բարիքը զոր կ'ընէ կառավարութիւնը ձերբակալւած և չանցանք մշ չու-  
նեցող գաւառացիներուն նկատմամբ, զանոնք իրենց հաւոքնիքը դրկելն է,  
տեսակ մը աքսոր որ ամէն կերպով դառն է և վտանգաւոր Բանտին մէջ  
ծեծին և չարչարանքներուն հետ գէթ կտոր մըն ալ հաց կը տրւէր. զա-  
ւառը ատ ալ չկաչ, և եթէ պղտիկ շփոթութիւն մը ծագի, անոնք են որ  
առաջին անդամ զոհ պիտի ըլլան՝ իբրև Պոլսէն վոնտւած կասկածելիներ:

Թիւրքերը Պոլսեցի բնիկ հայերէն զոհ են եղեր. միան գաւառացի-  
ները կը մեղաղրւին: Պոլիսէն կասկածելի գաւառացիներն հեռացնելու և  
ամայացած գաւառներն ալ չենցնելու կրկին նպատակներով է թերես որ  
վերջերս սկսան պատահաբար ամէն գաւառացի ձերբակալել. ատոնց  
թիւը հազարի կը համնի.

---

Խրիմ հրատարակւող Թէրճեմոնն թիւրք շաբաթաթերթին մէջ երկու  
լոդւածներ երեցան «Հայ Ազգը» վերնազրով. առաջին չոդուածով հայերուն  
հին պատմութեան և հիմակւան շառաջդիմութիւններուն վրաչ կը խօսէր.  
ընդհանուր հայերուն թիւը 2,400 000-ի կը հանէր, որոնց 800.000-ը<sup>1)</sup> կով-  
կասիս, 200.000-ը կ. Պոլիս, 200 000-ը Ռումելի, 1.100.000-ը փոքր Ասիս  
եօթը նահանգներուն մէջ կը գտնին. ուրիշ շատ տեղելի թէն հաչ կը գու-  
նին, կ'ըսէր, բայց մնած թիւ մը չեն կազմեր, երկրորդ չոդ-  
ւածովը կը քննադատէ հաչ խոռվարները և «Հայաստան»-ը կանգ-  
նելու համար եղածները բոլորովին լիմարական կը գտնէ և կը մեղ-  
քնաչ ան բոլոր հայերը որոնք պատժեցան և ջարդին զոհ գնացին. ու  
կարգ մը խրատներ կուտար: Բայց թէ որոնք էին չարդւողները, կողոպ-  
տաղները, և թէ ինչոր ջարդւեցան, զոհ գնացին, բան մը չըսէր. Գաւա-  
ռալիններուն ամենախեց վիճակը և բոնի կրօնափոխութիւնները բնաւ  
նանակութեան չունին իրեն համար. Մարդարէին խոստացած արքայու-  
թիւնը անշուշտ իրն ալ է:

---

<sup>1)</sup> 1886 թւականի վիճակագրութեամբ հայերի թիւը միմիակն Անդր-  
կովկասում (ուրեմն առանց հիւսիսակին Կովկասի և մնացեալ ոստիակի)  
էր շուրջ 960,000 հոգի. ալֆմ հաւանականաբար ալդ թիւը աճած կը լինի  
մինչ մօտ 1.200.000-ի:

## III

Լուսարարն ալ: — Ռողոսթոցին և Ռողոսթոցիները: — Տիրող «կատարեալ ապահովութիւնն» ու Նալովնաէի աւազակները:

## 29 Մաիս.

Մայր եկեղեցիի լուսարար Յննիկն ալ վիրաւորեցաւ: Նախորդ իրիկուն, ամսուս 27-ին, իրիկւան ժամը 11<sup>1</sup>/<sub>2</sub>-ին, երբ Գում-Գափուվ մէկ սրճատանը նստած է եղեր, դանակին է որ կը խրի իր կուրծքը և քանի մը անգամ աղիք-ները վեր վար կը խառնէ: Սպանիչը՝ իր չուրչը դարձած իրարանցումին և սարսափին մէջ՝ կը չաջողի բաւական տեղ փախչի՝ հետքը կորսնցնել տալով և տուն մը ապաստանել: տնեցիները վախցած՝ չեն ուղեր ապաստանարան տալ: Մինչ երիտասարդը տանիքէ տանիք՝ կը փախչի՝ ոստիկանները կը հասնին: սպանիչը փողոց իջած՝ կը սկսի փախչիլ և չորս անգամ կը կրակէ վրան և կողներուն, ետենի գնդակ մը կուգազ գետին ձգել ուղինքը, երբ արդէն ի աղին պահապանին ճոկանը ահագին հարւած մը տւած էր զլիուն: Ոստիկանները իրենց բոլոր ոխը կ'ուղեն ալդ ինկածէն առնել: դանակի, քարի, ատրճանակի շատ մը հարւածներու տակ մարդը կ'ան-չնչանաէ:

Կառավարութիւնը երբ կ'իմանակ թէ սպանիչը, Մարտիրոս Նիկողոսեան, Ռոտոսթոցի է, ոստիկաններուն հրաման կուտաց Կէտիկ-վաշակի, ինչպէս նաև խաները բնակող, ոստոսթոցիները ձերբակալել, որոնց թիւը 5—600-ի կը համնի: թերևս բոլորը մէկանց իրենց հալրենիքը աքտորեն:

Աննշան ոստիկան մըն է Նիկողոսեանը վիրաւորողը: աճօր գոմեսէր ըրած են:

Պոլսի բոլոր հակերը գիշեր ցերեկ սարսափի մէջ են: Միշտ անհամար ձերբակալութիւններ ամեն տեղ, մանաւանդ բերա, Գալաթիա, Գում-Գափու, Կէտիկ փաշա, Սամաթիա, Գատը-Գիւղ և Խւկիւտար:

---

Նորէն լրագիրները երկար ատենէ ի վեր կը գրեն որ «չնորհիւ վեհափառ սուլթանին՝ գաւառներուն մէջ կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ». և հոս, Պոլսէն երեք ժամ հոռու, Նալովնաէի ջերմուկներուն մօտ» 40 թիւքք և չերքէզ աւազակ կ'առեանգեն Գատը-Գիւղը Քաղազամեանին 20 տարեկան աղջիկը և ուրիշ Փրանսացի կին մը, որոնց համար է օրւան մէջ, իրը փրկանք, 25,000 օսմ. ոսկի կ'ուղեն եղեր: Ապահովութիւնը, իրան, կատարեալ է:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-ի ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ: Զնայած որ «Մուրճ»-ի բաժանորդացրութիւնը ներկայ 1896 թ. գերազանցում է ըոլը նախկին եօթ տարիներից, բայց մի հանգամանք ստիպում է մեղ փոխառութեան դիմել: Այդ հանդամանքը նախկին տարիների դեմքիցիաներից գոյացած պարտքերն են, որոնք ամենամեծ մասամբ արդէն ծածկւած են, բայց որոնց համեմատապէս փոքրիկ մասը, սակայն, դեռ ևս ծանրացած է խմբագրութեան վրայ: Կանոնաւորել այդ մնացած պարտքի հատուցումը—ահա այն հոգսը, որ մեզ հարկադրում է փոխառութեան դիմել: Այդ փոխառութիւնը միակ կարող է մեղ հնարաւորութիւն տալ՝ ժամանակը լրացող վճարումների համար չծանրանալ ամսագրի ներկայ տարւայ բիւշէի վրայ: Փոխառութեան գումարը խոշոր չլինելով (2500 ռուբլի) մենք յոյս ունինք որ «Մուրճ»-ին համակրող աւելի ունեար անձինք չեն զլանալ փոխառութեանը մասնակցել, առնւազն հարիւրական (100) ռուբլիով իւրաքանչիւրը՝ երկու տարով՝ 1897 թւականի կրկին յետ ստանալու պայմանով: Մասնակցել ցանկացողները թող բարեհաճեն դիմել խմբագրութեանը, որը կը տայ ամեն մի փոխառութին պարտամուրհակ կրկու տարի ժամանակամիջոցով, խմբագիր-հրատարակչի ստորագրութեամբ: (Սրտատպած «Մուրճ» № 1-ից 1896 թ.):

ՄՈՒՐՃԻ ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՐԸ բաղկացած է սովորականից աւելի թերթից (այն է 12 թերթ), որի պատճառով համարը իւր ժամանակից ուշացաւ: Յաջորդ № 6 դիրքը լուս կը տեսնի լուկիով միջերքին: ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿԸ ՄՈՒՐՃ-ում գալ համարից պիտի վերսկսի՝ աշխատակցութեամբ պ. Վրթ. Փակաղեանի:

ՄՈՒՐՃ ՆԻՒՐՈՂՆԵՐ (Հարունակութիւն), 32) Ռուսացուքի Հակ երիտասարդաց ընթերցարանի բաժանորդավճարի կէսը պ. Միք. Արամ-

եանցի գումարից. 33) Վարնալի Բարեկ. Սիսակեան ընկերութեան բաժանորդավճարի կէսը պ. Միք. Արամեանի գումարից.

Ա. Միթունի ՕԲՀՆՈՒԹԻՒՆ. Վեհափառ կաթողիկոսը որոշել է հանդիսապէս ո. Միտոնի օրհնութիւն կատարել ներկաէ տարւազ սեպտեմբերի 29-ին, Վարագաք ո. Խաչի տօնին. Ազդ մասին պաշտոնապէս լաբուրարւած է Արարատ ամսագրում:

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ. Վեհ, կաթողիկոսը Ա. Էջմիածնից գալով, յունիսի 8-ին ացելեց Երևանը, մնալով ազդ քաղաքում երկու օր և ազա յունիսի 10-ին ուղերւեց Սևանակ վանքը:

ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ. Կովկասեան երկրի կառավարչապետ Երեւանտերը երկու ամսով արձակուրդ ստացած լինելով՝ ուղեւորեց արտասահման, իւր տեղ առաջարկելով երկրի կառավարութիւնը իւր օգնական կոմս Տատիշչենին. Խակ վերջինիս բացակացութեան դէպքում՝ երկրի կառավարութիւնը և զօրքի գլխաւոր հրամանատարութիւնը պիտի շանձնէի Կովկասեան արմէակսն կորպուսի կոմանդիր կաւալերիազի գեներալ իշխան Ամիլախւարի'ին:

ԵՐԵՒԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ. Երեանի փոխանորդ Անանիա եպիսկոպոսի պեղը Վեհափառը իւր փոխանորդ նշանակել է Ներսէս եպիս. Խուզավերդեանին, որը Էջմիածնի վանական կառավարութեան նախազահն էր Թիֆլիսի ՓՈԽ-ՆԱՀԱՆԳՊԱՊԵՏ նշանակւած է Կոլէզիական խորհրդական Կոնսուտ. Կոնսուտանախովիչ Ստեֆանովիչ, որը և սկսել է կատարել իւր պաշտօնը:

ՊԱՏԳԱՄԱՒԱՐՈՒՆԵՐ ԿՈՎԿԱՍԻՅԻ Թագաղրութեան հանդէսին եղան հետեւալները:

Թիֆլիսից—Եղիս. Նիկ. Արզութեան. Երկացնաբազուկ (քաղաքագլուխ), Ալ. Մանթաշեան և Կոնսուտ. Ալիխանեան (զումարի ձանաւորներ):

Բաքւից—Ա. Իրէցկի (քաղաքագլ.), Ա. Դադաշեան և Ա. Անտոնեան:

Գանձակից—Նիկ. Մելիքեան և Ա. Խան Զիաթխանով:

Քութայիսից—Լ. Լոլուա (քաղաքագլ.), Գ. Կիզիրիա և Լ. Կողեւ:

Երեւանից—Մ. Բունիաթեան (քաղաքագլ.), Ա. Սուլեման-խան-օղլի և Հաջի-Արդուլ-Ալի օղլի:

Թեմիրխանշուրայից—Վ. Ֆրուժէ, Գ. Կաշին և Դաւիթ-բէգեան:

Դարսից—Լ. Եհրամձեան, Մ. Խարիտոնով և Արիֆ Մոլլա-Եմին. օղլի:

ի ԽԵՐԻԱ. վրաց օրաթերթը (Թիֆլիսում, խմբագիր իշխան Խլիա ձաւ-  
ճաւաձէ) դադարեցրած է ուժ ամսով՝ երկրիս կառավարչապետ Շե-  
րեմետերի կարգադրութեամբ:

**ՀԵՂԵՂՆԵՐ ԱՆԴՐԿՈՎԱԱՍՈՒՄ.** Մայիս և չունիս ամիսները անձրններ  
եկան անքան չորդ, որպէս ոչ ոք չի լիշում անցեալում: Հազիւ եր-  
թեեկութիւնները կանոնաւորւել էին, և ահա մահիսի 7-ին հեղեղը  
քանոգեց Թիֆլիս-Բաթում գծի Կրակալի կալարանի կամուրջը: Մայիսի  
8-ին Թիֆլիդ-Բաքու գծի Եւլախ-կալարանի մօտ Քուր գետը սկսել  
էր բարձրանալ և մի սաժէն էր մնում որ համուէր կամրջին: Հուրը  
ափերից դուրս գալով՝ ողողել էր խճուղին և երկաթուղու կալարանի  
շրջակարքը: Քուր և Արաքս գետերը ափերից դուրս գալով՝ ողողեցին  
Մուղանի, Շիրւանի և Ղարաբաղի (կամ ալլապէս Միլ Կոչւած)  
անապատների մեծ մասը:

Մայիսի վերջը Քուրից վարարեց Եւլախի կալարանը.  
Եւլախի և Մինգեչէուրի միջի ճանապարհը ջուրը քշնց աւարաւ, մայիսի  
30-ին Եւլախում ջուրը երկաթուղու ու կլսերից 1/2 վերշոկ աւելի բարձր  
էր: Մայիսի 31-ին Ուշարի և Գանձակի կալարանների մէջ երթե-  
եկութիւնը ընդհատեց, իսկ գետոյ աւելի բարձրացաւ՝ ջուրը ու-  
սերից 5 վերշոկ բարձր էր երկու վերտա տարածութեան վրա:

Ապրանքացն երթեեկութիւնը Բաքուց Թիֆլիս և Թիֆլիսից  
Բաթում գեռ մինչ չունիսի 15-ը վերականգնած չէր: Թիֆլիսում  
Քուր գետը վարարեց մայիսի սկզբին և մայիսի 24-ին առաւօտեան  
ժամ 4-ից: Ջուրը ամբողջովին ծածկեց Սաղի Դեսիմոնովսկի հրա-  
պարակը և նորան կից փողոցները: Սաղի ձիաքարչի երթեեկու-  
թիւնը դադարեց, տներից շատերը ջրի մէջ էին:

**ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԶԱԿԱՐԴ ԴՊԲՈՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ** բանալը անհրա-  
ժեշտ համարելով երկրագործական և պետական կալարանների  
մինիստրութեան կողմից՝ պայման է դրւած, որ այդ դպրոցին լատ-  
կացնուի այն 100.000 ռուբլին և գետին որ Թիֆլիսը լատկացրել էր  
բազմարեստեան դպրոց հաստատելու ամար:

**ԿԱՐՍՈՒՄ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾ-ԴՊԲՈՑ բանալու մտադրութիւն է չափուած  
կրթական մինիստրութեան կողմից:**

**ՀԱՄԱՌՈՒԹՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴէՍ ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴԻՄ բացւեց մա-  
լիսի 28-ին ֆինանսների մինիստրի ձեռքով:**

**ՄՈՐԵԽԻ ԴԷՄ ԿՈՒԵԼՈՒ համար Թիֆլիսի և Բաքու նահանգներում՝ լատ-  
կացնում է մինչ 16.000 ռուբլի Անդրկովկաստեան զեմստալին (գա-  
ւառական) դումարներից:**

**ԴՊԲՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ այս տարի, Թագադրութեան հանդէսի  
առիթով, սկսւեցին սովորականից վաղ, մայիսի 11-ին:**

ԹՈՒՍԻԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, որոնք են Պետերբուրգում՝ Ճաճապահների հաղորդակցութեան, Քաղաքավիճն, Լեռնական, Անտառալին, Տեխնոլոգիական և հեծքտրատնիկական ինստիտուտներ, ամեն տարի ըստումնելու համար խնդիր տւողների թիւը լինում է մոտ 3000, իսկ նորերի համար տեղ լինում է տարեկան միան մոտ 700. մինչեւ 5 միւս մասնագիտական բարձր զբարցներում՝ Մոսկավի կայսերական տեխնիկական դպրոց, Գիւղատնտեսականը, Խարկովի տեխնոլոգիական ինստիտուտն ու Նովօվկլեքսանդրեան գիւղատնտեսական ինստիտուտը մտնելու խնդիրք տևողների թիւը լինում է տարեկան ընդամենը 1000 հոգի։ Այդ տարբերակութիւնները կրթական մինիստրը գանում է մրցական քննութիւնների անկատար կազմակերպութեան մէջ։ այդ ի նկատ առնելով կազմած է մի բատուկ լանձնաժողով գործը կանոնաւորելու համար։

ՔԱՆՑԱՐԿԻԱԾՆԵՐ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Պաշտօնապէս հաղորդւեց, որ մականի 22-ին Թիֆլիսի բանտերում բանտարկեալների թիւն էր՝ կենտրոնական բանտում 257 տղամարդ (որոնցից 24-ը հիւանդ), Մետեխի բերդում 384 հոգի, որոնցից մէկը միանկ է, մէկը աստիճանաւոր, 13-ը քաղաքական զանցաւորներ, ազնւականներ 15, կանաչք 6։

ՎՐԱՅ ԱԶՆԻԱԿԱՆԱՅ ԿԱԼԻԱԾ. ԲԱՆԿԸ ներկայ մակարին ունէր իւր տարեկան ընդհանուր ժողովը, որը տեսեց մի ամսից աւելի։ Այդ ժողովները, որ միշտ աղմկալի են լինում, այս տարի ամենաաղմկալին են ամենաբիշարատները եղան։ Որպէս անցեալում, նաև այս տարի պարքարը ծաւճաւածեանների և Մաչաբելեանների մէջ էր։ կիրքերի լուզումը իւր գագաթնակէտին հասաւ։

ՀՀԱՏԱՐԱԿԱՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՌՈՍՏՈՎՈՒՄ։ Խոստովում Դոնի վրայ հիմնում է «Շատարակչական և տպագրական գործի ընկերութիւն» արդէն հաստատած կանոնադրութեամբ։ Հիմնադիրներն են պ.պ. Բալաբանեանց, Յարութիւնեան, Քուշնարեան, Շուշմանով, Խաթրանեան և Կովալենով։

ՔԱՐԵԳ. ԸՆԿ. ԱԽԱԼՑԽԱՅԻ ՃիԽՂԻ վարչութիւնը մեր տւած բացատրութիւնները գեռ փերջնական չի համարում։ Անա վարչութեան հերքումի էական մասը. («Հերքումը» տպւած էր Նոր-Դար, Մշակ և Արձագանք թերթերում) «Ապացուցանելու համար, որ իբր թէ Ախալցիխ վարչութիւնը զանցաւութիւններ է արել իր գործունէութեան մէջ, պ. Լուսինի-Արասխանեան առաջ է բերում խորհրդի արձանագրութեան մի կտոր։ Պէտք է նկատել, որ պարոնի ազգ ապացուցը շատ թուլ է։ Վարչութեանս նախկին կազմակերպութեան մի գրութիւնը ծնականութեան կողմից մասնաւոր Թիւրիմացութեան տեղի է

տւել, բայց երբ խորհուրդը ստացել է Ախալցխավի վարչութեան 1893 թւի մակիսի հ-ի № 11 գրութիւնը՝ վերջինիս տւած բացատրութիւնը միանդամայն բաւարար է գտել, և աճսպիսով խորհրդի վարչութեան մէջ ծագած տարածայնութիւնը վերացւել է, և հարցը վճռւել է յօդուտ տեղական բաժնի».

Միթէ! Ուրիշն բալոր զժգոհութիւնները եղել են միայն Ախալցխավի ճիւղի վարչութեան մի հատ գրութեան պատճառով? և այն էլ ամեն «թիւրիմացութիւն» վերացւել է և հարցը վճռւել յօդուտ Ախալցխավի տեղական բաժնի (ճիւղի?) վարչութեան՝ 1893 թ. մակիսին տւած մի հատ բացատրութիւնով?!!

Որ ասում էինք թէ անուղղելի էք! Ազդ ինչպէս է Խորհուրդը ամիանդամայն բաւարար գտելք ձեր բացատրութիւնը և ազդ ինչպէս է պատճառով և վարչութեան մէջ ծագած տարածայնութիւնը վերացւել 1893 թւին, և ազդ ինչպէս է ամեն տժգոհութիւն հէնց մի հատ գրութիւնից առաջացել, երբ որ նոյն Խորհուրդը, ձեր լիշած բացատրութիւնից երկու տարի յետոյ, այն է 1895 թւականի լուսարի 25-ին, իւր նիստի արձանագրութեան մէջ մտցնում էր ձեր մի շարք ըմբոստութիւնների և կամակորութիւնների մասին այն ձեզ դատապարտող և կծու տողերը, որոնք առաջ էին բերւած Լուսինիի յօդւածում, որը յաւակնութիւն ունիք ջրելու... Եւ ապա Խորհրդի աւելի նոր տըրտունջները ընկերութեան Ախալցխավի ճիւղի ընթերցարանի շինութեան խնդրի տուիթով, ապա նորա ձեզ ուղղած յանդիմանութիւնը ձեր «անտակտութեան» մասին պ. իս. Սելիք-Հակիմեկանցի պատւաւոր անդամութեան ինդիի առիթով—չէ որ դոքա իրողութիւններ են, որ մենք նոյնպէս առաջ էինք բերել Խորհրդի 1895 թ. լուսարի 25-ի նիստի պաշտօնական արձանագրութիւնից առած քաղաքածքներում...

**ՀԱՆԴԵՍ ԱՄՄՕՐԻԱՅ,** նկատողութեան առնելով Մուրճի յօդւածը Միխիթարեան միաբանութեան մատին (Մուրճ 1895 № 11), հետեւալն է նկատել մեր այն տողերի առիթով, որոնցով մերկացնում էինք միաբանանութեան երկեղութիւններ նախած թէ որ ազգի հետ նոքա գործ ունին. Ահա Հանդէս Ամս. պատասխանը.

«Եւրոպա» լրագրին վրայ խօսելով՝ կը զարմանայ (Արասխանեանց) թէ Միաբանութեան կողմանէ հրատարակւած գերմաններէն գրութեան մը մէջ կը շեշտւի, թէ թերթին ձգտումն էր երեսովները աւստրիական կամ մանաւանդ գերմանական մտքով ներկալացնել. իսկ «Հայ լրագրութափում» մէջ նոյն թերթին համար կ'ըստի թէ «Ճանքն էր... որ առանց մէկ կամ միւս կողմնակցութեան միտելու՝ լրաց վիճակն

ինչպէս որ է՝ ներկալացնէ» Զարմանալի չէ բնաւ՝ որ երկու գործերու զատ զատ ալ տեսութիւններ ունենան. զարմանալի չէ, այլ բնական երևութ որ դերմանական թերթերն աղբիւր ունեցող հաչ թերթն՝ որչափ ալ խմբագրութեան «ջանքն» ըլլար միջին ճամբան բռնել, չմիտէր իւր աղբերաց կողմն. Եւ արդեօք Մուրճի քաղաքական տեսութիւններն իւր աղբերաց—ուուսական կամ այլ աղբի ուղղութիւնը չունին. Եւ Բնչ այլ ուղղութիւն կրնակ ունենալ Վիեննասի Մխիթարեանց եւ Արասխանանցների գիտութիւնը, եթէ ոչ գերմանական, ըստ կարի հակացրած. Այս զուտ բժախնդրութիւն—Haarspaltereい է»:

Այստեղ գիտութիւն և ուղղութիւն իրար հետ շփոթել են Մխիթարեանները. Մխիթարեանների տրաբանութիւնից առաջմ այդ կտորը առաջ ենք բերում իրը դոկումենտ. Առիթ կ'ունենանք անշուշտ այդ դոկումենտից օգտվելու!

**ՑՈՎՀ.** Տէ՛ր-Մի՛ր. ՔԵԱՆՑ մեզ զրում է Տամբովից (Ներքին Ռուսաստանում). «Յս աբուհետե աւելի պիտի պարապեմ ժողովրդական ընթերցանութեան խնդրով. պիտի տամ նիւթեր, փոքր գրքուկներ, և հրատարակածները զրախոսեմ («Մուրճ»-ում). Նթէ ալբրենարան (հասակաւորներին առանց ուսուցչի կարդալ սովորեցնելու) որ գրաքննիչի մօտ է, հրատարակեմ, այն ժամանակ երկրորդ գիրքը՝ գրելու և ուղղաղրութեան մասին կ'լինի. Ապա կ'աշխատեմ կազմնել, փոխադրել, թարգմանել ժողովրդական զրքովիներ գիտութեան զանազան ձիւղերից և մասնաւորագէս բնական զիստութիւններից»:

**ԳԵՆ.** ՖԲէԶէ, որ Երեանի նախկին նահանգապետն էր և որ նոր միայն նշանակւած էր Վիլնիասի նահանգապետ (Խուսիալում), այժմ՝ նշանակւած է Պետերբուրգում ժանդարմների չեփի օգնական:

**ՆԻԿՈԼԱՅՅ** ՎԱՐԴԱՊԵՏ ՍԻՄՈՆՈՎ, անդամ ուուսաց սինոդական գրասենեակի և վանահայր Կւատախենի, ազգով վրացի, սպանւեց լուսիսի 5-ին դպիր (Վրացի) Ստեփան Կալմախելիձէի ձեռքով, որ կարդաղուրկ եղած քահանակ էր 40 տարեկան:

**ԱՊՍՍՍ.ՄՔՈՒԹԻՒՆԸ. ԿՐԵՑԷ՛ՌՈՒՄ** Այդ կզզում մեծ ապատամբութիւն է ծագել ընդդէմ տաճկական տիրապետութեան: Ապստամբութիւնը այժմ մեծ ծաւալ է ստացել, մեծ պետութիւնները պատերազմական նաւեր են ուղարկել՝ իրենց շահերը պաշտպանելու համար: Այդ մասին աւելի մանրամասն կը խօսեի Մուրճի դալ համարում:

**ՈՒՆԴԱՐԻԱՅԻ** ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ առիթով այս տարի Բուղապեշտ մալրաքաղաքում ցուցանանդէս է բացւած: Հաղարամեակի տօնը կատարեց փառահեղ հանդէսով՝ Աւնդարիակի թագաւոր (և Աւտրիակի կալսր) Ֆրանց Յովանի Փառահեղ և մասնակցութեամբ:

Վիւննաթի ՆՈՐ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ, Մենք մի անդամ արդէն հաղորդել էինք Հակա սեմիտականների չաղթութեան մասին Վիւննալի քաղաքալին ընտրութիւններն և որ նոցա պարագլուխ դ-ր. Լիւգէր ընտրուել էր քաղաքագլուխ, բայց որ կազմից նա չէր հաստատել. Այդ պատճառով նորից քաղաքալին իրաւասուների ընտրութիւն կատարեց. և այդ անգամ ևս դ ր Լիւգէրի կուսակցութիւնը մեծ չաղթանակ տարաւ ու Լիւգէրը նորից ընտրեց ու նորից կազմից չհաստատեց. Կատարւեցին երրորդ անգամ ընտրութիւններ և նոյն հետեանքով: Բայց այս անգամ կայսր Ֆրանց-Յովաչի, ընդունելով Լիւգէրին և հաղորդելով նրան որ չի կարող նորան հաստատել՝ զիմեց Լիւգէրի հայրենասիրական զգացմունքին: Լիւգէրը ապա ինքը հրաժարեկան տռեց, և ալժմ՝ քաղաքագլուխ ընտրեց Լիւգէրի բարեկամ հակա-հրէական Շտրոբախ 93 ձաշնով ընդդէմ 42-ի, Ծնդունելով իւր ընտրութիւնը, Շտրոբախը լայտնեց որ նա այդ անում է իւր նւիրւածութիւնից հակա-հրէական կուսակցութեանը և իւր անձնական բարեկամութիւնից Լիւգէրի հետ, որին նա կը զիջի իւր տեղը, երբ դորա համար ժամանակը հասած կը լինի:

† ԺԵՄԶՈՒԺՆԻԿՈՎ. Ա. Մ. Ներկալիս ոռուսաց բանաստեղծներից ամենածերը վախճանւեց, փեարւարին իւր 75 ամեակը բոլորած լինելով: Ժեմչուժնիկովը բեղմնաւոր զրոյներից չէր և ոչ էլ մեծ գրող էր. բայց նորա բանաստեղծութիւնը մաքուր և հասարակական իդէալների վրա էր հիմնած և ներկալացուցիչ էր տենդենցիական բանաստեղծութեան, բոլորովին աշնակէս, ինչպէս օրինակ բանաստեղծ Ֆէտը ներկալացուցիչ էր զուտ զեղարւեստի: Ժեմչուժնիկովի ոտանաւորների ժողովածուն հրատարակւեց միայն 1892 թւականին.—

† ԵՍՂՈՒԲԵԱՆ ԳԱՍՊԱՐ վախճանւեց ալլրիլի 30-ին Պետերբուրգում: Հանդուցեալը ֆինանսական մինիարութեան տարիքալին զեպարտամենտի զիրեկտորն էր. մասնակցութիւն էր ունենում Պետերբուրդի հայ հասարակութեան զործերին, սրտին մօտ էր ընդունում հայ ուսանողների զրութիւնը: 80-ական թւականներին նա մասնակցում էր հայ լրագրութեան, ուր (Մշակ'ում) զետեղեց և մի անվերջ մնացած վէպ «Այրումէ Նորատունկեան» խորագրով:

† ԺԵԼԵԽՈՎԱԿԱՅԱ. Վերա Պետրովնա, որը ունի զրական վաստակներ, վախճանւեց: Նորա վերջին յօդւածը, որքան զիտենք, զրւած էր հայերի դէմ Պետերբուրդսկից Վելումոստի-ում: Թաղւեց 0դեսարտ:

† ԺԻՒԼ ՍԻՄՈՆ. Մայիս ամսին վախճանւեց Պարիզում Ժիւլ Սիմոն, որը մեծ մասնակցութիւն է ունեցել վերջին չիսուն տարւակ Ֆրանսիակի քաղաքական, կրթական, սոցիալական և գրական շարժումների մէջ. Ծնւեց 27 դեկտ. 1814 թ., 1839—51 թթ. պրոֆէսոր էր Սորբոն-

նում (Պարիզ), 1863-ին օրէնսդրական ժողովի ընդդիմագիր անդամ էր. երբ կալսերութիւնը վերացւեց՝ Թիերի նախագահութեան ներքու ժ. Սիմոնը 1870—73 թթ. կրթական մինիստր էր. Մակ-Մանի նախագահութեան օրոք 1876 թ. գեկտ. մինչ 1877 թ. մայիսի 16-ը մինիստրութեան նախագահն էր. իսկ 1875 թ-ից սենատոր էր և անդամ ֆրանսիական ակադեմիակի: 1876-ից դէս ժ. Սիմոնը, տեղի տալով Գամբետակի գերակշռող ուժի առջև ետ քաշւեց քաղաքական ասպարեզից, շարունակելով սականն զործել իր ճառախօս և գրող: 1889-ին նա մասնակցեց Վիլհելմ Ռ-ի կողմից բանուրական խնդրի մասին կայացրած կոնքրէտին:

ՄՈՒՐՃԻ ՓՈՍՏԱԲԿՂ:

Ոռուսնութ. Երիտաս. Ընթ. Ընկ.:—Զեր զրկածից 5 ոռուբլին լատկացրինք Մուրճին և լանձնեցինք 5-ական ոռուբլի Մշակ, Արձագանք և Նոր-Դար թերթերի խմբագրութիւններին, համաձանն ձեր զրութեան: Մուրճի բաժանորդավճարի պակասորդ 5 ոռուբլին լրացնում ենք պ. Միք. Արամեանի մեզ թողած գումարից:

Վարնա: Բարեգոր. Սիսակեան Ընկերութ. Ստացանք անցեալ տարւակ ձեր ապառիկ 5 ոռուբլին և 5 ոռուբլի ևս ներկատ տարւան համար: Զեր ընթերցարանը, հրզեհի զո՞ր գնացած լինելով՝ ազգակին վարժարանի հետ միասին, ձեր զրկածի պակասորդ 5 ոռուբլին լրացնում ենք պ. Միքայէլ Արամեանցի մեր կարգադրութեան ներքոյ զրած գումարից:

### ՆՈՐ ՍՏԱՑԱԾ ԳՐԲԵՐ

- 1) ՄԱՆԴԱԿՈՒԽՆԻ, Գր. քահ.—Սուրբ գրոց Հին-Ռւկատի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, լուսաբանութեամբ և աշխարհի անցքերով: Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեան և Ընկ. 1896. գինն է 2. րուբ. 50 կոպ.
- 2) ՄՄԲԱՏԵԱՆՅՅ, Մեսրովի արքեպ. միաբան Սրբ. Էջմիածնի:—Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի որ ալժմ Նոր-Բայազիտ գաւառ. (ի 1862 թւն ց 1895 թւին), Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 1896. գինն է 2 ռ.
- 3) ՄԱՐԳԻՍԵՍՆ, Հ. Բարեկ. Վարդ. Միփթ. ուխտէն:—Քննադատութիւնը Յովհան Մարկոն Մարգարունով և իւր երկասիրութեանց վրայ: Վեհանետիկ, ի տպ. Արք. Ղազարու, 1895, գինն է ?
- 4) ԵԱԿՆԻՉ, Խոր.—Ծերունի Մարկոն: Թարգմ. ուսւերէնից Յովհ. Մեղնիկեան: Հր. թ. Հ. Հր. Ընկ.: 1896, տպ. Մ. Ռոտինեանցի, գինն է 10 կոպ.
- 5) (Զօւանի ?), համառօտ. Սամօլլովալի:—Սպարտակ, պատմական վէպ: Հրատ. Բ. Պ. Ա.: Բաքու, տպ. Արօր, 1896. գինն է 35 կոպ.

- 6) ՏԱՇԵԱՆ, հ. Յակոբոս վարդ., Վիեննայի Մխիթ. ուխտէն:—Վարդապետութիւն առաքելոց. անվաւերական կանոնաց մատեանը. թուղթ Տակոբաց առ Կոնդրատոս և կանոնք Թաղդէի (քննութիւն և բնագիրք: Սզգացին մատենագարանի գիրք ի): Վիեննա, Մխիթարեան ապարան, 1896, գինն է 6 ֆրանկ:
- 7) ՌՈԴՊՈՎԱ, Օ.—Աշխէնն ու Մարգարիտը. Թարգմ. ուստերէնից: (Հրատ. «Նեւէր մանուկներին»), Թիֆլ., տպ. Յ. Մարտիրոսեանի, 1896 թ., գինն է 10 կոպէկ:
- 8) ՇԵՔՍՊԻՐ, Թարգմ. Յովհ. Խան Մատէհեանի.—Ռոմէօ և Զուլիէտ: Ռեբերգութիւն հինգ արարւածով: Հրատ. Հալոց Հրատ. Թնկերութեան, Թիֆլ., տպ. Մ. Ռոտինեանցի, 1896. գինն է 60 կոպէկ:
- 9) ԲԱԼՈՍԵԱՆՑ, Գրիգոր.—Ռոստոմ և Սալման, գերբնական ով ունցող հսկաներ (Տաճկահալոց ժողովրդ: աւանդութիւն): Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի, 1896. գինն է 25 կոպէկ:
- 10) ՍՈԼՈՎԵԱՆ, Յովակիմ:—Ղոնազլուզո մեաց. վողըւիլ մէկ արարւածով: Մոսկա, տպ. Փ. Բարխուզարեանի, 1896, գինն է 20 կոպէկ:
- 11) ԱԲԷԼԵԱՆՑ, Ալէքսանդր.—Նաֆթի Փանտան. կատակ. մի արարւածով: Բաքու, տպ. Արօր. 1896. գինն է 20 կոպէկ:
- 12) ՍՄԻՐՆՈՎԱ, Ա.—Անտառապահը. Թարգմ. ուստերէնից (Հր. «Նեւէր մանուկներին»), Թիֆլիս, տպար. Յ. Մարտիրոսեանի, 1896. գինն է 12 կոպէկ:
- 13) ՆԱԶԱՐԵԱՆ, Ստեփանոս:—Պահւակ մանուկը կամ Կապիկացած երիխան:—Թիֆլ., տպ. Մ. Վարդանեանի, 1896. գինն է 15 կոպէկ:
- 14) ԱԲԷԼԵԱՆՑ, Ալէքսանդր.—Մկիչի հարսանիքը. Փարս մի գործողութեամբ: Բաքու, տպ. Արօր. 1895 թ., գինն է 20 կոպէկ:
- 15) ՔԱՄԱԼԵԱՆՑ, Ս.—Երկասիրութիւններ: գիրք առաջին. Թիֆլիս, տպ. Մ. Մարտիրոսեան և Ընկ., 1896. գինն է 50 կոպէկ:
- 16) ՅԱՀԻՆԻ, Ա. Օ.—Изслѣдованія и статьи. Съ приложениемъ переводовъ изъ арм. историковъ.—Изд. „Этнографического фонда Н. О. Эмина, выпускъ II.—Москва, 1896 թ. գինն է 2 ռ., պոստիժուքով 2 ռ. 40 կոպէկ:

ՎՐԻՊԱԿ, «Մուրճուի անցեալ № 3—4-ի լուրերում (էջ 522) երկու տող չփոթ են տպւել, որ խնդրում ենք ուղղել. պէտք է կարդալ արտպէս՝ Սական երրիմն եղել են «Մուրճուի «Տարազ»-ի մէջ միան Թիւրիմացութիւնների շնորհիւ թեթև անհամաձայնութիւններ, որոնք պարզելուց լետու, մոռացութեան են տրւել երկու կողմից էլ:



# ՄԱԿՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՍՏԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ  
ԱՄԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1896 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻ տարեկան **10** ռուբլի, կամ **30** ֆրանկ: Ուստի ցի համար և ուսանողները վճարում են **8** ռուբլի, արհեստագորները **7** ռուբլի: Կարելի է վճարել մաս-մաս, **3** ռ. սկզբում, **3** ռ. մինչ մարտի 1-ը, մասցեալ մինչ յուլիսի 1-ը:

Դիմել՝ Թիֆլիս, Վելետմինեան փողոց, տուն № 8: Այլ քաղաքներից՝ Տիֆլիս: Въ Редакцію журнала „МУРЧІ“. Արագածհանից՝ Tiflis. Rédaction de la Revue „MOURTCHI“. և կամ հետեւալ անձերին:

ԲԱԺԱՆ—պ.պ. Ֆրիդրի Մարգարեանին և Սեդրակ Թառացեանին:  
ԲԱԹՈՒՄ—պ. Սարգիս Մակարեան, Ծովիանեանի բանկ. գրասենեալի երեխան—պ. Գէորգ Ղարաջեանցին. Առետր. բանկի ճիւղը:  
ԿԱՐՍ—պ. Արել Ասլրեսեանին, գործակալ «Նազեթգայ» ընկերությունից:  
ԱԳՈՒՄԻՄ—պ. պ. Ստեփան Արամիսանեանց և Աւետիս Դաւիդիսինց:  
ՆՈՒԽԻ—պ.պ. Արքահամ Բունիաժեանց և Խոչատուր Խոջամիրեանց:  
ՂՋԱՄՐ—պ. Հմացեակ Մաժինեան:

ԵԿԱՏԵՐԻՆՈՐԱՄ—պ. Արամ Շապովալեան:

ՄՈՍԿՎԱ—պ. Ալեքսանդր Մատուրեան, Մ. Եղշորովի գրասենեալի ՊԵՏԵՐԲՈՒՐՓ—պ. Քր. Բաշինջաղեանին (Գոտին. դворք № 7):